

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՏԴ 347
ԳՄԴ 67.410
Գ 888

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱՀԱԳՆ ՀՈՎԻԿԻ

*Հրատարակության է երաշխավորել ԵՊՀ իրավագիտության
ֆակուլտետի գիտական խորհուրդը*

ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆԻ

ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ

ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Գրախոսներ՝ իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ **Ս.Գ. Մեղրյան**
իրավ. գիտ. թեկնածու **Տ. Ա. Մարկոսյան**

Գրիգորյան Վ.Հ.

Գ 888 Վերաքննիչ դատարանի լիազորությունների հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում /Վ.Հ. Գրիգորյան; ԵՊՀ.- Եր.: Հայրապետ հրատ., 2016.- 208 էջ:

Աշխատությունը նվիրված է վերաքննիչ դատարանի լիազորություններն ամրագրող իրավական նորմերի համակողմանի ուսումնասիրությանը և վերլուծությանը, ինչպես նաև՝ այդ լիազորությունների կիրառման ընթացքում ծագող խնդիրներին և դրանց հնարավոր լուծման ուղիներին:

Աշխատանքի շրջանակներում հեղինակը քննարկել է վերաքննիչ դատարանի լիազորությունների բնորոշման և դասակարգման հետ կապված հիմնահարցերը և մանրամասն վերլուծության են ենթարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի առարկայական և գործառութային լիազորություններին առնչվող իրավական նորմերը:

Կարող է օգտակար լինել իրավաբանական բուհերի և ֆակուլտետների ուսանողների, դասախոսների, ասպիրանտների, պրակտիկ իրավաբանների և այլ անձանց համար:

ԵՐԵՎԱՆ
ՀԱՅՐԱՊԵՏ
2016

ՀՏԴ 347
ԳՄԴ 67.410

ISBN 978-9939-838-47-2

© Գրիգորյան Վ. Հ., 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ5

ԳԼՈՒԽ 1.
ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՄԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՅ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ. ԳՈՐԾՆ ԸՍՏ
ԷՈՒԹՅԱՆ ՉԼՈՒԾՈՂ (ՄԻԶԱՆԿՑԱԼ) ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆԻ
ԿՈՂՄԻՑ ԿԻՐԱՌՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ
ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ8

§ 1. Վերաքննիչ դատարանի լիազորությունների հասկացությունը
և դրանց դասակարգումը8

§ 2. Վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության չլուծող
(միջանկյալ) դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքը
մերժելու և դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու
լիազորությունը15

§ 3. Վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության չլուծող
(միջանկյալ) դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքը
բավարարելու և բողոքարկված միջանկյալ դատական ակտը
վերացնելու կամ նոր դատական ակտ կայացնելու
լիազորությունը25

ԳԼՈՒԽ 2.
ԳՈՐԾՆ ԸՍՏ ԷՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՈՂ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆԻ
ԿՈՂՄԻՑ ԿԻՐԱՌՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ
ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ38

§ 1. Գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ բերված
վերաքննիչ բողոքը մերժելու, դատական ակտն օրինական ուժի
մեջ թողնելու և անփոփոխ թողնված վճիռը լրացուցիչ
պատճառաբանելու լիազորությունը38

§ 2. Դատական ակտն ամբողջությամբ կամ մասնակիորեն
բեկանելու և բեկանված մասով գործը համապատասխան
ստորադաս դատարան՝ նոր քննության ուղարկելու
լիազորությունը59

§ 3. Դատական ակտն ամբողջությամբ կամ մասնակի բեկանելու
և կողմերի հաշտության համաձայնությունը հաստատելու
լիազորությունը 72

§ 4. Դատական ակտը մասնակիորեն բեկանելու և փոփոխելու
լիազորությունը 83

§ 5. Դատական ակտն ամբողջությամբ կամ մասնակի բեկանելու
և գործի վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության
թողնելու լիազորությունը 115

ԳԼՈՒԽ 3.
ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆԻ ԳՈՐԾԱՌՈՒԹՅՈՒՆ
ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 138

§ 1. Վերաքննիչ դատարանի կազմակերպական
լիազորությունները 138

§ 2. Վերաքննիչ դատարանի կանխարգելող
լիազորությունները 165

§ 3. Վերաքննիչ դատարանի գործառության լիազորությունների
հետ կապված մի շարք արդի հիմնախնդիրներ 176

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ
ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ 195

ՆԱԽԱԲԱՆ

Դատական համակարգի յուրաքանչյուր ասյան օժտված է միայն իրեն հատուկ խնդիրների և գործառնությունների որոշակի շրջանակով: Քաղաքացիական գործերի քննության և լուծման ընթացքում առաջին ասյանի դատարանը նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտման կամ սխալ կիրառման արդյունքում կարող է թույլ տալ տարաբնույթ դատական սխալներ, որպիսի պայմաններում, արդար դատաքննության իրավունքի երաշխավորման տեսանկյունից, հատկապես կարևորվում է դատական ակտերի վերանայման գործուն կառուցակարգերի առկայությունը: Այդ կառուցակարգերի մեջ իր ուրույն տեղն է գրավում դատական ակտերի վերաքննության ինստիտուտը: ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի, որպես ՀՀ դատական համակարգի երկրորդ ասյանի, կարևորագույն խնդիրն է՝ առաջին ասյանի դատարանի դատական ակտերի օրինականության և հիմնավորվածության ստուգումը, ինչպես նաև՝ վերջինիս կողմից թույլ տրված դատական սխալների վերացումը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով¹ ամրագրված եռաստիճան դատական համակարգի առկայության պայմաններում դժվար է թերագնահատել վերաքննության ինստիտուտի և վերաքննիչ դատարանի տեղն ու դերը այդ համակարգում: ՀՀ Սահմանադրության համաձայն՝ ՀՀ բարձրագույն դատական ասյանը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից, վճռաբեկ դատարանն է, որը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը: 2006թ. կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում ՔԴՕ-ն լրացվեց 231.2 հոդվածով, որով առաջին անգամ սահմանվեց, որ ՀՀ Վճռաբեկ դատարանը

վարույթ է ընդունում և քննում է ոչ թե բոլոր, այլ՝ միայն այն վճռաբեկ բողոքները, որոնք համապատասխանում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված որոշակի չափանիշների: Այդ չափանիշները, հետագայում որոշակի փոփոխությունների և լրացումների ենթարկվելով հանդերձ, հիմնականում մնացին անփոփոխ:

Արդյունքում, եռաստիճան դատական համակարգի երկրորդ ասյան հանդիսացող ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանը ներկայումս գերակշռող մեծամասնություն կազմող դեպքերում գործնականում հանդիսանում է դատական ակտի վերանայում իրականացնող վերջին ասյանը: Նման պայմաններում առավել քան կարևոր է դառնում ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից իր լիազորությունների իրավաչափ և արդյունավետ կիրառումը:

2007թ. տեղի ունեցած օրենսդրական փոփոխությունների արդյունքում վերաքննիչ դատարանի լիազորություններին նվիրված իրավական նորմերը ենթարկվեցին արմատական փոփոխությունների՝ պայմանավորված վերաքննության լրիվ տեսակից ոչ լրիվ տեսակին անցմամբ: Դրական գնահատելով վերաքննիչ դատարանի լիազորությունները կանոնակարգող իրավանորմերում կատարված հետագա օրենսդրական փոփոխությունները՝ այդուհանդերձ գտնում ենք, որ առկա իրավակարգավորումը դեռևս հեռու է կատարյալ լինելուց. մի շարք իրավանորմերում առկա ձևակերպումները տարբերումների տեղիք են տալիս, ավելին, մի շարք հարցեր դուրս են մնացել օրենսդրի ուշադրությունից:

Այս կապակցությամբ գտնում ենք, որ անհրաժեշտ է առավել խորքային փոփոխություններ կատարել վերաքննիչ դատարանի լիազորությունները կանոնակարգող իրավական նորմերում: Ավելին, ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի լիազորություններն ամրագրող իրավանորմերը վերջին տարիներին մի շարք գործերի շրջանակներում մեկնաբանության են ենթարկվել ՀՀ Սահմա-

¹ *Ընդունվել է 17.06.1998թ., ուժի մեջ է մտել 01.01.1999թ.: Տե՛ս ՀՀՊՏ 1998/20(53), 09.09.1998թ.: Այսուհետ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք կամ ՔԴՕ:*

նադրական դատարանի և ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից, որպիսի պայմաններում անհրաժեշտություն է առաջացել վերախմաստավորել այդ իրավանքները՝ ՀՀ Սահմանադրական դատարանի և ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների տեսանկյունից:

Վերաքննիչ դատարանի լիազորություններին առնչվող հիմնախնդիրները հետազոտության են ենթարկվել խորհրդային և ժամանակակից դատավարագետների բազմաթիվ գիտական աշխատություններում: Հետազոտության թեմային առնչվող հիմնախնդիրները մի շարք դեպքերում դարձել են նաև ատենախոսությունների առարկա:

Այդ աշխատությունների և ատենախոսությունների շարքում հատկապես պետք է ընդգծել Վ. Վ. Հովհաննիսյանի, Ե. Ա. Բորիսովայի, Լ. Ա. Տերեխովայի, Յու. Ա. Տիմոֆեևի, Ե. Վ. Կարավանայի և այլոց աշխատությունները:

Չնայած շարադրվածին՝ հարկ է նկատել, որ վերաքննիչ դատարանի լիազորություններին առնչվող հիմնախնդիրները հայրենական դատավարագիտության մեջ դեռևս լիարժեք ուսումնասիրված չեն:

Ավելին, ներկայումս շրջանառության մեջ է գտնվում «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով նախատեսվում է ծավալուն և համակարգային փոփոխությունների կատարում վերաքննիչ վարույթը կարգավորող իրավական նորմերում: Նման պայմաններում օբյեկտիվորեն առաջանում է գործող ՔԴՕ-ի նորմերի և Նախագծով առաջարկվող նոր մոտեցումների իրավահամեմատական վերլուծություն կատարելու անհրաժեշտություն՝ դրանց առավելությունները և թերությունները վերհանելու նպատակով:

ԳԼՈՒԽ 1.

ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՅՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ. ԳՈՐԾՆ ԸՍՏ ԷՈՒԹՅԱՆ ՉԼՈՒԾՈՂ (ՄԻՋԱՆԿՅԱԼ) ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԻՐԱՌՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

§ 1. Վերաքննիչ դատարանի լիազորությունների հասկացությունը և դրանց դասակարգումը

Յուրաքանչյուր պետական մարմին իր առջև դրված խնդիրների լիարժեք իրականացման համար օրենսդրորեն օժտված է որոշակի լիազորություններով, որոնք առավելագույնս արտահայտում են այդ մարմնի գործունեության հիմնական ուղղությունները: Վերաքննիչ դատարանի լիազորություններն առաջին հերթին պայմանավորված են վերջինիս առջև դրված խնդիրներով, որոնք դրսևորվում են ինչպես դատական համակարգի ընդհանուր գործառույթների իրականացմամբ, այնպես էլ՝ միայն վերաքննիչ ատյանի գործունեությանը բնորոշ առանձնահատկություններով¹:

Ընդ որում, ՀՀ-ում ներկայումս գործող սահմանափակ (ոչ լրիվ) վերաքննության պայմաններում վերաքննիչ դատարանի կարևորագույն խնդիրը հանդիսանում է ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատական ակտերի օրինականությունը և հիմնավորվածությունը ստուգելու միջոցով քաղաքացիական շրջանառության մասնակիցների սուբյեկտիվ իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:

¹ Տե՛ս **Հովհաննիսյան Վ.Վ.**, *Վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում*, Եր.: ԵՊՀ հրատ., 2013, էջ 265:

Վերաքննիչ դատարանի լիազորություններն իրավաբանական գրականության մեջ տարբեր կերպ են բնորոշվում: Մի դեպքում վերաքննիչ աստանի լիազորությունների տակ նկատի են ունենում վերաքննության կարգով դատական վերանայման արդյունքում իրականացվող՝ վերաքննիչ դատարանի իրավունքների և պարտականությունների ամբողջությունը¹: Մեկ այլ դեպքում դրանք բնորոշվում են որպես գործին մասնակցող անձանց վերաքննիչ բողոքներով առաջին աստանի դատարանի՝ օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերի վերանայման կապակցությամբ օրենքով սահմանված դատավարական գործողություններ կատարելուն ուղղված վերաքննիչ դատարանի իրավունքների համակցություն²:

Այս կապակցությամբ Վ. Վ. Գոյազևան նշում է, որ վերաքննիչ դատարանի լիազորությունները գործին մասնակցող, ինչպես նաև այլ անձանց վերաքննիչ բողոքների հիման վրա օրինական ուժի մեջ չմտած դատական ակտի վերանայման կապակցությամբ օրենքով նախատեսված դատավարական գործողություններ կատարելուն ուղղված իրավունքների և պարտականությունների համակցություն է³:

Վերաքննիչ դատարանի լիազորությունների հասկացությունը սահմանելիս՝ Վ. Վ. Հովհաննիսյանը նշում է, որ վերաքննիչ դատարանի լիազորությունները վերաքննիչ բողոքի հիման վրա առաջին աստանի դատարանի ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը ստուգելու արդյունքում օրենքով նախատեսված դատավարական գործողություն կատարելուն ուղղված իրավունքների և

պարտականությունների ամբողջությունն է¹: Վ. Վ. Հովհաննիսյանը նշում է, որ վերաքննիչ դատարանի լիազորությունները՝

- օրենքով սահմանված դատավարական գործողություններ կատարելուն ուղղված այս աստանի իրավունքների և պարտականությունների համակցությունն է, որը դրսևորվում է առաջին աստանի դատարանի դատական ակտերի օրինականությունն ու հիմնավորվածությունը ստուգելով,

- դրանք սպառիչ ձևով սահմանված են օրենքով,

- լիազորությունները դատարանի համար միաժամանակ և՛ իրավունք են, և՛ պարտականություն, քանի որ դրանց իրականացումից խուսափելն անգործություն է,

- լիազորությունները վերաքննիչ դատարանի առջև դրված խնդիրների իրականացումն ապահովելու միջոցներ են, որոնք արտացոլում են այս աստանի հիմնական գործառույթները²:

Մասնագիտական գրականության մեջ բավականին մեծ ուշադրության է արժանացել վերաքննիչ դատարանի լիազորությունների դասակարգման հարցը: Վերաքննիչ դատարանի լիազորությունների դասակարգման համար, որպես կանոն, հիմք են ընդունվել քաղաքացիական դատավարությունում վերաքննիչ դատարանի խնդիրները³:

Վ. Ս. Կալմացկին իրավացիորեն նշում է, որ յուրաքանչյուր դատական աստանի լիազորությունները կանխորոշված են այդ աստանի առջև պետության կողմից դրված խնդիրներով: Կալմացկին առանձնացնում էր երկրորդ աստանի դատարանի հետևյալ խնդիրները՝ ստորադաս դատական աստանների կողմից քաղաքացիական

¹ *St' u* Гражданское процессуальное право: Учебник / Под ред. **М. С. Шакарян. М., 2004, էջ 395:**

² *St' u* Арбитражный процесс: Учебник для юридических вузов и факультетов / Под ред. **М. К. Треушников, В. М. Шерстюка. - М., 2001, էջեր 353-354; Караваева Е.В. Вопросы апелляционного производства в гражданском процессе. Дисс. ... к.ю.н., Саратов, 2005, էջ 140:**

³ *St' u* **Грязева В.В.** Апелляция в арбитражном процессе. Дисс. ... к.ю.н., Москва, 2005, էջ 133:

¹ *St' u* **Հովհաննիսյան Վ. Վ.,** Վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, *Եր.: ԵՊՀ հրատ., 2013, էջ 268:*

² *St' u* **Հովհաննիսյան Վ. Վ.,** նշված աշխատ., էջեր 270-271:

³ *St' u* **Հովհաննիսյան Վ. Վ.,** Վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, *Եր.: ԵՊՀ հրատ., 2013, էջ 271:*

գործերի ճիշտ քննության և լուծման ապահովումը (պետության շահերը, ինչպես նաև՝ քաղաքացիների, հասարակական միավորումների և կազմակերպությունների իրավունքները և օրինական շահերը պաշտպանելու նպատակով), քաղաքացիական իրավահարաբերություններում օրինականության ամրապնդումը, առաջին ատյանի դատարանների գործունեության ուղղորդումը՝ օրենքների ճիշտ և միատեսակ կիրառման տեսանկյունից և այլն¹:

Իր կողմից առանձնացված խնդիրներից ելնելով՝ Վ. Ս. Կալմազկին երկրորդ ատյանի դատարանի լիազորությունները դասակարգում է առարկայականի և գործառութայինի: Առարկայական լիազորությունները Կալմազկու կողմից բնորոշվում են որպես պետության կողմից երկրորդ ատյանի դատարանի համար սահմանված իրավունքների և պարտականությունների ամբողջություն՝ ուղղված ստորադաս դատարանների կողմից կայացված և բողոքարկման ենթակա դատական ակտերի օրինականության և հիմնավորվածության ստուգմանը: Գործառութային լիազորությունները բնորոշվում են որպես բողոքարկված դատական ակտերի վերանայման ընթացքում տարբեր դատավարական գործողություններ կատարելու, ինչպես նաև՝ հայտնաբերված իրավախախտումներին արձագանքելու կապակցությամբ իրավունքների և պարտականությունների ամբողջություն²:

Լիազորությունների դասակարգման կապակցությամբ այս մոտեցումն առաջին անգամ առաջ է քաշվել դատավարագետ Ե. Վ. Վասկովսկու կողմից³: Հետագայում այն զարգացվել և մշակվել է խորհրդային դատավարագետներ Ա. Կ. Կազի, Ա. Ֆ. Կոզլովի, Կ. Ի.

¹ *Տե՛ս Կալմազկիյ Վ.Ս. Суд второй инстанции в советском гражданском процессе. Уфа, 1978, էջ 40:*

² *Տե՛ս Կալմազկիյ Վ.Ս., նշված աշխատ., էջ 45:*

³ *Տե՛ս Կալմազկիյ Վ.Ս. Полномочия суда второй инстанции в гражданском процессе: современные проблемы. Дисс. ... к.ю.н., Екатеринбург, 2008, էջ 93:*

Կումիսարովի և Յու. Կ. Օսիպովի կողմից⁴:

Այս մոտեցումը բխում է դատական մարմինների իրավունքներն ու պարտականությունները առարկայականի և գործառութայինի բաժանելու՝ դատավարագիտությունում ավանդական մոտեցումից, որի համաձայն՝ դատարանի առարկայական լիազորություններն ընդգրկում են սուբյեկտիվ իրավունքի մասին վեճը, ինչպես նաև՝ քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավունքներն ու օրինական շահերը շոշափող գործերը քննելու և լուծելու իրավազորությունը: Գործառութային լիազորությունները հանգում են գործի քննության ընթացքում առանձին դատավարական գործողություններ կատարելուն²:

Առարկայական և գործառութային լիազորությունների հետ մեկտեղ Վ. Ս. Կալմազկին առանձնացնում էր նաև առարկայական-գործառութային լիազորությունների խումբը՝ դրանց թվին դասելով այն լիազորությունները, որոնց իրականացման արդյունքում վերացվում (իլկվիդացվում) է երկրորդ ատյանի դատարանի գործունեության առարկան³: Նման մոտեցման հետ իր անհամաձայնությունն է հայտնել Յու. Ա. Տիմոֆեևը⁴, ով առանձնացնում է վերաքննիչ դատարանի լիազորությունների 4 խումբ՝ կազմակերպական-կարգադրիչ, գործն ըստ էության լուծող և միջանկյալ դատական ակտերի դեմ բերված բողոքների քննության և լուծման, ինչպես նաև պրոֆիլակտիկ-կանխարգելիչ լիազորություններ:

¹ *Տե՛ս Կազ Ա. Կ., Козлов А. Ф., Комиссаров К. И., Осипов Ю. К. Некоторые вопросы теории советского гражданского процесса. // Краткая антология уральской процессуальной мысли: 55 лет кафедре гражданского процесса Уральской государственной юридической академии, էջեր 116-117:*

² *Տե՛ս Կալմազկիյ Վ.Ս., Վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, Եր.: ԵՊՀ հրատ., 2013, էջ 272:*

³ *Տե՛ս Կալմազկիյ Վ.Ս. Суд второй инстанции в советском гражданском процессе. Уфа, 1978, էջեր 46-47:*

⁴ *Տե՛ս Կալմազկիյ Վ.Ս. Полномочия суда второй инстанции в гражданском процессе: современные проблемы. Дисс. ... к.ю.н., Екатеринбург, 2008, էջ 101:*

Կազմակերպական-կարգադրիչ և պրոֆիլակտիկ-կանխարգելիչ լիազորությունները գործառնության են, իսկ գործն ըստ էության լուծող և միջանկյալ դատական ակտերի դեմ բերված բողոքների քննության և լուծման հետ կապված լիազորություններն անմիջականորեն կապված են վերանայման առարկայի հետ և առարկայական բնույթ ունեն¹:

Պետք է նշել, որ իրավաբանական գրականության մեջ վերաքննիչ դատարանի լիազորությունները դասակարգվում են նաև ըստ դատական ակտի վերաքննության փուլերի, այսինքն՝ առանձնացվում են վարույթի հարուցման, նախապատրաստական, բուն վերաքննության, որոշման կայացման և հրապարակման փուլերում իրականացվող լիազորությունները²:

Անդրադառնալով վերաքննիչ դատարանի լիազորությունների դասակարգմանը՝ Վ. Վ. Հովհաննիսյանը նշում է, որ վերաքննիչ դատարանի լիազորությունների դասակարգման հիմքում կարելի է դնել տարբեր չափանիշներ: Դասակարգման հիմք կարելի է համարել դատական ակտի տեսակը, որի վերաքննության արդյունքում իրականացվում է վերաքննիչ դատարանի լիազորությունը, կամ լիազորությունների իրականացման բնույթը, առարկայական ուղղվածությունը: Ամեն դեպքում, վերաքննիչ դատարանի լիազորությունների էությունն ու իրավաբանական բնույթն առավելագույնս կարող են բացահայտվել միայն դրանք առարկայականի և գործառնությանի դասակարգելու և անջատ ուսումնասիրելու արդյունքում³:

Վ. Վ. Հովհաննիսյանը գտնում է, որ պետք չէ Յու. Ա. Տիմոֆեևի նման վերաքննիչ դատարանի լիազորությունները դասակարգել

չորս խմբի, այլ բավարար է դրանց գուտ առարկայականի և գործառնությանի դասակարգումը՝ առանձնացնելով առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող և գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերաքննության արդյունքում իրականացվող առարկայական լիազորությունները: Միննույն ժամանակ, վերաքննիչ դատարանի գործառնությանի լիազորությունները կարելի է դասակարգել երկու խմբի՝ կազմակերպականի և կանխարգելիչ: Կազմակերպական լիազորություններն ուղղված են վերաքննության կազմակերպմանը և կրում են նաև առաջին ատյանի դատական ակտերի օրինականությունն ու հիմնավորվածությունը ստուգելուն օժանդակող բնույթ: Վերաքննիչ դատարանի կանխարգելիչ լիազորություններն ուղղված են ոչ իրավաչափ իրականացված բողոքարկման, ինչպես նաև դատավարական օրենսդրությամբ ամրագրված արգելքների առկայության պարագայում դատական ակտերի վերաքննիչ վերանայումը բացառելուն և խափանում են վերաքննիչ վարույթի հետագա ծագումն ու ընթացքը¹:

Այսպիսով, վերաքննիչ քաղաքացիական դատարանի լիազորություններն ըստ ուղղվածության կարելի է դասակարգել առարկայականի և գործառնությանի՝ առարկայական լիազորությունների շարքում առանձնացնելով գործն ըստ էության լուծող և չլուծող դատական ակտերի վերաքննության արդյունքում կիրառվող լիազորությունները, իսկ գործառնությանի լիազորությունները կարելի է պայմանականորեն դասակարգել կազմակերպական և կանխարգելիչ լիազորությունների²:

¹ *Տե՛ս Կ. Մ. Կոմարով և Կ. Մ. Կոմարով. Գործառնությանի լիազորությունները լիազորությունների ընդհանուր դասակարգման հիմքում: Եր.: ԵՊՀ հրատ., 2013, էջ 273:*

² *Տե՛ս Հովհաննիսյան Վ. Վ., Վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, Եր.: ԵՊՀ հրատ., 2013, էջ 273:*

³ *Տե՛ս Հովհաննիսյան Վ. Վ., նշված աշխատ., էջ 275:*

¹ *Տե՛ս Հովհաննիսյան Վ. Վ., Վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, Եր.: ԵՊՀ հրատ., 2013, էջեր 280-284:*

² *Տե՛ս Հովհաննիսյան Վ. Վ., նշված աշխատ., էջ 327:*

§ 2. Վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքը մերժելու և դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու լիազորությունը

ՔԴՕ-ի 221-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքում վերաքննիչ դատարանը մերժում է վերաքննիչ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ ...»:

Խոսելով միջանկյալ դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքը մերժելու լիազորության մասին՝ նախ և առաջ պետք է նշել, որ ՔԴՕ-ի 221-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում ամրագրված բոլոր լիազորությունները պատկանում են վերաքննիչ դատարանի՝ ոչ հայեցողական (պարտադիր) բնույթ ունեցող լիազորությունների թվին¹: Հետևաբար, ոչ հայեցողական (պարտադիր) բնույթ ունի նաև վերաքննիչ դատարանի՝ միջանկյալ դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքը մերժելու և դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու լիազորությունը:

Վերաքննիչ դատարանի հիշյալ լիազորության իրավաչափ կիրառման պայմանները վեր հանելու նպատակով անհրաժեշտ է քննարկել այն հիմքերը, որոնց առկայության դեպքում միջանկյալ դատական ակտերը թողնվում են անփոփոխ, իսկ դրանց դեմ բերված վերաքննիչ բողոքները՝ առանց բավարարման:

Մյս կապակցությամբ պետք է նշել հետևյալը. ՔԴՕ-ի 130-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ դատարանի վճիռը պետք է լինի օրինական, հիմնավորված և պատճառաբանված: Համաձայն լինելով վերը նշված իրավակարգավորման հետ՝ այդուհանդերձ մենք գտնում ենք, որ օրինականությունը, հիմնավորվածությունը և պատճառաբանվածությունը ոչ միայն վճռին, այլև՝ ընդհանրապես բոլոր տեսակի դատական ակտերին ներկայացվող պահանջներ են: Միջանկյալ դատական ակտը ևս պետք է լինի օրինական, հիմնա-

վորված և պատճառաբանված, թեև ՔԴՕ-ում նման կանոն ուղղակիորեն ամրագրված չէ: Հարկ է նշել, որ Նախագծի 182-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ օրինական, հիմնավորված և պատճառաբանված պետք է լինեն նաև առաջին ատյանի դատարանի որոշումները (այսինքն՝ գործն ըստ էության չլուծող կամ միջանկյալ դատական ակտերը):

Իրավաբանական գրականության մեջ տեղ գտած տեսակետների համաձայն՝ առաջին ատյանի դատարանի միջանկյալ դատական ակտերը պետք է բավարարեն օրինականության և հիմնավորվածության պահանջներին, որոնք ընդհանրացնում և իրենց մեջ ներառում են նաև դատական ակտերին ներկայացվող մյուս պահանջները¹: Բողոքարկված դատական ակտը² ստուգվում է օրինականության և հիմնավորվածության տեսանկյունից³, ինչը հանդիսանում է վերաքննիչ վարույթի կարևորագույն խնդիրը⁴:

Բացի այդ, մի շարք հեղինակներ, խոսելով միջանկյալ դատական ակտերին ներկայացվող պահանջների մասին, առանձնացնում են նաև **արդարության** պահանջը: Արդարության պահանջը, որպես դատական ակտերին (այդ թվում նաև՝ միջանկյալ դատական ակտերին) ներկայացվող պահանջ, բազմիցս քննարկվել և հիմնավորվել է դատավարագետների կողմից⁵:

Արդարության, որպես դատավարության սկզբունքի մասին,

¹ Տե՛ս **Решетняк В.И.** *Постановления суда первой инстанции по гражданским делам. Автореф. дисс. ... к.ю.н., М., 1996, էջ 9:*

² Այդ թվում նաև՝ բողոքարկված միջանկյալ (գործն ըստ էության չլուծող) դատական ակտը:

³ Տե՛ս **Гражданский процесс: учебник для студ. сред. проф. учеб. заведений / В.Н. Васин, В.И. Казанцев.** - 3-е изд., стер. - М.: Издательский центр «Академия», 2008, էջ 209:

⁴ Տե՛ս **Гражданский процесс России: Учебник / Под ред. М.А. Вихута.** - М.: «Юристъ», 2005, էջ 214:

⁵ Տե՛ս **Теплов В.А.** *Определение суда первой инстанции по уголовному делу. Автореф. дисс. ... к.ю.н., Саратов, 1974, էջ 9; Зайцев И.М.* *Целевые установки гражданского судопроизводства // Проблемы реформы гражданского процессуального права и практики его применения.* - Свердловск, 1990, էջեր 17-18:

¹ Տե՛ս **Հովհաննիսյան Վ.Վ.**, *նշված աշխատ., էջեր 323, 326:*

խոսվում է նաև ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածում, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 10-րդ հոդվածում¹ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածում²:

Ժամանակակից դատավարագիտության մեջ արդարացիության պահանջը որպես դատական ակտերին ներկայացվող ինքնուրույն պահանջ դիտարկող հեղինակների մեծամասնությունն այդ պահանջի առկայությունը հիմնավորում են արդար դատաքննության իրավունքի մասին միջազգային-իրավական և սահմանադրական դրույթների միջոցով³:

Խոսելով միջանկյալ դատական ակտերի դեմ բերված բողոքների մերժման մասին՝ Մ. Ա. Վիկուտը նշում է, որ առաջին աստիճանի դատարանի բողոքարկված միջանկյալ դատական ակտը թողնվում է անփոփոխ, եթե այն օրինական և հիմնավորված է, իսկ բողոքի հիմքերը ոչ էական են⁴: Այս կապակցությամբ Ի. Մ. Չայցեվը նշում է, որ միջանկյալ դատական ակտի դեմ բերված բողոքը կարող է մերժվել հետևյալ դեպքերում՝

- վերաքննիչ բողոք բերած անձը խնդրել է բեկանել միջանկյալ դատական ակտը՝ հղում կատարելով համապատասխան դատավարական իրավունքի նորմի սեփական ոչ ճիշտ մեկնաբանության վրա,

¹ *Տե՛ս Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի թիվ 217 A (III) բանաձևով 10.12.1948թ.), http://www.un.org/ru/documents/decl_conv/declarations/declhr.shtml (10.09.2014թ.):*

² *Տե՛ս «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (ընդունվել է 04.11.1950թ., ուժի մեջ է մտել 03.09.1953թ., ՀՀ-ի համար կոնվենցիան ուժի մեջ է մտել 26.04.2002թ.), <http://conventions.coe.int/treaty/rus/treaties/html/005.htm> (10.09.2014թ.):*

³ *Տե՛ս օրինակ Сахнова Т.В. Курс гражданского процесса: теоретические начала и основные институты. – М.: "Волтерс Клувер", 2008, էջեր 439-440:*

⁴ *Տե՛ս Гражданский процесс России: Учебник / Под ред. М.А. Визут. - М.: «Юрист», 2005, էջ 228:*

- վերաքննիչ բողոք բերած անձը դիտարկող կամ առանց դիտարկողության խեղաթյուրել է գործի հանգամանքները,

- վերաքննիչ բողոք բերած անձը հղում է կատարել այնպիսի հանգամանքների վրա, որոնք չեն կարող հիմք հանդիսանալ դատական ակտի բեկանման համար¹:

Ամփոփելով վերը շարադրված կարծիքները և դրանք համադրելով ՔԴՕ-ում ամրագրված իրավակարգավորման հետ՝ գտնում ենք, որ միջանկյալ դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքը մերժելու և բողոքարկված միջանկյալ դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու լիազորությունը կիրառելի է բոլոր այն դեպքերում, երբ.

ա) Միջանկյալ դատական ակտն օրինական և հիմնավորված է, իսկ դրա դեմ ներկայացված վերաքննիչ բողոքի փաստարկներն անհիմն են:

բ) Միջանկյալ դատական ակտն օրինական և հիմնավորված չէ, սակայն դրա դեմ ներկայացված վերաքննիչ բողոքի փաստարկները նույնպես անհիմն են: ՔԴՕ-ի 219-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում: Այս կանոնը վերաբերում է նաև միջանկյալ դատական ակտերի բողոքարկմանը: Հետևաբար, մերժման ենթակա են ոչ միայն օրինական և հիմնավորված միջանկյալ դատական ակտերի դեմ ներկայացված անհիմն վերաքննիչ բողոքները, այնպես էլ՝ ոչ օրինական և/կամ չհիմնավորված միջանկյալ դատական ակտերի դեմ ներկայացված անհիմն վերաքննիչ բողոքները:

գ) Միջանկյալ դատական ակտի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքը հիմնավոր է, սակայն բողոքարկված միջանկյալ դատական ակտն ըստ էության ճիշտ է և բխում է ինչպես գործում առկա ապացույցներից, այնպես էլ՝ կիրառման ենթակա դատավարական և ն-

¹ *Տե՛ս Зайцев И.М. Кассационные определения в советском гражданском процессуальном праве. - Саратов, 1967, էջեր 56-57:*

յութական օրենսդրությունից: Ասվածը համահունչ է նաև ՔԴՕ-ում ամրագրված այն իմպերատիվ կանոնի հետ, համաձայն որի՝ դատարանի ըստ էության ճիշտ դատական ակտը չի կարող բեկանվել միայն ձևական նկատառումներով:

Խոսելով ըստ էության ճիշտ դատական ակտը միայն ձևական նկատառումներով բեկանելու արգելքի մասին՝ պետք է նշել, որ ՔԴՕ-ի 220.3-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ նյութական իրավունքի նորմի խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է գործի սխալ լուծման: Նույն օրենսգրքի 220.4-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը դատական ակտի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման: Դատարանի ըստ էության ճիշտ դատական ակտը չի կարող բեկանվել միայն ձևական նկատառումներով:

Վերը նշված նորմերից ուղղակիորեն հետևում է, որ բոլոր այն դեպքերում, երբ միջանկյալ դատական ակտի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքը հիմնավոր է, սակայն բողոքարկված միջանկյալ դատական ակտն ըստ էության ճիշտ է և բխում է գործում առկա ապացույցներից և կիրառման ենթակա դատավարական ու նյութական օրենսդրությունից, վերաքննիչ դատարանը պետք է մերժի վերաքննիչ բողոքը՝ լրացուցիչ պատճառաբանելով ուժի մեջ թողնված միջանկյալ դատական ակտը¹:

Մինչդեռ ՔԴՕ-ի 221-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքում վերաքննիչ դատարանը մերժում է վերաքննիչ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, կամ կայացնում է նոր դատական ակտ, որն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից: **Այսինքն, վերաքննիչ դատարանն օժտ-**

¹ Այս կապակցությամբ տե՛ս նաև **Մեղոյան Ս.Գ.**, *Առաջին ատյանի դատարանի քաղաքացիական գործերով դատական ակտերը*, Եր., ԵՊՀ հրատ., 2010, էջ 101:

ված չէ ըստ էության ճիշտ միջանկյալ դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու և այն լրացուցիչ պատճառաբանելու լիազորությամբ:

Հետևաբար, ՔԴՕ-ի 221-րդ հոդվածի 2-րդ մասն անհրաժեշտ է ձևակերպել այնպես, որ վերաքննիչ դատարանն իրավունք ունենա լրացուցիչ պատճառաբանել ըստ էության ճիշտ, սակայն թերի կամ սխալ պատճառաբանված միջանկյալ դատական ակտերը՝ դրանց դեմ բերված հիմնավոր վերաքննիչ բողոքները մերժելու դեպքում:

Ուստի նպատակահարմար ենք գտնում ՔԴՕ-ի 221-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ դրույթով. *«Այն դեպքում, երբ վերաքննիչ դատարանը մերժում է վերաքննիչ բողոքը, սակայն դատարանի կայացրած ըստ էության ճիշտ միջանկյալ դատական ակտը թերի կամ սխալ է պատճառաբանված, ապա վերաքննիչ դատարանը պատճառաբանում է անփոփոխ թողնված դատական ակտը»*: Նշվածը վերաքննիչ դատարանին թույլ կտա լրացուցիչ պատճառաբանել և օրինական ուժի մեջ թողնել ըստ էության ճիշտ, սակայն թերի կամ սխալ պատճառաբանված միջանկյալ դատական ակտերը¹:

Պետք է նշել, որ բողոքարկված միջանկյալ դատական ակտն անփոփոխ թողնելու և վերաքննիչ բողոքը մերժելու դեպքում վերաքննիչ դատարանը պարտավոր է իր որոշման մեջ հիմնավորել նման դիրքորոշումը: Ընդ որում, ցանկացած բողոքարկված դատական ակտի (այդ թվում նաև՝ միջանկյալ դատական ակտի)՝ ըստ էության ճիշտ լինելը կարող է հիմնավորվել նաև այնպիսի փաստարկներով, որոնք այդ դատական ակտում առկա չեն, սակայն բխում են գործում առկա ապացույցներից և կիրառման ենթակա օ-

¹ Օրինակ, թիվ ԵԱԴԴ/0004/02/10 քաղաքացիական գործով 2010թ. դեկտեմբերի 9-ին կայացված որոշմամբ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը վերացրել է «Քաղաքացիական գործի վարույթը կասեցնելու մասին» Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 14.10.2010թ. որոշումը՝ բացառապես պատշաճ պատճառաբանված չլինելու հիմքով:

րենսդրությունից: Խոսելով բողոքարկված միջանկյալ դատական ակտն անփոփոխ թողնելու և վերաքննիչ բողոքը մերժելու լիազորության մասին՝ Կ. Ի. Կոմիսարովը նշում է, որ վերադաս դատարանն իրավունք ունի բողոքի քննության արդյունքում միջանկյալ դատական ակտից հանել որոշ անճշտություններ, որոնք կարող են ունենալ որոշակի իրավական հետևանքներ¹:

Բողոքարկված միջանկյալ դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելով՝ վերաքննիչ դատարանը հաճախ հիմնվում է առաջին աստիճանի դատարանի որոշման մեջ մատնանշված փաստարկների վրա՝ վերահաստատելով դրանք: Որոշ դատավարագետների կարծիքով, նման իրավիճակի պատճառն այն է, որ դատավորների կողմից շատ հաճախ նվազ ուշադրություն է դարձվում միջանկյալ դատական ակտերի բողոքարկման նշանակությանը, այն համարվում է երկրորդական՝ համեմատած դատարանի վճռի բողոքարկման հետ²:

Իրավաբանական գրականության մեջ անգամ կարծիք է հայտնվել առ այն, որ միջանկյալ դատական ակտերի բողոքարկման արդյունքում կայացված այն դատական ակտերը, որոնք օրինական ուժի մեջ են թողնում բողոքարկված միջանկյալ դատական ակտը, լրացուցիչ պատճառաբանման ենթակա չեն: Այս տեսակետը հիմնավորվում է նրանով, որ առկա ծանրաբեռնվածության պայմաններում նպատակահարմար և խնայողական չէ դատարանի վրա դնել բողոքարկված միջանկյալ դատական ակտը չբեկանող պատճառաբանված որոշումներ կայացնելու պարտականություն³:

Մեր կարծիքով, քննարկվող լիազորության կիրառման դեպքում, վերաքննիչ դատարանի որոշման հիմնավորումը ենթադրում է

ոչ թե բողոքարկված միջանկյալ դատական ակտում պարունակվող փաստարկների կրկնություն և դրա օրինականության և հիմնավորվածության պարզ վերահաստատում, այլ՝ բողոքի բոլոր հիմքերին և հիմնավորումներին կատարված հստակ անդրադարձ և բողոքի փաստարկների հերքում: Ասվածը համահունչ է ՀՀ Վճռաբեկ դատարանի արտահայտած դիրքորոշմանն առ այն, որ վերաքննիչ դատարանը բողոքը քննելիս պարտադիր կերպով պետք է անդրադառնա վերաքննիչ բողոքի բոլոր հիմքերին և հիմնավորումներին⁴:

Վերաքննիչ դատարանի քննարկվող լիազորության կիրառման կապակցությամբ հարկ ենք համարում անդրադառնալ ևս մեկ ուշագրավ խնդրի: ՔԴՕ-ի 213-րդ հոդվածում ամրագրված են գործն ըստ էության լուծող և միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքները վերադարձնելու հիմքերը: Վերը նշված հոդվածը սահմանում է, որ, ի թիվս այլ հիմքերի՝ վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե՝

- այն բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո և միջնորդություն չի պարունակում բաց թողած ժամկետը վերականգնելու մասին, կամ նման միջնորդությունը չի բավարարել դատարանը.

- բողոքարկվել է այն դատական ակտը, որը ենթակա չէ բողոքարկման:

Վերաքննիչ բողոքը վերադարձնելու՝ վերը նշված հիմքերը կարող են առաջանալ ինչպես գործն ըստ էության լուծող, այնպես էլ՝ գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտերի բողոքարկման ընթացքում: Այդուհանդերձ, գործնականում դրանք կիրառելի են հիմնականում գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դա-

¹ *Sté u Комиссаров К.И. Полномочия суда второй инстанции в гражданском процессе. - М., 1961, էջեր 15-16:*

² *Sté u Катюкова С.Ю. Частное обжалование и пересмотр определений суда первой инстанции. Дисс. ... к.ю.н. - Саратов, 1998, էջեր 124-125:*

³ *Sté u նույն տեղում:*

⁴ *Sté u ՀՀ վճռաբեկ դատարանի 2010թ. մայիսի 27-ի որոշումը՝ թիվ ԵԷԴ/0871/02/09 քաղաքացիական գործով, ՀՀ վճռաբեկ դատարանի 2011թ. հուլիսի 1-ի որոշումը՝ թիվ ԼԴ/0365/02/09 քաղաքացիական գործով, ՀՀ վճռաբեկ դատարանի 2012թ. մարտի 23-ի որոշումը՝ թիվ ԵԱՆԴ/1097/02/10 քաղաքացիական գործով և ՀՀ վճռաբեկ դատարանի 2012թ. մարտի 23-ի որոշումը՝ թիվ ԳԴ4/0092/02/11 քաղաքացիական գործով:*

տական ակտերի նկատմամբ: Գործնականում չի բացառվում, որ վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելուց հետո պարզի, որ.

- սխալմամբ վարույթ է ընդունել այնպիսի դատական ակտի դեմ բերված բողոք, որն օրենքով բողոքարկման ենթակա չէ (ասվածը վերաբերում է բացառապես միջանկյալ դատական ակտերին, որոնց գերակշռող մասը բողոքարկման ենթակա չէ),

- սխալմամբ վարույթ է ընդունել այնպիսի վերաքննիչ բողոք, որը բերվել է օրենքով նախատեսված բողոքարկման ժամկետը լրանալուց հետո (ասվածը հատկապես վերաբերում է միջանկյալ դատական ակտերին, որոնց բողոքարկման ժամկետը, որպես կանոն, հաշվարկվում է դրանք գործին մասնակցող անձի կողմից ստացվելու պահից):

Նման բողոքները սխալմամբ վարույթ ընդունելու դեպքում վերաքննիչ դատարանը, ներկայումս գործող իրավակարգավորման համաձայն, գործնականում պետք է կիրառի սույն պարագրաֆում քննարկվող լիազորությունը (մերժի գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքը): Թեև պետք է նշել, որ դատական պրակտիկայում հանդիպում են նաև նման վերաքննիչ բողոքները բավարարելու դեպքեր¹:

Մինչդեռ մեր կարծիքով նման վերաքննիչ բողոքների մերժումը չի կարող համարվել հարցի ճշգրիտ լուծում: Բանն այն է, որ վերաքննիչ բողոքը կարող է մերժվել, եթե այն անհիմն է, կամ եթե այն հիմնավոր է, սակայն դրանում առկա փաստարկները բավարար հիմք չեն բողոքարկված միջանկյալ դատական ակտը բեկանելու (վերացնելու) համար:

Մեր կողմից նկարագրված իրավիճակներում վերաքննիչ դա-

¹ Օրինակ, թիվ ԵԱՆԴ/0197/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը վարույթ է ընդունել քաղաքացիական գործն ըստ ընդդատության ուղարկելու մասին որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքը և իր 01.11.2012թ. որոշմամբ վերացրել է բողոքարկված որոշումը:

տարանը գործ ունի ոչ թե անհիմն և/կամ մերժման ենթակա վերաքննիչ բողոքների հետ, այլ՝ այնպիսի իրավիճակների հետ, երբ ի սկզբանե բացակայել են վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու և վերաքննիչ վարույթ սկսելու նախադրյալները, սակայն վերաքննիչ դատարանը բողոքը վարույթ ընդունելու փուլում դրանք չի նկատել:

Գտնում ենք, որ վերը նշված իրավիճակներում վերաքննիչ դատարանը պետք է օժտված լինի վերաքննիչ բողոքի քննությունն ավարտելու հնարավորությամբ՝ առանց բողոքի ճակատագիրն ըստ էության լուծող դատական ակտի կայացման: Խոսքը մասնավորապես վերաբերում է այն դեպքերին, երբ դատական ակտի վերաքննության փուլում (վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելուց հետո) ի հայտ են եկել միջանկյալ դատական ակտի վերաքննությունը բացառող հետևյալ հանգամանքները.

- բողոքարկվել է այնպիսի դատական ակտ, որը ենթակա չէ բողոքարկման (հարկ է նշել, որ Պ.Ու. Կուզնեցովն առաջարկել է այս հանգամանքն ամրագրել որպես դատական ակտի վերանայման արդեն իսկ սկսված վարույթը կարճելու հիմք)¹,

- բողոքը ներկայացրել է այն անձը, ով տվյալ դատական ակտը բողոքարկելու իրավունք չունի,

- բողոքը բերվել է օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո և միջնորդություն չի պարունակում բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին:

¹ Ст'я Кузнецов П.У. Возбуждение кассационного производства по гражданским делам: Автореф. дисс. ... к.ю.н. - Свердловск, 1986, էջ 14:

§ 3. Վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքը բավարարելու և բողոքարկված միջանկյալ դատական ակտը վերացնելու կամ նոր դատական ակտ կայացնելու լիազորությունը

Գործն ըստ էության չլուծող դատական ակտերի բողոքարկումը պետք է տարբերել առաջին աստիճանի դատարանին ուղղված այն դիմումներից և միջնորդություններից, որոնցով գործին մասնակցող անձը դատարանից խնդրում է վերացնել կամ փոխել նախկինում իր կողմից ընդունված որոշումը¹: Նման միջնորդության բավարարման դեպքում դատարանի նոր որոշումը փոխարինում է նախկինում կայացված որոշումը²: Մասնավորապես, ՔԴՕ-ի 100-րդ և 101-րդ հոդվածների համաձայն, նման կարգով կարող է վերացվել կամ փոփոխվել հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ առաջին աստիճանի դատարանի որոշումը: Առաջին աստիճանի դատարանի նման գործունեությունն իրենից ներկայացնում է իր իսկ կողմից նախկինում թույլ տրված դատական սխալի վերացում³, իսկ դրա հետևանքները շատ նման են գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտերի բողոքարկման հետևանքներին⁴:

Խոսելով միջանկյալ դատական ակտի բողոքարկման արդյունքում բողոքարկված դատական ակտի վերացման կամ նոր դատական ակտի կայացման լիազորությունների մասին՝ նախ և առաջ պետք է քննարկել այն հարցը, թե **առաջին աստիճանի դատարանի կողմից կայացված և գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) ո՞ր դատական ակտերը կարող են անմիջականորեն բողոքարկվել վերաքննության կարգով:**

¹ *Տե՛ս Катюкова С.Ю. Частное обжалование и пересмотр определений суда первой инстанции. Дисс. ... к.ю.н. - Саратов, 1998, էջ 32:*
² *Տե՛ս Катюкова С.Ю., նշված աշխատ., էջ 33:*
³ *Տե՛ս Зайцев И.М. Устранение судебных ошибок в гражданском процессе. - Саратов, 1985, էջ 39:*
⁴ *Տե՛ս Катюкова С.Ю., նշված աշխատ., էջեր 34-35:*

ՔԴՕ-ի 140¹-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ընդհանուր իրավասության դատարանի բողոքն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել միայն սույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերում: ՔԴՕ-ի 207-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ միջանկյալ դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել միայն օրենքով նախատեսված դեպքերում:

ՔԴՕ-ի, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի¹, ԴՕ-ի և ՀՀ սահմանադրական դատարանի թիվ ՍԴՌ-719 որոշմամբ ամրագրված անմիջական բողոքարկման ենթակա գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտերի ցանկի² համակողմանի վերլուծությունը ցույց է տալիս, որ անմիջական բողոքարկման կարգով վերաքննիչ դատարան կարող են բողոքարկվել գործն ըստ էության չլուծող հետևյալ դատական ակտերը՝ **1)** դատավորի ինքնաբացարկի մասին որոշումը (ԴՕ-ի 91-րդ հոդվածի 4-րդ մաս), **2)** դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու, դրա կատարման եղանակն ու կարգը փոփոխելու մասին դիմումի քննության արդյունքում կայացված որոշումը (ԴԱՀԿ օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մաս), **3)** կատարողական թերթը հարկադիր կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը հարգելի ճանաչելու և այն վերականգնելու մասին դիմումի քննության արդյունքում կայացված որոշումը (ԴԱՀԿ օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մաս), **4)** վճռի կատարման շրջադարձի մասին դիմումի քննության արդյունքում կայացված որոշումը (ԴԱՀԿ օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ մաս), **5)** կատարողական թերթը պարզաբանելու մասին դիմումի քննության արդյունքում կայացված որոշումը (ԴԱՀԿ օրենքի 35-րդ հոդվածի 4-րդ մաս), **6)** հայցադիմու-

¹ *Ընդունվել է 05.05.1998թ., ուժի մեջ է մտել 01.01.1999թ.: Տե՛ս ՀՀՊՏ 1998/12(45), 15.06.1998թ.: Այսուհետ՝ ԴԱՀԿ օրենք*
² *Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2007թ. նոյեմբերի 28-ի թիվ ՍԴՌ-719 որոշումը:*

մի ընդունումը մերժելու մասին որոշումը (ՔԴՕ-ի 91-րդ հոդվածի 4-րդ մաս), **7**) հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը (ՔԴՕ-ի 92-րդ հոդվածի 4-րդ մաս), **8**) հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու մասին որոշումը (ՔԴՕ-ի 104-րդ հոդվածի 3-րդ մաս), **9**) գործի վարույթը կասեցնելու մասին որոշումը (ՔԴՕ-ի 108-րդ հոդվածի 2-րդ մաս), **10**) դատական տուգանք կիրառելու մասին որոշումը (ՔԴՕ-ի 115-րդ հոդվածի 8-րդ մաս), **11**) լրացուցիչ վճիռ կայացնելը մերժելու մասին որոշումը (ՔԴՕ-ի 142-րդ հոդվածի 5-րդ մաս), **12**) վճիռը պարզաբանելու կամ վրիպակները, գրասխալները և թվաբանական սխալներն ուղղելու մասին որոշումը (ՔԴՕ-ի 143-րդ հոդվածի 4-րդ մաս):

Մյուս միջանկյալ դատական ակտերը չեն հանդիսանում անմիջական բողոքարկման օբյեկտ, սակայն գործին մասնակցող անձինք այդ ակտերը կարող են բողոքարկել՝ դատարանի վճռի դեմ բերված բողոքում դրանց վերաբերյալ իրենց դիրքորոշումը ներկայացնելու միջոցով¹: ՀՀ սահմանադրական դատարանն իր 2010թ. նոյեմբերի 2-ի թիվ ՍԴՈ-922 որոշմամբ ամրագրել է, որ օրենսդիրը տարբերակում է միջանկյալ դատական ակտերի բողոքարկման երկու հիմնական կարգ, այն է՝ բողոքարկում գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման շրջանակներում՝ «հետաձգված բողոքարկում», եւ միջանկյալ դատական ակտի անմիջական բողոքարկում: Սահմանադրական դատարանը շեշտել է, որ օրենսդիրը, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում սահմանելով տվյալ միջանկյալ ակտի անմիջական բողոքարկման հնարավորություն՝ չի բացառում միջանկյալ դատական ակտերի բողոքարկելիությունը գործն ըստ էության լուծող դատական ակտերի բողոքարկման շրջանակներում²: Պետք է նշել, որ այս հարցի կապակցությամբ հակառակ դիրք

քորոշում է արտահայտել ՀՀ վճռաբեկ դատարանը¹:

ՔԴՕ-ի 221-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքում վերաքննիչ դատարանը ... կայացնում է նոր դատական ակտ, որն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից»: Նույն օրենսգրքի 221³-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «Վերաքննիչ դատարանը, գործը քննելով, իրավունք ունի վերացնելու առաջին ատյանի դատարանների՝ սույն օրենսգրքով բողոքարկման ենթակա գործն ըստ էության չլուծող դատական ակտերը»:

Քննարկելով վերը նշված իրավանորմերի կիրառման կապակցությամբ առաջացող խնդիրները՝ նախ և առաջ պետք է նշել, որ դատարանի լիազորություններն իրենցից ներկայացնում են և իրենց բնույթով հանդիսանում են ոչ միայն իրավունքներ, այլև՝ պարտականություններ²: Նման պայմաններում անհասկանալի է, թե ինչու է օրենսդիրը գործն ըստ էության չլուծող դատական ակտը վերացնելու իրավազորությունը նախատեսել զուտ դատավարական գործողություն կատարելու իրավունքի ձևով՝ ընդգրկելով այն դատական հայեցողության ոլորտ³:

Քննարկվող լիազորության հետ կապված հաջորդ ուշագրավ խնդիրը վերաքննիչ դատարանի կողմից միջանկյալ դատական ակտի բողոքարկման արդյունքում նոր դատական ակտ կայացնելու լիազորության՝ առանձին կիրառման ենթակա լինելու կամ չլինելու

¹ ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԱՐԱԴ2/0169/02/11 քաղաքացիական գործով 28.11.2014թ. կայացված որոշմամբ նշել է, որ եթե դատավարության մասնակիցը չի իրացրել միջանկյալ դատական ակտն անմիջական բողոքարկման կարգով բողոքարկելու իր իրավունքը, ապա նա այլևս չի կարող տվյալ միջանկյալ դատական ակտը բողոքարկել գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման շրջանակներում:

² Տե՛ս **Каз С.Ю.** Судебный надзор в гражданском судопроизводстве. - М. 1980, էջ 187:

³ Տե՛ս **Հովհաննիսյան Վ.Վ.**, Վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, Եր.: ԵՊՀ հրատ., 2013, էջ 326:

¹ Տե՛ս **Калмацкий В.С.** Полномочия кассационной инстанции в гражданском судопроизводстве. Уфа. 1984, էջ 65:

² Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2010թ. նոյեմբերի 2-ի թիվ ՍԴՈ-922 որոշումը:

հարցն է: Այսպես, ՔԴՕ-ի 221-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքում վերաքննիչ դատարանն իրավունք ունի կայացնել նոր դատական ակտ, որն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից:

Քննարկվող իրավանորմում առկա ձևակերպումներից ենթադրվում է, որ «նոր դատական ակտը» պետք է փոխարինի բողոքարկված միջանկյալ դատական ակտին և պարունակի բողոքարկված միջանկյալ դատական ակտին հակառակ եզրահանգումներ՝ քննարկվող հարցի կապակցությամբ:

Ասվածի համատեքստում գտնում ենք, որ վերաքննիչ դատարանի կողմից նոր դատական ակտ կայացնելու լիազորությունը պետք է կիրառվի բացառապես բողոքարկված միջանկյալ դատական ակտը վերացնելու լիազորության (ՔԴՕ-ի 221³-րդ հոդվածի 3-րդ մաս) հետ մեկտեղ: Այսինքն, միջանկյալ դատական ակտի վերաքննության արդյունքում վերաքննիչ դատարանի կողմից նոր միջանկյալ դատական ակտ կայացնելու լիազորությունն առանձին վերցրած կիրառման ենթակա չէ:

Վերը նշված դիրքորոշման համատեքստում վերլուծելով ՔԴՕ-ի 221-րդ հոդվածի 2-րդ մասը և 221³-րդ հոդվածի 3-րդ մասը՝ կարող ենք արձանագրել, որ **միջանկյալ դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքը բավարարելու դեպքում** վերաքննիչ դատարանը, ներկայիս իրավակարգավորման համաձայն, իրավունք ունի.

- վերացնել բողոքարկված միջանկյալ դատական ակտը,
- վերացնել բողոքարկված միջանկյալ դատական ակտը և կայացնել բողոքարկված միջանկյալ դատական ակտին փոխարինող դատական ակտ:

Ընդ որում, վերը նշված երկու դեպքերում էլ վերաքննիչ դատարանը փաստորեն կայացնում է վիճելի հարցին վերջնական և սպառնիչ լուծում տվող դատական ակտ:

Այսպես, բողոքարկված միջանկյալ դատական ակտը վերաքննիչ դատարանի կողմից վերացվում է այն դեպքում, երբ.

- վերաքննիչ դատարանը հանգում է այն եզրակացության, որ բողոքարկված միջանկյալ դատական ակտն օրինական և/կամ հիմնավորված չէ,

- առկա չէ տվյալ հարցը (դիմումը, միջնորդությունը) առաջին ատյանի դատարանի կողմից կրկին քննելու անհրաժեշտություն,

- վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի քննության արդյունքում գալիս է այն եզրահանգման, որ առաջին ատյանի դատարանն ընդհանրապես չպետք է նման միջանկյալ դատական ակտ կայացնել (առկա չէ վերացված միջանկյալ դատական ակտը նոր դատական ակտով փոխարինելու անհրաժեշտություն):

Վերաքննիչ դատարանը վերացնում է բողոքարկված միջանկյալ դատական ակտը և կայացնում է բողոքարկված միջանկյալ դատական ակտին փոխարինող դատական ակտ այն դեպքերում, երբ.

- վերաքննիչ դատարանը հանգում է այն եզրակացության, որ բողոքարկված միջանկյալ դատական ակտն օրինական և/կամ հիմնավորված չէ,

- առկա չէ տվյալ հարցը (դիմումը, միջնորդությունը) առաջին ատյանի դատարանի կողմից կրկին քննելու անհրաժեշտություն,

- վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի քննության արդյունքում գալիս է այն եզրահանգման, որ առաջին ատյանի դատարանը պետք է կայացնել այլ միջանկյալ դատական ակտ (առկա է վերացված միջանկյալ դատական ակտը նոր դատական ակտով փոխարինելու անհրաժեշտություն):

Այսպիսով, վերը նշված երկու դեպքերում էլ վերաքննիչ դատարանը կատարում է վերջնական և սպառնիչ եզրահանգում՝ քննարկվող հարցի և բողոքարկված դատական ակտի վերաբերյալ, և հարցին տրվում է վերջնական լուծում:

Մինչդեռ վերաքննիչ դատարանի վերը նշված լիազորությունները երբեմն բավարար չեն վերջինիս առջև դրված խնդիրներն արդյունավետ կերպով լուծելու համար: Միջանկյալ դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում հնարավոր է, որ վերաքննիչ դատարանը եզրահանգի, որ.

- բողոքարկված միջանկյալ դատական ակտն օրինական և/կամ հիմնավորված չէ,

- առկա է տվյալ հարցը առաջին ատյանի դատարանի կողմից կրկին քննելու անհրաժեշտություն, քանի որ վերաքննիչ դատարանը որևէ պատճառով չի կարողանում վերջնական եզրահանգում կատարել քննարկվող հարցի և բողոքարկված դատական ակտի վերաբերյալ:

Նման իրավիճակներ կարող են առաջանալ մասնավորապես լրացուցիչ վճիռ կայացնելը մերժելու մասին որոշման, ինչպես նաև՝ դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու, դրա կատարման եղանակն ու կարգը փոփոխելու, կատարողական թերթը հարկադիր կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը հարգելի ճանաչելու և այն վերականգնելու, վճռի կատարման շրջադարձի և կատարողական թերթը պարզաբանելու մասին դիմումների քննության արդյունքում կայացված որոշումների դեմ բերված բողոքների քննության ընթացքում:

Գտնում ենք, որ վերը նշված դեպքերում (երբ վերաքննիչ դատարանը որևէ պատճառով չի կարողանում վերջնական եզրահանգում կատարել քննարկվող հարցի վերաբերյալ) վերաքննիչ դատարանը պետք է օժտված լինի բողոքարկված **միջանկյալ դատական ակտը վերացնելու և քննարկվող հարցն առաջին ատյանի դատարան նոր քննության ուղարկելու լիազորությամբ:**

Բաց այդ, բողոքարկված միջանկյալ դատական ակտը վերացնելու և հարցը նոր քննության ուղարկելու լիազորությունը վերաքննիչ դատարանի կողմից պետք է կիրառվի նաև բոլոր այն դեպքերում, երբ բողոքարկվող միջանկյալ դատական ակտը կայացվել է ՔԴՕ-ի 220.4-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված դատավարական նորմերի պահանջների խախտմամբ (դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերի առկայության պայմաններում):

Թիվ ԵԿԴ/1118/02/12 քաղաքացիական գործով կայացված որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է դատական ակտի

անվերապահ բեկանման հիմքերին՝ իրավացիորեն նշելով, որ՝

- դրանք այնպիսի դատավարական սխալներ են, որոնք անմիջականորեն կապված են արդարադատության սկզբունքների և դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի խախտումների հետ,

- այդպիսի խախտումները խաթարում են դատարանի դերն ու նշանակությունը,

- նման խախտումների առկայությամբ կայացված դատական ակտը չի կարող լինել համոզիչ ու հեղինակավոր,

- դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերի առկայությունը կասկածի տակ է դնում ընդհանրապես արդարադատություն իրականացված լինելու կամ արդարադատությունը դատարանի կողմից իրականացված լինելու իրողությունը,

- նման խախտումների բնույթն այնպիսին է, որ դրանք կարող են վերացվել բացառապես դատական ակտի բեկանումից հետո գործի ամբողջ ծավալով նոր քննություն իրականացվելու դեպքում,

- դատական ակտի անվերապահ բեկանման որևէ հիմքի առկայությունը հաստատված լինելու դեպքում կիրառման է ենթակա դատական ակտը բեկանելու և գործը համապատասխան ստորադաս դատարան նոր քննության ուղարկելու լիազորությունը¹:

Այսպիսով, դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերը դատավարական իրավունքի նորմերի այնպիսի խախտումներ են, որոնք հանգեցնում են դատական ակտի անվերապահ բեկանման՝ անկախ այդ դատական ակտի՝ ըստ էության ճիշտ լինելու կամ չլինելու հանգամանքից: Պետք է նշել, որ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ձևավորված դատական պրակտիկան վկայում է այն մասին, որ դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերի առկայության դեպքում վերաքննիչ դատարանը պարտավոր է կիրառել բացառապես ՔԴՕ-ի 221-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված

¹ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2014թ. որոշումը՝ թիվ ԵԿԴ/1118/02/12 քաղաքացիական գործով:

լիազորությունը (բեկանել դատական ակտը և գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության)¹: Նման մոտեցման հիմքում ընկած է այն տրամաբանությունը, որ դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերը արդարադատության այդպիսի «արատներ» են, որոնց առկայության պայմաններում հարցին վերջնական լուծում տալը չի բխում արդարադատության արդյունավետության շահերից:

Գտնում ենք, որ վերը նշված մոտեցումը կիրառելի է ոչ միայն գործն ըստ էության լուծող, այլև՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի բողոքարկման դեպքում: Բոլոր այն դեպքերում, երբ բողոքարկվող միջանկյալ դատական ակտը կայացվել է ՔԴՕ-ի 220.4-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված դատավարական նորմերի պահանջների խախտմամբ, վերաքննիչ դատարանը, իր որոշմամբ հարցին վերջնական լուծում տալու փոխարեն, պետք է վերացնի բողոքարկված միջանկյալ դատական ակտը և հարցն ուղարկի առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Ասվածը հիմք ընդունելով՝ առաջարկում ենք ՔԴՕ-ի 221-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ իրավանորմով. «Միջանկյալ դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքը բավարարելու դեպքում վերաքննիչ դատարանն իրավունք ունի.

- 1) վերացնել բողոքարկված դատական ակտը,
- 2) վերացնել բողոքարկված դատական ակտը և կայացնել դրան փոխարինող նոր դատական ակտ,
- 3) վերացնել բողոքարկված դատական ակտը և հարցն ուղարկել առաջին ատյանի դատարան՝ նոր քննության»:

Քննարկվող հարցի կապակցությամբ համանման մոտեցում է ամրագրված նաև Մոլդովայի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում: Այսպես, օրենսգրքի 359-րդ հոդվա-

ծի 1-ին մասը և 423-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում են, որ առաջին ատյանի դատարանի միջանկյալ դատական ակտերն օրենքով նախատեսված դեպքերում կարող են անմիջականորեն բողոքարկվել վճռաբեկության կարգով: Օրենսգրքի 427-րդ հոդվածը թվարկում է միջանկյալ դատական ակտերի բողոքարկման արդյունքում վճռաբեկ ատյանի դատարանի կողմից կիրառելի լիազորությունները, այն է՝ 1) մերժել բողոքը՝ անփոփոխ թողնելով բողոքարկված միջանկյալ դատական ակտը, 2) բավարարել բողոքը, ամբողջությամբ կամ մասնակի բեկանել դատարանի միջանկյալ դատական ակտը և գործը վերադարձնել նոր քննության, 3) բավարարել բողոքը, ամբողջությամբ կամ մասնակի բեկանել դատարանի միջանկյալ դատական ակտը և իր որոշմամբ հարցին ըստ էության լուծում տալ¹:

Խիստ ուշագրավ է, որ առաջին ատյանի դատարանի կողմից կայացվող մի շարք գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտեր դատական պրակտիկայում որակվում են որպես գործն ըստ էության լուծող դատական ակտեր: Դրանց դեմ բերված վերաքննիչ բողոքները քննվում են երեք դատավորի կազմով (մինչդեռ ՔԴՕ-ի 217-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ առաջին ատյանի դատարանի միջանկյալ դատական ակտերի դեմ ներկայացված բողոքները վերաքննիչ դատարանում քննվում են միանձնյա): Նման բողոքների քննության արդյունքում վերաքննիչ դատարանը կիրառում է ՔԴՕ-ի 221-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված լիազորությունները, որոնք կիրառելի են գործն ըստ էության լուծող դատական ակտի վերաքննության դեպքում:

Որպես ասվածի հիմնավորում՝ ներկայացնենք հետևյալ օրինակները.

- Թիվ ԱԲԱԴ2/0169/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը երեք դատավորի կազմով քննութ-

¹ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից կայացված որոշումները՝ թիվ ԵԱՆԴ/0461/02/10, ԵԱՔԴ/2279/02/11, ԵԿԴ/2760/02/12, ԵՇԴ/0700/02/12, ԵԿԴ/1118/02/12 և ԵՔԴ/0443/02/08 քաղաքացիական գործերով:

¹ Տե՛ս Մոլդովայի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, ընդունվել է 2003թ. մայիսի 30-ին, հրապարակվել է 12.06.2003թ., ուժի մեջ է մտել 12.06.2003թ., Monitorul Oficial № 111-115, հոդված № 451:

յան է առել Անժելա Գևորգյանի վերաքննիչ բողոքը՝ ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի «Վճռի կատարման շրջադարձի մասին դիմումը քննության առնելու մասին» 19.12.2013թ. որոշման դեմ: Բողոքի քննության արդյունքում վերաքննիչ դատարանը որոշել է բավարարել վերաքննիչ բողոքը, բեկանել և փոփոխել բողոքարկված դատական ակտը¹:

- Թիվ ԵԿԴ/0139/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը երեք դատավորի կազմով քննության է առել Լևիկ և Սարգիս Աղաբեկյանների վերաքննիչ բողոքը՝ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 20.11.2013թ. «Վճռում թույլ տրված վրիպակն ուղղելու մասին» որոշման դեմ²:

- Թիվ ԼԴ/0376/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը երեք դատավորի կազմով քննության է առել Սոֆիա Հարությունյանի վերաքննիչ բողոքը՝ ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի «Վճիռը պարզաբանելու մասին» 19.12.2013թ. որոշման դեմ³:

- Թիվ ԵԱԴԴ/0134/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը երեք դատավորի կազմով քննել է «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի վերաքննիչ բողոքը՝ Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի «Կատարողական թերթը հարկադիր կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը հարգելի ճանաչելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին»

27.06.2014թ. որոշման դեմ¹:

- Թիվ ԵԱԴԴ/0899/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը երեք դատավորի կազմով քննել է Երևան համայնքի և «Սևաբերդ» ՍՊԸ-ի վերաքննիչ բողոքները՝ Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի «Կատարողական թերթը պարզաբանելու վերաբերյալ դիմումը մերժելու մասին» 18.10.2013թ. որոշման դեմ²:

- Թիվ ԳԴ/0540/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը երեք դատավորի կազմով քննել է «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ի վերաքննիչ բողոքը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի «Վճիռը պարզաբանելու մասին» 20.05.2013թ. որոշման դեմ: Բողոքի քննության արդյունքում վերաքննիչ դատարանը բեկանել է դատարանի որոշումը և գործն ուղարկել է առաջին աստիճանի դատարան՝ նոր քննության³:

Այսինքն, դատական պրակտիկայում գործն ըստ էության լուծող դատական ակտեր են համարվում ոչ միայն վճիռները, այլև՝ առաջին աստիճանի դատարանի կողմից կայացված այն որոշումները, որոնք՝ 1) որևէ կերպ փոփոխում են վճռի բովանդակությունը կամ լրացնում են այն, կամ 2) կարգավորում են վճռի հարկադիր կատարման ընթացքը:

Նման դատական ակտերի բողոքարկումը ներկայումս գործնականում իրականացվում է գործն ըստ էության լուծող դատական ակտերի բողոքարկման համար սահմանված ընթացակարգով, և դրանց բողոքարկման արդյունքում կիրառվում են ՔԴՕ-ի 221-րդ հոդ-

¹ Տե՛ս ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.04.2014թ. որոշումը՝ թիվ ԱԴԱԴ2/0169/02/11 քաղաքացիական գործով:

² Տե՛ս ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.02.2014թ. որոշումը՝ թիվ ԵԿԴ/0139/02/13 քաղաքացիական գործով:

³ Տե՛ս ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 07.05.2014թ. որոշումը՝ թիվ ԼԴ/0376/02/09 քաղաքացիական գործով:

¹ Տե՛ս ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.11.2014թ. որոշումը՝ թիվ ԵԱԴԴ/0134/02/12 քաղաքացիական գործով:

² Տե՛ս ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.03.2014թ. որոշումը՝ թիվ ԵԱԴԴ/0899/02/09 քաղաքացիական գործով:

³ Տե՛ս ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 31.07.2013թ. որոշումը՝ թիվ ԳԴ/0540/02/12 քաղաքացիական գործով:

վածի 1-ին մասով նախատեսված լիազորությունները:

Նման մոտեցումը վերաքննիչ դատարանին թույլ է տալիս խուսափել մեր կողմից առաջադրված խնդրահարույց իրավիճակից և լուծել իր առջև ծառայած խնդիրները՝ մի շարք գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերաքննության արդյունքում կիրառելով ՔԴՕ-ի 221-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված լիազորությունները (որոնք կիրառելի են գործն ըստ էության լուծող դատական ակտի վերաքննության դեպքում)¹:

Այդուհանդերձ, համաձայն չլինելով դատական պրակտիկայում ձևավորված այս մոտեցման հետ, գտնում ենք, որ հարցն ունի օրենսդրական կարգավորման անհրաժեշտություն:

¹ Պետք է նաև նշել, որ թիվ ԿԴ/0003/11/10 քրեական գործով 2011թ. մայիսի 11-ին կայացված որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն ամրագրել է, որ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայման արդյունքում նոր դատական ակտ կայացնելիս վերաքննիչ դատարանը պետք է դեկավարվի ՔրԴՕ-ի 394-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված լիազորություններով (այն լիազորություններով, որոնցով վերաքննիչ դատարանն օժտված է գործն ըստ էության լուծող դատական ակտերի բողոքարկման դեպքում): ՀՀ վճռաբեկ դատարանն իր դիրքորոշումը հիմնավորել է գործն ըստ էության չլուծող դատական ակտերի բողոքարկման արդյունքում վերաքննիչ դատարանի կողմից կայացվող դատական ակտերին վերաբերող օրենսդրական ձևակերպումների անորոշությամբ:

ԳԼՈՒԽ 2.

ԳՈՐԾՆ ԸՍՏ ԷՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՈՂ ԴՍՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴՍՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԻՐԱՌՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

§ 1. Գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքը մերժելու, դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու և անփոփոխ թողնված վճիռը լրացուցիչ պատճառաբանելու լիազորությունը

ՔԴՕ-ի 221-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի վերաքննության արդյունքում վերաքննիչ դատարանը մերժում է վերաքննիչ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ: Այն դեպքում, երբ վերաքննիչ դատարանը մերժում է վերաքննիչ բողոքը, սակայն դատարանի կայացրած գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի կամ սխալ է պատճառաբանված, ապա վերաքննիչ դատարանը պատճառաբանում է անփոփոխ թողնված դատական ակտը:

Վերը նշված իրավանորմի շրջանակներում ամրագրված են վերաքննիչ դատարանի երկու ինքնուրույն, սակայն փոխկապակցված լիազորություններ, այն է՝

- վերաքննիչ բողոքն անհիմն լինելու դեպքում՝ վերաքննիչ դատարանի կողմից բողոքը մերժելու և բողոքարկված դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու լիազորությունը,

- գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի կամ սխալ պատճառաբանված լինելու դեպքում՝ վերաքննիչ դատարանի կողմից այն լրացուցիչ պատճառաբանելու լիազորությունը:

Վերաքննիչ բողոքը մերժելու և բողոքարկված դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու լիազորությունը. Վերաքննիչ բողոքը մերժելու և բողոքարկված դատական ակտն օրինական ուժի

մեջ թողնելու լիազորությունը կիրառելի է բոլոր այն դեպքերում, երբ՝ ա) վճիռն օրինական և հիմնավորված է, իսկ դրա դեմ ներկայացված վերաքննիչ բողոքի փաստարկներն անհիմն են, բ) վճիռն օրինական և հիմնավորված չէ, սակայն դրա դեմ ներկայացված վերաքննիչ բողոքի փաստարկները նույնպես անհիմն են, գ) վերաքննիչ բողոքը հիմնավոր է, սակայն դրանում վկայակոչված խախտումները չեն ազդել և չէին կարող ազդել գործի ելքի վրա, քանի որ գործն ըստ էության ճիշտ է լուծված:

Պետք է նշել, որ վերաքննիչ բողոքը մերժելու և բողոքարկված դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու լիազորության կիրառման արդյունքում վերաքննիչ դատարանի մոտ առաջանում է իր որոշումը հիմնավորելու պարտականություն: Իրավաբանական գրականության մեջ տեղ գտած կարծիքների համաձայն՝ բողոքը մերժելու և բողոքարկված դատական ակտն անփոփոխ թողնելու լիազորությունը կիրառելիս վերադաս դատարանը պարտավոր է իր որոշման մեջ մատնանշել այն հիմնավորումները և շարժառիթները, որոնց հիման վրա բողոքի փաստարկները ճանաչվում են չհիմնավորված և դատական ակտի բեկանման համար հիմք չհանդիսացող¹: Այսպիսով վերադաս դատարանը, կիրառելով սույն լիազորությունը, իր որոշմամբ հաստատում է բողոքարկված դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը²:

Ընդ որում, քննարկվող լիազորության կիրառման դեպքում վերաքննիչ դատարանի որոշման հիմնավորումը ենթադրում է ոչ թե բողոքարկված վճռում պարունակվող փաստարկների կրկնություն և դրա օրինականության և հիմնավորվածության պարզ վերահաստա-

տում, այլ՝ բողոքի բոլոր հիմքերին և հիմնավորումներին կատարված հստակ անդրադարձ և բողոքի փաստարկների հերքում: Ասվածը համահունչ է ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից բազմիցս արտահայտած դիրքորոշմանն առ այն, որ վերաքննիչ դատարանը բողոքը քննելիս պարտադիր կերպով պետք է անդրադառնա վերաքննիչ բողոքի բոլոր հիմքերին և հիմնավորումներին¹: Թեև մյուս կողմից, թիվ ՎԴ/1346/05/10 վարչական գործով կայացված որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն ամրագրել է, որ վերաքննիչ դատարանը պարտավոր չէ գնահատել և վերլուծել վերաքննիչ բողոքի հիմքում ներառված բոլոր փաստարկները: Բողոքը քննող դատարանը բողոքի հիմքերում ներառված փաստարկներին պետք է անդրադառնա այն հաշվով, որ նախ դրանք լինեն վերաբերելի բողոքի հիմքերին, և այդ փաստարկներն ունենան ազդեցություն բողոքի հիմքը կամ հիմքերը հիմնավորված համարելու տեսանկյունից²:

Սմեն դեպքում, ՔԴՕ-ի 220-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ վճռի դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքներով կայացված որոշման պատճառաբանական մասը պետք է պարունակի եզրահանգում՝ բողոքի յուրաքանչյուր հիմքի հիմնավոր լինելու վերաբերյալ, մասնավորապես պատասխանելով հետևյալ հարցերին՝

- արդյո՞ք հիմնավոր է վերաքննիչ բողոքի հիմքը՝ բողոքում տվյալ հիմքի վերաբերյալ նշված հիմնավորումների սահմաններում,
- եթե վերաքննիչ բողոքի հիմքում դրված պահանջը հիմնավոր չէ, ապա ի՞նչ հիմնավորմամբ՝ հղում կատարելով միջազգային պայ-

¹ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2010թ. մայիսի 27-ի որոշումը՝ թիվ ԵԷԴ/0871/02/09 քաղաքացիական գործով, ՀՀ վճռաբեկ դատարանի 2011թ. հուլիսի 1-ի որոշումը՝ թիվ ԼԴ/0365/02/09 քաղաքացիական գործով, ՀՀ վճռաբեկ դատարանի 2012թ. մարտի 23-ի որոշումը՝ թիվ ԵԱՆԴ/1097/02/10 քաղաքացիական գործով և ՀՀ վճռաբեկ դատարանի 2012թ. մարտի 23-ի որոշումը՝ թիվ ԳԴ4/0092/02/11 քաղաքացիական գործով:

² Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2013թ. մայիսի 24-ի որոշումը՝ թիվ ՎԴ/1346/05/10 վարչական գործով:

¹ Տե՛ս օրինակ *Гражданское процессуальное право России / Под ред. П.В. Алексия, Н.Д. Амаглобели. - 2-е изд., перераб. и доп. - М.: «ЮНИТИ-ДАНА», 2007, էջ 335; Гражданский процесс: Учебник / Под ред. А.Г. Коваленко, А.А. Мохова, П.М. Филиппова. - М.: «ИНФРА-М», 2008, էջ 268:*

² Տե՛ս *Гражданский процесс России: Учебник / Под ред. М.А. Вьюк. - М.: «Юристъ», 2005, էջ 218:*

մանագրերի, օրենքների և այլ իրավական ակտերի այն նորմերին, ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի այն որոշումներին, որոնց հիման վրա վերաքննիչ դատարանը գտնում է, որ բողոքի հիմքում դրված պահանջը հիմնավոր չէ:

Այսպիսով, քննարկվող լիազորությունը կիրառելիս վերաքննիչ դատարանը պարտավոր է անդրադառնալ բողոքի բոլոր հիմքերին և հիմնավորումներին՝ մատնանշելով, թե ինչ պատճառաբանությամբ է անհիմն համարում վերաքննիչ բողոքի այս կամ այն փաստարկը:

Վերաքննիչ դատարանի կողմից առաջին ատյանի դատարանի վճիռը լրացուցիչ պատճառաբանելու լիազորությունը. Անդրադառնալով հիշյալ լիազորության բնույթին՝ պետք է նշել, որ այն հանդիսանում է վերաքննիչ դատարանի պարտադիր (ոչ հայեցողական) լիազորությունը: ՔԴՕ-ով նախատեսված հիմքերի առկայության դեպքում վերաքննիչ դատարանը ոչ թե իրավունք ունի, այլ՝ պարտավոր է պատճառաբանել ընդհանուր իրավասության դատարանի վճիռը: Այն դեպքում, երբ առաջին ատյանի դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, սակայն այն թերի կամ սխալ է պատճառաբանված, վերաքննիչ դատարանը պարտավոր է նման գործը վերաքննելիս առաջին ատյանի դատարանի դատական ակտի պատճառաբանությունները լրացնել նոր պատճառաբանություններով (եթե այդ ակտը թերի է պատճառաբանված) կամ ճիշտ պատճառաբանություններով (եթե այդ ակտը սխալ է պատճառաբանված)¹:

Եթե դատարանն ըստ էության ճիշտ է լուծել գործը, սակայն սխալ կամ թերի է պատճառաբանել իր վճիռը, ապա վերաքննիչ դատարանն իրավունք չունի բեկանել դատարանի վճիռը՝ սխալ կամ թերի պատճառաբանված լինելու հիմքով: Նման դեպքերում վե-

¹ Տե՛ս **Հովհաննիսյան Վ.Վ.**, *Վերաքննիչ դատարանի առարկայական լիազորությունների հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում*, «Դատական իշխանություն», Եր., 2012, թիվ 10 (159), էջ 36:

րաքննիչ դատարանը պարտավոր է մերժել վերաքննիչ բողոքը և իր որոշմամբ լրացնել ընդհանուր իրավասության դատարանի վճիռի պատճառաբանությունները: Այսպիսով, վերաքննիչ դատարանի քննարկվող լիազորությունը տրամաբանական կապի մեջ է գտնվում ՔԴՕ-ի 228-րդ հոդվածի 1-ին մասի հետ, որը սահմանում է, որ դատարանի՝ ըստ էության ճիշտ վճիռը չի կարող բեկանվել միայն ձևական նկատառումներով (օրինակ՝ թերի կամ սխալ պատճառաբանված լինելու հիմքով):

Ինչ վերաբերում է քննարկվող լիազորության նպատակին, պետք է նշել, որ այս լիազորության նպատակն է՝ ապահովել գործի ողջամիտ ժամկետում քննությունը, կանխել գործի քննության անհարկի ձգձգումներն ու դատական շրջապտույտը: Վերաքննիչ դատարանի քննարկվող լիազորությունն ուղղակիորեն պայմանավորված է ողջամիտ ժամկետում գործը քննելու պահանջով և ուղղված է քաղաքացիական գործի շրջապտույտի կանխմանը: Այսինքն՝ այս դրույթը վերաքննիչ դատարանին լիազորում է իր իրավասության սահմաններում, եթե դա հնարավոր է դատական ակտի վերաքննության արդյունքում, վերացնել գործն ըստ էության լուծող դատական ակտի թերությունները՝ դրանով իսկ կանխելով գործի քննության անհարկի ձգձգումներն ու շրջապտույտը: Այսպիսով, ՔԴՕ-ի 221-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում ամրագրված վերաքննիչ դատարանի լիազորությունն ամրագրում է դատավարական երաշխիք առ այն, որ գործն ըստ էության ճիշտ լուծող վճիռները վերաքննիչ դատարանի կողմից չեն բեկանվի սխալ կամ թերի պատճառաբանված լինելու հիմքով:

Հարկ է նշել, որ մինչև «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» 08.02.2011թ. ՀՕ-37-Ն ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելը, ՔԴՕ-ի 221-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանին պարտավորեցնում էր վերաքննիչ բողոքը մերժելու դեպքում լրացուցիչ պատճառաբանել ոչ միայն գործն ըստ էության ճիշտ լուծող և

թերի կամ սխալ պատճառաբանված, այլև՝ գործն ըստ էության ճիշտ լուծող և չպատճառաբանված դատական ակտերը:

Սակայն ՀՀ Սահմանադրական դատարանն իր թիվ ՄԴՌ-896 որոշմամբ ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչեց ՔԴՕ-ի 221-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ «... կամ պատճառաբանված չէ» բառակապակցության մասով¹:

Վերը նշված որոշմամբ ՀՀ Սահմանադրական դատարանն ամրագրեց, որ՝

- վերաքննիչ դատարանին նման լիազորություն վերապահելը նպատակ է հետապնդում երաշխավորել առաջին ատյանի դատարանի գործն ըստ էության ճիշտ լուծած դատական ակտի պատճառաբանվածությունը և դատաքննությունը ողջամիտ ժամկետում կազմակերպելու սահմանադրաիրավական պահանջի իրացումը, ինչպես նաև ապահովել իրավական որոշակիության սկզբունքի իրացումը.

- թերի պատճառաբանված և սխալ պատճառաբանված դատական ակտերի մասով վերաքննիչ դատարանին նման լիազորություն վերապահելը համահունչ է ՀՀ Սահմանադրությամբ և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով երաշխավորված՝ արդար դատաքննության և ողջամիտ ժամկետներում դատական քննության իրավունքներին: Ավելին, հիշյալ լիազորության բացակայությունը կարող է վտանգել արդար դատաքննության, ինչպես նաև ողջամիտ ժամկետներում դատաքննության իրավունքները.

- վերաքննիչ դատարանին չպատճառաբանված դատական ակտերի պատճառաբանման լիազորություն վերապահելը ենթադրում է չպատճառաբանված դատական ակտի գոյություն, մինչդեռ օրենսդրությունը պետք է բացառի չպատճառաբանված դատական ակտի գոյությունը, որովհետև նման ակտը չի կարող համապա-

¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2010թ. հունիսի 15-ի թիվ ՄԴՌ-896 որոշումը:

տասխանել իրավական պետության հիմնարար սկզբունքներին, չի կարող երաշխավորել մարդկանց իրավունքների արդյունավետ դատական պաշտպանություն, և ապահովել խախտված իրավունքների արդյունավետ վերականգնում: Նման դիրքորոշման հիմքում դրված են ինչպես ՀՀ Սահմանադրական դատարանի¹, այնպես էլ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի² ակտերը:

ՀՀ Սահմանադրական դատարանի վերը նշված որոշումից և «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» 08.02.2011թ. ՀՕ-37-Ն ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը գրկվեց չպատճառաբանված դատական ակտերի պատճառաբանման լիազորությունից՝ պահպանելով թերի պատճառաբանված և սխալ պատճառաբանված դատական ակտերի պատճառաբանման լիազորությունները:

Հարկ է նշել, որ իրավաբանական գրականության մեջ քննարկվել է այն հարցը, թե արդյո՞ք արդարացված է վերաքննիչ դատարանին գործն ըստ էության ճիշտ լուծող, սակայն չպատճառաբանված դատական ակտը պատճառաբանելու լիազորությունից գրկելը: Առաջարկվել է բացառիկ դեպքերում վերաքննիչ դատարանին տալ գործն ըստ էության ճիշտ լուծող, սակայն չպատճառաբանված դատական ակտը պատճառաբանելու լիազորություն, եթե գործն ակնհայտորեն ճիշտ է լուծված և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից³:

Անդրադառնալով վերաքննիչ դատարանի կողմից առաջին ատյանի դատարանի վճիռը լրացուցիչ պատճառաբանելու լիազո-

¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2007թ. ապրիլի 9-ի թիվ ՄԴՌ-690 որոշումը:

² Տե՛ս *Van de Hunk v. the Netherlands* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1994թ. ապրիլի 19-ի վճիռը:

³ Տե՛ս **Հովհաննիսյան Վ.Վ.**, Վերաքննիչ դատարանի առարկայական լիազորությունների հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, «Դատական իշխանություն», Եր., 2012, թիվ 10(159), էջ 41:

րության իրավաչափ կիրառման պայմաններին, պետք է նշել, որ դրանք հետևյալն են՝

- դատարանը կայացրել է գործն ըստ էության լուծող դատական ակտ (վճիռ),

- դատարանն իր վճռով ըստ էության ճիշտ է լուծել գործը,

- դատարանը թերի կամ սխալ է պատճառաբանել իր վճիռը,

- դատական ակտի դեմ ներկայացվել է վերաքննիչ բողոք, որը մերժվել է վերաքննիչ դատարանի կողմից: Անփոփոխ թողնված դատական ակտը պատճառաբանելն ուղղակիորեն պայմանավորված է վերաքննիչ բողոքը մերժելու հանգամանքով և հանդիսանում է դրա դատավարական հետևանքը¹:

Այսպիսով, առաջին ատյանի դատարանի վճիռը լրացուցիչ պատճառաբանելու լիազորությունը վերաքննիչ դատարանի կողմից կարող է կիրառվել միայն այն դեպքերում, երբ դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող, սակայն թերի կամ սխալ պատճառաբանված դատական ակտ: Հետևաբար, քննարկվող լիազորության իրավաչափ կիրառման պայմաններն առավել ամբողջական և բազմակողմանի բացահայտելու նպատակով նախ և առաջ անհրաժեշտ է պատասխանել այն հարցադրմանը թե **ի՞նչ է իրենից ներկայացնում գործն ըստ էության ճիշտ լուծող, սակայն թերի կամ սխալ պատճառաբանված դատական ակտը:**

Իրավաբանական գրականության մեջ պատճառաբանվածությունը դիտարկվում է որպես դատարանի վճռին ներկայացվող պահանջ, որը սերտորեն փոխկապակցված է դատարանի վճռին ներկայացվող երկու այլ պահանջների՝ օրինականության և հիմնավորվածության հետ: Հետևաբար, վերը նշված հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է պարզաբանել «դատական ակտի օրինականություն», «դատական ակտի հիմնավորվածություն» և «դատական ակտի պատճառաբանվածություն» հասկացությունները՝ քննարկելով դրանց փոխհարաբերակցությունը և փոխադարձ կապը:

¹ Տե՛ս **Հովհաննիսյան Վ.Վ.**, նշված աշխատ., էջ 35:

Ի. Ա. Վոլկովայի կարծիքով դատական ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը ենթադրում է, որ՝

- այն ընդունվել է դատավարական նորմերի լիարժեք պահպանմամբ և տվյալ իրավահարաբերության նկատմամբ կիրառման ենթակա նյութական նորմերի հիման վրա,

- գործի համար նշանակություն ունեցող բոլոր փաստերը հաստատված են համապատասխան ապացույցներով, որոնք բավարարում են թույլատրելիության և վերաբերելիության պահանջներին¹:

Ն. Ի. Տկաչովը նշում է, որ միջանկյալ դատական ակտն օրինական է, եթե դատարանի գործունեությունը դատավարական նորմերի իրացման (պահպանում, կատարում, օգտագործում և կիրառում) հարցում իրավաչափ է²:

Ըստ Ս. Գ. Մեդրյանի՝ դատական ակտն **օրինական** է, եթե այն՝

- դատարանի կողմից կայացվել է քաղաքացիական դատավարական ձևի պահանջներին խիստ համապատասխան իրականացված դատավարական գործունեության արդյունքում, այսինքն՝ դատավարության նորմերի պահանջների պահպանմամբ,

- հիմնված է դատարանի կողմից վարույթի առարկայի՝ վիճելի նյութական իրավահարաբերության նկատմամբ նյութական իրավունքի նորմերի ճիշտ կիրառման վրա,

- պարունակում է կողմերի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ դատարանի՝ օրենքի, այլ իրավական ակտերի, պայմանագրի և գործարար շրջանառության սովորույթների վրա հիմնված ըստ էության ճիշտ հետևություններ³:

Դատական ակտը կարելի է համարել **հիմնավորված**, եթե դատարանը՝

¹ Տե՛ս *Гражданский процесс: Учебник / Под ред. А.Г. Коваленко, А.А. Мохова, П.М. Филиппова.* - М.: «ИНФРА-М», 2008, էջ 268:

² Տե՛ս *Ткачев Н.И.* Законность и обоснованность судебных постановлений по гражданским делам. - Саратов, 1987, էջ 95:

³ Տե՛ս **Մեդրյան Ս.Գ.**, *Առաջին ատյանի դատարանի քաղաքացիական գործերով դատական ակտերը*, Եր., ԵՊՀ հրատ., 2010, էջ 74:

- դատական ակտի շրջանակներում շարադրել է գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների շրջանակը,

- այդ հանգամանքներից յուրաքանչյուրի առկայության կամ բացակայության մասին իր դատողությունները հիմնավորել է բացառապես դատական նիստում հետազոտված թույլատրելի և վերաբերելի ապացույցներով,

- վճռում նշել և գնահատել է ապացույցները, որոնց վրա հիմնված են իր հետևությունները,

- մատնանշել է այն իրավական նորմերը, որոնցով ինքը ղեկավարվել է վճիռ կայացնելիս,

- իր կողմից հաստատված հանգամանքներից ճիշտ եզրակացություններ է արել կողմերի փոխհարաբերությունների մասին¹:

Մի շարք դատավարագետներ առանձնացնում են նաև դատական ակտի **պատճառաբանվածությունը**՝ որպես դատական ակտերին ներկայացվող պահանջ և դատական ակտի ինքնուրույն հատկանիշ:

Ըստ Ս. Կ. Զագայնովայի՝ պատճառաբանվածությունը հանդիսանում է դատարանի որոշման (որպես արդարադատության ակտի) պարտադիր հատկանիշը, քանի որ այդ հատկանիշի միջոցով արտացոլվում է դատական իշխանության բնույթը²: Ե. Վ. Խախալովայի կարծիքով՝ պատճառաբանված պետք է համարել այն դատական ակտը, որում՝

- ամբողջականորեն և բազմակողմանիորեն արտացոլված են դատարանի գործունեության արդյունքները՝ գործի լուծման համար նշանակություն ունեցող բոլոր ապացույցների հետազոտման և գնահատման տեսանկյունից,

- հստակ շարադրված են դատարանի այն պատճառաբանությունները, որոնց հիման վրա դատարանն ընդունել է ապացույցների

¹ Տե՛ս **Մեդրյան Ս.Գ.**, նշված աշխատ., էջ 91:

² Տե՛ս **Загайнова С.К.** Судебные акты в механизме реализации судебной власти в гражданском и арбитражном процессе. - М., 2007, էջ 301:

մի մասը, իսկ մյուս մասը մերժել է¹:

Վ. Ա. Պոնոմարենկոն այս կապակցությամբ նշում է, որ պատճառաբանվածությունը.

- հանդիսանում է քաղաքացիական գործով կայացվող դատական ակտի անբաժանելի կառուցվածքային տարրը,

- միմյանց է կապում դատաքննության ընթացքում հաստատված իրավաբանական փաստերը և դատարանի իրավական եզրահանգումները,

- հետևողականորեն արտացոլում է դատավոր(ներ)ի մոտ ներքին համոզմունքի ձևավորման գործընթացը²:

Ս. Գ. Մեդրյանի կարծիքով՝ դատական ակտի պատճառաբանվածությունը դատական ակտի հատկություն է, որը թույլ է տալիս ըմբռնել վիճելի իրավահարաբերության որակման, ապացույցների հետազոտման և գնահատման, կիրառման ենթակա իրավական նորմերի ընտրության և մեկնաբանման ողջ գործընթացը, այն սկսելուց ընդհուպ մինչև եզրահանգումների ձևակերպումը դատարանի կատարած դատողությունների ընթացքը³: Դատական ակտը համարվում է պատճառաբանված, եթե դրա բովանդակությունից հստակ երևում է իրավունքի կիրառման, գործի փաստական հանգամանքների և ապացույցների գնահատման, իրավահարաբերության որակման կապակցությամբ դատարանի դատողությունների ընթացքը և դրանցից տրամաբանորեն բխող արդյունքները (եզրահանգումները)⁴:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավա-

¹ Տե՛ս **Хахалева Е.В.** Обоснованность решения суда общей юрисдикции: Автореф. дис. канд. юрид. наук. - Саратов, 2005, էջ 14:

² Տե՛ս **Пономаренко В.А.** Мотивированность судебного решения в гражданском судопроизводстве // Российский ежегодник гражданского и арбитражного процесса, 2007, № 6, էջ 209:

³ Տե՛ս **Մեդրյան Ս.Գ.**, Առաջին ատյանի դատարանի քաղաքացիական գործերով դատական ակտերը, Եր., ԵՊՀ հրատ., 2010, էջեր 93-94:

⁴ Տե՛ս **Մեդրյան Ս.Գ.**, նշված աշխատ., էջեր 96-97:

րության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 10.06.2014թ. ՀՕ-49-Ն ՀՀ օրենքով ՔԴՕ-ի 130-րդ հոդվածի 3-րդ մասը փոփոխվեց՝ սահմանելով, որ դատարանի վճիռը պետք է լինի ոչ միայն օրինական և հիմնավորված, այլև՝ պատճառաբանված¹: Նույն օրենքն առաջին անգամ ՔԴՕ ներմուծեց «վճռի օրինականություն», «վճռի հիմնավորվածություն» և «վճռի պատճառաբանվածություն» հասկացությունների բովանդակությունը:

ՔԴՕ-ի 130.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանի վճիռն օրինական է, եթե այն կայացվել է ՀՀ Սահմանադրության, ՔԴՕ-ի, այլ օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների պահպանմամբ, որոնց նորմերը կիրառելի են տվյալ գործը քննելիս: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանի վճիռը հիմնավորված է, եթե վճռում շարադրված եզրահանգումները և հաստատված փաստերը համապատասխանում են առաջին ատյանի դատարանում հետազոտված ապացույցներին: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանի վճիռը պատճառաբանված է, եթե դրանում երևում են փաստերի հաստատման, ապացույցների գնահատման և իրավունքի կիրառման գործընթացի կապակցությամբ դատարանի դատողությունների ընթացքը և դրանից բխող եզրահանգումները:

Դատական ակտերին ներկայացվող վերը նշված երեք պահանջները (օրինականություն, հիմնավորվածություն և պատճառաբանվածություն) գտնվում են սերտ փոխկապակցվածության մեջ: Դրանց փոխադարձ կապը և փոխապայմանավորվածությունը դրսևորվում է հետևյալում:

ա) Դատական ակտի հիմնավորվածությունն ու պատճառաբանվածությունը հանդիսանում են ՔԴՕ-ով դատական ակտին ներկայացվող պահանջներ: Հետևաբար դատական ակտը չհիմնավորելը

¹ Հարկ է նշել, որ մինչև նշված օրենքն ուժի մեջ մտնելը ՔԴՕ-ով դատական ակտերին ներկայացվող պահանջները երկուսն էին՝ օրինականությունը և հիմնավորվածությունը:

և/կամ չպատճառաբանելը հանդիսանում է դատավարական նորմերի խախտում: Հետևաբար, չհիմնավորված և/կամ չպատճառաբանված դատական ակտն արդեն իսկ օրինական համարվել չի կարող: Ասվածը համահունչ է նաև դատավարագիտության մեջ որպես աքսիոմա դիտարկվող այն մտքին, որ «ամեն մի չհիմնավորված վճիռ նաև անօրինական է, սակայն ամեն մի հիմնավորված վճիռ չէ, որ օրինական է»¹:

բ) Դատական ակտի հիմնավորվածությունը օբյեկտիվ կատեգորիա է. այդ պահանջի ուժով դատական ակտը պետք է հիմնված լինի դատարանի կողմից պարզված որոշակի հանգամանքների և իրավական նորմերի վրա²: Ընդ որում, օբյեկտիվ կատեգորիա պետք է համարել ոչ միայն դատական ակտի հիմնավորվածությունը, այլև՝ օրինականությունը: Ի տարբերություն դատական ակտի հիմնավորվածության, որը օբյեկտիվ կատեգորիա է, պատճառաբանվածությունը հանդիսանում է սուբյեկտիվ կատեգորիա³: Դատական ակտի պատճառաբանվածությունը ենթադրում է, որ.

- դատական ակտը պարունակում է դատողություններ հետազոտված ապացույցների, դրանց գնահատման, ինչպես նաև վիճելի իրավահարաբերության որակման ժամանակ դատարանի կողմից կիրառված իրավական նորմի մեկնաբանության մասին⁴,

- դատական ակտում նշված են փաստերի և իրավահարաբերությունների մասին կատարված եզրահանգումները, ինչպես նաև՝

¹ Տե՛ս **Պետրոսյան Ռ.Գ.**, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, երրորդ հրատ., - Եր., ԵՊՀ հրատ., 2007, էջ 468; **Տախովա Գ.Վ.** Курс гражданского процесса: теоретические начала и основные институты. - М.: "Волтерс Клувер", 2008, էջ 441:

² Տե՛ս **Տախովա Գ.Վ.** Курс гражданского процесса: теоретические начала и основные институты. - М.: "Волтерс Клувер", 2008, էջ 440:

³ Տե՛ս **Տախովա Գ.Վ.**, նշված աշխատ., էջ 440:

⁴ Տե՛ս **Վիկուտ Մ.Ա.** Законность и обоснованность актов социалистического правосудия как главное условие выполнения задач гражданского судопроизводства. В кн.: Цивилистические проблемы правового статуса личности в социалистическом обществе. - Саратов, 1982, էջ 124:

այն պատճառները և շարժառիթները, որոնք ցույց են տալիս դատարանի իրականացրած մտավոր, տրամաբանական գործունեությունը¹:

Այսինքն, պատճառաբանվածությունը ենթադրում է դատական ակտում համապատասխան դատողությունների և եզրահանգումների առկայություն: Այդ դատողությունները և եզրահանգումները կարող են լինել ինչպես ճիշտ, այնպես էլ՝ սխալ: Այս կապակցությամբ Կ. Ա. Լեբեդը նշում է, որ պատճառաբանվածությունը ենթադրում է դատական ակտում դատավորի եզրահանգումների առկայություն, այն դեպքում, երբ իրավանորմի մեկնաբանումը և վիճելի իրավահարաբերության ճիշտ որակումը վերաբերում են դատական ակտի օրինականության հատկանիշին²:

Այսպիսով, դատական ակտում կարող են մանրամասն շարադրված լինել փաստերի հաստատման, ապացույցների գնահատման և իրավունքի կիրառման գործընթացի կապակցությամբ դատարանի դատողությունների ընթացքը և եզրահանգումները, սակայն մինևույն ժամանակ, գործը կարող է ըստ էության սխալ լուծված լինել, դատական ակտը կարող է կայացված լինել դատավարական իրավունքի նորմերի պահանջների խախտմամբ, դատական ակտով հաստատված փաստերը կարող են չբխել դատարանի կողմից հետազոտված ապացույցներից և այլն: Հետևաբար, պատճառաբանված դատական ակտը կարող է լինել ոչ օրինական և/կամ չհիմնավորված:

զ) Դատական ակտի հիմնավորվածությունը և պատճառաբանվածությունը թեև սերտորեն փոխկապակցված են, սակայն պատճառաբանվածությունը հիմնավորվածությունից տարբերվող³ և ինքնու-

րույն պահանջ է, որը անհրաժեշտ է սահմանազատել հիմնավորվածությունից⁴: Այս կապակցությամբ Տ. Վ. Մախնովան նշում է, որ հիմնավորված վճիռը պետք է պատճառաբանված լինի, սակայն դրանք նույնական պահանջներ չեն²: Դատական ակտի պատճառաբանվածությունը կապված է դատարանի կողմից այն շարժառիթները շարադրելու հետ, որոնց հիման վրա նա հանգել է այս կամ այն եզրակացության: Ընդ որում, դրանք պետք է վերաբերվեն ինչպես իրավունքի, այնպես էլ փաստի հարցերին: Պատճառաբանվածությունը արտացոլում է գործով հաստատված փաստական հանգամանքների և դատարանի եզրահանգումների միջև կապը և թույլ է տալիս բացահայտել հետազոտված ապացույցների միջև առկա հակասությունները³: Բացի այդ, դատական ակտի պատճառաբանվածությունը ցույց է տալիս, թե ինչպես է դատարանը հասկանում կիրառվող նյութաիրավական կամ դատավարական նորմը⁴:

Պատճառաբանվածությունը ենթադրում է, որ դատավորն այնպես պետք է փաստարկի իր դատական ակտը, որ այն կարդացողը համոզվի դրա ճշմարտացիության մեջ: Պատճառաբանվածությունը կոչված է համոզելու, որ դատական ակտի հիմքում ընկած է ոչ թե դատավորի սուբյեկտիվ կարծիքը, այլ՝ օրենքը և գործում առկա ապացույցները:

դ) Դատական ակտի հիմնավորվածությունը և պատճառաբանվածությունը սերտորեն փոխկապակցված երևույթներ են. դատական ակտի հիմնավորվածությունը մեծապես պայմանավորված է

¹ Տե՛ս *Լեբեծ Կ.Ա.* *Решение арбитражного суда.* – М., 2005, էջ 80:

² Տե՛ս *Տախնովա Տ.Վ.* *Курс гражданского процесса: теоретические начала и основные институты.* – М.: "Волтерс Клувер", 2008, էջ 440:

³ Տե՛ս *Տոլոչկո Ա.Ն.* *Роль мотивировки в обеспечении законности, обоснованности и справедливости актов социалистического правосудия, выносимых судом первой инстанции по уголовным делам. Автореф. дисс. ...к.ю.н. - Харьков, 1985, էջ 9:*

⁴ Տե՛ս *Մեղրյան Մ.Գ., Առաջին ատյանի դատարանի քաղաքացիական գործերով դատական ակտերը, Եր., ԵՊՀ հրատ., 2010, էջ 96:*

¹ Տե՛ս *Լեբեծ Կ.Ա.* *Решение арбитражного суда.* – М., 2005, էջ 80:

² Տե՛ս *Լեբեծ Կ.Ա.,* *նշված աշխատ., էջ 83:*

³ Տե՛ս *Վիկուտ Մ.Ա.* *Законность и обоснованность актов социалистического правосудия как главное условие выполнения задач гражданского судопроизводства. В кн.: Цивилистические проблемы правового статуса личности в социалистическом обществе.* – Саратов, 1982, էջ 124:

պատշաճ պատճառաբանվածությամբ: Պատճառաբանվածությունը կոնկրետ դատական ակտում հիմնավորվածության պահանջի իրացման ժամանակ դատարանի մտավոր, տրամաբանական գործունեության արտացոլումն է: Դատական ակտի հիմնավորվածության պահանջի պատշաճ իրացման մասին կարող է խոսք լինել միայն այն դեպքում, երբ դատական ակտի բովանդակությունից հստակ երևում է իրավունքի կիրառման, գործի փաստական հանգամանքների և ապացույցների գնահատման, իրավահարաբերության որակման կապակցությամբ դատարանի դատողությունների ընթացքը և դրանցից տրամաբանորեն բխող եզրահանգումները¹:

Ամփոփելով վերը նշված դատավարագետների կարծիքները և դրանք համադրելով ՔԴՕ-ի 130.1-րդ հոդվածի դրույթների հետ՝ կարող ենք բացահայտել «գործն ըստ էության ճիշտ լուծող, սակայն թերի պատճառաբանված դատական ակտ» և «գործն ըստ էության ճիշտ լուծող, սակայն սխալ պատճառաբանված դատական ակտ» հասկացությունները: Այսպես, գործն ըստ էության ճիշտ լուծող և թերի (սխալ) պատճառաբանված դատական ակտի մասին կարելի է խոսել հետևյալ դեպքում՝

- դատական ակտում երևում են փաստերի հաստատման, ապացույցների գնահատման և իրավունքի կիրառման գործընթացի կապակցությամբ դատարանի դատողությունների ընթացքը և եզրահանգումները,

- այդ դատողությունները և եզրահանգումները լիարժեք կամ ամբողջական չեն (կամ սխալ են),

- դատական ակտի եզրափակիչ մասը օբյեկտիվորեն բխում է գործում առկա ապացույցներից և կիրառման ենթակա օրենսդրությունից:

Այսպիսով, վերաքննիչ դատարանի կողմից առաջին աստիճանի դատարանի վճիռը լրացուցիչ պատճառաբանելու լիազորությունը

¹ Տե՛ս **Մեղրյան Մ.Գ.**, *Առաջին աստիճանի դատարանի քաղաքացիական գործերով դատական ակտերը*, Եր., ԵՊՀ հրատ., 2010, էջ 95:

կարող է իրավաչափ կիրառվել միայն այն դեպքերում, երբ բողոքարկված վճիռը համապատասխանում է վերը նշված պահանջներին:

Խոսելով վերաքննիչ դատարանի կողմից առաջին աստիճանի դատարանի վճիռը լրացուցիչ պատճառաբանելու լիազորության մասին՝ պետք է նշել, որ այն որոշակիորեն փոխկապակցված է դատարանի վճռի նախադատելիության հատկանիշի հետ: ՔԴՕ-ի 52-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նախկինում քննված՝ քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքները նույն անձանց միջև դատարանում այլ գործ քննելիս կրկին չեն ապացուցվում:

Նախադատելիությունը համակցվում է վճռի պարտադիրության հետ և կայանում է նրանում, որ վճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո դատարանի կողմից հաստատված և վճռում ձևակերպված փաստերն ու իրավահարաբերությունները չեն կարող կասկածանքի ենթարկվել կամ կրկին հետազոտվել նույն անձանց մասնակցությամբ ուրիշ գործերի քննության ժամանակ¹:

Վերաքննիչ դատարանի քննարկվող լիազորության և ՔԴՕ-ի 52-րդ հոդվածի 2-րդ մասի համադրման արդյունքում առաջանում է հետևյալ խնդիրը. **արդյո՞ք նախադատելի է օրինական ուժի մեջ մտած այն դատական ակտը, որը ՔԴՕ-ի 221-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված կարգով լրացուցիչ պատճառաբանվել է վերաքննիչ դատարանի կողմից:** Պետք է նշել, որ այս հարցի պատասխանը խնդրահարույց է և միանշանակ չէ. տարբեր իրավիճակներում այս հարցադրման պատասխանը կարող է լիովին տարբեր լինել:

Հարկ է նշել, որ այս խնդիրը մասնակիորեն լուծվել է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

¹ Տե՛ս **Պետրոսյան Ռ.Գ.**, *Հայաստանի քաղաքացիական դատավարություն - 3-րդ հրատ.*, - Եր., ԵՊՀ հրատ., 2007, էջ 476:

10.06.2014թ. ՀՕ-49-Ն օրենքի շնորհիվ: Նշված օրենքով, ի թիվս այլ փոփոխությունների, փոխվեցին նաև վերաքննիչ դատարանի որոշման կառուցվածքը և դրան ներկայացվող պահանջները: Մասնավորապես, ՔԴՕ-ի 220-րդ հոդվածի 5-րդ մասը ներկայումս սահմանում է, որ վճռի դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքներով վերաքննիչ դատարանի կայացրած որոշման պատճառաբանական մասը պետք է պարունակի գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, այդ թվում՝

ա. այն փաստերը, որոնք հաստատվել են դատարանի կողմից և վերաքննիչ բողոքում չեն վիճարկվել,

բ. այն փաստերը, որոնք հաստատվել են դատարանի կողմից և վերաքննիչ բողոքում վիճարկվել են, սակայն վերաքննիչ դատարանը դրանց վերաբերյալ հանգել է այն եզրակացության, որ տվյալ փաստի վերաբերյալ եզրակացության հանգելիս ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը սխալ թույլ չի տվել,

գ. այն փաստերը, որոնք հաստատվել են դատարանի կողմից և վերաքննիչ բողոքում վիճարկվել են, և վերաքննիչ դատարանը հանգել է այն եզրակացության, որ տվյալ փաստի վերաբերյալ եզրակացության հանգելիս ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը սխալ է թույլ տվել: Նման դեպքերում վերաքննիչ դատարանը պետք է նշի, թե դատարանի հաստատած փաստի փոխարեն ինչ նոր փաստ է հաստատված համարում, կամ դատարանի հաստատած որ փաստը հաստատված չի համարվում,

դ. այն փաստերը, որոնք չեն հաստատվել առաջին ատյանի դատարանի կողմից, և այդ հանգամանքը վիճարկվել է վերաքննիչ բողոքում, և վերաքննիչ դատարանն առաջին ատյանի դատարանի հետազոտած ապացույցների հիման վրա դրանք համարել է հաստատված,

ե. այն փաստերը, որոնք հաստատվել է վերաքննիչ դատարանը: Վերաքննիչ դատարանի որոշման նման կառուցվածքը թույլ է

տալիս ՔԴՕ-ի 221-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված լիազորությունը (դատարանի թերի կամ սխալ պատճառաբանված վճիռը լրացուցիչ պատճառաբանելու լիազորությունը) կիրառելու դեպքում որոշել, թե դատարանի վճռով հաստատված փաստերից որոնք են նախադատելի, որոնք՝ ոչ:

Ամեն դեպքում, քննարկվող հարցին վերջնական լուծում տալու նպատակով առաջարկում ենք ՔԴՕ-ի 52-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Նախկինում քննված՝ քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքները նույն անձանց միջև դատարանում այլ գործ քննելիս կրկին չեն ապացուցվում (նախադատելի հանգամանքներ): Հանգամանքի նախադատելիությունը գնահատելիս՝ դատարանը պետք է հաշվի առնի վճռի բողոքարկման արդյունքում կայացված դատական ակտերում տվյալ հանգամանքի վերաբերյալ վերադաս դատարանների կողմից արտահայտված դիրքորոշումները»:

Վերաքննիչ դատարանի կողմից առաջին ատյանի դատարանի վճիռը լրացուցիչ պատճառաբանելու լիազորությունը որոշակի հարաբերակցության մեջ է գտնվում նաև ԴՕ-ի 15-րդ հոդվածի 3-րդ մասի հետ: ԴՕ-ի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իր գործի քննության ժամանակ որպես իրավական փաստարկ իրավունք ունի մատնանշելու նույնանման փաստական հանգամանքներով մեկ այլ գործով ՀՀ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները):

Վերաքննիչ դատարանի քննարկվող լիազորության և ԴՕ-ի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համադրման արդյունքում առաջանում է հետևյալ խնդրահարույց հարցը. **արդյո՞ք ՔԴՕ-ի 221-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված կարգով վերաքննիչ դատարանի կողմից լրացուցիչ պատճառաբանված վճիռն ունի իրավական փաստարկի ուժ:** Պետք է նշել, որ այս հարցը նույնպես բավականին

խնդրահարույց է:

Օրինակ թիվ ԵԿԴ/1002/02/09 քաղաքացիական գործով 10.12.2012թ. կայացված վճռով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը մերժել է Գայանե Աբրահամյանի՝ գործարքը խաբեության հիմքով անվավեր ճանաչելու պահանջով հայցը՝ այն հիմնավորմամբ, որ գործարքի մյուս կողմ «Սիթի Քեբ» ՍՊԸ-ի միակ մասնակից Շ. Ամիրխանյանի կողմից դրսևորված խաբեությունն օրենքի իմաստով չի կարող համարվել գործարքի կողմ «Սիթի Քեբ» ՍՊԸ-ի կողմից դրսևորված խաբեություն¹: Դատարանի վճռի բողոքարկման արդյունքում ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանն իր 08.05.2013թ. որոշմամբ օրինական ուժի մեջ է թողել դատարանի վճիռը, սակայն նշել է, որ Շ. Ամիրխանյանի՝ ի շահ ՍՊԸ-ի գործունեության կատարված գործողություններով դրսևորված խաբեության փաստը օրենքի իմաստով կարող է համարվել գործարքի կողմ «Սիթի Քեբ» ՍՊԸ-ի կողմից դրսևորված խաբեություն²:

Ակնհայտ է, որ այս և նման այլ դեպքերում դատարանի վճիռը թեկուզ և թողնվում է օրինական ուժի մեջ, սակայն կորցնում է իրավական փաստարկի ուժը: Հետևաբար առաջարկում ենք ԴՕ-ի 15-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Յուրաքանչյուր ոք իր գործի քննության ժամանակ որպես իրավական փաստարկ իրավունք ունի մատնանշելու նույնանման փաստական հանգամանքներով մեկ այլ գործով Հայաստանի Հանրապետության դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները): Մատնանշված իրավական փաստարկը գնահատելիս՝ դատարանը

պետք է հաշվի առնի նաև վկայակոչված դատական ակտի բողոքարկման արդյունքում կայացված դատական ակտերի հիմնավորումները»:

Վերաքննիչ դատարանի կողմից առաջին ատյանի դատարանի վճիռը լրացուցիչ պատճառաբանելու լիազորության խիստ կարևոր գործնական նշանակությունը կապված է նաև դատական ակտի պատճառաբանական մասի դեմ վերաքննիչ բողոք բերելու ինստիտուտի հետ:

Դատական պրակտիկայում հանդիպում են դեպքեր, երբ գործին մասնակցող անձը, համաձայն լինելով վճռի եզրափակիչ մասի հետ, փորձում է վերաքննիչ բողոք ներկայացնել վճռի պատճառաբանական մասի դեմ, թեև նման հնարավորություն ՔԴՕ-ով նախատեսված չէ: Նման իրավիճակներ առաջանում են այն դեպքերում, երբ դատարանն ըստ էության ճիշտ է լուծում գործը, սակայն վճռի պատճառաբանական մասում հաստատում է այնպիսի փաստեր, կամ կատարում է այնպիսի եզրահանգումներ, որոնք հետագայում կարող են լրացուցիչ բարդություններ ստեղծել գործին մասնակցող անձանցից որևէ մեկի համար:

Հետագա խնդիրներից խուսափելու համար գործին մասնակցող անձը նման դատական ակտի դեմ կարող է ներկայացնել վերաքննիչ բողոք՝ մատնանշելով դատարանի կողմից օրենքի խախտմամբ հաստատված փաստերն ու կատարված եզրահանգումները: Ներկայացված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում վերաքննիչ դատարանը, մերժելով բողոքը, իր որոշմամբ կարող է «փոփոխել» առաջին ատյանի դատարանի վճռի պատճառաբանությունները՝ լրացուցիչ պատճառաբանելով վճիռը և մատնանշելով դրա պատճառաբանական մասում տեղ գտած սխալները:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ կարելի է արձանագրել, որ վերաքննիչ դատարանի քննարկվող լիազորությունը գործին մասնակցող անձանց տալիս է վճռի պատճառաբանական մասը «բողոքարկելու» ոչ լիարժեք հնարավորություն:

¹ Տե՛ս Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 10.12.2012թ. վճիռը՝ թիվ ԵԿԴ/1002/02/09 քաղաքացիական գործով:

² Տե՛ս ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.05.2013թ. որոշումը՝ թիվ ԵԿԴ/1002/02/09 քաղաքացիական գործով:

§ 2. Դատական ակտն ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելու և բեկանված մասով գործը համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության ուղարկելու լիազորությունը

ՔԴՕ-ի 221-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն. «Գործն ըստ էության լուծող դատական ակտի վերաքննության արդյունքում վերաքննիչ դատարանը ... ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վերաքննիչ բողոքը՝ համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը: Բեկանված մասով գործն ուղարկվում է համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը: Չբեկանված մասով դատական ակտը մնում է օրինական ուժի մեջ»:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» 28.11.2007թ. ՀՕ-281-Ն ՀՀ օրենքով և «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 28.11.2007թ. ՀՕ-277-Ն ՀՀ օրենքով Հայաստանի Հանրապետությունում ներդրված լրիվ վերաքննության ինստիտուտը փոխարինվեց սահմանափակ (ոչ լրիվ) վերաքննության ինստիտուտով:

Ոչ լրիվ վերաքննության ինստիտուտի ներդրմամբ էապես սահմանափակվեց վերաքննիչ դատարանի կողմից գործին վերջնական ըստ էության լուծում տալու հնարավորությունը: ՔԴՕ-ի 221-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով ամրագրվեց վերաքննիչ դատարանի կողմից առաջին ատյանի դատարանի վճիռը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու լիազորությունը: Միևնույն ժամանակ, ոչ լրիվ վերաքննության ինստիտուտի ներդրմամբ բողոքարկված վճռի բեկանումն օրենսդրի կողմից կախվածության մեջ դրվեց վերաքննիչ բողոքի հիմքերից և հիմնավորումներից:

Սահմանափակ վերաքննության ինստիտուտի հիմնական առանձնահատուկ բաղադրիչն այն է, որ վերաքննիչ դատարանը կաշկանդված է վերաքննիչ բողոքի հիմքերով և հիմնավորումներով, և, ըստ այդմ, դատական ակտը վերանայվում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում¹:

ՔԴՕ-ի 219-րդ հոդվածի 1-ին մասի և ԴՕ-ի 39-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում: Նշված նորմերը մեկնաբանելիս ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշումներում ամրագրել է, որ վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը պետք է որոշի վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում² և պարտադիր կերպով պետք է անդրադառնա վերաքննիչ բողոքի բոլոր հիմքերին և հիմնավորումներին³:

Դատական ակտը վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայելու և բեկանելու ՔԴՕ-ի պահանջը մի շարք դեպքում առաջացնում է խնդրահարույց իրավիճակներ:

ԴՕ-ի 44-րդ հոդվածի, ՔԴՕ-ի 210-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերի և ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից թիվ ԵԿԴ/2082/02/08 քաղաքացիական գործով կայացված որոշման⁴ համադրված վերլու-

¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2011թ. դեկտեմբերի 6-ի թիվ ՍԴՈ-1004 որոշումը:

² Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2013թ. ապրիլի 5-ի որոշումը՝ թիվ ԼԴ/0583/02/11 քաղաքացիական գործով և ՀՀ վճռաբեկ դատարանի 2009թ. դեկտեմբերի 25-ի որոշումը՝ թիվ 3-207 (ՎԴ) քաղաքացիական գործով:

³ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2010թ. մայիսի 27-ի որոշումը՝ թիվ ԵԷԴ/0871/02/09 քաղաքացիական գործով, ՀՀ վճռաբեկ դատարանի 2011թ. հուլիսի 1-ի որոշումը՝ թիվ ԼԴ/0365/02/09 քաղաքացիական գործով, ՀՀ վճռաբեկ դատարանի 2012թ. մարտի 23-ի որոշումը՝ թիվ ԵԱՆԴ/1097/02/10 քաղաքացիական գործով և ՀՀ վճռաբեկ դատարանի 2012թ. մարտի 23-ի որոշումը՝ թիվ ԳԴ4/0092/02/11 քաղաքացիական գործով:

⁴ Տե՛ս թիվ ԵԿԴ/2082/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.06.2012թ. որոշումը:

ծությունից հետևում է, որ դատական սխալի առկայության հիմքով ներկայացված յուրաքանչյուր վերաքննիչ բողոք պետք է պարունակի.

- նշում առ այն, թե որ իրավական նորմն է խախտվել առաջին աստիճանի դատարանի կողմից (վերաքննիչ բողոքի հիմք),

- հիմնավորում առ այն, որ որպես վերաքննիչ բողոքի հիմք նշված նորմը խախտվել է ընդհանուր իրավասության դատարանի կողմից,

- հիմնավորում առ այն, որ այդ նորմի խախտումն ազդել է գործի ելքի վրա:

Հետևաբար, ՔԴՕ-ի պահանջներին համահունչ լինելու համար, դատական սխալի առկայության հիմքով բերված վերաքննիչ բողոքը պետք է ձևակերպվի հետևյալ կերպ.

- նախ պետք է նշվի, թե նյութական կամ դատավարական իրավունքի որ նորմն է խախտվել առաջին աստիճանի դատարանի կողմից,

- այնուհետև պետք է հիմնավորվի, որ տվյալ նորմն առաջին աստիճանի դատարանի կողմից խախտվել է,

- այնուհետև պետք է հիմնավորվի, որ այդ խախտումն ազդել է գործի ելքի վրա:

Մա իր հերթին նշանակում է, որ վերաքննիչ բողոքը քննելիս վերաքննիչ դատարանը պետք է հերթականությամբ պատասխանի հետևյալ հարցերին.

- արդյո՞ք ընդհանուր իրավասության դատարանի կողմից խախտվել է վերաքննիչ բողոք բերած անձի կողմից վկայակոչված (մատնանշված) իրավանորմը,

- եթե այո, ապա արդյո՞ք տվյալ նորմը խախտվել է հենց այն հիմնավորմամբ, որը շարադրված է վերաքննիչ բողոքում,

- եթե այո, ապա արդյո՞ք տվյալ նորմի խախտումն ազդել է գործի ելքի վրա՝ այն հիմնավորմամբ, որը մատնանշվել է բողոք բերած անձի կողմից:

Նշենք, որ ՔԴՕ-ի 220-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի «ա»

ենթակետի համաձայն՝ վերաքննիչ դատարանի որոշման պատճառաբանական մասը պետք է պարունակի եզրահանգում՝ բողոքի յուրաքանչյուր հիմքի հիմնավոր լինելու վերաբերյալ, մասնավորապես պատասխանելով այն հարցին, թե արդյո՞ք հիմնավոր է վերաքննիչ բողոքի հիմքը՝ **բողոքում տվյալ հիմքի վերաբերյալ նշված հիմնավորումների սահմաններում:**

Վերը նշվածն անխուսափելիորեն առաջացնում է մի շարք խնդրահարույց հարցադրումներ.

- արդյո՞ք վերաքննիչ դատարանն իրավունք ունի վճռի բեկանման հիմքում դնել այնպիսի նորմի խախտում, որն ուղղակիորեն չի մատնանշվել բողոք բերած անձի կողմից,

- արդյո՞ք վերաքննիչ դատարանն իրավունք ունի վճռի բեկանման հիմքում դնել այնպիսի փաստարկ, որն ուղղակիորեն չի մատնանշվել բողոք բերած անձի կողմից,

- արդյո՞ք վերաքննիչ դատարանն իրավունք ունի բեկանել վճիռը, եթե բողոք բերած անձն իր բողոքում ներկայացրել է հիմնավոր փաստարկներ առ այն, որ վճիռը օրինական կամ հիմնավորված չէ, սակայն կոնկրետ չի մատնանշել այն իրավանորմը, որը խախտվել է դատարանի կողմից,

- արդյո՞ք վերաքննիչ դատարանն իրավունք ունի բեկանել վճիռը, եթե բողոք բերած անձն իր բողոքում վկայակոչել է որևէ իրավանորմի խախտում, սակայն ներկայացրել է թերի (ոչ ամբողջական) հիմնավորումներ առ այն, որ տվյալ նորմը խախտվել է,

- արդյո՞ք վերաքննիչ դատարանն իրավունք ունի բեկանել վճիռը, եթե վերաքննիչ բողոքում կատարված է բողոքի հիմքերի և հիմնավորումների սխալ համադրում,

- արդյո՞ք վերաքննիչ դատարանն իրավունք ունի բեկանել վճիռը, եթե վերաքննիչ բողոքի հիմքը ձևակերպված է ոչ պատշաճ:

Ավելին, ՔԴՕ-ն պահանջում է, որպեսզի վերաքննիչ բողոքում նշվեն փաստարկներ առ այն, որ բողոքում վկայակոչված խախտումները ազդել են գործի ելքի վրա: Այդ փաստարկները ՔԴՕ-ի ի-

մաստով հանդիսանում են վերաքննիչ բողոքի հիմնավորումների բաղկացուցիչ մաս: Հետևաբար, քննարկելով այն հարցը, թե արդյոք առաջին աստիճանի դատարանի կողմից թույլ տրված խախտումն ազդել է գործի ելքի վրա, վերաքննիչ դատարանը պարտավոր է սահմանափակվել այդ կապակցությամբ վերաքննիչ բողոքում մատնանշված փաստարկների շրջանակով:

Վերը նշվածն անխուսափելիորեն առաջացնում է հետևյալ հարցադրումները.

- արդյո՞ք վերաքննիչ դատարանն իրավունք ունի բեկանել վճիռը, եթե բողոք բերած անձը հիմնավորել է դատական սխալի առկայությունը, սակայն չի ներկայացրել որևէ փաստարկ առ այն, որ այդ խախտումն ազդել է գործի ելքի վրա,

- արդյո՞ք վերաքննիչ դատարանն իրավունք ունի բեկանել վճիռը, եթե բողոք բերած անձը հիմնավորել է դատական սխալի առկայությունը, սակայն ներկայացրել է թերի կամ սխալ փաստարկներ առ այն, որ այդ խախտումն ազդել է գործի ելքի վրա:

Նշված հարցադրումներն ինքնին բավականին խնդրահարույց են: Մի դեպքում ստացվում է, որ վերաքննիչ դատարանը, խախտելով ՔԴՕ-ի 219-րդ հոդվածի 1-ին մասը, կարող է հանդես գալ բողոք բերած անձի աջակցի դերում և սեփական նախաձեռնությամբ լրացնել վերաքննիչ բողոքի հիմքերը և հիմնավորումները¹: Սակայն նման իրավիճակը ՀՀ վճռաբեկ դատարանը դիտարկում է որպես

¹ *Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերաքննիչ դատարանի կողմից վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների շրջանակից դուրս գալը ՀՀ վճռաբեկ դատարանը դիտում է որպես դատավարական նորմի խախտում, որը հիմք է հանդիսանում վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար: Այս կապակցությամբ տե՛ս օրինակ ՀՀ վճռաբեկ դատարանի 2009թ. մայիսի 27-ի որոշումը՝ թիվ ՏՂՅ/0019/02/08 քաղաքացիական գործով, ՀՀ վճռաբեկ դատարանի 2009թ. հունիսի 26-ի որոշումը՝ թիվ ԵԿԴ/2894/02/08 քաղաքացիական գործով, ՀՀ վճռաբեկ դատարանի 2011թ. հոկտեմբերի 14-ի որոշումը՝ թիվ ԱՎԴ/0470/02/10 քաղաքացիական գործով և ՀՀ վճռաբեկ դատարանի 2009թ. դեկտեմբերի 25-ի որոշումը՝ թիվ 3-207(ՎԴ) քաղաքացիական գործով:*

լիազորությունների սահմանազանցում¹, իսկ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշման համաձայն՝ այն դատարանը, որը որոշումը կայացրել է օրենքով հստակ սահմանված լիազորությունների սահմանն անցնելով՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով, չի կարող համարվել օրենքի հիման վրա ստեղծված դատարան²:

Հակառակ մոտեցման դեպքում էլ ստացվում է, որ վերաքննիչ դատարանն իրավունք ունի վերաքննիչ բողոքը բավարարել բացառապես վերաքննիչ բողոքում նշված պատճառաբանություններով: Այսինքն, վերաքննիչ բողոքը բավարարելու մասին որոշման պատճառաբանական մասը պետք է վերաձվի վերաքննիչ բողոքի պատճառաբանությունների լրիվ կամ մասնակի վերարտադրման: Այս մոտեցման դեպքում բողոք բերած անձը պարտավոր է տիրապետել խորը իրավական գիտելիքների և ձևական-իրավաբանական տեսանկյունից ճշգրիտ և գրագետ կերպով ձևակերպել իր բողոքի հիմքերը և հիմնավորումները, իսկ հակառակ դեպքում, անգամ ըստ էության ճիշտ լինելու պարագայում, նրա վերաքննիչ բողոքը ենթակա կլինի մերժման՝ ձևական սխալների առկայության պատճառով:

Գտնում ենք, որ նման մոտեցումն արդարացված չի կարող համարվել՝ հատկապես նկատի ունենալով այն հանգամանքը, որ առաջին աստիճանի դատարանում գործին մասնակցող անձանցից իրավական գիտելիքների առկայություն ընդհանրապես չի պահանջվում: Օրենսդիրը դատարանից պահանջում է կայացնել օրինական և հիմնավորված վճիռ, իսկ դատարանը կաշկանդված չէ կողմերի՝ վիճելի իրավահարաբերության որակման և դրա նկատմամբ կիրա-

¹ *Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2010թ. օգոստոսի 27-ի որոշումը՝ թիվ ԼԴ/0001/11/10 քրեական գործով:*

² *Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2006 թվականի հուլիսի 20-ի վճիռը՝ Սոկուրենկոն և Ստրիգունն ընդդեմ Ուկրաինայի գործով:*

ռելի նորմերի վերաբերյալ դիրքորոշումներով¹:

Համեմատության համար նշենք, որ Ֆրանսիայի քաղաքացիական դատավարության օրենսգրքի 954-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ դատարան ներկայացվող փաստաթղթերը բովանդակային առումով մասնավորապես պետք է պարունակեն կողմերի պահանջները, ինչպես նաև այն փաստական և իրավական հիմնավորումները, որոնց վրա հիմնված է պահանջը²:

Գերմանիայի քաղաքացիական դատավարության օրենսգրքի 519-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ բողոք բերած անձը պարտավոր է հիմնավորել իր վերաքննիչ բողոքը: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ բողոքը պետք է պարունակի՝ 1) նշում առ այն, թե որ մասով է բողոքարկվում դատական ակտը և ինչպիսի արդյունք է ակնկալում բողոք բերած անձը, 2) վերաքննիչ բողոքի հիմնավորումների շարադրանքը³: Նույն օրենսգրքի 525-րդ հոդվածի համաձայն՝ վերաքննիչ դատարանը քաղաքացիական գործը վերանայում է կողմերի դիրքորոշումներում մատնանշված շրջանակներում⁴:

Մոլդովայի քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասի «d» կետի համաձայն՝ վերաքննիչ բողոքը պետք է պարունակի բողոքի փաստական և իրավական հիմնավորումները: Նույն օրենսգրքի 373-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքում մատնանշված շրջանակներում ստուգում է բողոքարկվող դատական ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը՝ փաստական հանգամանքների

հաստատման և օրենքի կիրառման տեսանկյունից¹:

Կանադայի Քվեբեկ նահանգի քաղաքացիական դատավարության օրենսգրքի 494-րդ, 496-րդ և 507-րդ հոդվածների համադրված վերլուծությունից հետևում է, որ վերաքննիչ դատարան ներկայացվող բողոքը պետք է պարունակի՝ 1) բողոք բերած անձի պահանջները և եզրահանգումները, 2) բողոքի հիմքերի մանրամասն նկարագրությունը: Վերաքննիչ բողոք բերած անձը պետք է մատնանշի այն ապացույցները, որոնք հիմք են տալիս պնդելու, որ առաջին ատյանի դատարանը գործի ելքի վրա ազդող դատական սխալ է թույլ տվել: Վերաքննիչ բողոք բերած անձը պետք է հիմնավորի նաև, որ փաստիկամ իրավունքի հարցում դատարանի կողմից թույլ տրված սխալներն ազդել են գործի ելքի վրա²:

ՌԴ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ բողոքը պետք է պարունակի բողոք բերած անձի պահանջը, ինչպես նաև բողոքարկվող դատական ակտի սխալ լինելու հիմնավորումները³:

Այսպիսով, վերը նշված երկրներում վերաքննիչ բողոք բերած անձից չի պահանջվում խորը իրավական գիտելիքների առկայություն: Բողոք բերած անձից պարզապես պահանջվում է ներկայացնել ըստ էության ճիշտ, հիմնավոր փաստարկներ առ այն, որ բողոքարկվող դատական ակտը հակաիրավական է: Բողոք բերած անձից չի պահանջվում ձևական-իրավաբանական տեսանկյունից ճշգրիտ և

¹ Տե՛ս Մոլդովայի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, ընդունվել է 2003թ. մայիսի 30-ին, հրապարակվել է 12.06.2003թ., ուժի մեջ է մտել 12.06.2003թ., Monitorul Oficial № 111-115, հոդված № 451:

² Տե՛ս Կանադայի Քվեբեկ նահանգի քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, <http://www.canlii.org/en/qc/laws/stat/cqlr-c-c-25/latest/cqlr-c-c-25.html> (09.09.2014):

³ Տե՛ս Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական դատավարության օրենսգիրքը (N 138-Փ3), ընդունվել է Ռուսաստանի Դաշնության Պետական դումայի կողմից 23.10.2002թ., հաստատվել է ՌԴ Դաշնային խորհրդի կողմից 30.10.2002թ., հրապարակվել է 18.11.2002թ., Собрание законодательства Российской Федерации, № 46, ուժի մեջ է մտել 01.02.2003թ.:

¹ Տե՛ս շժ Սահմանադրական դատարանի 2011թ. դեկտեմբերի 6-ի թիվ ՄԴՌ-1004 որոշումը:

² Տե՛ս *Новый Гражданский процессуальный кодекс Франции. Отв. ред. А. Довгерт.* - К.: Истина, 2004, էջ 236:

³ Տե՛ս *Давтян А.Г. Гражданское процессуальное право Германии.* - М.: Городец-издат, 2000, էջ 286-287:

⁴ Տե՛ս *Давтян А.Г., նշված աշխատ., էջ 290:*

գրագետ կերպով ձևակերպել իր բողոքը: Ձևական կանոնները չպահպանելու և բողոքում ձևական-իրավաբանական սխալներ թույլ տալու դեպքում բողոք բերած անձը կանգնած չէ բողոքի՝ ձևական հիմքերով մերժման վտանգի առջև:

Վերը նշված մոտեցումը համարում ենք լիովին արդարացված և գտնում ենք, որ նույն մոտեցումը պետք է գործի նաև ՀՀ-ում, որտեղ հասարակության իրավագիտակցության մակարդակն անվիճելիորեն ցածր է վերը նշված երկրներից:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ գտնում ենք, որ.

- անհրաժեշտ է փոփոխել գործող իրավակարգավորումն այնպես, որ իրավաբանական գիտելիքների բացակայությունը չհանգեցնի վերաքննիչ բողոքի՝ ձևական հիմքերով մերժմանը,

- վերաքննիչ բողոքը պետք է բավարարման ենթակա լինի բոլոր այն դեպքերում, երբ բողոք բերած անձի փաստարկներն ըստ էության ճիշտ են¹,

- բողոք բերած անձը պարտավոր չէ հիմնավորել այն հանգամանքը, որ իր կողմից վկայակոչված խախտումներն ազդել են գործի ելքի վրա. վերաքննիչ դատարանն ինքն է պարտավոր յուրաքանչյուր դեպքում գնահատման առարկա դարձնել այդ հարցը՝ անկախ բողոք բերած անձի ներկայացրած փաստարկներից,

- վերաքննիչ դատարանն իրավունք չունի դուրս գալ վերաքննիչ բողոքում նշված փաստերի շրջանակներից և սեփական նախաձեռնությամբ լրացնել բողոքի փաստարկները, սակայն վերաքննիչ դատարանը պետք է իրավունք ունենա իր որոշումը պատճառաբանել նաև այնպիսի իրավական նորմերով, որոնք ուղղակիորեն չեն մատնանշվել բողոք բերած անձի կողմից:

Վերը նշվածի հիման վրա գտնում ենք, որ անհրաժեշտ է ՔԴՕ-ում կատարել հետևյալ փոփոխությունները.

¹ Այս կապակցությամբ Նախագծի 257-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ վերաքննիչ բողոքը չի կարող բավարարվել բողոքում չնշված **փաստական** հիմնավորմամբ:

- «Վերաքննիչ բողոքի հիմքեր» և «վերաքննիչ բողոքի հիմնավորումներ» տերմինների փոխարեն ՔԴՕ ներմուծել «վերաքննիչ բողոքի փաստարկներ» տերմինը: «Վերաքննիչ բողոքի փաստարկներ» պետք է համարել բողոք բերած անձի կողմից ներկայացված ցանկացած բնույթի հիմնավորումները, որոնց հիման վրա բողոք բերած անձը պահանջում է դատական ակտի բեկանում¹:

- Սահմանել, որ վերաքննիչ դատարանը բողոքը քննում է վերաքննիչ բողոքում շարադրված փաստարկների սահմաններում:

Մեր կողմից առաջարկվող մոտեցման դեպքում վերաքննիչ բողոքը ենթակա կլինի բավարարման բոլոր այն դեպքերում, երբ բողոք բերած անձի փաստարկներն ըստ էության ճիշտ են: Այսինքն, իրավաբանական գիտելիքների բացակայությունը չի հանգեցնի վերաքննիչ բողոքի՝ ձևական հիմքերով մերժմանը:

Անդրադառնալով վերաքննիչ դատարանի կողմից բողոքարկված դատական ակտը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու լիազորությանը՝ պետք է նշել, որ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ձևավորված դատական պրակտիկան վկայում է այն մասին, որ դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերի առկայության դեպքում վերաքննիչ դատարանը պարտավոր է կիրառել բացառապես ՔԴՕ-ի 221-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված լիազորությունը (բեկանել դատական ակտը և գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության)²: Նման մոտեցման հիմքում ընկած է այն տրամաբանությունը, որ դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերը արդարադատության այդպիսի «արատներ» են, որոնք կարող են վերացվել բացառապես

¹ Վճիռը բեկանելու պահանջի հիմքում պարտադիր չէ, որ դրված լինի որևէ իրավանորմի խախտում: Օրինակ՝ ՔԴՕ-ի 219-րդ հոդվածի 2-րդ մասից հետևում է, որ վերաքննիչ դատարան ներկայացված նոր ապացույցը ևս կարող է դատական ակտի բեկանման հիմք հանդիսանալ:

² Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից կայացված որոշումները՝ թիվ ԵԱՆԴ/0461/02/10, ԵԱԲԴ/2279/02/11, ԵԿԴ/2760/02/12, ԵՇԴ/0700/02/12, ԵԿԴ/1118/02/12 և ԵԲԴ/0443/02/08 քաղաքացիական գործերով:

դատական ակտի բեկանումից հետո գործի ամբողջ ծավալով նոր քննություն իրականացվելու դեպքում:

Այս կապակցությամբ պետք է նշել նաև հետևյալը. թիվ 08-1442 քաղաքացիական գործով կայացված որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անուղղակիորեն սահմանել է, որ վերաքննիչ դատարանն իրավունք չունի դուրս գալ բողոքի հիմքերից և հիմնավորումներից և իրավունք չունի դատական ակտը բեկանել անվերապահ բեկանման հիմքերից որևէ մեկի առկայության հիմքով, եթե բողոք բերած անձն իր բողոքում ուղղակիորեն չի վկայակոչել այդ հիմքը¹:

Մինչդեռ նույն խնդրի կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ամբողջովին հակառակ դիրքորոշում է արտահայտվել թիվ ԵԱՔԴ/0065/01/11 քրեական գործով: ՀՀ վճռաբեկ դատարանն այդ գործով արձանագրել է, որ վերաքննիչ դատարանն իրավասու է դուրս գալ վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից այն դեպքում, երբ առկա է դատավարական իրավունքի այնպիսի խախտում, որն անվերապահորեն պետք է հանգեցնի դատական ակտի բեկանման²:

Վերը նշված դիրքորոշումներից առավել հիմնավոր ենք համարում ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի կողմից արտահայտված դիրքորոշումը և գտնում ենք, որ այն ենթակա է կիրառման նաև քաղաքացիական գործերով: Իգուր չէ, որ ՔԴՕ-ի 228-րդ հոդվածի 2-րդ մասում օգտագործվում է «վճիռը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման» արտահայտությունը, իսկ ՔԴՕ-ի 220.4-րդ 2-րդ մասում առկա է «դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման» ձևակերպումը:

Ավելին, Նախագծի 257-րդ հոդվածի 6-րդ մասն այս կապակցությամբ սահմանում է, որ անկախ վերաքննիչ բողոքի հիմքերից և հիմնավորումներից՝ վերաքննիչ դատարանը պարտավոր է ստուգել դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերի առկայությունը:

¹Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2011թ. մարտի 4-ի որոշումը՝ թիվ 08-1442 քաղաքացիական գործով:

² Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2012թ. հունիսի 8-ի որոշումը՝ թիվ ԵԱՔԴ/0065/01/11 քրեական գործով:

Քննարկվող լիազորության կիրառման հետ կապված առավել ուշադրության արժանի խնդիրներից է նաև վերաքննիչ դատարանի կողմից գործի քննության նոր ծավալի սահմանման հիմնախնդիրը: Բողոքարկված դատական ակտը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու դեպքում վերաքննիչ դատարանը պարտավոր է իր որոշմամբ սահմանել գործի նոր քննության ծավալ:

Գործի նոր քննության ծավալի սահմանումը գործնականում հանդիսանում է վերաքննիչ դատարանի կողմից առաջին ատյանի դատարանին տված ցուցում առ այն, թե առաջին ատյանի դատարանի կողմից ինչպիսի հարցեր պետք է քննարկվեն և/կամ ինչպիսի դատավարական գործողություններ պետք է կատարվեն գործի նոր քննության ընթացքում: Այն կարող է պարունակել նաև ցուցումներ՝ ապացուցման առարկայի որոշման, ապացուցման պարտականության բաշխման, կիրառելի օրենսդրության որոշման, օրենքի ճիշտ մեկնաբանման վերաբերյալ և այլն:

Նշենք, որ ՔԴՕ-ն չի պարունակում որևէ դրույթ առ այն, թե որքանով են վերաքննիչ դատարանի՝ վերը նշված ցուցումները պարտադիր գործը կրկին քննող առաջին ատյանի դատարանի համար: Ավելին, ՔԴՕ-ն չի պարունակում որևէ դրույթ՝ առաջին ատյանի դատարանի կողմից գործի նոր քննության ծավալի խախտման հետևանքների վերաբերյալ:

Այս կապակցությամբ պետք է նշել, որ ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման համաձայն՝ վերաքննիչ դատարանի՝ որպես առաջին ատյանի դատարանի որոշումների օրինականությունը, հիմնավորվածությունը և պատճառաբանվածությունը ստուգելու իրավասությամբ օժտված դատարանի որոշումները պարտադիր են ստորադաս դատարանի համար: Առաջին ատյանի դատարանի համար վերաքննիչ դատարանի որոշման պարտադիր բնույթը բխում է դատական ակտերի վերանայման ինստիտուտի էությունից:

Միաժամանակ, ՀՀ վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ առաջին ատյանի դատարանի համար վերաքննիչ դատարանի դատական

ակտի պարտադիր լինելը չի կարող ազդել առաջին ատյանի դատարանի անկախության վրա, քանի որ կատարելով վերադաս դատարանի՝ օրենքի պահանջների կատարման վերաբերյալ ցուցումը՝ առաջին ատյանի դատարանը ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով¹:

Թեև վերը նշված իրավական դիրքորոշումն արտահայտվել է քրեական գործով, սակայն մեր կարծիքով այն կիրառելի է նաև ՔԴՕ-ի և քաղաքացիական գործերի քննության նկատմամբ:

Այս առումով տեղին է հիշատակել նաև ՌԴ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 3-րդ մասը, որի համաձայն՝ օրենքի մեկնաբանման կապակցությամբ վերադաս դատարանի տված ցուցումները պարտադիր են գործը կրկին քննող դատարանի համար:

Պետք է նշել, որ վերաքննիչ դատարանի կողմից սահմանված գործի նոր քննության ծավալը երբեմն կարող է խախտվել ոչ թե առաջին ատյանի դատարանի, այլ՝ գործին մասնակցող անձանց գործողությունների հետևանքով: Խնդիրը կայանում է նրանում, որ ՔԴՕ-ն չի պարունակում համապատասխան նորմեր՝ բեկանումից հետո գործերի նոր քննության ընթացակարգի վերաբերյալ: Նման իրավակարգավորման բացակայության պայմաններում գործում են ՔԴՕ-ի ընդհանուր կանոնները, ինչը գործին մասնակցող անձանց երբեմն թույլ է տալիս առանց սահմանափակումների կատարել տնօրինչական գործողություններ (օրինակ՝ փոխել հայցի հիմքը)², որոնք ինքնին հանգեցնում են վերաքննիչ դատարանի կողմից սահմանած գործի նոր քննության ծավալի խախտման, և առաջին ատյանի դատարանը ստիպված է լինում ամբողջ ծավալով կրկին քննել գործը:

¹ Տե՛ս ՀՀ վճարելի դատարանի 2012թ. նոյեմբերի 1-ի որոշումը՝ թիվ ՄԴ3/0019/01/11 քրեական գործով:

² Պետք է նշել, որ դատական ակտի բեկանումից հետո գործի նոր քննության ընթացքում նման տնօրինչական գործողությունների կատարման իրավաչափությունը երբեմն խիստ վիճելի է:

§ 3. Դատական ակտն ամբողջությամբ կամ մասնակի բեկանելու և կողմերի հաշտության համաձայնությունը հաստատելու լիազորությունը

ՔԴՕ-ի 221-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի վերաքննության արդյունքում վերաքննիչ դատարանը ... ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը և հաստատում կողմերի հաշտության համաձայնությունը:

Տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքը քաղաքացիական դատավարության հիմնաքարային սկզբունքներից է: Վ. Վ. Յարկովն այն բնութագրում է, որպես գործին մասնակցող անձանց տրված հնարավորություն՝ սեփական հայեցողությամբ տնօրինելու օրենքով իրենց վերապահված իրավունքները և դրանց պաշտպանության միջոցները¹: Իսկ Մ. Ա. Վիկունտի կարծիքով՝ քաղաքացիական դատավարությունում դիսպոզիտիվությունը ենթադրում է կողմերի հայեցողությամբ օրենքով նախատեսված որոշակի գործողություններ կատարելու կամ դրանց կատարումից հրաժարվելու հնարավորություն²:

Ուսումնասիրելով տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքը քաղաքացիական դատավարությունում՝ Վ. Եսայանը տվել է տնօրինչականության սկզբունքի հետևյալ բնորոշումը. տնօրինչականության սկզբունքը նյութաիրավական հարաբերությունների մասնակիցների նյութաիրավական ինքնավարությունից բխող, քաղաքացիական դատավարության հիմնական, ղեկավար դրույթ է, համաձայն որի՝ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով դա-

¹ Տե՛ս Гражданский процесс. Учебник для студентов вузов, обучающихся специальности «Юриспруденция» / Отв. редактор В.В. Яркков. - 6-е изд., перераб. и доп. - М.: Волтерс Клувер, 2006, էջ 46:

² Տե՛ս Вихут М.А. Гражданское процессуальное право России. - М.: Юристы, 2002, էջեր 44-45:

տարանի գործունեությունը պայմանավորված է տվյալ գործի ելքում իրավաբանական (նյութաիրավական կամ դատավարական) շահ ունեցող անձանց կամահայտնությամբ և նախաձեռնությամբ, և որը գործին մասնակցող անձանց հնարավորություն է ընձեռում սեփական հայեցողությամբ տնօրինելու իրենց նյութական և դատավարական իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները¹:

Քաղաքացիական դատավարությունում տնօրինչականության սկզբունքն առավել ցայտուն արտահայտվում է դատարանի վարույթում գտնվող վեճը հաշտության համաձայնությամբ ավարտելու կողմերին վերապահված հնարավորության մեջ²:

Նշենք, որ ՔԴՕ-ն որևէ կերպ չի սահմանում հաշտության համաձայնության հասկացությունը, իսկ իրավաբանական գրականության մեջ այդ հասկացությունը մեկնաբանվում է տարբեր ձևերով: Յու. Կ. Օսիպովն այն բնորոշում է որպես տնօրինչական գործողություն, որն ուղղված է կողմերի միջև ծագած նյութաիրավական վեճի փոխադարձ կարգավորմանը՝ երկկողմանի ընդունելի պայմաններով, ինչպես նաև՝ դատարանի կողմից հարուցված գործի կարճմանը³:

Վ. Գ. Տիխինյան հաշտության համաձայնությունը բնորոշում է որպես կողմերի միջև կայացված համաձայնություն, որով հայցվորը և պատասխանողը փոխադարձ զիջումների միջոցով, փոխադարձաբար ընդունելի պայմաններով նորովի որոշում են իրենց իրավունքները և պարտականությունները և դադարեցնում են իրենց միջև ծագած դատական վեճը⁴:

¹ Տե՛ս **Եսայան Վ.**, *Տնօրինչականության սկզբունքի հասկացությունը և էությունը քաղաքացիական դատավարությունում*, «Դատական իշխանություն», Եր., 2010, թիվ 6 (131), էջ 38:

² Տե՛ս **Եսայան Վ.**, *Հաշտության համաձայնությունը քաղաքացիական դատավարությունում*, «Դատական իշխանություն», Եր., 2014, թիվ 3 (177), էջ 15:

³ Տե՛ս **Օսիպով Յ.Կ.** *Гражданский процесс: учебник для вузов.* - М.: Издательство БЕК, 1995, էջ 222:

⁴ Տե՛ս **Тихиня В. Г.** *Гражданский процесс: в 2 Т.* - Минск: УП «Минская печатная фабрика» Гознака, 2002. - Т. 1, էջ 231:

Վ. Ն. Պարաշչենկոն հաշտության համաձայնությունը բնութագրում է որպես դատավարական ակտ, դատավարական պայմանագիր, որով կողմերը փոխադարձ նյութաիրավական զիջումների ճանապարհով նորովի որոշում են իրենց իրավունքները և պարտականությունները և պարտավորվում են կամավոր կարգավորել իրենց միջև ծագած վեճը՝ փոխադարձաբար ընդունելի պայմաններով¹:

Ժամանակակից դատավարագիտության մեջ հաշտության համաձայնությունը դիտարկվում է կա՛մ որպես կողմերի գործողություն, որն ուղղված է վեճը լուծելու պայմանների համաձայնեցման միջոցով այն դադարեցնելուն և գործով վարույթը կարճելուն², կա՛մ որպես քաղաքացիաիրավական վեճերն օրենքին չհակասող, այլ անձանց իրավունքները չխախտող փոխադարձաբար ընդունելի պայմաններով լուծելու եղանակ³, կա՛մ որպես կողմերի միջև կնքվող քաղաքացիաիրավական պայմանագիր, որի ուժով նրանք որոշակի զիջումների ճանապարհով վիճելի իրավահարաբերության գծով նորից են որոշում իրենց իրավունքները և պարտականությունները՝ դրանով իսկ վերացնելով իրենց միջև եղած վեճը⁴: Վ. Եսայանը հաշտության համաձայնությունը բնորոշում է որպես գործին մասնակ-

¹ Տե՛ս **Паращенко В.Н., Сокол С.Ф.** *Гражданский процесс Республики Беларусь. Общая часть: учебн. пособие / Под общ. ред. В.Н. Паращенко, С.Ф. Сокола.* - Минск: Молодежное научное общество, 2000, էջ 259:

² Տե՛ս **Моисеев С.В.** *Распорядительные действия в арбитражном суде первой инстанции // Российская юстиция.* 1999, N 4, էջ 6; **Русинова Е.Р.** *Распорядительные права сторон в гражданском процессе. Дисс. ... к.ю.н. Екатеринбург, 2003, էջ 158:*

³ Տե՛ս **Бондарева Е.Е.** *Реализация распорядительных прав сторон в арбитражном процессе (в суде первой инстанции). Автореф. дисс. ... к.ю.н. Самара, 2003, էջեր 26-27; Шерстюк В.М.* *Новые положения третьего арбитражного процессуального кодекса РФ. М., 2003, էջ 111:*

⁴ Տե՛ս **Պետրոսյան Ռ.Գ.**, *Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարություն, 4-րդ հրատ., Եր., 2012, «Ոսկան Երևանցի» հրատ., էջ 260; Гражданский процесс. Под ред. В.В. Яркова. 8-е изд. М., "Инфотропик медиа", 2012, էջ 279; Лазарев С.В. Мирное соглашение в гражданском судопроизводстве. Дисс. ... к.ю.н. Екатеринбург, 2006, էջեր 18-19:*

ցող անձանց միջև կնքվող և դատարանի կողմից հաստատվող պայմանագիր, որն ուղղված է փոխադարձ զիջումների և կողմերի անվիճելի իրավունքներն ու պարտականությունները սահմանելու ճանապարհով վեճը լուծելուն և գործի վարույթը կարճելուն¹:

Պետք է նշել, որ ի տարբերություն հայցից հրաժարվելու և հայցն ընդունելու տնօրինչական գործողությունների, որոնք միակողմ կամահայտնության արդյունք են, հաշտության համաձայնությունը երկկողմանի և փոխհամաձայնեցված տնօրինչական գործողություն է²:

Մ. Կ. Տրետուշնիկովը նշում է, որ տնօրինչական գործողություններ կատարելու ազատությունը ենթակա է որոշ սահմանափակումների, որոնք բխում են օրինականության սկզբունքից³: Դատարանը չի կարող անտարբեր լինել գործին մասնակցող անձանց կամահայտնության նկատմամբ, հակառակ դեպքում այն կկորցնի իր դեկավար դերը⁴: Այդ պատճառով էլ գործին մասնակցող անձանց կողմից կատարվող ցանկացած տնօրինչական գործողություն պետք է սանկցավորվի դատարանի կողմից: Ասվածը վերաբերում է նաև կողմերի կնքած հաշտության համաձայնությանը, որը ենթակա է հաստատման դատարանի կողմից:

ՔՂՕ-ի 33-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատարանը չի հաստատում հաշտության համաձայնությունը, եթե այն հակասում է օրենքին և այլ իրավական ակտերին կամ խախտում է այլ անձանց իրավունքները և օրինական շահերը: Այդ դեպքերում դատարանը վեճը քննում է ըստ էության:

Հետևաբար, որպեսզի հաշտության համաձայնությունը դատա-

րանի կողմից հաստատվի, անհրաժեշտ է, որպեսզի այն՝ 1) չհակասի օրենքին կամ այլ իրավական ակտերին, և 2) չխախտի այլ անձանց իրավունքները և օրինական շահերը:

Անհրաժեշտ է նաև, որպեսզի հաշտության համաձայնությունը բխի կողմերի ազատ կամահայտնությունից⁵, իսկ կողմերի ազատ կամահայտնությունից չբխելու դեպքում այն պետք է համարվի օրենքին հակասող:

Ասվածը վերաբերում է նաև վերաքննիչ դատարանին ներկայացվող հաշտության համաձայնություններին: ՔՂՕ-ն չի պարունակում որևէ հատուկ նորմ՝ դատական ակտի վերաքննության փուլում կնքվող հաշտության համաձայնության վերաբերյալ, հետևաբար պետք է գործեն ՔՂՕ-ի ընդհանուր նորմերը:

Պետք է նշել, որ հաշտության համաձայնությանը վերաբերող ՔՂՕ-ի ընդհանուր նորմերը բավականին սակավ են և հստակ պատասխան չեն տալիս մի շարք վիճահարույց հարցերի, մասնավորապես.

- Արդյո՞ք հաշտության համաձայնության պարտադիր հատկանիշ է երկկողմանի (փոխադարձ) զիջումների առկայությունը: Բազմաթիվ դատավարագետներ հաշտության համաձայնության պարտադիր տարր են համարում փոխադարձ զիջումների առկայությունը⁶, իսկ որոշ դատավարագետներ էլ փոխադարձ զիջումների առ-

¹ *Տե՛ս նաև* Постановление Пленума Верховного Суда Республики Беларусь от 28 июня 2001 г. №7 "О применении норм Гражданского процессуального кодекса при рассмотрении дел в суде первой инстанции" // *Нац. реестр правовых актов Респ. Беларусь*. - 2001. - № 68. - 6/298:

² *Տե՛ս նաև* **Շուսայան Վ.**, Հաշտության համաձայնությունը քաղաքացիական դատավարությունում, «Դատական իշխանություն», Եր., 2014, թիվ 3 (177), էջ 22; **Կոմիսարով Կ.Ի.** Отказ от иска и мировое соглашение // *Социалистическая законность*. 1967, №9, էջ 46; **Шершеневич Г.Ф.** Учебник русского гражданского права. М., 1995, էջ 343; **Боннер А.Т.** Принцип диспозитивности советского гражданского процессуального права. М., ВЮЗИ, 1987, էջ 67; **Нефедьев Е.А.** Склонение сторон к миру в гражданском процессе. Казань, 1890, էջ 10:

¹ *Տե՛ս նաև* **Շուսայան Վ.**, Հաշտության համաձայնությունը քաղաքացիական դատավարությունում, «Դատական իշխանություն», Եր., 2014, թիվ 3 (177), էջ 22:

² *Տե՛ս նաև* **Белова Т.А.** Гражданский процесс. Общая часть: учебник / Под общ. ред. Т.А. Беловой, И.Н. Колядко, Н.Г. Юркевича. - 2-е изд., перераб. и доп. - Минск.: Амалфея, 2006, էջ 441:

³ *Տե՛ս նաև* Гражданский процесс: учеб. для вузов / Пед ред. **М.К. Треушникова**. - 2-е изд., перераб. и доп. - М.: Городец, 2007, էջեր 81-82:

⁴ *Տե՛ս նաև* **Плешанов А.Г.** Диспозитивное начало в сфере гражданской юрисдикции: проблемы теории и практики. - М.: Изд. Норма, 2002, էջեր 60-61:

կայությունը որոշիչ չեն համարում¹:

- Արդյո՞ք հաշտության համաձայնությունը կարող է վերաբերել այն նյութական իրավունքներին և պարտականություններին, որոնք տվյալ գործով դատարանի քննության առարկա չեն հանդիսանում:

- Արդյո՞ք հաշտության համաձայնությունը կարող է պարունակել հանդիպական պարտավորություններ (պարտավորություններ, որոնց կատարումը պայմանավորված է մյուս կողմի պարտավորությունների կատարմամբ):

- Արդյո՞ք հաշտության համաձայնությունը կարելի է դիտարկել որպես քաղաքացիաիրավական պայմանագիր (նովացիա) և եթե այո, ապա ինչպիսի՞ քաղաքացիաիրավական հետևանքներ կարող է առաջացնել դատարանի կողմից չհաստատված հաշտության համաձայնությունը:

Այս և հաշտության համաձայնության բնույթի հետ կապված մի շարք այլ վիճահարույց հարցերի քննարկումը չի մտնում սույն ուսումնասիրության շրջանակների մեջ, այդ պատճառով էլ, խուսափելով դրանց մանրամասն քննարկումից, անդրադառնանք այն խնդրահարույց հարցերին, որոնք կապված են դատական ակտի վերաքննության փուլում վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտը բեկանելու և կողմերի հաշտության համաձայնությունը հաստատելու լիազորության հետ:

Այսպես, ՔԴՕ-ի 33-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ կողմերը դատավարության ցանկացած փուլում կարող են գործն ավարտել հաշտության համաձայնությամբ, իսկ ՔԴՕ-ի 29-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ քաղաքացիական դատավարության կողմերն են հայցվորը և պատասխանողը: ՔԴՕ-ի 34-րդ հոդվածը սահմանում է, որ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պա-

հանջներ ներկայացնող երրորդ անձինք օգտվում են հայցվորի բոլոր իրավունքներից և կրում են նրա բոլոր պարտականությունները: ՔԴՕ-ի 35-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձինք օգտվում են կողմի իրավունքներից և կրում են նրա պարտականությունները, բացի ... **հաշտության համաձայնություն կնքելու** ... իրավունքից:

Վերը նշված նորմերից ուղղակիորեն հետևում է, որ հաշտության համաձայնություն կնքելու իրավունքը պատկանում է բացառապես հայցվորին, պատասխանողին և վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձին, իսկ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձը զրկված է հաշտության համաձայնություն կնքելու իրավունքից: Սա իր հերթին նշանակում է, որ եթե հայցվորը և պատասխանողը ցանկանում են կնքել հաշտության համաձայնություն, ապա երրորդ անձի կամահայտնությունն այս հարցում էական և որոշիչ չէ:

Իհարկե, եթե հաշտության համաձայնությունը խախտում է երրորդ անձի շահերը, ապա այն չի հաստատվի դատարանի կողմից, քանի որ ՔԴՕ-ի 33-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ դատարանը չի հաստատում հաշտության համաձայնությունը, եթե այն ... խախտում է այլ անձանց իրավունքները և օրինական շահերը: Այդուհանդերձ, դատական ակտի վերաքննության փուլում կարող է ստեղծվել յուրահատուկ մի իրավիճակ. հնարավոր է, որ հայցվորը և պատասխանողը չբողոքարկեն դատարանի վճիռը, իսկ երրորդ անձը բողոքարկի այն, և դատական ակտի վերաքննության (այսինքն՝ երրորդ անձի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքի քննության) ընթացքում հայցվորը և պատասխանողը վերաքննիչ դատարանին խնդրեն հաստատել իրենց կողմից կնքված հաշտության համաձայնությունը: Այս դեպքում հնարավոր է երկու իրավիճակ.

1) **Հաշտության համաձայնությունը խախտում է երրորդ անձի շահերը կամ նրա համար ստեղծում է ավելի վատթար իրավիճակ,**

¹ *Տե՛ս Պետրոսյան Ռ.Գ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարություն, 4-րդ հրատ., Եր., 2012, «Ոսկան Երևանցի» հրատ., էջ 260; Русинова Е.Р. Распорядительные права сторон в гражданском процессе. Дисс. ... к.ю.н. Екатеринбург, 2003, էջեր 152-153; Яркоков В.В. Юридические факты в механизме реализации норм гражданского процессуального права. Екатеринбург, 1992, էջ 50:*

քան այն, ինչ ամրագրված է բողոքարկված դատական ակտով - ա) Եթե հաշտության համաձայնությունը խախտում է երրորդ անձի շահերը, ապա այն չպետք է հաստատվի՝ հինք ընդունելով ՔԴՕ-ի 33-րդ հոդվածի 4-րդ մասը: բ) Եթե հաշտության համաձայնությունը երրորդ անձի համար ստեղծում է ավելի վատթար իրավիճակ, քան այն իրավիճակը, որը սահմանված է բողոքարկված դատական ակտով, ապա այն ենթակա չէ հաստատման՝ ելնելով «շրջադարձ դեպի վատթարագույնը» արգելող սկզբունքից, որի կարևորությունն ընդունվել է խորհրդային շրջանի դատավարագետների կողմից: Բացի իրավական նշանակությունից, այս սկզբունքն ունի նաև մեծ բարոյական նշանակություն¹: Այս սկզբունքի էությունը կայանում է նրանում, որ դատական ակտի բողոքարկումը չպետք է անբարենպաստ հետևանքներ առաջացնի բողոք բերած անձի համար², այլ կերպ ասած՝ բողոք բերած անձը չպետք է իր բողոքի արդյունքում գրկվի նրանից, ինչին հասել է առաջին ատյանի դատարանում³:

Ս. Ս. Բոններն այս կապակցությամբ նշում է, որ դատական ակտի բողոքարկման իրավունքը չի կարող ամբողջական լինել առանց վերը նշված սկզբունք-երաշխիքի օրենսդրական ամրագրման⁴: Նույնատիպ կարծիքներ արտահայտվել են նաև մի շարք այլ գիտնականների կողմից⁵: Այս հարցի կապակցությամբ հակառակ կարծիք է

արտահայտել Լ. Ա. Տերեխովան՝ նշելով, որ. «... եթե առաջին ատյանի դատարանը թույլ է տվել դատական սխալ, ապա կողմերից մեկը դատարանի վճռով ոչ իրավաչափ կերպով ինչ-որ օգուտ է ստացել և գիտի այդ մասին: Եվ եթե այդ անձը նման պայմաններում բողոքարկում է վճիռը, ապա դա ոչ այլ ինչ է, քան իրավունքի չարաշահում»¹:

Խորհրդային քաղաքացիական դատավարության տեսության մեջ խոսվել է վերը նշված սկզբունքն իրավական նորմի տեսքով ամրագրելու անհրաժեշտության մասին², սակայն այն ոչ միայն օրենսդրական ամրագրում չստացավ, այլև՝ դատավարագետների շրջանում լայն աջակցություն չունեցավ³:

2) **Հաշտության համաձայնությունը չի խախտում երրորդ անձի շահերը և նրա համար չի ստեղծում ավելի վատթար իրավիճակ, քան այն, ինչ ամրագրված է բողոքարկված դատական ակտով**⁴ - Այս դեպքում, եթե ղեկավարվենք ՔԴՕ-ի տառացի մեկնաբանությամբ, վերաքննիչ դատարանը պետք է բեկանի դատական ակտը և հաստատի կողմերի հաշտության համաձայնությունը:

Ստեղծված իրավիճակում բողոք բերած երրորդ անձը փաստացի գրկվում է արդար դատաքննության իրավունքի տարր հանդիսացող դատական ակտի բողոքարկման իրավունքն իրացնելու հնարավորությունից: Հետևաբար, գտնում ենք, որ անհրաժեշտ է ՔԴՕ-ի 33-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությունն ունեցող 5-րդ մա-

¹ Տե՛ս **Горский Г. Ф.** и др. Судебная этика. Воронеж, 1973, էջեր 143-146:

² Տե՛ս **Лазарева Л. И.** Принцип недопустимости поворота к худшему // Правоведение. 1977. № 2, էջեր 101-104, <http://law.edu.ru/article/article.asp?articleID=189246>:

³ Տե՛ս **Борисова Е. А.** Апелляция в гражданском (арбитражном) процессе. М., 2008, էջ 172:

⁴ Տե՛ս **Боннер А.Т.** Законность и справедливость в правоприменительной деятельности // Избранные труды по гражданскому процессу. СПб., 2005, էջ 511:

⁵ Տե՛ս **Скворцов О.Ю.** Институт кассации в российском процессуальном праве (проблемы судоустройства и судопроизводства): Автореф. дисс. ... к. ю. н. СПб., 2000, էջ 22: **Шакирьянов Р.В.** Пределы рассмотрения дела судом апелляционной инстанции // Арбитражный и гражданский процесс. 2004. N 1, էջեր 26 - 27:

¹ Տե՛ս **Терехова Л.А.** Система пересмотра судебных актов в механизме судебной защиты. М., 2007, էջեր 204 - 205:

² Տե՛ս **Гражданский процесс / Отв. ред. Н. А. Чечина, Д. М. Чечот. М., 1968, էջ 316; Проверка судебных решений в социалистическом гражданском процессе / Отв. ред. В. М. Савицкий. М., 1989, էջ 12:**

³ Տե՛ս **Будак Е.** Правило запрета поворота к худшему в немецком и австрийском гражданском процессе // "Российская юстиция", 2008, N 9, <http://www.center-bereg.ru/o4040.html>:

⁴ Օրինակ, կողմերն իրենց համար ձեռնտու դատական ակտի բեկանումից խուսափելու նպատակով հաշտության համաձայնությամբ կրկին ամրագրում են իրավունքների և պարտականությունների նույն այն ծավալը, որն ամրագրված է առաջին ատյանի դատարանի կայացրած վճռով:

սով. «Վերաքննիչ և վճարքեկ դատարաններում հաշտության համաձայնության կնքումը թույլատրվում է միայն բողոք բերած անձի (անձանց) համաձայնության առկայության դեպքում»:

Քննարկվող լիազորության կապակցությամբ ներկայացնենք մեկ այլ ուշագրավ խնդիր: ՔԴՕ-ի 33-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատարանը չի հաստատում հաշտության համաձայնությունը, եթե այն հակասում է օրենքին և այլ իրավական ակտերին կամ խախտում է այլ անձանց իրավունքները և օրինական շահերը: Այդ դեպքերում դատարանը վեճը քննում է ըստ էության:

Ընդ որում, ՔԴՕ-ի 109-րդ հոդվածի 7-րդ կետից և 110-րդ հոդվածի 1-ին մասից հետևում է, որ հաշտության համաձայնությունն ընդհանուր իրավասության դատարանի կողմից հաստատվում է վճռով, իսկ դրա օրինականության և այլ անձանց իրավունքները խախտելու կամ չխախտելու հարցը դատարանի կողմից վերջնականապես պարզվում է վճռի կայացման փուլում (այսինքն՝ այն ժամանակ, երբ գործի քննությունն ավարտվել է, և դատարանը հեռացել է վճիռ կայացնելու):

Ավելին, բազմաթիվ դեպքերում ընդհանուր իրավասության դատարանը, ստանալով կողմերի հաշտության համաձայնությունը, «արագացված կարգով» անցնում է դատաքննության և, առանց գործն ըստ էության քննելու, ավարտում է այն և հեռանում է վճիռ կայացնելու:

Նման պայմաններում հարց է առաջանում. ինչպե՞ս պետք է վարվի դատարանը, եթե վճռի (որոշման) կայացման փուլում պարզվել է, որ հաշտության համաձայնությունը հակասում է օրենքին և այլ իրավական ակտերին կամ խախտում է այլ անձանց իրավունքները և օրինական շահերը:

Ընդ որում, եթե առաջին աստիճանի դատարանն այսպիսի դեպքերում կարող է ՔԴՕ-ի 131-րդ հոդվածով սահմանված կարգով վերսկսել գործի քննությունը և կողմերին առաջարկել վերաշարադրել

հաշտության համաձայնությունը¹, ապա վերաքննիչ դատարանը զրկված է նման լիազորությունից, ինչը նշանակում է, որ նման դեպքերում վերաքննիչ բողոքը պետք է քննվի և լուծվի ըստ էության: Այսինքն, ներկայացված հաշտության համաձայնությունն օրենքին հակասելու կամ այլ անձանց շահերը խախտելու դեպքում վերաքննիչ դատարանը զրկված է կողմերին հաշտության համաձայնություն կնքելու համար ևս մեկ հնարավորություն տալու իրավունքից, ինչը մեր կարծիքով տրամաբանական չէ, քանի որ դատարանը (այդ թվում՝ վերաքննիչ դատարանը) մշտապես պարտավոր է շտկել կողմերին հաշտության համաձայնություն կնքելու հարցում:

Առկա բացը շտկելու համար առաջարկում ենք ՔԴՕ-ն լրացնել հետևյալ բովանդակությունն ունեցող հոդվածով.

«Կողմերի հաշտության համաձայնությունը վերաքննիչ դատարանում.

1. Վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելուց հետո ստանալով կողմերի հաշտության համաձայնությունը՝ վերաքննիչ դատարանը հրավիրում է դատական նիստ՝ այն քննարկելու նպատակով:

2. Հաշտության համաձայնությունը դատական նիստի ընթացքում ներկայացվելու դեպքում այն քննարկվում է տվյալ դատական նիստում:

3. Հաշտության համաձայնությունը քննարկվելուց հետո գործի քննությունը հայտարարվում է ավարտված, և վերաքննիչ դատարանը հայտարարում է որոշման հրապարակման վայրն ու ժամանակը:

4. Կողմերի հաշտության համաձայնությունն օրենքով նախատեսված պահանջներին համապատասխանելու դեպքում վերաքննիչ դատարանը կիրառում է սույն օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով ամրագրված լիազորությունը:

¹ Թեև մեր կարծիքով նման լուծումը նույնպես իրավաչափ չէ, քանի որ ՔԴՕ-ի 131-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գործի քննությունը կարող է վերսկսվել միայն ապացույցները լրացուցիչ հետազոտելու կամ գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների պարզումը շարունակելու նպատակով:

5. Կողմերի հաշտության համաձայնությունն օրենքով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում վերաքննիչ դատարանը կայացնում է որոշում, որում շարադրվում են հաշտության համաձայնությունը չհաստատվելու պատճառները: Այդ դեպքում վերաքննիչ դատարանը վերսկսում է բողոքի քննությունը»:

Նման նորմը կողմերին հնարավորություն կտա բողոքի քննությունը վերսկսվելուց հետո վերաշարադրել իրենց հաշտության համաձայնությունը, դրանից հանել օրենքին և այլ իրավական ակտերին հակասող կամ այլ անձանց շահերը խախտող դրույթները և այն կրկին ներկայացնել վերաքննիչ դատարանին՝ հաստատման նպատակով: Ի դեպ, կողմերի հաշտության համաձայնության հաստատումը մերժելու դեպքում համապատասխան պատճառաբանված որոշում կայացնելու պահանջն ամրագրված է նաև ՌԴ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 4-րդ մասում¹:

§ 4. Դատական ակտը մասնակիորեն բեկանելու և փոփոխելու լիազորությունը

ՔԴՕ-ի 221-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի վերաքննության արդյունքում վերաքննիչ դատարանը մասնակիորեն բեկանում և փոփոխում է ստորադաս դատարանի ակտը, եթե ստորադաս դատարանի հաստատած փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Նախ և առաջ նշենք, որ ՀՀ Սահմանադրական դատարանն իր 22.09.2009թ. թիվ ՄԴՈ-832 որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմ

¹ *Տե՛ս Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական դատավարության օրենսգիրքը (N 138-Փ3), ընդունվել է Ռուսաստանի Դաշնության Պետական դումայի կողմից 23.10.2002թ., հաստատվել է ՌԴ Դաշնային խորհրդի կողմից 30.10.2002թ., հրապարակվել է 18.11.2002թ., Собрание законодательства Российской Федерации, № 46, ուժի մեջ է մտել 01.02.2003թ.:*

մից դատական ակտը բեկանելու և փոփոխելու լիազորությունը համարել է նրա հայեցողական լիազորությունը¹ (ինչը ենթադրում է, որ ՔԴՕ-ի 221-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված՝ վերաքննիչ դատարանի լիազորությունը ևս հայեցողական բնույթ ունի): Այդուհանդերձ, մեր համոզմամբ այս լիազորությունը հայեցողական բնույթ ունենալ չի կարող, քանի որ՝

- ՔԴՕ-ի 221-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում օգտագործվում է «մասնակիորեն բեկանում և փոփոխում է», այլ ոչ թե՝ «կարող է մասնակիորեն բեկանել և փոփոխել» արտահայտությունը², մինչդեռ հայեցողության առկայության մասին հնարավոր է խոսել միայն դիսպոզիտիվ նորմերի կիրառման դեպքում³: Վերաքննիչ դատարանի հայեցողական լիազորությունների շրջանակը կարող է որոշվել՝ հիմք ընդունելով կոնկրետ նորմում «իրավունք ունի» կամ «կարող է» ձևակերպման առկայության կամ բացակայության փաստը⁴:

- Դատական հայեցողությունը ենթադրում է դատարանին որևէ լիազորության տրամադրում՝ այդ լիազորության կիրառումը չկապելով որոշակի նախապես որոշված պայմանների առկայության հետ⁵, մինչդեռ տվյալ նորմում սահմանված են դրա կիրառման համար անհրաժեշտ պայմանները:

¹ *Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից թիվ ՄԴՈ-832 գործով 2009թ. սեպտեմբերի 22-ին կայացված որոշումը:*

² *Օրինակ, ՔԴՕ-ի 221-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործի վարույթը կասեցնելու հիմքերի առկայության դեպքում վերաքննիչ դատարանը կարող է կասեցնել գործի վարույթը: «Կարող է կասեցնել» ձևակերպումը թույլ է տալիս պնդել, որ այս լիազորության կիրառման ունի հայեցողական բնույթ (կախված է վերաքննիչ դատարանի հայեցողությունից):*

³ *Տե՛ս Кац А.К. Советский закон и судебное усмотрение // Практика применения гражданского процессуального права (к двадцатилетию ГПК РСФСР). - Свердловск: «СЮИ», 1984, էջ 74:*

⁴ *Տե՛ս Հովհաննիսյան Վ.Վ., Վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, Եր.: ԵՊՀ հրատ., 2013, էջ 322:*

⁵ *Տե՛ս Чечот Д.М. Административная юстиция (теоретические проблемы). - Л.: Изд-во Ленингр. ун-та, 1973, էջ 68:*

Ամեն դեպքում, իրավաբանական գրականության մեջ բազմիցս շեշտվել է, որ հայեցողական լիազորությունների կիրառումը չի կարելի բացարձակ կախվածության մեջ դնել դատարանի կամայական ցանկությունից: Դատական հայեցողությունն ամեն դեպքում ենթադրում է որոշակի իրավիճակում օպտիմալ որոշում կայացնելու պարտականություն՝ ելնելով նպատակահարմարության, օրինականության ու արդարության սկզբունքներից և հիմնվելով կոնկրետ գործի հանգամանքների համակարգային վերլուծության վրա¹: Ընդ որում, հայեցողական լիազորության կիրառման դեպքում դատարանը պետք է ընտրի հնարավոր գործողություններից այն տարբերակը, որն առավել համահունչ է օրենսդրի տրամաբանությանը²: Հայեցողական լիազորությունն օրենքով դատարանին վերապահված իրավունք է՝ գործով քաղաքացիական դատավարություն իրականացնելիս ընտրելու մի քանի հնարավոր իրավաչափ լուծումներից որևէ մեկը³: Այս կապակցությամբ Դ. Բ. Աբուշենկոն նշում է, որ դատական հայեցողությունը գործի փաստական հանգամանքների գնահատման և իրավունքի նորմերի կիրառման արդյունքում կոնկրետ դատավարական գործողությունը կատարելու՝ դատարանին օրենքով ընձեռված ընտրության հնարավորություն է⁴:

Վերը շարադրվածի հիման վրա կարող ենք հանգել այն եզրակացության, որ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից ընդհանուր իրավասության դատարանի վճիռը բեկանելու և փոփոխելու լիազորությունն ունի ոչ թե հայեցողական, այլ՝ պարտադիր բնույթ: Այլ հարց է, որ այս լիազորության կիրառման համար անհրաժեշտ պայմանների առկայության գնահատումը հայեցողական

¹ *Տե՛ս Բերգ Լ.Ն. Судебное усмотрение и его пределы: общетеоретический аспект. Дисс ... к.ю.н. - Екатеринбург, 2008, էջ 105:*

² *Տե՛ս Կոմիսսարով Կ.Ի. Задачи судебного надзора в сфере гражданского судопроизводства. - Свердловск, 1971, էջ 24:*

³ *Տե՛ս Հովհաննիսյան Վ.Վ., նշված աշխատ., էջ 322:*

⁴ *Տե՛ս Աբուշենյո Ժ.Բ. Судебное усмотрение в гражданском процессе. Дисс. ... к.ю.н., Екатеринбург, 1998, էջեր 48-50:*

բնույթ է կրում (օրինակ՝ յուրաքանչյուր դատարան ինքն է որոշում, թե արդյո՞ք տվյալ դեպքում առկա է արդարադատության արդյունավետության շահ, թե՞ ոչ):

ՀՀ Սահմանադրական դատարանը, քննարկելով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի¹ 419-րդ հոդվածի 6-րդ կետի² սահմանադրականության հարցը, ընդգծել է, որ ՔրԴՕ-ի 419-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսված լիազորությունը ՀՀ վճռաբեկ դատարանը կարող է կիրառել բոլոր այն դեպքերում, երբ գործի փաստական հանգամանքները չեն փոխվում և՛ առաջին ատյանի դատարանի, և՛ վերաքննիչ դատարանի դատաքննության արդյունքում, և հաստատված միեւնույն փաստը տարբեր դատարանների կողմից տարբեր քրեաիրավական գնահատականի է արժանանում: Նման գործը վճռաբեկության կարգով վերանայելիս ՀՀ վճռաբեկ դատարանը կարող է ուժի մեջ թողնել իրար հակասող դատական ակտերից մեկը: **Այդպիսի որոշման հիմք կարող է հանդիսանալ միայն որևէ ատյանի դատարանի կողմից քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառումը**³:

Քննարկելով ՔԴՕ-ի 240-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի⁴

¹ *Ընդունվել է 01.07.1998թ., ուժի մեջ է մտել 12.01.1999թ.: Տե՛ս ՀՀՊՏ 1998/22(55), 21.09.1998թ.: Այսուհետ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք կամ ՔրԴՕ:*

² *ՔրԴՕ-ի 419-րդ հոդվածի 6-րդ կետը 2006թ. հունիսի 7-ի խմբագրությամբ ունեցել է հետևյալ տեսքը. «Դատական ակտերի վերանայման արդյունքում վճռաբեկ դատարանը ... վերաքննիչ դատարանի դատական ակտը վերանայելիս օրինական ուժ է տալիս առաջին ատյանի կամ վերաքննիչ դատարանի դատական ակտերից որևէ մեկին»:*

³ *Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից թիվ ՄԴՆ-720 գործով 2007թ. դեկտեմբերի 11-ին կայացված որոշումը:*

⁴ *ՔԴՕ-ի 240-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքով վճռաբեկ դատարանը ... մասնակիորեն բեկանում և փոփոխում է ստորադաս դատարանի ակտը, եթե ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից:*

սահմանադրականության հարցը՝ ՀՀ Սահմանադրական դատարանն ընդգծել է, որ ՔԴՕ-ի 240-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, նախատեսելով ՀՀ վճռաբեկ դատարանի խնդրո առարկա լիազորությունը, միաժամանակ, **որպես այդ լիազորության կիրառման իրավաչափությունն ապահովող երաշխիք**, ամրագրում է դրանից օգտվելու չափորոշիչները: Այն է՝ ՀՀ վճռաբեկ դատարանը ՔԴՕ-ի 240-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված լիազորությունը կարող է կիրառել բոլոր այն դեպքերում, երբ ստորադաս դատարանի հաստատած փաստական հանգամանքները թույլ են տալիս վճռաբեկ դատարանին ստորադաս դատարանի ակտից տարբերվող ակտ կայացնելու, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

ՀՀ Սահմանադրական դատարանն ամրագրել է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի ակտը փոփոխելը կարող է տեղի ունենալ բացառապես հետևյալ պայմանների միաժամանակյա առկայությամբ.

ա) ՀՀ վճռաբեկ դատարանը հետազոտության առարկա չի դարձնում որեւէ փաստական հանգամանք, այլ անդրադառնում է միայն իրավունքի հարցերին,

բ) ստորադաս դատարանի հաստատած փաստական հանգամանքները պետք է հնարավորություն տան վճռաբեկ դատարանին կայացնելու ստորադաս դատարանի ակտից տարբերվող ակտ,

գ) վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի ակտը փոփոխելը պետք է բխի արդարադատության արդյունավետության շահերից,

դ) այդպիսի որոշման հիմք կարող է հանդիսանալ միայն ստորադաս դատարանի կողմից նյութական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը:

Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրել է, որ վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանված լինելու պահանջը, ի թիվս այլոց, ենթադրում է նաև **խնդրո առարկա հայեցողական լիազորությունից օգտվելիս արդարադատության արդյունավե-**

տության շահի առկայության հիմնավորումը՝ որպես այդ լիազորության կիրառման իրավաչափության երաշխիք: Յուրաքանչյուր կոնկրետ դեպքում խնդրո առարկա լիազորությունն իրականացնելիս **դրա կիրառման իրավաչափությունը կարող է ապահովվել**, եթե վճռաբեկ դատարանը հիմնավորում է արդարադատության արդյունավետության այն շահի առկայությունը, որը հիմք է հանդիսանում նշված լիազորությունից օգտվելու համար¹:

Վերլուծելով ՀՀ Սահմանադրական դատարանի՝ վերը նշված որոշումները²՝ կարող ենք պնդել, որ դրանց հիմքում ընկած է հետևյալ ընդհանուր տրամաբանությունը.

- դատական ակտի բեկանման դեպքում գործը, որպես կանոն, պետք ուղարկվի համապատասխան դատարան՝ նոր քննության,

- դատական ակտի վերանայում իրականացնող դատարանները կարող են գործին վերջնական լուծում տալ (այդ թվում նաև՝ բեկանել և փոփոխել դատական ակտը) միայն խիստ որոշակի, օրենքով սահմանված դեպքերում,

- դատական ակտը բեկանելու և փոփոխելու լիազորության կիրառման համար անհրաժեշտ պայմանները ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից առաջին հերթին դիտվում են որպես այդ լիազորության իրավաչափ կիրառման երաշխիքներ:

Այսպիսով, կարող ենք նշել, որ դատական ակտը բեկանելու և փոփոխելու լիազորությունը, օրենսդրի և ՀՀ Սահմանադրական դատարանի տրամաբանությունից ելնելով, վերաքննիչ դատարանի կողմից պետք է կիրառվի բացառիկ դեպքերում:

ՔԴՕ-ի 221-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերի համադրված վերլուծությունից նույնպես հետևում է, որ վերաքննիչ դա-

¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից թիվ ՄԴՌ-832 գործով 2009թ. սեպտեմբերի 22-ին կայացված որոշումը:

² ՀՀ Սահմանադրական դատարանի՝ մեր կողմից վկայակոչված որոշումներում որևէ կերպ չի քննարկվել վերաքննիչ դատարանի կողմից առաջին ատյանի դատարանի վճիռը բեկանելու և փոփոխելու լիազորությունը: Սակայն այդ որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները մեր կարծիքով կիրառելի են նաև քննարկվող լիազորության նկատմամբ:

տարանի կողմից առաջին ատյանի դատարանի վճռի բեկանումը և փոփոխումը պետք է լինի բացառություն, իսկ ընդհանուր կանոնը պետք է լինի դատական ակտը բեկանելը և գործը նոր քննության հետ ուղարկելը:

Որոշ երկրներում գործում է հակառակ կանոնը: Օրինակ, Մոլդովայի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մասի «c» և «d» կետերը սահմանում են, որ վերաքննիչ բողոքի քննության արդյունքում վերաքննիչ դատարանի կողմից առաջին ատյանի դատարանի վճիռը լրիվ կամ մասնակի բեկանելը (վերացնելը) և նոր որոշում ընդունելն ընդհանուր կանոն է, իսկ առաջին ատյանի դատարանի վճիռը բեկանելը և գործը նոր քննության ուղարկելը՝ խիստ բացառիկ և որոշակի դեպքերում կիրառելի լիազորություն¹: Սակայն նման երկրներում, որպես կանոն, գործում է լրիվ վերաքննության մոդելը: Իսկ լրիվ վերաքննության պայմաններում վերաքննիչ դատարանի լիազորություններն այլ են, և առավելապես նույնանում են առաջին ատյանի դատարանի լիազորությունների հետ²:

Օրենսդրի և ՀՀ Սահմանադրական դատարանի դիրքորոշումը համահունչ է նաև Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի № R (95) 5 հանձնարարականի 2-րդ հոդվածի «a» կետի պահանջին, այն է՝ դատական վեճի հարցերը սկզբունքորեն պետք է լուծվեն առաջին ատյանի դատարանում³:

¹ *Տե՛ս Մոլդովայի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքը, ընդունվել է 2003թ. մայիսի 30-ին, հրապարակվել է 12.06.2003թ., ուժի մեջ է մտել 12.06.2003թ., Monitorul Oficial № 111-115, հոդված № 451, <http://lex.justice.md/viewdoc.php?action=view&view=doc&id=286229&lang=2>:*

² *Տե՛ս Հովհաննիսյան Վ.Վ., Վերաքննիչ դատարանի լիազորությունների իրավաբանական բնույթի հիմնախնդիրները, «Օրենք և իրականություն», Եր., հունվար 2012, N 1, էջ 5:*

³ *S՛ես Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 1995թ. № R (95) 5 հանձնարարականը՝ քաղաքացիական և առևտրային գործերով դատական ակտերի բողոքարկման համակարգի և ընթացակարգերի ներդրման և կատարելագործման վերաբերյալ, <http://www.legislationline.org/documents/id/8290>:*

Շեշտենք, որ այս հարցում Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքը¹ որդեգրել է նույն մոտեցումը, ինչը երևում է ՎԴՕ-ի 145-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերից: Հետևաբար, ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ վարչական դատարանի վճռի բեկանումը և փոփոխումը նույնպես հանդիսանում է բացառություն, իսկ դատական ակտը բեկանելը և գործը նոր քննության հետ ուղարկելը՝ ընդհանուր կանոն: Ընդ որում, նախկինում գործող Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում² գործում էր հակառակ մոտեցումը, ինչը երևում է նախկինում գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերի վերլուծությունից:

Անդրադառնալով քննարկվող լիազորության **նպատակին**՝ նշենք, որ իրավաբանական գրականության մեջ ընդունված տեսակետի համաձայն՝ վերաքննիչ դատարանին նման լիազորություն տրամադրելու նպատակը դատական շրջապատյունների կանխումն է և դատական քննության՝ ողջամիտ ժամկետներում իրականացումը³:

Պետք է նշել, որ ՔԴՕ-ի 221-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետն իր մեջ պարունակում է դատական ակտը բեկանելու և փոփոխելու լիազորության իրավաչափ կիրառման համար անհրաժեշտ պայ-

¹ *Ընդունվել է 05.12.2013թ., ուժի մեջ է մտել 07.01.2014թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2013/73(1013).1 Հոդ. 1186.1, 28.12.2013թ.: Սյունիստ՝ ՎԴՕ:*

² *Ընդունվել է 28.11.2007թ., ուժի մեջ է մտել 01.01.2008թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2007/64(588) Հոդ. 1300, 19.12.2007թ.: Ուժը կորցրել է 07.01.14թ.:*

³ *Տե՛ս Հովհաննիսյան Վ.Վ., Վերաքննիչ դատարանի առարկայական լիազորությունների հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, «Դատական իշխանություն», Երևան, 2012, թիվ 10(159), էջ 41: Նման դիրքորոշում է հայտնել նաև ՀՀ Սահմանադրական դատարանը՝ իր 22.09.2009թ. թիվ ՍԴՈ-832 որոշմամբ: Թեև ՀՀ Սահմանադրական դատարանի հայտնած դիրքորոշումը վերաբերել է ՀՀ վճռաբեկ դատարանի համանման լիազորությանը, սակայն այն կիրառելի է նաև վերաքննիչ դատարանի դեպքում: Նույն դիրքորոշումն առկա է նաև ՀՀ Սահմանադրական դատարանի 11.12.2007թ. թիվ ՍԴՈ-720 որոշման մեջ:*

մանները, որոնք հանգում են հետևյալին:

1. Առաջին աստիճանի դատարանի կայացրած վճռով հաստատված փաստերը պետք է **առանձին վերջրած** բավարար լինեն վճիռը բեկանելու և փոփոխելու համար: Հետևաբար, այն դեպքում, երբ վերաքննիչ դատարանը կիրառել է ՔԴՕ-ի 219-րդ հոդվածի 3-րդ կամ 4-րդ մասով նախատեսված լիազորություններից որևէ մեկը (որևէ կերպ փոփոխել է առաջին աստիճանի դատարանի կողմից հաստատված փաստերի շրջանակը), վճռի բեկանումը և փոփոխումը վերաքննիչ դատարանի կողմից թույլատրելի չէ: Վերաքննիչ դատարանը որոշում է կայացնում ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքների հիման վրա և իրավունք չունի միաժամանակ հաստատված համարել նոր փաստական հանգամանքներ՝ մասնակիորեն բեկանելով և փոփոխելով դատական ակտը¹:

2. Վճռի բեկանումը և փոփոխումը պետք է բխի արդարադատության արդյունավետության շահերից: «Արդարադատության արդյունավետության շահ» հասկացությունը բավարար չափով բացահայտված չէ, սակայն այն որոշակիորեն կարելի է կապել գործի քննության ողջամիտ ժամկետի գաղափարի և դատավարական խնայողության սկզբունքի հետ: ՔԴՕ-ն չի պարունակում որևէ նորմ դատավարական խնայողության սկզբունքի մասին: Ավելին, այդ սկզբունքի գոյությունը միանշանակ չի ընդունվում բոլոր դատավարագետների կողմից: Մենք համաձայն ենք այն հեղինակների հետ, ովքեր ընդունում են դատավարական խնայողության սկզբունքի գոյությունը և կարևոր նշանակություն են տալիս դրա պահպանմանը: Դատավարական միջոցների խնայողության սկզբունքն ապահովում է ուժերի ռացիոնալ օգտագործումը, արդարադատության ավելի արագ և արդյունավետ իրականացումը՝ ջանքերի նվազագույն գոր-

¹ Տե՛ս **Հովհաննիսյան Վ.Վ.**, Վերաքննիչ դատարանի որոշումների դասակարգման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջ 453:

ծաղրմամբ¹: Գերմանական քաղաքացիական դատավարության իրավունքում դատավարական խնայողության սկզբունքի էությունը նրանում է, որ այն պահանջում է խուսափել ոչ անհրաժեշտ քայլերից և դրա շնորհիվ տնտեսել դատավարական միջոցները²: Դատական խնայողության սկզբունքի առկայության և այն պահպանելու անհրաժեշտության մասին իր որոշումներից մեկում անդրադարձել է նաև ՀՀ վճռաբեկ դատարանը³:

3. Լիազորության կիրառման արդյունքում առաջին աստիճանի դատարանի վճիռը պետք է փոփոխվի ոչ թե ամբողջությամբ, այլ՝ մասնակիորեն: ՔԴՕ-ի 221-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում օրենսդրի կողմից կիրառվել է «դատական ակտը **մասնակի** բեկանել և փոփոխել» (այլ ոչ թե՝ «ամբողջությամբ կամ մասնակի բեկանել և փոփոխել») կամ ընդհանրապես «բեկանել և փոփոխել») ձևակերպումը⁴:

Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերը նշված երեք պայմանները միևնույն քաղաքացիական գործով կարող են առկա լինել գործնականում եզակի դեպքերում: Միաժամանակ, դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս նաև, որ քննարկվող լիազորությունը վերաքննիչ դատարանի

¹ Տե՛ս **Պ.Վ. Шакирьянов**. Действие принципа процессуальной экономии в гражданском судопроизводстве, <http://justicemaker.ru/view-article.php?id=3&art=3784>:

² Տե՛ս **Давтян А.Г.** Гражданское процессуальное право Германии. - М.: Изд-во Городец-издат, 2000, էջ 49:

³ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014թ. որոշումը՝ թիվ ԱԸԱԴ/0209/02/13 քաղաքացիական գործով:

⁴ Հասկանալի է, որ համար նշենք, որ ՎԴՕ-ի 145-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում (որտեղ ամրագրված է ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ վարչական դատարանի վճիռը բեկանելու և փոփոխելու լիազորությունը) առկա է «ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանել և փոփոխել» ձևակերպումը, ինչը նշանակում է, որ, ի տարբերություն ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի, ՀՀ վարչական վերաքննիչ դատարանն ունի դատական ակտի եզրափակիչ մասն ամբողջությամբ բեկանելու և փոփոխելու լիազորություն:

կողմից կիրառվում է բավականին հաճախ և առանց ՔԴՕ-ով սահմանված սահմանափակումները պահպանելու: Այսպես՝

1. դատական պրակտիկայում բազմաթիվ են դեպքերը, երբ դատարանի վճիռը (վճռի եզրափակիչ մասը) վերաքննության արդյունքում բեկանվում և փոփոխվում է ամբողջությամբ (ամբողջությամբ մերժված հայցն ամբողջությամբ բավարարվում է կամ հակառակը): Ընդ որում, այս իրավիճակը լրիվ ընդունելի է համարվում նաև ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից¹:

2. Դատական պրակտիկայի ուսումնասիրությունից բխում է, որ խիստ ճնշող մեծամասնությունն կազմող դեպքերում վերաքննիչ դատարանը, բեկանելով և փոփոխելով առաջին ատյանի դատարանի վճիռը, չի հիմնավորում արդարադատության արդյունավետության շահի առկայությունը: Վերաքննիչ դատարանի կողմից սովորաբար վկայակոչվող և ընդհանուր բնույթ ունեցող դատողությունները, մեր կարծիքով, չեն կարող դիտվել որպես արդարադատության արդյունավետության շահի առկայության հիմնավորումներ: Ասվածի կապակցությամբ բերենք օրինակներ:

- «Վերաքննիչ դատարանը եզրակացրեց, որ գործում առկա ապացույցները և դրանցով հաստատվող փաստերը տալիս են հնարավորություն՝ վճիռը բեկանելուց հետո այն փոփոխելու և նոր դատական ակտ կայացնելու, և դա բխում է գործի քննության ողջամիտ ժամկետի պահպանման ու արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ տվյալ դեպքում հայցի հիմնագուրկ բնույթն ակնհայտ ու անվերականգնելի է, և գործի նոր քննության պարագայում իրավիճակը փոխվել չի կարող»²:

¹ ՀՀ վճռաբեկ դատարանը նույնպես ունի դատական ակտը միայն մասնակի բեկանելու և փոփոխելու լիազորություն, սակայն հաճախ այն բեկանում և փոփոխում է ամբողջությամբ: Տե՛ս օրինակ ՀՀ վճռաբեկ դատարանի 24.05.2013թ. որոշումը՝ թիվ ԵՄԴ/0250/02/12 քաղաքացիական գործով:

² Տե՛ս օրինակ ԵԱՆԴ/1530/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից 05.05.2011թ. կայացված որոշումը:

- «Վերաքննիչ դատարանը միաժամանակ արձանագրում է, որ սույն քաղաքացիական գործով գործի փաստական հանգամանքները ամբողջությամբ պարզված են, ուստի ելնելով արդարադատության արդյունավետության շահերից վերաքննիչ դատարանը գտնում է, որ սույն գործի փաստերը թույլ են տալիս վճիռը մասնակիորեն բեկանելու և փոփոխելու»¹:

- «Այսպիսով, վերը նշված փաստարկների, ինչպես նաև գործով հաստատված հանգամանքների ուսումնասիրման արդյունքում Վերաքննիչ դատարանը հանգում է այն եզրակացության, որ վերաքննիչ բողոքը պարունակում է բավարար հիմքեր և հիմնավորումներ՝ Դատարանի ... վճիռը բեկանելու համար, իսկ գործով հաստատված փաստական հանգամանքները թույլ են տալիս, արդարադատության արդյունավետության շահերից ելնելով, կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված դրույթը և դատական ակտը փոփոխել՝ հայցը բավարարել»²:

- «Միևնույն ժամանակ, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ սույն գործով ենթակա է կիրառման ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, համաձայն որի՝ «Գործն ըստ էության լուծող դատական ակտի վերաքննության արդյունքում վերաքննիչ դատարանը մասնակիորեն բեկանում և փոփոխում է ստորադաս դատարանի ակտը, եթե ստորադաս դատարանի հաստատած փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից», ուստի գործով հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս վճռի բեկանված մասով հայցի մերժման մասին նոր դա-

¹ Տե՛ս օրինակ ԵՄԴ/0723/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից 19.03.2009թ. կայացված որոշումը:

² Տե՛ս օրինակ ՏԴԶ/0080/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից 13.07.2012թ. կայացված որոշումը:

տական ակտ կայացնելու համար»¹:

Բանն այն է, որ նմանատիպ դատողություններ կարելի է կատարել ցանկացած քաղաքացիական գործով: Այս և նմանատիպ այլ դատողությունները, քննարկվող հարցի ներկայիս իրավակարգավորման պայմաններում, չեն կարող հիմք հանդիսանալ ընդհանուր իրավասության դատարանի վճիռը բեկանելու և փոփոխելու համար:

Ինչպես արդեն նշել ենք, ՀՀ վճռաբեկ դատարանը նույնպես ունի ստորադաս դատարանի կայացրած դատական ակտը բեկանելու և փոփոխելու լիազորություն: Յուրաքանչյուր քաղաքացիական գործով այս լիազորությունը կիրառելիս, ՀՀ վճռաբեկ դատարանը ներկայացնում է հետևյալ հիմնավորումը.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք:

Սույն գործով վեճի լուծումը էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Տվյալ դեպքում վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս վճռաբեկ դատարանը հիմք է ըն-

¹ Տե՛ս թիվ ԵԿԴ/2271/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից 30.04.2013թ. կայացված որոշումը:

դունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը»¹:

Վճռաբեկ դատարանի կողմից տրվող այս հիմնավորումը համոզիչ չէ, և ունի ընդհանուր բնույթ, քանի որ հաշվի չեն առնվում յուրաքանչյուր կոնկրետ գործի առանձնահատկությունները: Բացի այդ, ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից տրված այս հիմնավորման մեջ հաշվի առնված չէ, որ.

- նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտության բացակայությունը դեռևս հիմք չէ արդարադատության արդյունավետության շահի առկայությունը հիմնավորելու համար²,

- ողջամիտ ժամկետում գործը քննելու անհրաժեշտությունը **հավասարապես** վերաբերում է բոլոր քաղաքացիական գործերին,

- բոլոր քաղաքացիաիրավական վեճերի լուծումն էլ այս կամ այն չափով էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար:

Այսպիսով, կարող ենք նշել, որ մի շարք դեպքերում ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը, ընդհանուր իրավասության դատարանի վճիռը բեկանելիս և փոփոխելիս, ձևականորեն է մոտենում արդարադատության արդյունավետության շահի առկայությունը հիմնավորելու օրենսդրի պահանջին: Դրա պատճառներից մեկն էլ այն է, որ արդարադատության արդյունավետության շահի առկայության չափորոշիչները դատական պրակտիկայում դեռևս մշակ-

¹ Տե՛ս օրինակ թիվ ԵՄԴ/0250/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.05.2013թ. որոշումը:

² Նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտության բացակայությունը դատական ակտի բեկանման և փոփոխման լիազորության կիրառման հիմքերից մեկն է, իսկ արդարադատության արդյունավետության շահի առկայությունը լիազորության կիրառման մյուս հիմքն է, մինչդեռ վճռաբեկ դատարանը փորձում է հիմքերից մեկի առկայությունից բխեցնել նաև մյուս հիմքի առկայությունը:

ված չեն¹:

3. Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերաքննիչ դատարանը, բեկանելով և փոփոխելով առաջին ատյանի դատարանի վճիռը, հաճախ լրիվ կամ գոնե մասնակիորեն հիմնվում է իր իսկ կողմից հաստատված փաստերի վրա, որոնց առաջին ատյանի դատարանը նույնիսկ չի էլ անդրադարձել²:

Այսպիսով, ամփոփելով ասվածը, կարող ենք արձանագրել, որ գործող օրենսդրական նորմերը գործնականում անհնարին են դարձնում վերաքննիչ դատարանի կողմից ընդհանուր իրավասության դատարանի վճիռը բեկանելու և փոփոխելու լիազորության իրավաչափ կիրառումը:

Ընդ որում, ՔԴՕ-ի 221-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով ամրագրված սահմանափակումներից մեկն ունի սուբյեկտիվ և գնահատողական բնույթ (արդարադատության արդյունավետության շահի առկայությունը), իսկ մյուս երկուսը՝ օբյեկտիվ բնույթ: Իրավակիրառ պրակտիկայում «արդարադատության արդյունավետության շահ» հասկացությունը տարբեր դատավորների կողմից կարող է տարբեր կերպ մեկնաբանվել, ինչն էլ ի վերջո կարող է հանգեցնել հակասական դատական պրակտիկայի ձևավորմանը:

Նման պայմաններում, ողջամտորեն ծագում են քննարկվող լիազորության իրավաչափ կիրառման պայմանների հետ կապված մի շարք հարցեր:

¹ ՀՀ Սահմանադրական դատարանը իր 22.09.2009թ. թիվ ՍԴՈ-832 որոշմամբ արձանագրել է, որ իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ արդարադատության արդյունավետության շահի առկայությունը հիմնավորելու պահանջին մի շարք դեպքերում ձևական մոտեցում է ցուցաբերվում: Մինչդեռ դատական ակտը բեկանելու և փոփոխելու լիազորության կիրառման իրավաչափությունը կարող է ապահովվել միայն արդարադատության արդյունավետության շահի առկայությունը հիմնավորելու դեպքում:

² Տե՛ս օրինակ թիվ ԵԱՆԴ/1530/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից 05.05.2011թ. կայացված որոշումը և թիվ ՏԴ2/0080/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից 13.07.2012թ. կայացված որոշումը:

1. Արդյո՞ք արդարացված է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանին առաջին ատյանի դատարանի վճիռը միայն մասնակի բեկանելու և փոփոխելու լիազորությամբ օժտելը, այն պայմաններում, երբ ՀՀ վարչական վերաքննիչ դատարանն ունի ՀՀ վարչական դատարանի վճիռն ամբողջությամբ բեկանելու և փոփոխելու լիազորություն:

Գտնում ենք, որ նման իրավակարգավորման և տարբերակված մոտեցման հիմքում որևէ տրամաբանություն ընկած չէ: Հնարավոր չէ պատասխանել այն հարցին, թե ինչու համապատասխան հիմքերի առկայության դեպքում դատարանի վճիռն ամբողջությամբ չի կարող բեկանվել և փոփոխվել:

Ուստի, ասվածից ելնելով, առաջարկում ենք ՔԴՕ-ի 221-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետից հանել «մասնակիորեն» բառը:

2. Արդյո՞ք արդարացված է քննարկվող լիազորության կիրառումը գնահատողական և սուբյեկտիվ բնույթի չափանիշի (արդարադատության արդյունավետության շահի) առկայությամբ պայմանավորելը:

Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նման մոտեցումն արդարացված չէ: Օրենսդրի կողմից նման պահանջի ամրագրումը հանգեցրել է նրան, որ շատ դեպքերում դատարանները ձևական մոտեցում են ցուցաբերում արդարադատության արդյունավետության շահի առկայությունը հիմնավորելու պահանջին: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը և ՀՀ վճարել դատարանը, դատական ակտը բեկանելու և փոփոխելու լիազորությունը կիրառելիս, հաճախ օգտագործում են տվյալ գործի փաստական հանգամանքները հաշվի չառնող և ձևական բնույթ կրող հիմնավորումներ: Դրա հետևանքով խախտվում է դատական ակտերի իրավական հիմնավորվածության պահանջը, որին բազմիցս անդրադարձել է ՀՀ վճարել դատարանը¹:

¹ Տե՛ս օրինակ թիվ 3-2504 (ՏԴ) քաղաքացիական գործով (ըստ հայցի «Քնար-88» ՍՊԸ ընդդեմ ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության՝ գումար բռնագանձելու պահանջի մասին) ՀՀ վճարել դատարանի 21.12.2006թ. կայացրած որոշումը:

Նշենք, որ, օրենսդրորեն հնարավոր չէ ամրագրել «արդարադատության արդյունավետության շահ» հասկացության սպառիչ բացատրությունը կամ մեկնաբանությունը: Յուրաքանչյուր քաղաքացիական գործ եզակի է իր փաստական հանգամանքներով, ուստի արդարադատության արդյունավետության շահի առկայության հիմնավորումը յուրաքանչյուր գործով կարող է լինել եզակի:

Գտնում ենք, որ ոչնչով արդարացված չէ քննարկվող լիազորության կիրառումը գնահատողական բնույթ ունեցող չափանիշի առկայությամբ պայմանավորելը: Մանավանդ որ ՔԴՕ-ն սահմանել է այդ լիազորության կիրառման համար անհրաժեշտ օբյեկտիվ չափանիշ (առաջին ատյանի դատարանի կողմից հաստատված փաստերի բավարարությունը):

Ավելին, նախկինում գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը սահմանում էր, որ գործն ըստ էության լուծող դատական ակտի վերաքննության արդյունքում ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը կարող էր ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանել և փոփոխել վարչական դատարանի վճիռը: Ընդ որում, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը չէր պարտավորեցնում վերաքննիչ դատարանին հիմնավորել արդարադատության արդյունավետության շահի առկայությունը:

Ուստի, ասվածից ելնելով, առաջարկում ենք ՔԴՕ-ի 221-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետից հանել «և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից» բառակապակցությունը:

3. Արդյո՞ք արդարացված է քննարկվող լիազորության կիրառումը ընդհանուր իրավասության դատարանի կողմից հաստատված փաստերի բավարարությամբ պայմանավորելը:

Այս հարցում լիովին համամիտ ենք օրենսդրի այն մոտեցմանը, որ վճիռը կարող է բեկանվել և փոփոխվել բացառապես այն դեպքերում, երբ առաջին ատյանի դատարանի կողմից հաստատված փաս-

տերը հնարավորություն են տալիս կայացնելու նման դատական ակտ: Համամիտ ենք նաև ՀՀ Սահմանադրական դատարանի այն մոտեցման հետ, որ վճիռը բեկանելու և փոփոխելու մասին որոշման հիմք կարող է հանդիսանալ միայն ստորադաս դատարանի կողմից նյութական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը: Բացի այդ, վերաքննիչ դատարանի՝ դատական ակտը բեկանելու և փոփոխելու լիազորությունը վերաբերում է այն դեպքերին, երբ դատարանի վճռի պատճառաբանական և եզրափակիչ մասերը միմյանց հետ փոխադարձ տրամաբանական կապի մեջ չեն գտնվում, այլ կերպ ասած՝ վճռի եզրափակիչ մասը հակասում է հենց նույն վճռի պատճառաբանական մասին¹: Նմանատիպ մոտեցում անուղղակիորեն արտահայտվել է նաև թիվ 3-148 (ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից 2008թ. փետրվարի 29-ին կայացված որոշմամբ²:

ՔԴՕ-ի 219-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի և ՔԴՕ-ի 221-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համադրված վերլուծության արդյունքում կարող ենք արձանագրել, որ վերաքննիչ դատարանն ունի նոր փաստեր հաստատելու և առաջին ատյանի դատարանի կողմից հաստատված փաստերի շրջանակը փոփոխելու լիազորություն: Մինևնույն ժամանակ, այդ լիազորություններից որևէ մեկի կիրառման դեպքում դատական ակտը չի կարող բեկանվել և փոփոխվել, և գործը պետք է ուղարկվի առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Մեր կարծիքով, արդարացված է օրենսդրի այն տրամաբանությունը, որ որևէ նոր փաստ հաստատելու դեպքում վերաքննիչ դատարանը չի կարող բեկանել և փոփոխել առաջին ատյանի դատա-

¹ Տե՛ս **Հովհաննիսյան Վ.Վ.**, *Վերաքննիչ դատարանի առարկայական լիազորությունների հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում*, «Դատական իշխանություն», Եր., 2012, թիվ 10(159), էջ 41:

² Տե՛ս թիվ 3-148 (ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.02.2008թ. որոշումը:

րանի վճիռը: Գտնում ենք, որ ՔԴՕ-ի 221-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի ոչ իրավաչափ կիրառումը առավելագույնս կանխելու նպատակով անհրաժեշտ է այդ կետը լրացնել հետևյալ նախադասությամբ. «Սույն կետով սահմանված լիազորությունը չի կարող կիրառվել, եթե վերաքննիչ դատարանը կիրառել է սույն օրենսգրքի 219-րդ հոդվածի 3-րդ կամ 4-րդ մասով նախատեսված լիազորություններից որևէ մեկը»:

Ընդհանրացնելով ասվածը՝ առաջարկում ենք ՔԴՕ-ի 221-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Գործն ըստ էության լուծող դատական ակտի վերաքննության արդյունքում վերաքննիչ դատարանը բեկանում և փոփոխում է ստորադաս դատարանի ակտը, եթե ստորադաս դատարանի հաստատած փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ: Սույն կետով սահմանված լիազորությունը չի կարող կիրառվել, եթե վերաքննիչ դատարանը կիրառել է սույն օրենսգրքի 219-րդ հոդվածի 3-րդ կամ 4-րդ մասով նախատեսված լիազորություններից որևէ մեկը»:

Վերաքննիչ դատարանի քննարկվող լիազորության կապակցությամբ անհրաժեշտ է նշել նաև, որ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ձևավորված դատական պրակտիկան վկայում է այն մասին, որ դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերի առկայության դեպքում վերաքննիչ դատարանն իրավունք չունի կիրառել դատական ակտը բեկանելու և փոփոխելու լիազորությունը և պարտավոր է կիրառել բացառապես ՔԴՕ-ի 221-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված լիազորությունը (բեկանել դատական ակտը և գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության)¹: Նման մոտեցման հիմքում ընկած է այն պարզ տրամաբանությունը, որ դատական ակտի անվերապահ բեկանման հիմքե-

¹ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից կայացված որոշումները՝ թիվ ԵԱՆՂ/0461/02/10, ԵԱՔՂ/2279/02/11, ԵԿԴ/2760/02/12, ԵՇԴ/0700/02/12, ԵԿԴ/1118/02/12 և ԵՔԴ/0443/02/08 քաղաքացիական գործերով:

րը արդարադատության այդպիսի «արատներ» են, որոնց առկայության պայմաններում հարցին վերջնական լուծում տալը չի բխում արդարադատության արդյունավետության շահերից:

Վերաքննիչ դատարանի կողմից առաջին աստիճանի դատարանի վճիռը բեկանելու և փոփոխելու դեպքում կայացվող որոշման բնույթը և դրա բողոքարկման հետ կապված հիմնախնդիրները. Անդրադառնալով վերը նշված լիազորության կիրառման արդյունքում կայացվող որոշման իրավական բնույթին՝ նախ և առաջ անհրաժեշտ է քննարկել այն հարցը, թե արդյո՞ք այդ որոշումը հանդիսանում է գործն ըստ էության լուծող դատական ակտ:

ՔԴՕ-ն առանձնացնում է վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող և միջանկյալ դատական ակտերը: Նման տարանջատման հիմքում ընկած է այն տրամաբանությունը, որ առաջին աստիճանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերաքննության արդյունքում կայացված վերաքննիչ դատարանի որոշումները գործն ըստ էության լուծող դատական ակտեր են, իսկ միջանկյալ դատական ակտերի վերաքննության արդյունքում կայացված որոշումները՝ միջանկյալ դատական ակտեր¹:

Այս հարցի կապակցությամբ Ս. Գ. Մեդրյանը նշում է, որ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի կողմից կայացվող դատական ակտը, որով ըստ էության լուծվում է գործը, դատարանի վճիռն է²: Գործն ըստ էության լուծող դատական ակտերից պետք է տարբերել վերադաս դատական աստիճանների այն դատական ակտերը, որոնք դադարեցնում են գործի հետագա ընթացքը, եզրափակում են տվյալ գործով դատական գործունեությունը: Այդպիսի

¹ Տե՛ս **Հովհաննիսյան Վ.Վ.**, Վերաքննիչ դատարանի որոշումների դասակարգման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջեր 430-431:

² Տե՛ս **Մեդրյան Ս.Գ.**, Առաջին աստիճանի դատարանի քաղաքացիական գործերով դատական ակտերը, Եր., ԵՊՀ հրատ., 2010, էջ 10:

ակտերի թվին են պատկանում նաև վերաքննիչ դատարանի այն որոշումները, որոնցով ընդհանուր իրավասության դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտը մասամբ բեկանվում և փոփոխվում է՝ առանց գործը նոր քննության ուղարկելու:

Մ. Ա. Ռոժկովան գործն ըստ էության լուծող դատական ակտ է համարում այն փաստաթուղթը, որն իմպերատիվ կերպով պատասխանողին պարտավորեցնում է կատարել իր վրա դրված պարտականությունները, հաստատում է կողմերի միջև իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը, ներխուժում է իրավահարաբերության մեջ և վերափոխում է այն¹:

Մ. Գ. Մեդրյանն առանձնացնում է գործն ըստ էության լուծող դատական ակտի հետևյալ հատկանիշները՝

- դրանով հաստատվում են վիճելի իրավունքի, վիճելի պարտականության, վիճելի իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը, ինչի հետևանքով այդ իրավահարաբերությունը վիճելից դառնում է անվիճելի, իսկ դատական ակտով հաստատված սուբյեկտիվ պարտականությունները՝ ենթակա հարկադիր կատարման²,

- դրանով դադարում է իրավունքի մասին կողմերի միջև առկա վեճը, վերացվում է կողմերից մեկի թույլ տված խախտումը, ամրապնդվում է իրավակարգը և օրինականությունը քաղաքացիական իրավահարաբերություններում, քաղաքացիական շրջանառության մեջ³,

- այն կայացվում է գործի ըստ էության քննության (ապացուցման առարկայի որոշում, ապացույցների հետազոտում և այլն) արդյունքում⁴:

¹ Տե՛ս **Րոժկովա Մ.Ա.** *Понятие судебного решения в контексте статьи 8 ГК РФ // Хозяйство и право. 2008. № 6, էջ 60:*

² Տե՛ս **Մեդրյան Մ.Գ.**, *Առաջին ատյանի դատարանի քաղաքացիական գործերով դատական ակտերը*, Եր., ԵՊՀ հրատ., 2010, էջ 10:

³ Տե՛ս **Մեդրյան Մ.Գ.**, *նշված աշխատ.*, էջ 14:

⁴ Տե՛ս **Մեդրյան Մ.Գ.**, *նշված աշխատ.*, էջ 26:

Մ. Կ. Զագայնովան նշում է, որ դատարանի վճիռը, որպես վեճն ըստ էության լուծելու նպատակով սկսված դատական գործընթացն ավարտող դատական ակտ, կարող է կայացվել միայն առաջին ատյանի դատարանի կողմից¹:

Լ. Ա. Տերեխովան դատական պաշտպանության մեխանիզմի պարտադիր տարր է համարում դատարանի դիմելու հնարավորությունը և առաջին ատյանի դատարանի կողմից գործի քննությունը՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի կայացմամբ²: Հեղինակը մատնանշում է հետևյալ դատական ակտերը, որոնցով քաղաքացիական գործը լուծվում է ըստ էության՝ 1) առաջին ատյանի դատարանի վճիռը, 2) դատական կարգադրությունը, 3) կողմերի հաշտության համաձայնությունը հաստատելու և գործի վարույթը կարճելու մասին որոշումը, 4) հայցից հրաժարվելու հետևանքով գործի վարույթը կարճելու մասին որոշումը³:

Ըստ Գ. Ա. Ժիլինի՝ դատարանի վճիռը հանդիսանում է կարևորագույն իրավակիրառ ակտ, որը կայացվում է պետության անունից և հանդիսանում է նյութական և դատավարական իրավունքի նորմերի կիրառման վերջնական ակտ, որով ըստ էության լուծվում է գործը⁴:

Գ. Մ. Մինասյանը նշում է, որ դատարանի վճիռն այն արդարադատության ակտն է, որը նյութաիրավական վեճը լուծում է ըստ էության: Այն առավել վառ է արտահայտում պետության իշխանա-

¹ Տե՛ս **Չագայնովա Ս.Կ.** *Судебные акты в гражданском и арбитражном процессе: теоретические и прикладные проблемы. Автореф. дисс... д.ю.н., - Екатеринбург, 2008, <http://lawtheses.com/sudebnye-akty-v-grazhdanskom-i-arbitrazhnom-protsesse-teoreticheskie-i-prikladnye-problemy>:*

² Տե՛ս **Տերեխովա Լ.Ա.** *Система пересмотра судебных актов в механизме судебной защиты. - М.: Волтерс Клувер, 2007, էջ 3:*

³ Տե՛ս **Տերեխովա Լ.Ա.** *Постановление суда первой инстанции, разрешающее дело по существу // Вестник Омского университета. - Омск: Изд-во ОмГУ, 2005, № 2 (3):*

⁴ Տե՛ս **Ջիլին Գ.Ա.** *Суд первой инстанции в гражданском процессе. - М., 2001, էջեր 104 - 105:*

կան կամքը և յուրահատուկ, գլխավոր տեղ է զբաղեցնում այլ դատական ակտերի շարքում: Այլ դատական ակտերի միջոցով դատարանի վճռի փոփոխումը (տրանսֆորմացիան) նվազեցնում է դատարանի վճռի դերը և վճիռը դարձնում է բոլորովին այլ դեր, նշանակություն և բովանդակություն ունեցող դատական ակտի բաղկացուցիչ մաս, հավելում¹:

Վ. Վ. Հովհաննիսյանը նշում է, որ վիճելի նյութական իրավահարաբերությունը կարգավորող վերաքննիչ դատարանի որոշումները պետք է դիտարկել որպես գործն ըստ էության լուծող դատական ակտեր²: ՔՂՕ-ի 221-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված լիազորությունը կիրառելու դեպքում վերաքննիչ դատարանը առաջին աստիճանի դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքների հիման վրա կիրառում է նյութական և դատավարական իրավունքի նորմերը, լուծում է գործը և կարգավորում քննության առարկա նյութական իրավահարաբերությունը³:

Վերը շարադրված կարծիքները ամփոփելով՝ կարծում ենք, որ դատական ակտի՝ գործն ըստ էության լուծող կամ չլուծող լինելու հարցը պարզելու համար անհրաժեշտ է պատասխանել հետևյալ երկու հարցադրումներին՝ 1) ինչպիսի՞ գործընթացի արդյունքում է տվյալ դատական ակտը կայացվում, 2) ինչպիսի՞ հարցեր է տվյալ դատական ակտը լուծում:

Վերը նշված հարցերին պատասխանելով՝ կարող ենք առանձնացնել գործն ըստ էության լուծող դատական ակտերի երկու կարևորագույն հատկանիշները.

1. այն կայացվում է գործի ըստ էության քննության (ապացույց-

¹ *Տե՛ս Մивасян Г.М. Решения и определения судов первой инстанции общей юрисдикции. Автореф. дисс... к.ю.н., - М., 2010, <http://www.disscat.com/content/resheniya-i-opredeleniya-sudov-pervoi-instantsii-obshchei-yurisdiktсии-0>:*

² *Տե՛ս Վ. Վ. Հովհաննիսյան Վ. Վ., Վերաքննիչ դատարանի որոշումների դասակարգման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջ 451:*

³ *Տե՛ս Վ. Վ. Հովհաննիսյան Վ. Վ., նշված աշխատ., էջ 452:*

ների հետազոտում և գնահատում, դրա հիման վրա փաստական հանգամանքների հաստատում, հաստատված փաստերի նկատմամբ կիրառելի իրավանորմերի ընտրություն և այլն) արդյունքում,

2. դրանով կոնկրետացվում են կողմերի իրավունքները և պարտականությունները, լուծվում է (դադարում է) իրավունքի մասին կողմերի միջև առկա վեճը:

Դատարանի վճիռը բեկանող և փոփոխող վերաքննիչ դատարանի որոշումը չի համապատասխանում վերը նշված հատկանիշներից առաջինին (վերաքննիչ դատարանում գործի ըստ էության քննություն տեղի չի ունենում), սակայն այն համապատասխանում է երկրորդ հատկանիշին, քանի որ՝

- այդ որոշմամբ կոնկրետացվում և որոշակիացվում են կողմերի իրավունքները և պարտականությունները,

- այն որոշումն ուղղակիորեն ներգործում է նյութական հարաբերությունների վրա և սահմանում է նյութական իրավունքի սուբյեկտների փոխհարաբերությունները,

- այդ որոշումը, բացի դատարանի վճռի օրինականությունը և հիմնավորվածությունը ստուգելուց, լուծում է կողմերի միջև առկա իրավական վեճը, ինչի հետևանքով այդ վեճը դադարում է,

- այդ որոշմամբ պատասխան է տրվում այն հարցերին, թե արդյո՞ք պատասխանողը խախտել է հայցվորի իրավունքները, և եթե այո, ապա արդյո՞ք հայցվորի խախտված իրավունքները կարող են վերականգնվել իր կողմից մատնանշված եղանակով:

Վերաքննիչ դատարանի կողմից վճռի բեկանման և փոփոխման դեպքում հաստատվում է գործին մասնակցող անձանց իրավունքների և պարտականությունների մեկ ամբողջություն, սակայն ոչ այն ծավալով և շրջանակներում, որը հաստատվել էր առաջին աստիճանի դատարանի վճռով: Կարելի է ասել, որ այս դեպքում գործ ունենք արդեն վերաքննիչ դատարանի որոշմամբ սահմանված նյութական իրավահարաբերությունների, գործին մասնակցող անձանց նյութա-

կան իրավունքների և պարտականությունների հետ¹:

Մինևույն ժամանակ, պետք է հաշվի առնել, որ վերադաս դատական ատյանները գործի ըստ էության քննություն չեն իրականացնում²: Բողոքների քննության ընթացքում ո՛չ վերաքննիչ և ո՛չ էլ վճռաբեկ դատարանը ապացուցման առարկա չեն որոշում, ապացույցներ չեն հետազոտում, և հետևաբար նրանց կայացրած ակտերը գործն ըստ էության լուծող դատական ակտեր համարելը ճիշտ չի թվում³:

Ս. Գ. Մեղրյանը նշում է, որ վերաքննիչ դատարանի այդ որոշումները գործն ըստ էության լուծող դատական ակտեր չեն, դրանք այդպիսի ակտի վերանայման արդյունքում կայացվող որոշումներ են, որոնցով լուծվում է ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կայացրած վճռի հետագա ճակատագիրը⁴: Վերաքննիչ և վճռաբեկ դատարանների որոշումների գործն ըստ էության լուծող բնույթի բացակայության մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ անկախ վերադաս դատական ատյանների որոշումների բովանդակությունից, դատական ակտի հարկադիր կատարման համար կատարողական թերթը տալիս է վճիռը՝ գործն ըստ էության լուծող դատական ակտը կայացրած դատարանը⁵:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ նշենք, որ ընդհանուր իրավասության դատարանի վճիռը բեկանող և փոփոխող վերաքննիչ դատարանի որոշումը գործն ըստ էության լուծող դատական ակտ չէ, սակայն օժտված է նման ակտերին բնորոշ հատկանիշներով: Թե՛ վճիռը, թե՛ վճիռը բեկանող և փոփոխող վերաքննիչ դատարանի ո-

րոշումը լուծում են կողմերի միջև առկա իրավունքի մասին վեճը: Ի-գուր չէ, որ դատավարագիտության մեջ առաջարկ է արվել առաջին ատյանի դատարանի վճիռը բեկանող և գործին նոր լուծում տվող վերադաս դատական ատյանների բոլոր դատական ակտերը շարադրել այնպես, որ դրանք բավարարեն առաջին ատյանի դատարանի վճռին ներկայացվող պահանջներին¹: Նման ակտերը գրականության մեջ անվանվել են նաև գործին մասնակցող անձանց իրավունքներին անմիջականորեն ազդող կամ ներգործող դատական ակտեր²: Դրանք ոչ միայն եզրահանգում են պարունակում վերանայվող դատական ակտի օրինականության և հիմնավորվածության վերաբերյալ, այլև միաժամանակ հաստատում են նյութական իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը³:

Հարկ է նշել, որ ՔԴՕ-ն չի պարունակում արդյունավետ կառուցակարգեր՝ ընդհանուր իրավասության դատարանի վճիռը բեկանող և փոփոխող վերաքննիչ դատարանի որոշումների բողոքարկման վերաբերյալ:

ՔԴՕ-ի 234-րդ հոդվածով սահմանված են վերաքննիչ դատարանի որոշումների դեմ բերված վճռաբեկ բողոքը քննության ընդունելու հիմքերը: Այս հիմքերի բացակայության դեպքում վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքն ըստ էության քննության չի ընդունում և վերադարձնում է այն: ՔԴՕ-ն վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու հիմքերի տեսանկյունից տարբերակված մոտեցում չի սահմանում վերաքննիչ դատարանի այն որոշումների համար, որոնցով բեկանվել և փոփոխվել է դատարանի վճիռը:

¹ Տե՛ս **Минасян Г.М.** Решения и определения судов первой инстанции общей юрисдикции. Автореф. дисс... к.ю.н., - М., 2010, <http://www.disscat.com/content/resheniya-i-opredeleniya-sudov-pervoi-instantsii-obshchei-y-urisdiktzii-0>:

² Տե՛ս **Հովհաննիսյան Վ.Վ.**, Վերաքննիչ դատարանի որոշումների դասակարգման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջեր 445-446:

³ Տե՛ս **Հովհաննիսյան Վ.Վ.**, նշված աշխատ., էջ 457:

Բոլոր այն դեպքերում, երբ վերաքննիչ դատարանը կայացրել է առաջին աստիճանի դատարանի վճիռը բեկանող և փոփոխող (գործին նոր լուծում տվող) որոշում, այդ որոշման դեմ բերված վճռաբեկ բողոքը վերադարձվում է, եթե բացակայում են ՔԴՕ-ի 234-րդ հոդվածով սահմանված հիմքերը: Այսինքն, վերաքննիչ դատարանի կողմից կայացված և գործին նոր, առաջին աստիճանի դատարանից տարբեր լուծում տվող դատական ակտերի բողոքարկումը ՔԴՕ-ով երաշխավորված չէ: Գրականության մեջ այս խնդիրն արծարծվել է, և հայտնվել է տեսակետ, որ տվյալ ակտերի բողոքարկման սահմանների նեղացումը մինչև օրենքով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու համար նախատեսված շրջանակները, անընդունելի է¹:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Արդար դատաքննության իրավունքն ամրագրված է նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածում:

ՀՀ Սահմանադրության 63-րդ և Կոնվենցիայի 6-րդ հոդվածների բովանդակային մեկնաբանման տեսանկյունից բավականին հետաքրքրական է այն հարցը, թե արդյո՞ք արդար դատաքննության իրավունքն իր մեջ ներառում է քաղաքացիական գործով կայացված դատական ակտը (որով որոշվում են կողմերի իրավունքները և պարտականությունները) վերադաս դատական աստիճանի բողոքարկելու իրավունքը: Եվ ընդհանրապես, արդյո՞ք յուրաքանչյուր ոք ունի քաղաքացիական գործով իր դեմ կայացված դատական ակտը (որով որոշվում են իր քաղաքացիական իրավունքները և պարտականությունները) առնվազն մեկ աստիճան բողոքարկելու իրավունք:

Ո՛չ քաղաքացիաիրավական, ո՛չ էլ քրեաիրավական ոլորտում Կոնվենցիան պետություններին չի պարտադրում ստեղծել վերաքն-

¹ Տե՛ս *Հովհաննիսյան Վ. Վ.*, նշված աշխատ., էջ 446:

նիչ կամ վճռաբեկ դատարաններ: Այս հարցը թողնված է պետությունների բացառիկ իրավասությանը: Մակայն մինևույն ժամանակ Կոնվենցիան պարտավորեցնում է, որ նման դատական աստիճաններ ունեցող պետությունները հետևեն, որ դատավարության մասնակիցները այդ դատական աստիճաններում նույնպես օգտվեն Կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված բոլոր հիմնարար երաշխիքներից: Վերաքննիչ կամ վճռաբեկ դատարաններում այս դրույթի իրականացման կոնկրետ մեխանիզմը կախվածության մեջ է տվյալ դատարանում իրականացվող դատավարության առանձնահատկություններից¹:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Կոնվենցիայի վերաբերյալ իր մեկնաբանություններում դատական ակտի բողոքարկման իրավունքը չի դիտել որպես արդար դատաքննության իրավունքի տարր: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը պետությունների համար պարտադիր չի համարում անգամ վերաքննիչ դատարանների ստեղծումը և վերաքննության ընթացակարգերի սահմանումը²:

Համեմատության համար պետք է նշել, որ քրեաիրավական ոլորտում երկրորդ դատական աստիճանի կողմից լսվելու իրավունքը երաշխավորված է Կոնվենցիայի 7-րդ արձանագրության 2-րդ հոդվածի 1-ին կետով³:

¹ Նման դիրքորոշում է արտահայտել Մարդու իրավունքների եվրոպական դատարանը՝ Միալկովսկան ընդդեմ Լեհաստանի (*Sialkowska v. Poland*) գործով 2007թ. մարտի 22-ին կայացված վճռով: Հետագայում այն իր արտացոլումն է գտել ՀՀ Սահմանադրական դատարանի 08.10.2008թ. թիվ ՄԴՌ-765 որոշման մեջ:

² Տե՛ս *Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 17.01.1970թ. Delcourt v. Belgium* գործով կայացված վճիռը և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 23.10.1996թ. *Levages Prestations Services v. France* գործով կայացված վճիռը:

³ Տե՛ս *Комментарий к Конвенции о защите прав человека и основных свобод и практике ее применения. Под общ. ред. В. А. Туманова, Л. М. Энтина. - М., 2002, էջ 88:*

Միևնույն ժամանակ, որոշ տիպի գործերով բարձրացվող հարցերի կարևորությունը (խոսքը հատկապես վերաբերում է ընտանեկան հարաբերություններին առնչվող գործերին) կարող է լինել այնպիսին, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գա այն եզրակացության, որ այդ տիպի գործերով պարտադիր են ոչ միայն դատական լուսմները, այլ նաև՝ վերաքննությունը: Սակայն գործնականում անհնար է, որ դատարանը նման պնդում կատարի քաղաքացիական իրավունքներին և պարտականություններին վերաբերող գործերի մեծամասնության վերաբերյալ¹:

ՀՀ Սահմանադրական դատարանը դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքը բնութագրում է որպես մարդու և քաղաքացու անօտարելի իրավունք, նրա մյուս իրավունքներն ու ազատություններն ապահովող երաշխիք, և որպես օրենքով սահմանված ժամկետներում և կարգով վճռաբեկ դատարան մուտք գործելու և լիարժեք պաշտպանություն ստանալու հնարավորություն (27.05.2008թ. ՄԴՈ-754 և 08.10.2008թ. ՄԴՈ-765 որոշումներ)²:

ՀՀ Սահմանադրական դատարանն իր թիվ ՄԴՈ-1037 որոշման մեջ ամրագրել է, որ դատական ակտերի բողոքարկման ինստիտուտը այն հիմնական և էական իրավական երաշխիքն է, որի միջոցով ապահովվում է ստորադաս դատարանի կողմից արդար դատաքննության իրավունքի հիմնական բաղադրատարրերի պահպանումը³:

Վ. Վ. Հովհաննիսյանն այս կապակցությամբ նշում է, որ դատական վերանայումը հնարավորություն է ընձեռում երաշխավորել օրինական և հիմնավորված դատական ակտերի կայացումը, օրենքի

միատեսակ կիրառությունը, քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանությունը¹: Այն գիտակցությունը, որ կայացված ակտը բողոքարկման դեպքում վերանայվելու և բեկանվելու է վերադաս դատարանի կողմից, ստիպում է դատարաններին կայացնել առավել օրինական և հիմնավորված դատական ակտեր: Ուստի դատական ակտի բողոքարկման իրավունքը հանդիսանում է արդար դատաքննության իրավունքի ապահովման կարևորագույն երաշխիք: Վերադաս դատարան դիմելը կամ դատական ակտը բողոքարկելը դատական պաշտպանության իրավունքի իրականացման ձևեր են՝ արդար դատաքննության իրավունքի ապահովման միջոցներ, որոնք ուղղված են քաղաքացիական շրջանառության մասնակիցների օրինական և հիմնավորված պահանջների բավարարմանը, իրավունքների հարկադիր պաշտպանությանը²:

Դատական պաշտպանության իրավունքը ներառում է ոչ միայն խախտված իրավունքների պաշտպանության պահանջով դատարան դիմելու, այլև՝ դատական ակտերը բողոքարկելու հնարավորությունը: Դատական ակտերը բողոքարկելու իրավունքն ուղղակիորեն բխում է անձի դատական պաշտպանության իրավունքի բովանդակությունից, որն ապահովելու պարտականությունն ընկնում է պետության վրա³: Եթե խախտված քաղաքացիական իրավունքների պաշտպանությունն իրականացնում է առաջին ատյանի դատարանը, ապա խախտված արդար դատաքննության իրավունքի պաշտպանությունն իրականացվում է վերաքննիչ և վճռաբեկ դատարանների կողմից:

Դատական պաշտպանության և արդար դատաքննության իրա-

¹ *Sté u' Evropejskie standarty prava na spravedlivoe sudebnoe razbiratel'stvo i rossijskaja praktika. Pod obšč. red. A. B. Demeņevoj. - Ekaterinburg: izd-vo Ural. un-ta, 2003, էջ 26:*

² *Sté u' Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի խմբ., Եր., «Իրավունք» հրատ., 2010, էջեր 208-209:*

³ *Sté u' ՀՀ Սահմանադրական դատարանի 18.07.2012թ. թիվ ՄԴՈ-1037 որոշումը:*

¹ *Sté u' Հովհաննիսյան Վ. Վ., Վերաքննիչ բողոքարկման իրավունքը որպես քաղաքացիական դատավարությունում արդար դատաքննության իրավունքի ապահովման միջոց, «ՀՀ Սահմանադրական դատարանի տեղեկագիր», Եր., 2011, թիվ 3(60), էջ 16:*

² *Sté u' Հովհաննիսյան Վ. Վ., նշված աշխատ., էջ 24:*

³ *Sté u' Հովհաննիսյան Վ. Վ., նշված աշխատ., էջ 15:*

վունքների բովանդակությունը կազմող յուրաքանչյուր տարրի խախտում կամ խախտման հնարավորություն պարունակող ցանկացած դատական ակտ պետք է ենթակա լինի բողոքարկման վերադաս ատյանին, եթե դատաքննության արդյունքում կայացվող վերջնական դատական ակտը անմիջական ազդեցություն կարող է ունենալ կողմերի իրավունքների և պարտականությունների վրա: Ուստի բողոքարկման հնարավորություն պետք է նախատեսվի բոլոր այն դեպքերում, երբ քննվող գործով կայացվող վերջնական դատական ակտը անմիջականորեն կարող է ազդել կողմերի իրավունքների և պարտականությունների վրա¹:

Համանման կարծիքի է նաև Հ. Մ. Տեր-Վարդանյանը, ով նշում է, որ դատական ակտերի բողոքարկումը, վերադաս դատարանի կողմից ստորադաս դատարանների կայացված դատական ակտերի նկատմամբ արդյունավետ հսկողությունը պետք է դիտարկել որպես արդար դատաքննության իրավունքի տարր²:

Վ. Ն. Այվազյանը շեշտում է, որ արդար և հրապարակային դատաքննության իրավունքը և դրա բովանդակությունից բխող դատական ակտերը բողոքարկելու իրավունքը, ընդգրկված են մարդու իրավունքների առաջին սերնդի անձնական և քաղաքական իրավունքների և ազատությունների խմբի մեջ, անօտարելի են և անբաժան³:

Հիշատակման է արժանի նաև Լ. Ա. Տերեխովայի տեսակետն առ այն, որ խախտված իրավունքների և ազատությունների դատական պաշտպանությունը ենթադրում է դրա բաղադրությունը կազ-

¹ Տե՛ս **Հովհաննիսյան Վ.Վ.**, Վերաքննիչ դատարանի որոշումների դասակարգման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջեր 441-442:

² Տե՛ս **Տեր-Վարդանյան Հ.Մ.**, Արդար դատաքննության իրավունքի սահմանադրաիրավական հիմքերը Հայաստանի Հանրապետությունում, ի.գ.թ. սատիճանի հայցման ատենախոսություն, Եր., 2009, էջ 12:

³ Տե՛ս **Այվազյան Վ.Ն.**, Մարդու իրավունքներ և ազատություններ, Եր., «Տիգրան Մեծ», 2007, էջեր 21-35:

մող տարրերի համալիրություն, այն է՝ դատարան դիմելու, վերջնական դատական ակտի կայացմամբ գործի քննության, դատական սխալի վերացման և դատական ակտի կատարման իրավունք¹:

Ս. Գ. Մեղրյանն այս կապակցությամբ նշում է, որ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի իրացման կարևորագույն երաշխիքներից մեկն առնվազն երկու դատական ատյաններում իրավունքի պաշտպանություն հայցելու հնարավորության օրենսդրական ամրագրումն է²:

Վ. Վ. Հովհաննիսյանի կարծիքով՝ մարդու իրավունքներին անմիջականորեն ազդող յուրաքանչյուր դատական ակտի կայացման դեպքում պետք է հնարավոր լինի բողոքարկել արդար դատաքննության իրավունքի խախտումները, եթե դրանք կարող են խախտել անձի դատական պաշտպանության իրավունք³:

Լիովին համաձայն լինելով վերը նշված հեղինակների հետ՝ գտնում ենք, որ յուրաքանչյուր ոք պետք է ունենա իր համար սուբյեկտիվ քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ ամրագրող դատական ակտն առնվազն մեկ անգամ բողոքարկելու իրավունք:

Ինչպես արդեն նշել ենք, դատարանի վճիռը բեկանող և փոփոխող վերաքննիչ դատարանի որոշումը գործին մասնակցող անձանց համար ամրագրում է սուբյեկտիվ քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ, օժտված է գործն ըստ էության լուծող դատական ակտերին հատուկ հատկանիշներով: Հետևաբար գտնում ենք, որ այդ ակտերի բողոքարկման իրական հնարավորությունը ևս

¹ Տե՛ս **Терехова Л.А.** Право на исправление судебной ошибки как компонент судебной защиты. Автореф. дисс... д.ю.н., - Екатеринбург, 2008, էջ 1:

² Տե՛ս **Մեղրյան Ս.Գ.**, Առաջին ատյանի դատարանի քաղաքացիական գործերով դատական ակտերը, Եր., ԵՊՀ հրատ., 2010, էջ 149:

³ Տե՛ս **Հովհաննիսյան Վ.Վ.**, Վերաքննիչ դատարանի որոշումների դասակարգման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջ 446:

պետք է ապահովվի օրենսդրի կողմից:

Ասվածի հիման վրա գտնում ենք, որ վճռաբեկ դատարանը պետք է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունի բոլոր այն դեպքերում, երբ առաջին աստիճանի դատարանի վճռի եզրափակիչ մասը բեկանվել և փոփոխվել է վերաքննիչ դատարանի կողմից: Ասվածը հիմք ընդունելով՝ առաջարկում ենք *ՔՂՕ-ի 234-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությունն ունեցող 4-րդ կետով*. «4) բողոք-քարկվող դատական ակտը կայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված լիազորության կիրառման արդյունքում»:

§ 5. Դատական ակտն ամբողջությամբ կամ մասնակի բեկանելու և գործի վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու լիազորությունը

Ցանկացած քաղաքացիական գործի քննություն և լուծում հետևողականորեն անցնում է մի շարք փուլեր: Քաղաքացիական դատավարության յուրաքանչյուր փուլի ընթացքում դատարանը կատարում է դատավարության տվյալ փուլին բնորոշ դատավարական գործողություններ և լուծում է տվյալ փուլին բնորոշ խնդիրներ: Դատավարության սովորական ընթացքի դեպքում գործի քննությունն առաջին աստիճանի դատարանում ավարտվում է գործն ըստ էության լուծող դատական ակտի կայացմամբ, որով ըստ էության լուծվում է կողմերի միջև առկա նյութաիրավական վեճը:

Միևնույն ժամանակ, հաճախ առաջ են գալիս օբյեկտիվ հանգամանքներ, որոնք խոչընդոտում են վեճի ըստ էության լուծմանը: Այդպիսի դեպքերում դատարանն ավարտում է գործի քննությունը՝ առանց վեճն ըստ էության լուծելու: Առանց վեճն ըստ էության լուծելու գործի քննության ավարտի պատճառ է հանդիսանում հայցվորի մոտ հայց հարուցելու (դատարան դիմելու) իրավունքի բացակա-

յությունը կամ այդ իրավունքի ոչ պատշաճ իրականացումը¹:

ՔՂՕ-ն նախատեսում է առանց վեճն ըստ էության լուծելու գործի քննության ավարտի երկու եղանակ՝ գործի վարույթը կարճելը և հայցը կամ դիմումն առանց քննության թողնելը: Պետք է նշել, որ, Յու. Յու. Վասիլյանսկասի կարծիքով, թե՛ մեկը, թե՛ մյուսը, հանդիսանում են շեղումներ՝ քաղաքացիական գործի վարույթի նորմալ, բնականոն զարգացման ընթացքից²:

Գործի վարույթի կարճումը գործի քննությունն ավարտելու ձև է, որը պայմանավորված է հայցվորի (դիմողի) մոտ հայց հարուցելու (դատարան դիմելու) իրավունքի բացակայությամբ, կամ, քաղաքացիական գործը հարուցվելուց հետո՝ վեճի վերացմամբ³: Գործի վարույթը կարճվում է այն դեպքերում, երբ հայցվորի (դիմողի) մոտ բացակայում է դատական պաշտպանության դիմելու (այսինքն՝ հայց հարուցելու) իրավունքը⁴, կամ երբ հայցը հարուցելուց հետո վեճը վերանում է⁵: Այն դեպքում, երբ գործի վարույթը կարճելու հիմքերից որևէ մեկն առկա է հայցի հարուցման պահին, դա վկայում է հայցվորի մոտ հայց հարուցելու իրավունքի նախադրյալների բացակայության մասին:

¹ *Տե՛ս Մանաբաևա Մ.Ա. Разграничение окончаний процесса без вынесения решения. Правовые основания и последствия прекращения производства по делу, http://www.rusnauka.com/14_ENXXI_2009/Pravo/45835.doc.htm:*

² *Տե՛ս Վասիլյուսկաս Յ.Յ. Приостановление производства по гражданскому делу в советском гражданском процессе. Дисс. ... к.ю.н. Москва, 1983, էջեր 7-8:*

³ *Տե՛ս Պետրոսյան Ռ.Գ., Հայաստանի քաղաքացիական դատավարություն, 3-րդ հրատ., Եր., 2007, Երևանի համալսարանի հրատ., էջ 447; Անոսինա Ա.Ա. Приостановление производства по гражданским делам в судах общей юрисдикции. Дисс. ... к.ю.н. Саратов. 2006, էջ 38:*

⁴ *Տե՛ս Գրիցին Ի.Ս., Գրիցինա Ի.Ի. Гражданский процесс: вопросы и ответы / Под ред. М.К. Треушникова. - М.: Юриспруденция, 2000, <http://bibliotekar.ru/grazhdanskiy-process-2/158.htm>:*

⁵ *Տե՛ս Պետրոսյան Ռ.Գ., Հայաստանի քաղաքացիական դատավարություն, 3-րդ հրատ., Եր., 2007, Երևանի համալսարանի հրատ., էջ 447:*

Հետևաբար, գործի վարույթի կարճման հիմքերն այնպիսի հանգամանքներ են, որոնք **բացառում են** քաղաքացիական գործի հարուցումը, հետագա ընթացքը (շարունակությունը) և գործի ըստ էության լուծումը:

Գործի վարույթը կարճելու հիմքերը սպառիչ նախատեսված են ՔԴՕ-ով: ՔԴՕ-ի 109-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը կարճում է գործի վարույթը, եթե՝

- 1) վեճը ենթակա չէ դատարանում քննության,
- 2) նույն անձանց միջև, նույն առարկայի մասին միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ (բացառությամբ այն դեպքի, երբ հայցվորը դատաքննության նախապատրաստական փուլում հրաժարվել է հայցից, և գործի վարույթը դրա հետևանքով կարճվել է),
- 3) նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է արբիտրաժային տրիբունալի վճիռ կամ Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշում (բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանի կողմից մերժվել է արբիտրաժային տրիբունալի վճռի կամ Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալը),
- 4) գործին մասնակցող քաղաքացու մահից հետո վիճելի իրավահարաբերությունը բացառում է իրավահաջորդությունը,
- 5) գործին մասնակցող իրավաբանական անձը լուծարվել է,
- 6) հայցվորը հրաժարվել է հայցից,
- 7) դատարանը հաստատել է կնքված հաշտության համաձայնությունը:

Խոսելով գործի վարույթը կարճելու հիմքերի դասակարգման մասին՝ Ռ. Գ. Պետրոսյանը դրանք բաժանում է երեք խմբի, ընդ որում՝

- առաջին խմբի մեջ մտնում են ՔԴՕ-ի 109-րդ հոդվածի 1-ից 3-րդ կետերով սահմանված հիմքերը, որոնք վկայում են հայցվորի

մոտ դատարան ղիմելու իրավունքի բացակայության մասին,

- երկրորդ խմբին են պատկանում դատարանից և գործին մասնակցող անձանցից չկախված պատճառներով վարույթը շարունակելուն արգելք հանդիսացող իրադարձությունները (ՔԴՕ-ի 109-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետեր),

- երրորդ խմբի մեջ են մտնում կողմերի կատարած տնօրինչական գործողությունները, որոնք հաստատվել են դատարանի կողմից (ՔԴՕ-ի 109-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ կետեր)¹: Գործի վարույթը կարճելու հիմքերի գրեթե նույնատեսակ դասակարգում է առաջարկվում նաև Ջ.Խ. Բայմուղինայի կողմից²:

Ինչ վերաբերում է հայցը կամ դիմումն առանց քննության թողնելուն, պետք է նշել, որ դա տեղի է ունենում այն դեպքերում, երբ հայցվորը (դիմողն) ընդհանրապես դատական պաշտպանության իրավունք ունի, սակայն չի պահպանել դրա իրականացման համար օրենքով սահմանված պայմանները՝ հայց հարուցելու կարգը³: Հայցը կամ դիմումն առանց քննության թողնելը գործի քննությունն ավարտելու ձև է, որը պայմանավորված է հայցվորի կամ դիմողի կողմից վարույթի հարուցման և կանոնավոր զարգացման օրենքով սահմանված պայմանները չպահպանելու հետ, և որը հայցվորին կամ դիմողին չի խոչընդոտում, պահպանելով այդ պայմանները, նույնական հայցով կրկին դիմել դատարան⁴: Այս կապակցությամբ Մ.Ա. Ռոժկովան նշում է, որ հայցն առանց քննության թողնելը գործի քննությունն ավարտելու եղանակ է, որը պայմանավորված է հայցը հարուցելիս հայցվորի կողմից թույլ տրված դատավարական խախտումներով, որոնց հետևանքով վեճի ըստ էության լուծումը դարձել

¹ *Տե՛ս՝ Պետրոսյան Ռ. Գ., Հայաստանի քաղաքացիական դատավարություն, 3-րդ հրատ., Եր., 2007, Երևանի համալսարանի հրատ., էջ 448:*

² *Տե՛ս՝ Манабаева М.А. Разграничение окончаний процесса без вынесения решения. Правовые основания и последствия прекращения производства по делу, http://www.rusnauka.com/14_ENXXI_2009/Pravo/45835.doc.htm:*

³ *Տե՛ս՝ Պետրոսյան Ռ. Գ., նշված աշխատ., էջ 447:*

⁴ *Տե՛ս՝ Պետրոսյան Ռ. Գ., նշված աշխատ., էջ 449:*

է անհնարին կամ ոչ նպատակահարմար¹:

Հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու հիմքերը սպառնիչ նախատեսված են ՔԴՕ-ով: ՔԴՕ-ի 103-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը հայցը կամ դիմումը թողնում է առանց քննության, եթե՝

1) այլ դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի վարույթում առկա է նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ գործ,

2) կողմերից մեկը հղում է կատարում տվյալ վեճն արբիտրաժային դատարանի քննությանը հանձնելու՝ կողմերի միջև առկա համաձայնությանը, և արբիտրաժային դատարան դիմելու հնարավորությունը չի վերացել,

3) իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման կամ ըստ ներկայացնողի և օրդերային կորցրած արժեթղթով հավաստված իրավունքները վերականգնելու մասին դիմումը քննելիս վեճ է ծագել իրավունքի մասին:

Գործի վարույթը կարճելու և հայցը (դիմումը) առանց քննության թողնելու հիմքերը միատեսակ և ընդհանուր են բոլոր տեսակի քաղաքացիական գործերի համար: Այդ հիմքերը սպառնիչ սահմանված են օրենքով և չեն կարող տարածական մեկնաբանման ենթարկվել²:

Անդրադառնալով վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտը բեկանելու և գործի վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու լիազորությանը՝ նշենք, որ այն ծառայում է քաղաքացիական դատավարության վերջնական նպատակներին այն դեպքերում, երբ գործի քննության ընթացքում ի հայտ են եկել տվյալ լիազորության կիրառման համար հիմք հանդիսացող հանգամանք-

¹ *Տե՛ս Րոժկովա Մ.Ա. Средства и способы правовой защиты сторон коммерческого спора. - М.: Волтерс Клувер, 2006, էջ 93:*

² *Տե՛ս Մանաբաևա Մ.Ա. Разграничение окончаний процесса без вынесения решения. Правовые основания и последствия прекращения производства по делу, http://www.rusnauka.com/14_ENXXI_2009/Pravo/45835.doc.htm:*

ները¹:

ՔԴՕ-ի 221-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի վերաքննության արդյունքում վերաքննիչ դատարանը ... ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը և կարճում է գործի վարույթն ամբողջովին կամ դրա մի մասը կամ առանց քննության է թողնում հայցն ամբողջովին կամ դրա մի մասը:

Քննարկվող լիազորության կապակցությամբ Վ.Վ. Հովհաննիսյանն իրավացիորեն նշում է, որ ՔԴՕ-ի 103-րդ հոդվածը, հայցն առանց քննության թողնելու հիմքերից բացի, նախատեսում է նաև հատուկ վարույթի կարգով քննվող գործերով **դիմումն** առանց քննության թողնելու հիմքեր: Դատարանը դիմումը թողնում է առանց քննության, եթե իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման կամ ըստ ներկայացնողի և օրդերային կորցրած արժեթղթով հավաստված իրավունքները վերականգնելու մասին դիմումը քննելիս վեճ է ծագել իրավունքի մասին:

Մինչդեռ ՔԴՕ-ի 221-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսվել է վերաքննիչ դատարանի կողմից միայն հայցն ամբողջությամբ կամ մասնակիորեն առանց քննության թողնելու հնարավորությունը², որպիսի բացթողումը միանշանակ ենթակա է շտկման:

Պետք է նշել, որ վերաքննիչ դատարանը գործի վարույթը կարճում է կամ հայցն առանց քննության է թողնում՝ ՔԴՕ-ով նախատեսված համապատասխան հիմքերի առկայության դեպքում: Հետևաբար, քննարկվող լիազորությունը վերաքննիչ դատարանի կողմից ենթակա է կիրառման հետևյալ դեպքերում.

¹ *Տե՛ս Թերեխովա Ջ.Ա. Система пересмотра судебных актов в механизме судебной защиты. - М.: Волтерс Клувер. 2007, էջ 224:*

² *Տե՛ս Հովհաննիսյան Վ.Վ., Վերաքննիչ դատարանի առարկայական լիազորությունների հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, «Դատական իշխանություն», Եր., 2012, թիվ 10(159), էջ 42:*

1) Գործի վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու հիմքերն առկա են եղել առաջին ատյանի դատարանում և հայտնի են եղել դատարանին, սակայն դատարանը, խախտելով ՔԴՕ-ի պահանջները, առանց քննության չի թողել հայցը կամ չի կարճել գործի վարույթը: Դատական ակտի բեկանման համար այս դեպքում հիմք է հանդիսանում դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը, որը արտահայտվում է այն բանում, որ առաջին ատյանի դատարանը գործի քննության ընթացքում չի կարողացել պարզել այն փաստերը, որոնք հանգեցնում են գործի վարույթի կարճման կամ հայցն առանց քննության թողնելուն¹:

2) Գործի վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու հիմքերն առկա են եղել առաջին ատյանի դատարանում, սակայն դատարանին հայտնի չեն եղել, (գործի քննությունն ավարտվելուց հետո ի հայտ գալու կամ գործին մասնակցող անձանց դիտավորության կամ անփութության պատճառով) և գործին մասնակցող անձանց կողմից ներկայացվել են վերաքննիչ դատարանին (ի հայտ են եկել դատական ակտի՝ վերաքննության կարգով բողոքարկման փուլում):

Նման իրավիճակներում կարելի է պնդել, որ գործ ունենք իրենց էությամբ նոր երևան եկած հանգամանքներին խիստ նման հանգամանքների հետ: Այսպես, ՔԴՕ-ի 204.32-րդ հոդվածի 1-ի կետի համաձայն՝ նոր երևան եկած հանգամանքները հիմք են դատական ակտի վերանայման համար, եթե բողոք ներկայացրած անձն ապացուցում է, որ այդ հանգամանքները հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել գործին մասնակցող անձանց, կամ այդ հանգամանքները հայտնի են եղել գործին մասնակցող անձանց, բայց նրանցից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարան, և այդ հանգա-

¹ *Տե՛ս Լ.Ա. Թերեխովա* «Система пересмотра судебных актов в механизме судебной защиты». - М.: Волтерс Клувер. 2007, էջ 224; **Հովհաննիսյան Վ.Վ.**, *նշված աշխատ.*, էջ 42:

մանքները գործի լուծման համար ունեն էական նշանակություն:

Մի կողմից վերաքննության փուլում ի հայտ եկած գործի վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու հիմքերի, մյուս կողմից նոր երևան եկած հանգամանքների նմանությունը կայանում է հետևյալում.

- Երկու դեպքում էլ խոսքը գնում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքների մասին: Այս կապակցությամբ պետք է նշել, որ Մ. Ս. Շաքարյանը հանգամանքը համարում է գործի համար էական նշանակություն ունեցող, եթե այն հայտնի լինելու դեպքում գործը քննած դատարանը պարտավոր կլինե՞ր կայացնելու ամբողջությամբ կամ մասամբ այլ դատական ակտ¹: Մ. Ս. Չավրիևը ևս հանգամանքի էական լինելը պայմանավորում է նրանով, թե արդյոք այն կարող է դրվել նախկինում կայացված դատական ակտի բեկանման և սկզբունքորեն նոր դատական ակտի կայացման մասին դատարանի եզրահանգման հիմքում²: Այլ կերպ ասած՝ հանգամանքները պետք է համարվեն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող, եթե դրանց հայտնի լինելու դեպքում գործը կստանար լրիվ կամ մասնակի այլ լուծում³:

Վերը նշվածի լույսի ներքո կարելի է պնդել, որ գործի վարույթը կարճելու և հայցն առանց քննության թողնելու հիմքերը հանդիսանում են **գործի լուծման տեսանկյունից կանխորոշիչ նշանակություն ունեցող դատավարական փաստեր:**

- Երկու դեպքում էլ խոսքը գնում է այնպիսի հանգամանքների

¹ *Տե՛ս Գրաճանկ* «Гражданское процессуальное право России: Учебник для вузов /Под ред. М.С. Шакарян, М., 1998, էջ 384:

² *Տե՛ս Շավրիև* «С. С. Пересмотр по вновь открывшимся обстоятельствам решений, определений, постановлений президиума суда надзорной инстанции, вступивших в законную силу, в гражданском процессе. Дисс. ... к.ю.н. М., 2008, էջ 44

³ *Տե՛ս Տ. Մարկոսյան*, «Մարտի տեսքով» նոր երևան եկած հանգամանքները քաղաքացիական դատավարությունում, «Բաներ Երևանի համալսարանի», «Իրավագիտություն», 142.3, 2014, էջեր 26-27:

մասին, որոնք առկա են եղել առաջին աստիճանի դատարանում գործի քննության ընթացքում, սակայն դատարանին (տվյալ դեպքում՝ վերաքննիչ դատարանին) ներկայացվել են գործն ըստ էության քննվելուց և լուծվելուց հետո:

Մյուս կողմից, առկա են որոշակի տարբերություններ՝ մի կողմից վերաքննության փուլում ի հայտ եկած գործի վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու հիմքերի, մյուս կողմից նոր երևան եկած հանգամանքների միջև: Նոր երևան եկած հանգամանքներին վերագրվող էական հատկանիշը գործի քննության ժամանակ դրանց անհայտ լինելն է բողոք բերած անձին¹: Եթե գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները գործի քննության ժամանակ անհայտ են մնացել ոչ օբյեկտիվ բնույթ կրող պատճառներով, ապա այդ դեպքերում խոսք չի կարող լինել նոր երևան եկած հանգամանքների մասին²: Ս. Ս. Չավրինն այս կապակցությամբ նշում է, որ անձը զրկվում է նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտի վերանայման իրավունքից, եթե գործի սկզբնական քննության ժամանակ այդ հանգամանքները կարող էին հայտնի լինել նրան, եթե վերջինս ցուցաբերեր բավարար շրջահայացություն³:

Մինչդեռ ճիշտ չի լինի պնդելը, որ վերը նշված պահանջը պարտադիր պետք է կիրառվի նաև վերաքննության փուլում ի հայտ եկած գործի վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու հիմքերի նկատմամբ:

Գործի քննության ժամանակ գործի լուծման համար էական

¹ Տե՛ս **S. Մարկոսյան**, «Մարուր տեսքով» նոր երևան եկած հանգամանքները քաղաքացիական դատավարությունում, «Բանբեր Երևանի համալսարանի», «Իրավագիտություն», 142.3, 2014, էջ 30:

² Տե՛ս **S. Մարկոսյան**, նշված աշխատ., էջ 32:

³ Տե՛ս **Завриев С. С.** Пересмотр по вновь открывшимся обстоятельствам решений, определений, постановлений президиума суда надзорной инстанции, вступивших в законную силу, в гражданском процессе. Дисс. ... к.ю.н. М., 2008, էջ 47:

նշանակություն ունեցող այդ հանգամանքների անհայտ մնալը կարող է պայմանավորված լինել ինչպես այդ մասին գործին մասնակցող անձանց ընդհանրապես հայտնի չլինելու հանգամանքով, այնպես էլ գործին մասնակցող մեկ կամ մի քանի անձանց ոչ իրավաչափ գործողություններով, որոնք շահագրգռված են այդ հանգամանքները գործին մասնակցող մյուս անձանցից և դատարանից թաքցնելու հարցում¹: Օրինակ, հայցվորը կարող է **դիտավորությամբ** առաջին աստիճանի դատարանից թաքցրած լինել պատասխանող իրավաբանական անձի՝ լուծարված լինելու փաստը և այդ մասին հայտնել միայն վերաքննիչ դատարանում: Գտնում ենք, որ այդպիսի իրավիճակում վերաքննիչ դատարանի կողմից պետք է կիրառվի դատական ակտը բեկանելու և գործի վարույթը կարճելու լիազորությունը (չնայած այն հանգամանքին, որ դատական ակտի բեկանման համար հիմք ծառայող հանգամանքը դիտավորությամբ թաքցվել է առաջին աստիճանի դատարանից):

Այսինքն, ի տարբերություն նոր երևան եկած հանգամանքների, վերաքննության փուլում ի հայտ եկած գործի վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու հիմքերը կարող են դատական ակտի բեկանման հիմք հանդիսանալ անգամ այն դեպքում, եթե դրանք նախապես հայտնի են եղել գործին մասնակցող անձանց:

Մյուս կողմից, պետք է նշել, որ վերաքննության փուլում ի հայտ եկած գործի վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու հիմքերը լիովին կարող են համարվել նոր երևան եկած հանգամանքներ այն դեպքերում, եթե դրանք առաջին աստիճանի դատարանում գործի քննության ընթացքում հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել գործին մասնակցող անձանց, կամ հայտնի են եղել գործին մասնակցող անձանց, բայց նրանցից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարան:

¹ Տե՛ս **Резуниенко А. Н.** Пересмотр судебных актов, вступивших в законную силу, по вновь открывшимся обстоятельствам как стадия гражданского процесса. Дисс. ... к.ю.н. Волгоград, 2001, էջեր 46-47:

3) Գործի վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու հիմքերն առկա չեն եղել առաջին ատյանի դատարանում և ծագել են առաջին ատյանի դատարանում գործի քննության ավարտից հետո (դատական ակտի՝ վերաքննության կարգով բողոքարկման փուլում):

Նման իրավիճակներում կարելի է պնդել, որ գործ ունենք իրենց էությանը նոր հանգամանքներին խիստ նման հանգամանքների հետ: Նոր հանգամանքները, ի տարբերություն նոր երևան եկածների, կասկածի տակ չեն դնում օրինական ուժի մեջ մտած դատական ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը, քանի որ գործի քննության ժամանակ գոյություն չունենալու փաստի ուժով դրանք չէին կարող դառնալ դատական քննության առարկա¹: Իր որոշումներից մեկում Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ամրագրել է, որ նոր են համարվում գործի համար նշանակություն ունեցող, սակայն միայն գործի քննությունից հետո ծագած հանգամանքները²: Մյս առումով, քննարկվող հանգամանքները համապատասխանում են նոր հանգամանքներին ներկայացվող ընդհանուր չափանիշներին. դրանք գործի լուծումը կանխորոշող, սակայն գործի քննությունից հետո ծագած հանգամանքներ են:

Մյուս կողմից, ՔԴՕ-ի 204.33-րդ հոդվածը սպառնիչ թվարկում է նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման հիմքերը: Նշված հոդվածի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ առաջին ատյանի դատարանում գործի քննության ավարտից հետո ծագած գործի վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու հիմքերը որևէ պարագայում չեն կարող դիտարկվել որպես նոր հանգամանքներ:

¹ Տե՛ս **S. Մարկոսյան**, «Մարդու տեսքով» նոր երևան եկած հանգամանքները քաղաքացիական դատավարությունում, «Բանբեր Երևանի համալսարանի», «Իրավագիտություն», 142.3, 2014, էջ 29:

² Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2007թ. հունվարի 18-ի վճիռը՝ Բուլգարիայի ընդդեմ Ռուսաստանի գործով:

Պետք է նշել, որ վերաքննիչ դատարանն իրավունք ունի առանց քննության թողնել հայցը կամ կարճել գործի վարույթը միայն առաջին ատյանի դատարանի դատական ակտը բեկանելու դեպքում՝ (նման եզրահանգումը բխում է ՔԴՕ-ի 221-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում առկա ձևակերպումից):

ՔԴՕ-ի 210-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերի և 220.2-րդ հոդվածի համադրված վերլուծությունից հետևում է, որ վերաքննության կարգով դատական ակտի բեկանման հիմք կարող են հանդիսանալ.

1) դատական սխալը, այն է՝ դատարանի կողմից նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը. պետք է նշել, որ իրավաբանական գրականության մեջ, որպես դատական սխալի առկայության հետևանքով դատական ակտի բեկանման հիմքեր, առանձնացվում են.

- գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների ոչ ճիշտ կամ թերի պարզումը,

- առաջին ատյանի դատարանի կողմից հաստատված համարված գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների ապացուցված չլինելը,

- առաջին ատյանի դատարանի՝ դատական ակտում շարադրված եզրահանգումների չհամապատասխանելը գործի հանգամանքներին,

- նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը²,

2) նոր երևան եկած կամ նոր հանգամանքը:

Մինչդեռ վերը շարադրվածից ակնհայտ է, որ վերաքննիչ դատարանի կողմից քննարկվող լիազորության կիրառումը մի շարք դեպքերում բացարձակապես կապ չունի «դատական սխալ», «նոր

¹ Տե՛ս **Терехова Л.А.** Система пересмотра судебных актов в механизме судебной защиты. - М.: Волтерс Клувер. 2007, էջ 224:

² Տե՛ս **Терехова Л.А.**, նշված աշխատ., էջ 232:

երևան եկած հանգամանք» և առավել ևս՝ «նոր հանգամանք» հասկացությունների հետ: ՔՂՕ-ի 221-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը չի սահմանում, թե վերաքննիչ դատարանի կողմից որ դեպքում պետք է կիրառվի քննարկվող լիազորությունը: Սակայն ավելի քան ակնհայտ է, որ քննարկվող լիազորության կիրառման հիմքեր են հանդիսանում ՔՂՕ-ի 103-րդ և 109-րդ հոդվածներով սահմանված՝ գործի վարույթը կարճելու և հայցն առանց քննության թողնելու հիմքերը:

Հետևաբար, թեև քննարկվող լիազորության կիրառումը միշտ զուգորդվում է դատական ակտի բեկանման հետ, սակայն կարելի է պնդել, որ մի շարք դեպքերում այս լիազորության կիրառման և դատական ակտի բեկանման համար հիմք են հանդիսանում ոչ թե ՔՂՕ-ով ամրագրված դատական ակտի բեկանման հիմքերը, այլ՝ ՔՂՕ-ի 103-րդ և 109-րդ հոդվածում թվարկված հիմքերի կամ դրանցից որևէ մեկի առկայությունը: Այլ կերպ ասած, ՔՂՕ-ի 103-րդ և 109-րդ հոդվածում թվարկված հիմքերը հանդիսանում են ոչ միայն գործի վարույթի կարճման կամ հայցն առանց քննության թողնելու, այլև՝ դատական ակտը բեկանելու առանձին և ինքնուրույն հիմքեր: Ի տարբերություն ՔՂՕ-ի 221-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված լիազորությունների՝ քննարկվող լիազորության կիրառման դեպքում դատական ակտի բեկանման հիմք է հանդիսանում ՔՂՕ-ի 103-րդ կամ 109-րդ հոդվածներով նախատեսված հիմքերից որևէ մեկի առկայությունը:

Հետևաբար գործի վարույթը կարճելու և/կամ հայցն առանց քննության թողնելու հիմքերի առկայությունը ՔՂՕ-ով անհրաժեշտ է ամրագրել որպես դատական ակտի բեկանման առանձին և ինքնուրույն հիմքեր, քանի որ դրանք հաճախ չեն տեղավորվում «դատական սխալ», «նոր երևան եկած հանգամանք» և «նոր հանգամանք» հասկացությունների մեջ:

Բացի այդ, գտնում ենք, որ ՔՂՕ-ի 219-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավակարգավորումը (այն է՝ վերաքննիչ դատարանը

դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում) չի կարող բացարձակ բնույթ կրել գործի վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու հիմքերի առկայության դեպքում: Իհարկե, վերաքննիչ բողոքի հիմքերից և հիմնավորումների շրջանակից դուրս գալու (բողոքարկված վճիռը վերաքննիչ բողոքում չնշված հիմքերով և հիմնավորումներով բեկանելու) դեպքում վերաքննիչ դատարանը հանդես է գալիս որպես մեկ կողմի դատավարական հակառակորդ և միաժամանակ՝ մյուս կողմի դատավարական աջակից: Նման գաղափարն ինքնին անընդունելի է, քանի որ հակասում է քաղաքացիական դատավարությունում մրցակցության և կողմերի իրավահավասարության սկզբունքներին (ՔՂՕ-ի 6-րդ հոդված):

Սակայն մյուս կողմից, գործի վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու հիմքերի առկայության դեպքում գործն ըստ էության լուծելն ինքնին վկայում է վարույթի ոչ իրավաչափ բնույթի մասին: Գործի վարույթը կարճելու և հայցն առանց քննության թողնելու հիմքերն այնպիսի հանգամանքներ են, որոնց առկայության պայմաններում կասկածի տակ է դրվում վարույթի ծագման կամ շարունակման իրավաչափությունը և **բացառվում է** քաղաքացիական գործի ըստ էության լուծումը:

Այսպես, օրինակ՝ գործի վարույթը ենթակա է կարճման, եթե վեճը ենթակա չէ դատարանում քննության: Վեճը դատարանի քննությանը ենթակա լինելու կամ չլինելու հարցը դատարանը պարտավոր է պարզել ի պաշտոնե, դեռևս հայցադիմումը վարույթ ընդունելու փուլում: Հետևաբար, լիովին տրամաբանական կլինի, որ այս հանգամանքը վերաքննիչ դատարանի կողմից պարզվելու դեպքում վերաքննիչ դատարանը սեփական նախաձեռնությամբ բեկանի դատական ակտը և կարճի գործի՝ ի սկզբանե ոչ իրավաչափորեն ծագած վարույթը՝ անկախ բողոքի հիմքերից և հիմնավորումներից:

Մեկ այլ օրինակ՝ գործի վարույթը ենթակա է կարճման՝ գործին մասնակցող իրավաբանական անձի լուծարման դեպքում: Գործին մասնակցող իավաբանական անձի լուծարման փաստի առկա-

լուծության պայմաններում գործի վարույթը չկարճելու դեպքում դատարանի կողմից իրականացված արդարադատությունը կլինի իմաստագուրկ, կկրի ձևական բնույթ, իսկ կայացված վերջնական դատական ակտն ամեն դեպքում ենթակա չի լինի հարկադիր կատարման: ԴԱՀԿ օրենքի 42-րդ հոդվածը, որպես կատարողական վարույթի կարճման հիմք, նախատեսում է պարտապան կամ պահանջատեր իրավաբանական անձի լուծարումը: Հետևաբար, լիովին տրամաբանական կլինի, որ այս հանգամանքը վերաքննիչ դատարանի կողմից պարզվելու դեպքում գործի վարույթը վերաքննիչ դատարանի կողմից կարճվի՝ անկախ բողոքի հիմքերից և հիմնավորումներից:

Նմանապես, նույն անձանց միջև, նույն առարկայի մասին միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի առկայության պայմաններում վերաքննիչ դատարանի կողմից գործի վարույթը չկարճվելու դեպքում կխախտվի իրավական որոշակիության սկզբունքը, որը պահանջում է այլևս կասկածի տակ չդնել դատարանի կողմից որևէ հարցով կայացված վերջնական (օրինական ուժի մեջ մտած) դատական ակտը¹: Իրավական որոշակիության սկզբունքը ենթադրում է «res judicata» սկզբունքի, այն է՝ դատական ակտերի վերջնական լինելու սկզբունքի պահպանում²: Իրավական որոշակիության սկզբունքը մասնավորապես ենթադրում է, որ.

- անթույլատրելի է դատարանի կողմից արդեն մեկ անգամ լուծված գործի կրկնակի քննությունը,

- կողմերից ոչ մեկը չի կարող պահանջել վերջնական, այսինքն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայում միայն

¹ *Sté u Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1999թ. հոկտեմբերի 28-ի վճիռը՝ Բրումարեսկուն ընդդեմ Ռումինիայի գործով (Brumărescu v. Romania), 2003թ. հունիսի 24-ի վճիռը՝ Ռյաբիխն ընդդեմ Ռուսաստանի գործով (Ryabykh v. Russia), 2009թ. հունիսի 16-ի վճիռը՝ Ջեհենտներն ընդդեմ Ավստրիայի գործով (Zehentner v. Austria):*

² *Sté u ՀՀ վճռաբեկ դատարանի 2010թ. օգոստոսի 13-ի որոշումները՝ թիվ 3-10 (ՏԴ) և 3-11 (ՏԴ) քաղաքացիական գործերով:*

կրկնակի քննության իրականացման և նոր ակտի կայացման նպատակով¹:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր մի շարք որոշումներում ամրագրել է, որ իրավական որոշակիության սկզբունքը խախտվում է այն դեպքում, երբ դատարանն իրականացնում է արդեն մեկ անգամ վերջնական լուծում ստացած գործի կրկնակի քննություն²:

Վերոգրյալը հաշվի առնելով՝ գտնում ենք, որ անհրաժեշտ է ՔԴՕ-ի 219-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավակարգավորումից սահմանել բացառություններ և վերաքննիչ դատարանին թույլ տալ կիրառել դատական ակտը բեկանելու և գործի վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու լիազորությունը՝ անկախ բողոքի հիմքերից, հիմնավորումներից և պահանջից, այն է՝ սեփական նախաձեռնությամբ:

Այստեղ պետք է նշել, որ կիրառման ենթակա առարկայական լիազորության ընտրության առումով վերաքննիչ դատարանը կաշկանդված չէ բողոք բերած անձի պահանջով և կարող է կիրառել իր առարկայական լիազորությունները՝ անկախ այն հանգամանքից, թե կոնկրետ որ լիազորության կիրառումն է պահանջել բողոք բերած անձը³: Հետևաբար, վերաքննիչ դատարանը կարող է կիրառել դատական ակտը բեկանելու և գործի վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու լիազորությունը նաև այն դեպքերում, երբ բողոք բերած անձը նման պահանջ չի ներկայացրել:

Հատկանշական է, որ Նախագծի 278-րդ հոդվածի 3-րդ մասը

¹ *Sté u ՀՀ վճռաբեկ դատարանի 2013թ. նոյեմբերի 29-ի որոշումը՝ թիվ ԵԱԲԴ/1105/02/12 քաղաքացիական գործով, 2011թ. մայիսի 27 -ի որոշումը՝ թիվ ԵՇԴ/0473/02/10 քաղաքացիական գործով և 2009թ. փետրվարի 13-ի որոշումը՝ թիվ ԱԼԴ/0062/02/08 քաղաքացիական գործով:*

² *Sté u ՀՀ վճռաբեկ դատարանի 2013թ. նոյեմբերի 29-ի որոշումը՝ թիվ ԵԱԲԴ/1105/02/12 քաղաքացիական գործով և 2011թ. մայիսի 27-ի որոշումը՝ թիվ ԵՇԴ/0473/02/10 քաղաքացիական գործով:*

³ *Sté u թիվ ՏԴ3/0026/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.06.2009թ. որոշումը:*

հայցն առանց քննության թողնելու որևէ հիմքի առկայության պայմաններում հայցն առանց քննության չթողնելը և գործի վարույթը կարճելու որևէ հիմքի առկայության պայմաններում գործի վարույթը չկարճելը համարում է կոպիտ դատական սխալներ: Իսկ Նախագծի 257-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ անկախ վերաքննիչ բողոքի հիմքերից և հիմնավորումներից՝ վերաքննիչ դատարանը պարտավոր է ստուգել դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերի առկայությունը, գործի վարույթը կարճելու հիմքերի առկայությունը և հայցն առանց քննության թողնելու հիմքերի առկայությունը:

Ավելին, ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԿԴ3/0041/02/11 քաղաքացիական գործով կայացված որոշմամբ ամրագրել է, որ գործի վարույթը կարճելու հիմքերի հայտնաբերման դեպքում դատարանն ինքն է պարտավոր իր նախաձեռնությամբ կարճել գործի վարույթն ամբողջությամբ կամ մասամբ՝ անկախ կողմի ներկայացրած միջնորդությունից: Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ գործի վարույթը ենթակա է կարճման նաև վերադաս դատարաններում՝ ստորադաս դատարանի դատական ակտի բողոքարկման վարույթի ընթացքում, եթե նման հիմք գոյություն է ունեցել ստորադաս դատարանում գործի քննության ընթացքում¹:

Վերը նշված դիրքորոշման համատեքստում գտնում ենք, որ քննարկվող դեպքերում չպետք է գործեն նաև ՔԴՕ-ի 219-րդ հոդվածի 2-րդ (վերաքննիչ դատարանն իրավունք չունի նոր ապացույց ընդունելու և բողոքը քննելիս հիմնվում է միայն այն ապացույցների վրա, որոնք ներկայացվել են առաջին աստիճանի դատարանին) և 210-րդ հոդվածի 5-րդ (վերաքննիչ բողոքի հիմքերը չեն կարող փոփոխվել, լրացվել բողոքի քննության ընթացքում) մասերով ամրագրված սահմանափակումները:

Խոսելով դատական ակտն ամբողջությամբ կամ մասնակի բե-

¹ Տե՛ս թիվ ԿԴ3/0041/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013թ. որոշումը:

կանելու և գործի վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու վերաքննիչ դատարանի լիազորության մասին՝ հարկ ենք համարում անդրադառնալ քննարկվող լիազորության և դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերի հարաբերակցությանը:

ՔԴՕ-ի 220.4-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ և 9-րդ կետերը սահմանում են, որ դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե՝ 1) առկա են ՔԴՕ-ի 103-րդ հոդվածով սահմանված՝ հայցն առանց քննության թողնելու հիմքերը, կամ 2) առկա են ՔԴՕ-ի 109-րդ հոդվածով սահմանված՝ գործի վարույթը կարճելու հիմքերը: Այսինքն, ՔԴՕ-ն հայցն առանց քննության թողնելու կամ գործի վարույթը կարճելու հիմքերի առկայությունը դասում է դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերի շարքին:

Թեև հայցն առանց քննության թողնելու կամ գործի վարույթը կարճելու հիմքերի առկայությունը գործնականում պարտադիր հանգեցնում է դատական ակտի բեկանման, սակայն տեսական առումով դժվար է համաձայնվել օրենսդրի մոտեցման հետ:

Դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերը դատավարական իրավունքի նորմերի այնպիսի խախտումներ են, որոնք հանգեցնում են դատական ակտի անվերապահ բեկանման՝ **անկախ գործն ըստ էության ճիշտ լուծված լինելու կամ չլինելու հանգամանքից (անկախ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունից)**: Այդ պատճառով էլ դրանք կոչվում են դատական ակտի բեկանման անվերապահ կամ բացարձակ հիմքեր: Շահագրգիռ անձն այս դեպքում միայն հիմնավորում է դատավարական նորմերի այս խախտումների առկայությունը և չի կրում պարտականություն հիմնավորելու, որ այն ազդել է գործի ելքի վրա¹:

Թիվ ԵԿԴ/1118/02/12 քաղաքացիական գործով կայացված որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերին՝ իրավացիորեն նշելով, որ՝

¹ Տե՛ս *Лесницкая Л.Ф. Основания к отмене обжалованных судебных решений - М.: Гос. изд-во юрид. лит-ры, 1962, էջ 63:*

- դրանք այնպիսի դատավարական սխալներ են, որոնք անմիջականորեն կապված են «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով, ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված արդարադատության սկզբունքների և դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի խախտումների հետ,

- այդպիսի խախտումների առանձնահատկությունը կայանում է նրանում, որ դրանք խաթարում են դատարանի՝ իբրև իրավունքների համապարփակ և արդյունավետ պաշտպանությանը կոչված պետական մարմնի դերն ու նշանակությունը. նման խախտումների առկայությամբ կայացված դատական ակտը չի կարող լինել համոզիչ ու հեղինակավոր,

- այդպիսի խախտումների բնույթն այնպիսին է, որ դրանք կարող են վերացվել բացառապես դատական ակտի բեկանումից հետո գործի ամբողջ ծավալով նոր քննություն իրականացվելու դեպքում,

- դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերի առկայությունը կասկածի տակ է դնում ընդհանրապես արդարադատություն իրականացված լինելու կամ արդարադատությունը դատարանի կողմից իրականացված լինելու իրողությունը¹:

Իրավաբանական գրականության մեջ նույնպես արտահայտվել է կարծիք առ այն, որ դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերը կապված են դատավարության հիմնարար սկզբունքների խախտման հետ²: Այդ պատճառով էլ պետությունը անհանդուրժող մոտեցում է որդեգրել նման խախտումների նկատմամբ՝ դրանք ամեն դեպքում համարելով էական:

Անվերապահ բեկանման հիմքերով դատական ակտը բեկանելիս վերադաս դատարանները չեն անդրադառնում բողոքարկված

¹ *Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2014թ. որոշումը՝ թիվ ԵԿԴ/1118/02/12 քաղաքացիական գործով:*

² *Տե՛ս Терехова Л.А. Система пересмотра судебных актов в механизме судебной защиты. - М.: Волтерс Клувер. 2007, էջ 250:*

վճռի՝ ըստ էության ճիշտ կամ սխալ լինելուն: Անվերապահ բեկանման հիմքի առկայությունն ինքնին բավարար հիմք է հանդիսանում դատական ակտը բեկանելու համար: Վերադաս ատյանի կողմից նման խախտումների արձանագրումը *ipso facto* հանգեցնում է վերանայվող դատական ակտի բեկանմանը՝ անկախ բողոքում բարձրացված նյութական իրավունքի նորմերի սխալ կիրառման կամ չկիրառման վերաբերյալ հիմքերի հիմնավոր լինելուց: Նման խախտումների առկայության պայմաններում վճիռը բողոքարկող անձը պարտավոր չէ ապացուցել, որ այդ դատավարական խախտումները հանգեցրել են կամ կարող էին հանգեցնել գործի սխալ լուծման: Ընդ որում, չի բացառվում, որ **գործն ըստ էության ճիշտ լուծված լինելու պայմաններում** դատարանի վճիռը բեկանվի անվերապահ բեկանման հիմքի առկայության պատճառով¹:

Մինչդեռ հայցն առանց քննության թողնելու կամ գործի վարույթը կարճելու հիմքերի առկայությունը միանշանակ վկայում է՝ 1) առաջին ատյանի դատարանի կողմից **գործն ըստ էության սխալ լուծված լինելու** (նման հիմքերի առկայության պայմաններում երբևէ չի կարելի պնդել, որ վեճն ըստ էության ճիշտ է լուծվել), կամ 2) **այնպիսի հանգամանքների ծագելու կամ ի հայտ գալու մասին, որոնք բացառում են քաղաքացիական գործի վարույթը շարունակելու հնարավորությունը:**

Այլ կերպ ասած՝ հայցն առանց քննության թողնելու կամ գործի վարույթը կարճելու հիմքերի առկայությունը ոչ թե հանգեցնում է դատական ակտի անվերապահ բեկանման՝ անկախ գործն ըստ էության ճիշտ լուծված լինելու հանգամանքից, այլ՝ վկայում է առաջին ատյանի դատարանի կողմից թույլ տրված և գործի էլքի վրա ազդող դատական սխալի կամ այնպիսի հանգամանքի ծագելու կամ ի հայտ գալու մասին, որը բացառում է քաղաքացիական գործի վարույթը շարունակելու հնարավորությունը: Շենց սրանում է կայա-

¹ *Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2014թ. որոշումը՝ թիվ ԵԿԴ/1118/02/12 քաղաքացիական գործով:*

նում դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերի և հայցն առանց քննության թողնելու կամ գործի վարույթը կարճելու հիմքերի էական տարբերությունը:

Ավելին, ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ձևավորված դատական պրակտիկան վկայում է այն մասին, որ դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերի առկայության դեպքում վերաքննիչ դատարանը պարտավոր է կիրառել ՔԴՕ-ի 221-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված լիազորությունը (բեկանել դատական ակտը և գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության)¹, մինչդեռ ՔԴՕ-ի 221-րդ հոդվածի ձևակերպումներից հետևում է, որ հայցն առանց քննության թողնելու կամ գործի վարույթը կարճելու հիմքերի առկայության դեպքում վերաքննիչ դատարանը պարտավոր է կիրառել ՔԴՕ-ի 221-րդ հոդվածի 1-ին մասի ոչ թե 2-րդ, այլ՝ 5-րդ կետով նախատեսված լիազորությունը (բեկանել դատական ակտը և կարճել գործի վարույթը կամ առանց քննության թողնել հայցը):

Բավականին հետաքրքրական է նաև քննարկվող լիազորության և ՔԴՕ-ի 219-րդ հոդվածի 2-րդ մասի հարաբերակցությունը: ՔԴՕ-ի 219-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն վերաքննիչ դատարանն իրավունք չունի նոր ապացույց ընդունելու և բողոքը քննելիս հիմնվում է միայն այն ապացույցների վրա, որոնք ներկայացվել են առաջին ատյանի դատարանին: Եթե առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ ապացույցը չի ներկայացվել կողմերի կամքից անկախ հանգամանքներով, ապա վերաքննիչ դատարանը **բեկանում է գործը և այն ուղարկում համապատասխան առաջին ատյանի դատարան՝ նոր քննության**, եթե գտնում է, որ ապացույցն էական նշանակություն ունի գործի լուծման համար:

Այսպիսով, վերաքննիչ դատարանի կողմից նոր ապացույց ըն-

դունվելու դեպքում դատական ակտը միանշանակ պետք է բեկանվի, և գործը պետք է ուղարկվի նոր քննության: Փաստրեն խոսքը վերաբերում է նաև այն դեպքերին, երբ նոր ներկայացված և վերաքննիչ դատարանի կողմից ընդունված ապացույցը վերաբերում է գործի վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու հիմքերին և հիմնավորում է դրանցից որևէ մեկի առկայությունը:

Մինչդեռ մենք գտնում ենք, որ վերաքննիչ դատարանի կողմից նոր ապացույցի ընդունումը չի կարող կապվել բացառապես դատական ակտը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու լիազորության հետ:

Մասնավորապես, անհրաժեշտ է սահմանել հատուկ իրավակարգավորում այն դեպքերի համար, երբ վերաքննիչ դատարանի կողմից ընդունված նոր ապացույցը հիմնավորում է գործի վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու օրենսդրական հիմքերից որևէ մեկի առկայությունը: Դատական անհարկի շրջատույններից խուսափելու և գործերի քննության ժամկետների ողջամտությունը պահպանելու անհրաժեշտությունից ելնելով՝ գտնում ենք, որ վերաքննիչ դատարանը պետք է օժտված լինի նոր ապացույց ընդունելու և միաժամանակ այդ ապացույցի հիման վրա դատական ակտը բեկանելու և հայցն առանց քննության թողնելու կամ գործի վարույթը կարճելու լիազորությամբ:

¹ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից կայացված որոշումները՝ թիվ ԵԿԴ/2760/02/12, ԵԱԲԴ/2279/02/11, ԵՇԴ/0700/02/12, ԵԿԴ/1118/02/12, ԵԲԴ/0443/02/08 և ԵԱՆԴ/0461/02/10 քաղաքացիական գործերով:

ԳԼՈՒԽ 3.

**ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆԻ ԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ
ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

§ 1. Վերաքննիչ դատարանի կազմակերպական լիազորությունները

Վերաքննիչ ատյանի դատարանի կազմակերպական լիազորություններ ասելով՝ պետք է հասկանալ վերաքննիչ դատարանի իրավունքների և պարտականությունների որոշակի շրջանակ, որոնք կանխորոշում են վերաքննիչ վարույթի հարուցման, վերաքննիչ բողոքի քննության նախապատրաստման, մասամբ նաև՝ բողոքի բուն քննության ընթացքը: Այս լիազորությունների իրականացմամբ վերաքննիչ դատարանը պատասխան է տալիս գործին մասնակցող անձանց՝ իրավական հետևանքներ առաջացնող գործողություններին¹:

Վերաքննիչ դատարանի բոլոր կազմակերպական լիազորությունները պատկանում են գործառութային լիազորությունների թվին: Դրանք կա՛մ ուղղված են վերաքննիչ վարույթը հարուցելուն, կա՛մ հետապնդում են առաջին ատյանի դատարանի դատական ակտի վերանայումը կազմակերպելու և գործի քննության արդյունավետությունը բարձրացնելու նպատակ²: Այլ կերպ ասած՝ այս լիազորությունների կիրառման արդյունքում լուծվող խնդիրներն են՝ բողոքի քննության նախապատրաստումը և կազմակերպումը:

Վերաքննիչ դատարանն իր կազմակերպական լիազորությունների միջոցով անմիջականորեն չի ազդում բողոքարկման առարկա-

¹ *Տե՛ս և Кuzнецов П.У. Возбуждение кассационного производства по гражданским делам: Автореф. дисс. ... к.ю.н. - Свердловск, 1986, էջ 9; Тимофеев Ю.А. Полномочия суда второй инстанции в гражданском процессе: современные проблемы, М.: "Волтерс Клувер", 2008, էջ 82:*
² *Տե՛ս և Հովհաննիսյան Վ.Վ., Վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, Եր.: ԵՊՀ հրատ., 2013, էջեր 281-282:*

յի վրա: Այս լիազորությունների իրականացումը կախված չէ այն հանգամանքից, թե ինչպիսի դատական ակտ է բողոքարկվել: Դրանք հավասարապես իրականացվում են թե՛ վճիռների, թե՛ որոշումների դեմ բերված վերաքննիչ բողոքների քննության ընթացքում¹:

Վերաքննիչ դատարանի կազմակերպական լիազորությունները պետք է տարբերել դատական ակտի վերաքննությանն ուղղված նախապատրաստական գործողությունների իրականացումից (օրինակ՝ գործին մասնակցող անձանց դատական նիստի վայրի և ժամանակի մասին ծանուցումը կամ զեկուցող դատավորի նշանակումը): Կազմակերպական լիազորությունների իրականացումը, ի տարբերություն նախապատրաստական գործողությունների, ավարտվում է համապատասխան ակտի կայացմամբ, որը, սակայն, չի որոշում վերաքննության կարգով վերանայվող դատական ակտի իրավաբանական ճակատագիրը:

Վերաքննիչ դատարանի կազմակերպական լիազորությունների շարքում կարելի է առանձնացնել՝

- 1) վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելը,
- 2) առաջին ատյանի դատարանի կողմից հետազոտված ապացույցների գնահատման արդյունքում նոր փաստ հաստատելը կամ փաստը հաստատված չհամարելը,
- 3) գործի քննությունը հետաձգելը,
- 4) գործի վարույթը կասեցնելը² և այլն:

Վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելը. ՔԴՕ-ի 214-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ բողոքը վերադարձնելու հիմքերի բացակայության դեպքում ... վերաքննիչ դատարանը կայացնում է վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում:

¹ *Տե՛ս և Тимофеев Ю.А. Полномочия суда второй инстанции в гражданском процессе: современные проблемы. Дисс. ... к.ю.н., Екатеринбург, 2008, էջ 96:*
² *Տե՛ս և Հովհաննիսյան Վ.Վ., Վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, Եր.: ԵՊՀ հրատ., 2013, էջեր 281-282:*

Վերաքննիչ բողոքի վարույթ ընդունումը ենթադրում է, որ բողոք բերած անձն իրավաչափ է իրականացրել իր վերաքննիչ բողոքարկման իրավունքը (բացակայում են վերաքննիչ բողոքը հետ վերադարձնելու հիմքերը):

Վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու հետևանքն է վերաքննիչ վարույթի հարուցումը և բողոքարկված դատական ակտի վերանայումը¹:

ՔԴՕ-ի 214-րդ (վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումը), 213-րդ (վերաքննիչ բողոքը վերադարձնելը) և 210-րդ (վերաքննիչ բողոքի ձևը և բովանդակությունը) հոդվածների համադրված վերլուծությունից հետևում է, որ վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու լիազորությունը սերտորեն փոխկապակցված է վերաքննիչ դատարանի այնպիսի լիազորությունների հետ, ինչպիսիք են.

- բաց թողնված դատավարական ժամկետի վերականգնումը (այն դեպքում, երբ բողոք բերած անձը բաց է թողել բողոք բերելու համար օրենքով սահմանված ժամկետը),

- պետական տուրքի վճարման հետ կապված արտոնությունների տրամադրումը (այն դեպքում, երբ բողոք բերած անձը ներկայացրել է նման միջնորդություն)²:

¹ Տե՛ս **Հովհաննիսյան Վ.Վ.**, նշված աշխատ., էջ 282:

² ՀՀ վճարեկ դատարանն իր թիվ ԱԸԱԴ/0043/02/12 քաղաքացիական գործով կայացված որոշմամբ սահմանել է, որ բոլոր այն դեպքերում, երբ գործին մասնակցող անձի կողմից ներկայացվել է պետական տուրքի վճարումը տարածամկետելու վերաբերյալ միջնորդություն, դատարաններն այն պետք է քննարկեն և այդ հարցով որոշում կայացնեն որպես պետական տուրքի վճարումը հետաձգելու վերաբերյալ միջնորդություն: Իսկ թիվ 3-734 (ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճարեկ դատարանի արտահայտած դիրքորոշումից հետևում է, որ վերաքննիչ դատարանն իրավունք ունի ոչ միայն հետաձգել կամ տարածամկետել պետական տուրքի վճարումը կամ նվազեցնել դրա չափը, այլև՝ գործին մասնակցող անձին ազատել բողոքի ներկայացման համար պետական տուրքի վճարումից (ՔԴՕ-ի 210-րդ հոդվածի 4-րդ մասում նման հնարավորություն ուղղակիորեն նախատեսված չէ, սակայն այդ հնարավորությունը նախատեսված է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով):

Բաց թողնված ժամկետի վերականգնումը. Դատավարական ժամկետն օրենքով սահմանված կամ դատարանի կողմից նշանակված որոշակի ժամանակահատված է, որի ընթացքում դատարանը և գործին մասնակցող անձինք իրավունք ունեն (պարտավոր են) կատարել օրենքով նախատեսված դատավարական գործողություններ:

Դատավարական գործողությունների կատարման համար որոշակի ժամկետի սահմանումը դատավարական հարաբերությունների կայունության, որոշակիության, հստակության, գործի քննության ժամկետի ողջամտության և արդարադատության արդյունավետության ապահովման կարևոր երաշխիք է: Դատավարական ժամկետների ինստիտուտը կոչված է երաշխավորելու անձանց իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի արդյունավետ իրացումը:

Բողոքարկման համար սահմանված դատավարական ժամկետների բացթողումը հանգեցնում է դատական ակտի բողոքարկման իրավունքի կորստի, սակայն այս կանոնից կան բացառություններ. բողոքարկման իրավունքը կարող է վերականգնվել, եթե բողոքարկման ժամկետը բաց է թողնվել դատարանի մեղքով կամ օբյեկտիվ հանգամանքների ուժով, որոնք կախված չեն բողոք բերող անձի կամքից¹: Այստեղ հարկ ենք համարում նշել, որ ոչ բոլոր դատավարական ժամկետներն են ենթակա վերականգնման: Օրինակ, ՔԴՕ-ի 207-րդ հոդվածի 5-րդ մասով և ՔԴՕ-ի 204.34-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված ժամկետները վերականգնման ենթակա չեն:

Բողոքարկման ժամկետի բացթողման հիմնական պատճառներ են հանդիսանում՝ որակյալ բողոքի պատրաստման համար ժամանակի չբավարարելը, դատարանի կողմից դատական ակտն ուշ հանձնելը և այլն²:

¹ Տե՛ս **Тимофеев Ю.А.** Полномочия суда второй инстанции в гражданском процессе: современные проблемы. Дисс. ... к.ю.н., Екатеринбург, 2008, էջ 114:

² Տե՛ս **Маняк Н.И.** Кассационное производство в российском гражданском процессе: некоторые проблемы совершенствования. Дисс. ... к.ю.н. - М., 2006, էջ 81:

Դատավարական ժամկետը բաց թողնելու հնարավոր պատճառներն օրենքով օրյեկտիվորեն կանխորոշված չեն, որի պայմաններում այդ պատճառները գնահատելու և արդյունքում ժամկետի բացթողումը հարգելի կամ անհարգելի ճանաչելու դատարանի լիազորությունը կրում է հայեցողական բնույթ:

Դատավարական ժամկետները բաց թողնելու պատճառները գնահատման հիմքում պետք է լինեն իրավական չափանիշներ՝ բացառելով կամային ու չհիմնավորված որևէ մոտեցում: Այդ լիազորությունը պետք է իրականացվի դատարանի՝ օրենքով նախատեսված լիազորությունների շրջանակներում, բոլոր անձանց համար միակերպ ընկալելի հիմքերով¹:

ՀՀ Սահմանադրական դատատարանն իր թիվ ՄԴՈ-1052 որոշմամբ ամրագրել է, որ.

1) վերաքննիչ և վճռաբեկ բողոքներն օրենքով դրանց ներկայացվող պահանջներին համահունչ կազմելու համար անհրաժեշտ է, որպեսզի բողոք բերող անձն իր տնօրինության ներքո ունենա բողոքարկվող դատական ակտը,

2) բողոքարկվող **դատական ակտը փաստացի ուչ ստանալու դեպքում** բողոքարկման ժամկետի բացթողումն իրավունքի ուժով (*ex jure*) պետք է համարվի հարգելի,

3) հիմնավորված չէ դատարաններին լայն հայեցողական լիազորության տրամադրումն այն դեպքում, երբ բողոքարկման ժամկետի բացթողումը հարգելի համարելու միջնորդությունը ներկայացվում է բողոքարկվող **դատական ակտը փաստացի ուչ ստանալու հիմքով**:

Այսպիսով, ՀՀ Սահմանադրական դատարանը սահմանել է, որ դատական ակտն օրենքով նախատեսված ժամկետից ուչ ստանալը հիմք է հանդիսանում բողոքարկման ժամկետի բացթողումը հարգելի ճանաչելու և բաց թողնված ժամկետը վերականգնելու համար:

¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 22.04.2008թ. թիվ ՄԴՈ-752 որոշումը:

Նույն որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանը նշել է, որ բողոքարկման ժամկետի բացթողումը և դատական ակտն ուչ ստանալը պետք է տեղի ունենան անձի կամքից անկախ հանգամանքներում¹:

Նշված խնդրին անդրադարձել է նաև ՀՀ դատարանների նախագահների խորհուրդը՝ իր 2000թ. դեկտեմբերի 22-ի թիվ 36 որոշմամբ: Այդ որոշմամբ ՀՀ դատարանների նախագահների խորհուրդն ամրագրել է, որ դատարանների կողմից երբեմն սխալներ են թույլ տրվում բողոքարկման բաց թողած ժամկետները վերականգնելու դիմումների քննության ընթացքում. այդ դիմումները մերժվում են՝ դատական ակտի պատճենը համապատասխան դատարանից ուչ ստանալը բողոքարկման ժամկետը բաց թողնելու հարգելի պատճառ չհամարելով:

Ստեղծված իրավիճակը շտկելու նպատակով ՀՀ դատարանների նախագահների խորհուրդը որոշել է.

- դատարաններին պարզաբանել, որ բողոքարկման բաց թողած ժամկետների վերականգնման վերաբերյալ դիմումները քննության առնելիս պետք է մանրամասն հետազոտվեն ժամկետների բաց թողման պատճառները,

- սահմանել, որ բոլոր այն դեպքերում երբ ժամկետը բաց է թողնվել բողոք բերողի կամքից անկախ պատճառներով (հիվանդություն, անհաղթահարելի ուժ, դատական ակտերի կայացման մասին ոչ իր մեղքով անտեղյակ լինելը և այլն), ժամկետի բացթողումը պետք է ճանաչել հարգելի,

- սահմանել, որ, որպես կանոն, բողոքարկման բաց թողնված ժամկետը պետք է դիտվի հարգելի և վերականգնվի նաև այն դեպքում, երբ ժամկետը բաց է թողնվել դատարանի կողմից դատական ակտի պատճենը օրենքով նախատեսված ժամկետից ավելի ուչ

¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 16.10.2012թ. թիվ ՄԴՈ-1052 որոշումը:

հանձնելու պատճառով¹:

Ինչ վերաբերում է վերաքննիչ դատարանի կողմից պետական տուրքի վճարման հետ կապված արտոնությունների տրամադրմանը, ապա սույն աշխատանքում այդ հարցին առանձին անդրադարձ չի կատարվի, քանի որ թե՛ ընդհանուր իրավասության, թե՛ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների համար այս լիազորության կիրառման հիմքերը նույնն են (առանց որևէ առանձնահատկության): ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշումներում մի շարք անգամներ անդրադարձել է այդ հիմքերին²:

Վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումը պետք է կայացվի վերաքննիչ բողոք բերելու **վերջնաժամկետը լրանալուց հետո մեկամսյա ժամկետում:**

Նշված ձևակերպումը լիովին արդարացված է, երբ խոսքը գնում է օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերի բողոքարկման մասին, սակայն առաջացնում է որոշակի բարդություններ այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքը ներկայացվում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտի դեմ: Մասնավորապես, օրինական ուժի մեջ մտած դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել:

- այն դեպքում, երբ բողոք բերած անձը բաց է թողել վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով սահմանված ժամկետը, ներկայացրել է համապատասխան ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդություն, և այն բավարարվել է վերաքննիչ դատարանի կողմից (ՔԴՕ-ի 207-րդ հոդվածի 6-րդ մաս),

- այն բացառիկ դեպքերում, երբ ընդհանուր իրավասության դատարանը թույլ է տվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որի արդյունքում ըն-

¹ *Տե՛ս ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 2000թ. դեկտեմբերի 22-ի N 36 որոշումը:*

² *Տե՛ս օրինակ ՀՀ վճռաբեկ դատարանի 10.04.2009թ. որոշումը՝ թիվ ԿԴ/0338/02/08 քաղաքացիական գործով և ՀՀ վճռաբեկ դատարանի 07.08.2013թ. որոշումը՝ թիվ ԱԼԱԴ/0043/02/12 քաղաքացիական գործով:*

դունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը (ՔԴՕ-ի 207-րդ հոդվածի 7-րդ մաս),

- գործին մասնակից չդարձված անձի կողմից, ում իրավունքների և պարտականությունների վերաբերյալ ընդհանուր իրավասության դատարանը վճիռ է կայացրել (ՔԴՕ-ի 207-րդ հոդվածի 5-րդ մաս):

Վերը նշված երեք դեպքերում անհասկանալի է, թե ինչ ժամանակահատվածում պետք է վերաքննիչ դատարանը վարույթ ընդունի ներկայացված վերաքննիչ բողոքը: Առաջին և երկրորդ դեպքերում բողոքը ներկայացնելու պահին բողոք բերելու վերջնաժամկետը պարտադիր լրացած է լինում (ընդ որում, չի բացառվում, որ լրացած լինի նաև վերջնաժամկետը լրանալու պահից հոսող մեկամսյա ժամկետը): Ինչ վերաբերում է վերը նշված երրորդ դեպքին, ապա այս դեպքում էլ գործնականում դժվար է հստակ ամրագրել վերաքննիչ բողոք բերելու վերջնաժամկետը լրանալու պահը (վերաքննիչ բողոքը կարող է բերվել այն օրվանից սկսած՝ երեք ամսվա ընթացքում, երբ բողոք բերած անձն իմացել է կամ կարող էր իմանալ բողոքարկվող դատական ակտի կայացման մասին):

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ անհրաժեշտ է ՔԴՕ-ում ամրագրել նորմ, որը վերը նշված դեպքերի համար կսահմանի վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելու այլ ժամկետ: Առաջարկում ենք ՔԴՕ-ի 214-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությունն ունեցող նախադասությամբ. *«Սույն օրենսգրքի 207-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ և 7-րդ մասերով նախատեսված դեպքերում վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումը կայացվում է վերաքննիչ բողոքը ներկայացնելու պահից սկսած մեկամսյա ժամկետում»:*

Գրեթե նման մոտեցում է ամրագրված նաև Նախագծում, որի 248-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ վերաքննիչ բողոքը գործին մասնակից չդարձված անձի կողմից բերվելու դեպքում վերաքննիչ դատարանը կայացնում է վերաքննիչ բողոքը վարույթ ըն-

դունելու մասին որոշում՝ ոչ ուշ, քան բողոքը ներկայացվելու պահից 15 օրվա ընթացքում:

Գործի քննությունը հետաձգելը. ՔԴՕ-ի՝ վերաքննիչ վարույթը կարգավորող նորմերը վերաքննիչ դատարանի կողմից գործի քննությունը հետաձգելու վերաբերյալ որևէ դրույթ չեն պարունակում: Հետևաբար նշված լիազորության կիրառման ժամանակ վերաքննիչ դատարանը պարտավոր է ղեկավարվել ՔԴՕ-ի 119-րդ հոդվածով, որը սահմանում է գործի քննության հետաձգման ընդհանուր հիմքերը և կարգը: Ավելացնենք միայն, որ գործնականում վերաքննիչ դատարանի կողմից դատական նիստը հետաձգելու պատճառ կարող է հանդիսանալ նաև դատական նիստին չներկայացած դատավարության մասնակցից բացատրություններ կամ վերաքննիչ դատարանի մոտ ծագած հարցերի պատասխաններ ստանալու անհրաժեշտությունը: Ընդ որում ենթադրվում է, որ վերաքննիչ դատարանը, դատական նիստը սույն հիմքով հետաձգելու դեպքում, պետք է դատավարության այդ մասնակցին որևէ եղանակով տեղյակ պահի դատական նիստին ներկայանալու անհրաժեշտության մասին¹:

Գործի վարույթը կասեցնելը. Գործի վարույթի կասեցման օրենսդրական հիմքերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանց առկայության դեպքում քաղաքացիական գործի քննությունը ժամանակավորապես չդադարեցնելը կարող է դատական սխալի տեղիք տալ: Ուստի գործի վարույթի կասեցումը գործի ճիշտ և արդյունավետ քննելուն ուղղված «ժամանակավոր միջոցառում» է, որը հետապնդում է օրինական և հիմնավորված դատական ակտ կայացնելու նպատակ, ինչպես նաև ուղղված է գործին մասնակցող անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը: Գործի վարույթը կասեցնելը քաղաքացիական դատավարությունում ունի կազմակերպական նշանակություն, թեև այն իր մեջ պարունա-

¹ *Տե՛ս Դիմոֆեև Ե.Ս. Полномочия суда второй инстанции в гражданском процессе: современные проблемы. Дисс. ... к.ю.н., Екатеринбург, 2008, էջ 87:*

կում է գործի քննությունն արգելակող որոշ տարրեր: Կասեցման արգելակող կողմն ընդամենը ժամանակավոր է դադարեցնում առաջին ատյանի դատարանի դատական ակտի վերաքննությունը՝ միաժամանակ հետապնդելով գործի ճիշտ քննության և գործին մասնակցող անձանց իրավունքների լիարժեք իրացումն ապահովելու նպատակ¹:

ՔԴՕ-ի 221-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործի վարույթը կասեցնելու հիմքերի առկայության դեպքում վերաքննիչ դատարանը կարող է կասեցնել գործի վարույթը:

Գտնում ենք, որ վերը նշված իրավանորմում առկա «կարող է կասեցնել» ձևակերպումը բավականին խնդրահարույց է: ՔԴՕ-ի 105-րդ հոդվածը սահմանում է գործի վարույթը կասեցնելու պարտադիր հիմքերը, իսկ նույն օրենսգրքի 106-րդ հոդվածով սահմանված են գործի վարույթը կասեցնելու ոչ պարտադիր հիմքերը: Մինչդեռ ՔԴՕ-ի 221-րդ հոդվածի 3-րդ մասի ձևակերպումից բխում է, որ գործի վարույթը կասեցնելը վերաքննիչ դատարանի համար բացառապես իրավունք է, այլ ոչ թե պարտականություն (անգամ այն դեպքում, երբ առկա են գործի վարույթը կասեցնելու պարտադիր հիմքերը): Այսինքն, անգամ գործի վարույթը կասեցնելու պարտադիր հիմքերի առկայության դեպքում վերաքննիչ դատարանը կարող է, այլ ոչ թե պարտավոր է կասեցնել գործի վարույթը:

Հետևաբար, վերաքննիչ դատարանի կողմից գործի վարույթը կասեցնելու լիազորությունը ՔԴՕ-ում ամրագրված է որպես ամեն դեպքում հայեցողական բնույթ ունեցող լիազորություն: Մինչդեռ ՀՀ ՔԴՕ-ով նախատեսված են գործի վարույթը կասեցնելու թե պարտադիր, թե ոչ պարտադիր հիմքեր²:

¹ *Տե՛ս Հովհաննիսյան Վ.Վ., Վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, Եր.: ԵՊՀ հրատ., 2013, էջեր 282-283:*

² *Տե՛ս Հովհաննիսյան Վ.Վ., Վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, Եր.: ԵՊՀ հրատ., 2013, էջ 325:*

Նշված թերությունը շտկելու նպատակով առաջարկում ենք ՔԴՕ-ի 221-րդ հոդվածի 3-րդ մասում ավելացնել հետևյալ նախադասությունը. «Գործի վարույթը կասեցնելու պարտադիր հիմքերի առկայության դեպքում վերաքննիչ դատարանը պարտավոր է կասեցնել գործի վարույթը»:

Նոր ապացույց ընդունելը և նոր փաստ հաստատելը. Վերաքննիչ դատարաններն իրավունք ունեն հետագոտել նոր ապացույցներ և հաստատել նոր փաստեր: Այս լիազորությունները վերաքննիչ ատյանի դատարանների համար տարբեր երկրներում սահմանված են տարբեր ծավալներով՝ կախված նաև այդ երկրում գործող վերաքննության տեսակից¹:

Նոր ապացույց ընդունելը. Հաճախ վերաքննիչ ատյանի դատարանին ներկայացված ապացույցներն ունակ են արմատապես փոփոխել վերաքննիչ դատարանի դիրքորոշումը գործի ելքի վերաբերյալ՝ համեմատած առաջին ատյանի դատարանի դատական ակտում շարադրված դիրքորոշման հետ²:

Ընդհանուր կանոնի համաձայն՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանն իրավունք չունի նոր ապացույց ընդունելու և բողոքը քննելիս հիմնվում է միայն այն ապացույցների վրա, որոնք ներկայացվել են առաջին ատյանի դատարանին:

ՔԴՕ-ի 219-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ ապացույցը չի ներկայացվել կողմերի կամքից անկախ հանգամանքներով, ապա վերաքննիչ դատարանը բեկանում է գործը և այն ուղարկում համապատասխան առաջին ատյանի դատարան՝ նոր քննության, եթե գտնում է, որ ապացույցն էական նշանակություն ունի գործի լուծման համար:

¹ Տե՛ս **Караева Е.В.** *Вопросы апелляционного производства в гражданском процессе. Дисс. ... к.ю.н., Саратов, 2005, էջ 65:*

² Տե՛ս **Грязева В.В.** *Апелляция в арбитражном процессе. Дисс. ... к.ю.н., Москва, 2005, էջ 53:*

ՀՀ վճռաբեկ դատարանն իր թիվ ԱՎԴ1/0381/02/11, թիվ ՀՔԴ3/0049/02/08 և թիվ ԳԴ4/0092/02/11 քաղաքացիական գործերով կայացված որոշումներում քննարկել է վերաքննիչ դատարանի կողմից նոր ապացույցի ընդունելիության պայմանները:

Թիվ ԱՎԴ1/0381/02/11 քաղաքացիական գործով կայացված որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն ամրագրել է, որ վերաքննիչ դատարանի կողմից նոր ապացույց ընդունելու չափանիշները հետևյալն են.

- նոր ներկայացվող ապացույցը պետք է էական նշանակություն ունենա գործի լուծման համար,

- նոր ներկայացվող ապացույցն առաջին ատյանի դատարանում գործի քննության ընթացքում պետք է օբյեկտիվորեն առկա եղած լինի,

- նոր ներկայացվող ապացույցն առաջին ատյանի դատարանում գործի քննության ընթացքում պետք է ներկայացված չլինի կողմի կամքից անկախ պատճառներով¹: ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից նույնանման եզրահանգումներ են կատարվել նաև թիվ ՀՔԴ3/0049/02/08 քաղաքացիական գործով կայացված որոշմամբ²:

Ի լրումն վերը նշվածի, թիվ ԳԴ4/0092/02/11 քաղաքացիական գործով կայացված որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը սահմանել է նաև, որ եթե ապացույցն առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ ներկայացնելու համար արգելքներ չեն եղել, ապա այն վերաքննիչ դատարանի կողմից ընդունվել չի կարող: Կողմերի կամքից անկախ ապացույցը չներկայացնելը կարող է պայմանավորված լինել օբյեկտիվ հանգամանքներով, որի արդյունքում կողմը չի կարողացել ձեռք բերել և ներկայացնել այն առաջին ատյանի դատարանում կամ դատարանի այնպիսի գործողություններով,

¹ Տե՛ս *ՀՀ վճռաբեկ դատարանի 25.12.2012թ. որոշումը թիվ ԱՎԴ1/0381/02/11 քաղաքացիական գործով:*

² Տե՛ս *ՀՀ վճռաբեկ դատարանի 02.04.2010թ. որոշումը թիվ ՀՔԴ3/0049/02/08 քաղաքացիական գործով:*

որոնցով վերջինս անհիմն մերժել է ապացույցի կցումը գործի նյութերին կամ այն ձեռք բերելու վերաբերյալ կողմի միջնորդությունը կամ դատավարական իրավունքների խախտման պայմաններում կողմը հնարավորություն չի ունեցել դատարան ներկայացնել այդ ապացույցը¹:

Ի դեպ, այստեղ հարկ է նշել, որ թիվ ԿԴ3/0304/02/11 քաղաքացիական գործով կայացված որոշմամբ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանն ընդունել է բողոք բերած անձի կողմից ներկայացված նոր (լրացուցիչ) գրավոր ապացույցը, որն առաջին ատյանի դատարանում գործի քննության ընթացքում **օբյեկտիվորեն գոյություն չունեք, քանի որ կազմվել էր ընդհանուր իրավասության դատարանի վճիռը հրապարակվելուց հետո**:

Վերաքննիչ դատարանն իր վերը նշված որոշմամբ արձանագրել է, որ բողոք բերած անձը զրկված չի եղել նշված ապացույցը գործի քննության ընթացքում ձեռք բերելու և այն առաջին ատյանի դատարան ներկայացնելու հնարավորությունից: Մակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ ապացույցը գործի լուծման տեսանկյունից ուներ էական նշանակություն, վերաքննիչ դատարանն ընդունել է այն և բեկանել է դատարանի վճիռը՝ գործն ուղարկելով նոր քննության²:

Հարկ ենք համարում ներկայացնել մի շարք արտասահմանյան երկրներում գործող իրավական կարգավորումները՝ կապված վերաքննիչ դատարանի քննարկվող լիազորության հետ:

Անգլիայում գործող իրավակարգավորման համաձայն՝ վերաքննիչ ատյանն ընդունում է նոր ապացույցներ հետևյալ երեք պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

1. Նոր ապացույցն առաջին ատյանի դատարանում գործի

¹ *Տե՛ս ՀՀ վճարելի դատարանի 23.03.2012թ. որոշումը թիվ ԳԴ4/0092/02/11 քաղաքացիական գործով:*

² *Տե՛ս ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.06.2012թ. որոշումը թիվ ԿԴ3/0304/02/11 քաղաքացիական գործով:*

քննության ժամանակ անարգել կամ ողջամիտ ջանքերի գործադրման արդյունքում չէր կարող ներկայացվել դատարանին:

2. Նոր ապացույցը կարող է էական նշանակություն ունենալ գործի ելքի վրա, թեև պարտադիր չէ, որ այդ ազդեցությունը լինի վճռորոշ:

3. Նոր ապացույցը պետք է լինի հավաստի, սակայն պարտադիր չէ, որ այն լինի անհերքելի¹:

Գերմանիայի քաղաքացիական դատավարության օրենսգիրքը սահմանափակում է վերաքննիչ ատյանի լիազորությունները՝ քաղաքացիական գործի քննության ժամանակ նոր ապացույցներ օգտագործելու հարցում: Վիճարկման և պաշտպանության նոր միջոցները թույլատրվում են միայն այն դեպքում, եթե դատարանի ներքին համոզմամբ դրանց թույլատրումը չի հանգեցնի գործի քննության ձգձգմանը, կամ եթե համապատասխան կողմը ներկայացնի դրանք նախկինում չներկայացնելու հարգելի պատճառներ կամ եթե պարզվի, որ համապատասխան կողմն առաջին ատյանի դատարանում գործի ըստ էության քննության ժամանակ չի օգտագործել դրանք՝ կոպիտ անզգուշության պատճառով²:

Ընդհանուր կանոնի համաձայն՝ ԱՄՆ վերաքննիչ և Գերագույն դատարանները նույնպես չեն ընդունում նոր ապացույցներ³:

Մոլդովայի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի համաձայն՝ դատավարության կողմերը և գործին մասնակցող այլ անձինք իրավունք ունեն վերաքննիչ դատարանին ներկայացնել նոր ապացույցներ, որոնք ա-

¹ *Տե՛ս Система гражданского процесса Англии: судеб. разбирательство, медиация и арбитраж / Нил Эндрюс, пер. с англ., под ред. Р.М. Ходыкина. М.: Инфотропик Медиа, 2012, էջ 216:*

² *Տե՛ս Կարաբաևա Ե.Վ. Вопросы апелляционного производства в гражданском процессе. Дисс. ... к.ю.н., Саратов, 2005, էջ 36; Жилин Г. А. Апелляция и кассация в гражданском процессе // Современная доктрина гражданского права, էջ 136:*

³ *Տե՛ս Կարաբաևա Ե.Վ. նշված աշխատ., էջ 41:*

առաջին ատյանի դատարանում գործի քննության ընթացքում նրանց կողմից չէին կարող ներկայացվել: Վերաքննիչ դատարանն իրավունք չունի ընդունել և հետագոտել այն ապացույցները, որոնք գործին մասնակցող անձանց կողմից կարող էին ներկայացվել առաջին ատյանի դատարանին: Վերաքննիչ դատարանին նոր ապացույց ներկայացրած անձը պարտավոր է մատնանշել այն պատճառները, որոնց ուժով ապացույցն առաջին ատյանի դատարանում գործի քննության ընթացքում դատարանին չի ներկայացվել¹:

Ուկրաինայի քաղաքացիական դատավարության օրենսգրքի 303-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանը հետագոտում է այն ապացույցները, որոնք.

- առաջին ատյանի դատարանի կողմից հետագոտվել են օրենքով սահմանված կարգի խախտմամբ,

- առաջին ատյանի դատարանի կողմից անհիմն կերպով չեն հետագոտվել,

- հարգելի պատճառներով չեն ներկայացվել առաջին ատյանի դատարանին:

Նույն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանը քաղաքացիական գործը ստանալու պահից տասնօրյա ժամկետում կատարում է գործի քննությունը նախապատրաստելուն ուղղված մի շարք գործողություններ, այդ թվում նաև՝ պարզում է, թե արդյո՞ք վերաքննիչ դատարանին ներկայացված նոր ապացույցներն առաջին ատյանի դատարանին չներկայացնելու պատճառները հարգելի են²:

ՌԴ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 327.1-րդ հոդվածի համաձայն՝ վերաքննիչ դատարանն ընդունում է ներկայացված լրացուցիչ ապացույցները, եթե գործին մասնակցող անձը

¹ *Տե՛ս Մոլդովայի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքը, ընդունվել է 2003թ. մայիսի 30-ին, հրապարակվել է 12.06.2003թ., ուժի մեջ է մտել 12.06.2003թ., Monitorul Oficial № 111-115, հոդված № 451:*

² *Տե՛ս Ուկրաինայի քաղաքացիական դատավարության օրենսգրքը (փոփոխությունները՝ 2014թ. մայիսի 13-ի դրությամբ), <http://meget.kiev.ua/kodeks/gpk/> (26.10.2014):*

հիմնավորում է դրանք առաջին ատյանի դատարանին ներկայացնելու անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով, և վերաքննիչ դատարանն այդ պատճառները հարգելի է ճանաչում: Նոր ապացույցներն ընդունելու դեպքում վերաքննիչ դատարանը կայացնում է համապատասխան որոշում¹:

Այս կապակցությամբ ՌԴ գերագույն արբիտրաժային դատարանի պլենումն իր 1997թ. հունիսի 19-ի որոշմամբ պարզաբանել է, որ լրացուցիչ ապացույցները կարող են չընդունվել վերաքննիչ ատյանի դատարանի կողմից, եթե պարզվի, որ շահագրգիռ կողմն առաջին ատյանի դատարանում դրսևորել է ոչ բարեխիղճ վարքագիծ և չի ներկայացրել ապացույցները՝ գործի քննությունը ձգձգելու նպատակ ունենալով²:

Այսպիսով, վերը նշվածը մեզ թույլ է տալիս եզրահանգել, որ վերաքննիչ դատարանի կողմից նոր ապացույցներ ընդունելու ընդհանուր կանոնը հետևյալն է. դրանք կարող են ընդունվել միայն այն դեպքում, եթե առաջին ատյանի դատարանում չեն ներկայացվել հարգելի (գործին մասնակցող անձի կամքից անկախ, օբյեկտիվ) պատճառներով: Այս հիմնադրույթի հիման վրա է ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշումներով ամրագրել վերաքննիչ վարույթում նոր ապացույցի ընդունելիության հարցը կարգավորող կանոններ:

Այդուհանդերձ, գտնում ենք, որ վերը նշված հիմնադրույթից և ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից սահմանված կանոններից անհրաժեշտ է կատարել բացառություններ հետևյալ դեպքերում.

¹ *Տե՛ս Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական դատավարության օրենսգրքը (N 138-Փ3), ընդունվել է Ռուսաստանի Դաշնության Պետական դումայի կողմից 23.10.2002թ., հաստատվել է ՌԴ Դաշնային խորհրդի կողմից 30.10.2002թ., հրապարակվել է 18.11.2002թ., Собрание законодательства Российской Федерации, № 46, ուժի մեջ է մտել 01.02.2003թ.:*

² *Տե՛ս ՌԴ Գերագույն արբիտրաժային դատարանի պլենումի 1997թ. հունիսի 19-ի որոշումը՝ «Վերաքննիչ ատյանում գործի քննության ժամանակ ՌԴ արբիտրաժային դատավարության օրենսգրքի կիրառման վերաբերյալ», Вестник Высшего Арбитражного Суда РФ, 1997, N 12:*

նպատակով վերաքննիչ դատարանը պետք է պատասխանի այն հարցին, թե արդյո՞ք գործին մասնակցող անձի կողմից համապատասխան կամահայտնություն դրսևորվելու և ջանքեր գործադրվելու դեպքում այդ ապացույցն (ապացուցման միջոցն) օբյեկտիվորեն կարող էր ստեղծվել ավելի վաղ:

Եթե ապացույցն (ապացուցման միջոցն) օբյեկտիվորեն չէր կարող ստեղծվել ավելի վաղ (դա որևէ կերպ կախված չէր ապացույցը ներկայացնող գործին մասնակցող անձի կամահայտնությունից և ջանքերից), ապա վերաքննիչ դատարանը պետք է ընդունի այն՝ որպես նոր ապացույց: Եթե ապացույցը (ապացուցման միջոցը) կարող էր ստեղծվել ավելի վաղ (ապացույցի՝ ավելի վաղ ստեղծումը կախված էր ապացույցը ներկայացնող գործին մասնակցող անձի կամահայտնությունից և ջանքերից), ապա վերաքննիչ դատարանը չպետք է ընդունի այն՝ որպես նոր ապացույց:

Անդրադառնալով վերաքննիչ դատարանի կողմից նոր ապացույց ընդունելու լիազորությանը՝ անհրաժեշտ է նշել նաև հետևյալը: ՔԴՕ-ի 219-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ վերաքննիչ դատարանն իրավունք չունի նոր ապացույց ընդունելու և բողոքը քննելիս հիմնվում է միայն այն ապացույցների վրա, որոնք ներկայացվել են առաջին ատյանի դատարանին: Եթե առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ ապացույցը չի ներկայացվել կողմերի կամքից անկախ հանգամանքներով, ապա վերաքննիչ դատարանը բեկանում է գործը և այն ուղարկում համապատասխան առաջին ատյանի դատարան՝ նոր քննության, եթե գտնում է, որ ապացույցն էական նշանակություն ունի գործի լուծման համար:

Այսինքն, դատարանի վճիռը վերաքննիչ դատարանի կողմից կարող է բեկանվել, եթե բողոք բերած անձը վերաքննիչ դատարանին ներկայացնի գործի լուծման տեսանկյունից էական նշանակություն ունեցող ապացույց, որն առաջին ատյանի դատարանին չէր ներկայացվել վերաքննիչ դատարանի կողմից հարգելի ճանաչվող պատճառով:

Վերը նշված հիմքով դատարանի վճռի բեկանումը երբեմն պայմանավորված է լինում առաջին ատյանի դատարանի կողմից թույլ տրված դատական սխալով (օրինակ՝ երբ առաջին ատյանի դատարանն անհիմն հրաժարվել է ապացույցն ընդունելուց և հետագոտելուց): Սակայն մի շարք դեպքերում դատական սխալի մասին խոսելը պարզապես անհնար է. երբեմն ապացույցն առաջին ատյանի դատարանում չներկայացնելը կարող է պայմանավորված լինել օբյեկտիվ հանգամանքներով, որոնց արդյունքում կողմը չի կարողացել ձեռք բերել տվյալ ապացույցը և այն ներկայացնել առաջին ատյանի դատարանին: Նման դեպքերում դատարանի վճիռը չի կարելի համարել ոչ օրինական կամ չհիմնավորված, քանի որ այն կայացվել է գործին մասնակցող անձանց կողմից ներկայացված (գործում առկա) ապացույցների հիման վրա, իսկ գործին մասնակցող անձի կողմից իրենից անկախ (օբյեկտիվ) պատճառներով գործի քննության համար էական նշանակություն ունեցող ապացույցը դատարանին չներկայացնելը չի կարող համարվել դատարանի կողմից նյութական կամ դատավարական իրավունքի որևէ նորմի խախտում (դատական սխալ):

Այսինքն, ՔԴՕ-ի 219-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքով դատարանի վճռի բեկանումը մի շարք դեպքերում չի կապվում «դատական սխալ» հասկացության հետ: Ընդ որում, վերը նշված դեպքը չի կարելի կապել նաև «նոր երևան եկած հանգամանք» կամ «նոր հանգամանք» հասկացությունների հետ, քանի որ այս դեպքում գործ ունենք **ոչ թե հանգամանքների**, այլ՝ դրանց առկայությունը կամ բացակայությունը հաստատող (հերքող) **ապացույցների** հետ: Հարկ է նշել, որ ՔԴՕ-ի 47-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ գործով **ապացույցներ են** ՔԴՕ-ով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված **տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է** գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ **հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը**:

Հետևաբար կարելի է պնդել, որ մի շարք դեպքերում վերաքննիչ դատարանի կողմից ընդհանուր իրավասության դատարանի վճռի բեկանման համար հիմք են հանդիսանում ոչ թե ՔԴՕ-ով ամրագրված դատական ակտի բեկանման հիմքերը (դատական սխալ, նոր երևան եկած հանգամանք, նոր հանգամանք), այլ՝ ՔԴՕ-ի 219-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված լիազորության կիրառումը և վերաքննիչ դատարանի կողմից բողոք բերած անձի ներկայացրած նոր ապացույցն ընդունելը:

Հետևաբար ՔԴՕ-ի 219-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված լիազորության կիրառումը և վերաքննիչ դատարանի կողմից բողոք բերած անձի ներկայացրած նոր ապացույցն ընդունելը ՔԴՕ-ով անհրաժեշտ է ամրագրել որպես դատական ակտի բեկանման առանձին և ինքնուրույն հիմք, քանի որ այն հաճախ կապված չէ առաջին ատյանի դատարանի կողմից թույլ տրված դատական սխալի, ինչպես նաև՝ «նոր երևան եկած հանգամանք» և «նոր հանգամանք» հասկացությունների հետ:

Նոր փաստ հաստատելը. Քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքում ընկած են իրավաբանական փաստերը: Առանց իրավաբանական փաստերի ճշգրիտ հաստատման հնարավոր չէ խոսել անձի՝ դատական պաշտպանության իրավունքի իրականացման ապահովման և քաղաքացիական գործի ճիշտ լուծման մասին¹:

Իրավաբանական փաստերի հաստատման բնագավառում ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի լիազորություններն ամրագրված են ՔԴՕ-ի 219-րդ հոդվածում: Նշված հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանում բողոքի քննության ժամանակ առաջին ատյանի դատարանում հաստատված փաստերն ընդունվում են որպես հիմք, բացառությամբ այն դեպքի, երբ բողոքում վիճարկվում է այդ փաստը, և վերաքննիչ դատարանը հանգում է այն

եզրակացության, որ տվյալ փաստի վերաբերյալ եզրակացության հանգելիս առաջին ատյանի դատարանն ակնհայտ սխալ է թույլ տվել: Նման դեպքերում վերաքննիչ դատարանն իրավունք ունի հաստատված համարելու նոր փաստ կամ հաստատված չհամարելու ստորադաս դատարանի հաստատած փաստը, եթե առաջին ատյանի դատարանի հետազոտած ապացույցների հիման վրա հնարավոր է հանգել նման եզրակացության: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե առաջին ատյանի դատարանը հետազոտված ապացույցների հիման վրա դատական ակտում եզրակացության չի հանգել որևէ փաստի վերաբերյալ, ինչը պարտավոր էր անել, ապա վերաքննիչ դատարանն իրավունք ունի հաստատված համարելու նոր փաստ, եթե առաջին ատյանի դատարանի հետազոտած ապացույցների հիման վրա հնարավոր է հանգել նման եզրակացության:

Վերը նշված նորմերի վերլուծությունը թույլ է տալիս ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի քննարկվող լիազորության վերաբերյալ կատարել հետևյալ սկզբունքային եզրահանգումները.

- առաջին ատյանի դատարանի կողմից հաստատված և գործի լուծման համար նշանակություն ունեցող իրավաբանական փաստերի շրջանակը վերաքննիչ դատարանի կողմից կարող է փոփոխվել միայն այն դեպքում, երբ բողոք բերած անձը վերաքննիչ բողոքում վիճարկում է դատարանի կողմից հաստատված փաստերի շրջանակը,

- առաջին ատյանի դատարանի կողմից հաստատված և գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստը վերաքննիչ դատարանի կողմից կարող է փոփոխվել այն դեպքում, երբ առաջին ատյանի դատարանը ակնհայտ սխալ է թույլ տվել տվյալ փաստի հաստատման հարցում,

- առաջին ատյանի դատարանի կողմից հաստատված և գործի լուծման համար նշանակություն ունեցող իրավաբանական փաստերի շրջանակը վերաքննիչ դատարանի կողմից կարող է փոփոխվել այն դեպքում, երբ առաջին ատյանի դատարանի հետազոտած ա-

¹ *Տե՛ս Ե. Чесовской* Действует ли принцип объективной истины в гражданском процессе? // *Российская юстиция*. 2001, № 5, էջ 17:

պացույցների շրջանակը բավարար է այդ փաստերի շրջանակը փոփոխելու համար: Հետևաբար, վերաքննիչ դատարանն իրավունք չունի փոփոխել առաջին ատյանի դատարանի կողմից հաստատված փաստերի շրջանակը՝ հիմնվելով ՔԴՕ-ի 219-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա վերաքննիչ դատարան ներկայացված նոր (լրացուցիչ) ապացույցների վրա:

ՔԴՕ-ի 219-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը գերծ չեն որոշակի թերություններից և խնդրահարույց հարցադրումներից: Մասնավորապես.

- դատարանի կողմից հաստատված փաստերի շրջանակը վերաքննիչ դատարանի կողմից կարող է փոփոխվել միայն դատարանի կողմից թույլ տրված սխալի ակնհայտ լինելու դեպքում: Գտնում ենք, նման մոտեցումը բոլորովին արդարացված չէ. վերացման և շտկման են ենթակա առաջին ատյանի դատարանի կողմից թույլ տրված բոլոր, այլ ոչ թե՝ միայն ակնհայտ սխալները,

- անհասկանալի է, թե ինչու է վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից նոր փաստ հաստատելու լիազորությունը սահմանվել ՔԴՕ-ի 219-րդ հոդվածի և՛ 3-րդ, և՛ 4-րդ մասերում,

- ստորադաս դատարանի կողմից հաստատման ենթակա, սակայն չհաստատված փաստը վերաքննիչ դատարանի կողմից կարող է հաստատվել միայն այն դեպքում, երբ բողոք բերած անձն իր բողոքում վիճարկում է դատարանի կողմից տվյալ փաստի չհաստատումը: Մինչդեռ ՔԴՕ-ի 219 հոդվածի 4-րդ մասը նման պահանջ չի նախատեսում,

- անհասկանալի է, թե ինչու են վերաքննիչ դատարանի քննարկվող լիազորությունները սահմանված բացառապես իրավունքի, այլ ոչ թե պարտականության տեսքով: Օրենքով նախատեսված պայմանների առկայության դեպքում նշված լիազորությունների կիրառումը (առաջին ատյանի դատարանի կողմից հաստատված փաստը չհաստատելը, առաջին ատյանի դատարանի կողմից չհաստատված փաստը հաստատելը) պետք է հանդիսանա վերաքննիչ

դատարանի պարտականությունը:

Հետևաբար, գտնում ենք, որ ՔԴՕ-ի 219-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը որոշակի խմբագրման կարիք ունեն: Առաջարկում ենք վերը նշված նորմերը վերաշարադրել հետևյալ բովանդակությամբ.

«3. Վերաքննիչ բողոքի քննության ժամանակ առաջին ատյանի դատարանի դատական ակտով հաստատված փաստերն ընդունվում են որպես հիմք, բացառությամբ այն դեպքերի, երբ բողոքում վիճարկվում է որևէ փաստ, և վերաքննիչ դատարանը գործում առկա ապացույցների հետազոտման արդյունքում հանգում է այն եզրակացության, որ տվյալ փաստը հաստատված համարելիս առաջին ատյանի դատարանը սխալ է թույլ տվել: Նման դեպքերում վերաքննիչ դատարանը պարտավոր է հաստատված չհամարել առաջին ատյանի դատարանի հաստատած փաստը:

4. Եթե առաջին ատյանի դատարանն իր դատական ակտով հաստատված չի համարել որևէ փաստ, որը պարտավոր էր հաստատված համարել՝ ելնելով գործում առկա ապացույցներից, ապա վերաքննիչ դատարանը պարտավոր է հաստատված համարել այդ փաստը, եթե բողոքում վիճարկվում է առաջին ատյանի դատարանի կողմից տվյալ փաստի չհաստատումը»:

Բացի այդ, առաջարկում ենք քննարկվող հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությունն ունեցող դրույթով.

«4.1. Սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով նախատեսված լիազորությունները վերաքննիչ դատարանի կողմից կարող են կիրառվել միայն այն դեպքում, եթե առաջին ատյանի դատարանի կողմից հետազոտված ապացույցների հիման վրա հնարավոր է նման եզրահանգումներ կատարել: Վերաքննիչ դատարանը չի կարող կիրառել սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասով սահմանված լիազորությունները՝ հիմնվելով վերաքննիչ դատարան ներկայացված նոր ապացույցների վրա»:

Առաջին ատյանի դատարանի կողմից հաստատված փաստերի շրջանակը փոփոխելու վերաքննիչ դատարանի լիազորությունը

սերտորեն կապված է վերաքննիչ դատարանի կողմից ապացույցների հետազոտման և գնահատման գործընթացի հետ:

Ե. Ա. Բորիսովան, քննարկելով և հիմնավորելով քաղաքացիական դատավարությունում վարույթի կենտրոնացման (կոնցենտրացիայի) սկզբունքը, նշում է, որ քաղաքացիական գործում առկա բոլոր ապացույցների հետազոտումը և գնահատումը կենտրոնացված պետք է կատարվի առաջին ատյանի դատարանում, որն ունի ապացույցների մանրակրկիտ ուսումնասիրման և գնահատման բոլոր հնարավորությունները¹: Սակայն վերաքննիչ դատարանին առաջին ատյանի դատարանի կողմից հաստատված փաստերի շրջանակը փոփոխելու լիազորության տրամադրումը ենթադրում է, որ վերաքննիչ դատարանը նույնպես պետք է ունենա գործում առկա ապացույցները կրկնակի հետազոտելու և գնահատելու հնարավորություն: Այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքը ներկայացվել է գործում առկա ապացույցները սխալ գնահատված լինելու և փաստական հանգամանքները ոչ ճիշտ կամ թերի հաստատված լինելու հիմքով, վերաքննիչ դատարանը, բողոքի հիմնավորվածությունը պարզելու նպատակով պետք է վերանայի գործի փաստական կողմը, ինչը ենթադրում է ապացույցների վերագնահատում, ինչն էլ իր հերթին ենթադրում է դրանց հետազոտում վերաքննիչ դատարանի կողմից:

Մինչդեռ ԲԴԾ-ի 217-րդ հոդվածը (որը սահմանում է վերաքննիչ դատարանում գործի քննության կարգը) չի պարունակում որևէ դրույթ վերաքննիչ դատարանում ապացույցների հետազոտման ընթացակարգի մասին:

Անդրադառնալով առաջին ատյանի դատարանի կողմից հաստատված փաստերի շրջանակը փոփոխելու լիազորությանը, հետաքրքրական է նշել, որ Անգլիայում տվյալ լիազորության կիրառումը պրակտիկայում կախման մեջ է դրված այն հանգամանքից, թե

¹ *Sté u Borisova E. A. Проверка судебных актов по гражданским делам. М.: Изд-во Городец, 2006, էջ 147:*

ինչպիսի ապացույցների հետազոտման հիման վրա է հաստատվել այդ փաստը: Ենթադրվում է, որ վերաքննիչ դատարանը խուսափում է այն փաստերը փոփոխելուց, որոնք հաստատվել են վկաների ցուցմունքների հիման վրա¹: Տրամաբանությունը կայանում է նրանում, որ վերաքննիչ դատարանը վկաների հարցաքննություն (վկայի ցուցմունքի հետազոտություն) չի իրականացնում, հետևաբար օժտված է դրանց հիման վրա հաստատված փաստերի իսկությունը ստուգելու միայն սահմանափակ հնարավորություններով²:

ԲԴԾ-ի 47-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված է քաղաքացիական դատավարությունում օգտագործվող ապացուցման միջոցների ցանկը: Դրանք են՝ գրավոր և իրեղեն ապացույցները, փորձագետի եզրակացությունը, վկայի ցուցմունքները և գործին մասնակցող անձանց ցուցմունքները: Գրավոր և իրեղեն ապացույցները, ինչպես նաև փորձագետի եզրակացությունն առանց որևէ բարդության կարող են կրկնակի հետազոտվել վերաքննիչ դատարանի կողմից, սակայն վկայի և գործին մասնակցող անձի ցուցմունքների կրկնակի հետազոտման հարցում առաջ են գալիս որոշակի դժվարություններ:

Վերաքննիչ դատարանը զրկված է վկաներին և գործին մասնակցող անձանց հարցաքննելու և այդ անձանց ցուցմունքներն անմիջականորեն հետազոտելու և ընկալելու հնարավորությունից: Վերաքննիչ դատարանը կարող է այդ ցուցմունքները հետազոտել՝ դատական նիստի համապատասխան արձանագրությանը ծանոթանալով, ինչը դատարանին հնարավորություն չի տա հասկանալու ցուցմունքների էմոցիոնալ ֆոնը և երանգները³: Ասվածը հատկապես վերաբերում է այն դեպքերին, երբ արձանագրությունը վարվում է

¹ *Sté u Система гражданского процесса Англии: судеб. разбирательство, медиация и арбитраж / Нил Эндрюс, пер. с англ., под ред. Р.М. Ходыкина. М.: Инфотропик Медиа, 2012, էջեր 217-218:*

² *Sté u Р.М. Ходыкин, նշված աշխատ., էջեր 216-217:*

³ *Sté u Тимофеев Ю.А. Полномочия суда второй инстанции в гражданском процессе: современные проблемы. Дисс. ... к.ю.н., Екатеринбург, 2008, էջեր 42, 155:*

պարզ թղթային եղանակով: Չի բացառվում, որ այդպիսի դեպքերում վկայի ցուցմունքներն արձանագրության մեջ շարադրված լինեն ոչ թե բառացիորեն, այլ՝ ընդհանրացված, կրճատված եղանակով, թեև ՔԴՕ-ի 147-րդ հոդվածի 2-րդ մասը պահանջում է, որ պետքի պարզ թղթային արձանագրության վարման դեպքում վկայի ցուցմունքներն արձանագրվեն բառացիորեն: Ավելին, վերաքննիչ դատարանը չի կարող վկային հարցեր տալ՝ ցուցմունքները ճշգրտելու նպատակով¹:

Ինչ վերաբերում է գործին մասնակցող անձանց ցուցմունքներին, նշենք, որ ՔԴՕ-ի 217-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ վերաքննիչ բողոքի քննության ընթացքում դատական կազմում ընդգրկված դատավորներն իրավունք ունեն հարցեր տալու գործին մասնակցող անձանց: Չնայած դրան, այս հարցերի պատասխանները չեն կարող համարվել գործին մասնակցող անձանց կողմից տրված ցուցմունքներ կամ դրանց ճշգրտումներ (ապացույցներ): Դրանք կարող են դիտվել ընդամենը որպես բացատրություններ կամ պարզաբանումներ՝ վերաքննիչ բողոքում կամ բողոքի պատասխանում բարձրացված հարցերի շուրջ:

Ասվածի կապակցությամբ պետք է նշել, որ Մոլդովայի հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ առաջին ատյանի դատարանի կողմից հարցաքննված վկաները կարող են կանչվել վերաքննիչ դատարան, եթե նրանց ցուցմունքները վիճարկվում են վերաքննիչ բողոքում²:

¹ *Տե՛ս նույն տեղում:*

² *Տե՛ս Մոլդովայի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքը, ընդունվել է 2003թ. մայիսի 30-ին, հրապարակվել է 12.06.2003թ., ուժի մեջ է մտել 12.06.2003թ., Monitorul Oficial № 111-115, հոդված № 451:*

§ 2. Վերաքննիչ դատարանի կանխարգելող լիազորությունները

Վերաքննիչ դատարանի կանխարգելող լիազորություններն ուղղված են ոչ իրավաչափ իրականացված բողոքարկման, ինչպես նաև դատավարական օրենսդրությամբ ամրագրված արգելքների առկայության պարագայում դատական ակտերի վերաքննիչ վերանայումը բացառելուն և խափանում են վերաքննիչ վարույթի ծագումն ու հետագա ընթացքը: Արգելակող կարելի է համարել, մասնավորապես, վերաքննիչ բողոքը վերադարձնելու և վերաքննիչ բողոք բերած անձի կողմից բողոքը հետ վերցնելու հետևանքով վերաքննիչ վարույթը կարճելու լիազորությունները¹:

Վերաքննիչ վարույթը կարճելը. ՔԴՕ-ի 215-րդ հոդվածի համաձայն՝ վերաքննիչ բողոք բերած անձն իրավունք ունի հետ վերցնելու բողոքը մինչև վերաքննիչ դատարանը սկսի գործի քննությունը:

Եթե վերաքննիչ բողոքն ընդունված է վարույթ, ապա բողոքը հետ վերցնելու դեպքում վերաքննիչ դատարանը կայացնում է որոշում վերաքննիչ վարույթը կարճելու մասին: Վերաքննիչ վարույթը կարճելու մասին վերաքննիչ դատարանի որոշման կայացման պահից առաջին ատյանի դատարանի վճիռը մտնում է օրինական ուժի մեջ:

Իրավաբանական գրականության մեջ վերաքննիչ դատարանի՝ վարույթը կարճելու լիազորության դասակարգման վերաբերյալ միանշանակ մոտեցում չի ձևավորվել: Մասնավորապես, Վ. Ս. Կալմացկին քննարկվող լիազորությունը համարում է ոչ թե գործառության, այլ՝ առարկայական-գործառության, որի իրականացման արդյունքում վերացվում (լիկվիդացվում) է երկրորդ ատյանի դա-

¹ *Տե՛ս Հովհաննիսյան Վ.Վ., Վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, Եր.: ԵՊՀ հրատ., 2013, էջեր 283-284:*

տարանի գործունեության օբյեկտը կամ առարկան¹: Իսկ Յու. Ա. Տիմոֆեևը նշում է, որ վերաքննիչ բողոք բերողի կողմից բողոքը հետ վերցնելու հետևանքով գործի վարույթը կարճելը վերաքննության կարգով վերանայվող դատական ակտի վրա ներգործելու ձև է, որի արդյունքում վերաքննիչ դատարանն իրացնում է իրեն վերապահված առարկայական լիազորությունները²:

Համաձայն չլինելով վերը նշված տեսակետի հետ՝ Վ. Վ. Հովհաննիսյանը նշում է, որ վերաքննիչ բողոքից հրաժարվելու հիմքով վերաքննիչ վարույթը կարճելու դեպքում վերաքննիչ դատարանն առաջին ատյանի դատարանի դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը չի ստուգում: Ուստի այս դեպքում գործի վարույթը կարճելու լիազորությունը զուտ գործառնության նշանակություն ունի: Բողոք բերած անձի կողմից վերաքննիչ բողոքից հրաժարվելու դեպքում վերանում է վերաքննության առարկան՝ պահանջը: Իսկ եթե բացակայում է վերաքննության առարկան, ապա չի կարող խոսք գնալ առարկայական լիազորությունների իրականացման մասին³:

Վերաքննիչ բողոքից հրաժարումը (եթե դատական ակտը չի բողոքարկվել այլ անձանց կողմից) հանգեցնում է գործի վարույթի կարճման: Այստեղ շատ կարևոր է, որ վերաքննիչ դատարանը բողոքից հրաժարվող գործին մասնակցող անձին նախապես բացատրի վերաքննիչ բողոքից հրաժարման իրավական հետևանքները⁴:

¹ *Տե՛ս Կալմազկիյ Բ.Տ. Суд второй инстанции в советском гражданском процессе. Уфа, 1978, էջեր 46-47:*

² *Տե՛ս Կիմոֆեև Կ.Ս. Полномочия суда второй инстанции в гражданском процессе: современные проблемы. Дисс. ... к.ю.н., Екатеринбург, 2008, էջեր 101-102:*

³ *Տե՛ս Հովհաննիսյան Վ.Վ., Վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, Եր.: ԵՊՀ հրատ., 2013, էջեր 285-286:*

⁴ *Տե՛ս Կիմոֆեև Կ.Ս. Полномочия суда второй инстанции в гражданском процессе: современные проблемы. Дисс. ... к.ю.н., Екатеринбург, 2008, էջեր 77-78:*

ՔԴՕ-ի 220-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի և նույն օրենսգրքի 220.1-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի համադրված վերլուծությունից հետևում է, որ քննարկվող լիազորությունը կիրառելի է թե՛ գործն ըստ էության լուծող, թե՛ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքներ քննելիս:

Հետևաբար ՔԴՕ-ի 215-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում «վճիռ» բառը անհրաժեշտ է փոխարինել «դատական ակտ» բառերով:

Հետաքրքրական է նաև այն հարցը, թե ինչու է օրենսդիրը սահմանափակել վերաքննիչ բողոքը հետ վերցնելու իրավունքը՝ սահմանելով, որ այն կարող է իրականացվել մինչև վերաքննիչ դատարանի կողմից գործի քննությունը սկսվելը:

Գտնում ենք, որ օրենսդրի վերը նշված մոտեցումը համահունչ չէ քաղաքացիական դատավարությունում գործող տնօրինչականության սկզբունքին, որը կիրառվում է քաղաքացիական դատավարության բոլոր փուլերում:

Քննարկվող սկզբունքի էությունը կայանում է նրանում, որ գործին մասնակցող անձինք իրենց դատավարական իրավունքները պետք է տնօրինեն սեփական հայեցողությամբ և ինքնուրույնաբար¹: Տնօրինչականության սկզբունքին համահունչ՝ ՔԴՕ-ի 32-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ հայցվորը հայցից կարող է հրաժարվել առաջին ատյանի դատարանում մինչև դատաքննության ավարտը:

Գտնում ենք, որ վերաքննիչ բողոքը հետ վերցնելը, հայցից հրաժարվելու պես, պետք է թույլատրվի մինչև վերաքննիչ դատարանի կողմից գործի քննությունն ավարտելու պահը:

Նման մոտեցումն առավել համահունչ կլինի տնօրինչականության սկզբունքին և բողոք բերած անձին հնարավորություն կտա առավել լիարժեք տնօրինել իր դատավարական իրավունքները:

¹ *Տե՛ս Պետրոսյան Ռ.Գ., Հայաստանի քաղաքացիական դատավարություն - 3-րդ հրատ., - Եր., ԵՊՀ հրատ., 2007, էջեր 174-175:*

Վերաքննիչ բողոքը վերադարձնելը. Վերաքննիչ բողոքը վերադարձնելու հիմքերը սահմանված են ՔԴՕ- 213-րդ հոդվածում: Դրանք հետևյալն են.

- չեն պահպանվել ՔԴՕ-ի 210-րդ հոդվածի պահանջները,
- վերաքննիչ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո և միջնորդություն չի պարունակում բաց թողած ժամկետը վերականգնելու մասին, կամ նման միջնորդությունը չի բավարարել դատարանը,
- մինչև վերաքննիչ դատարանի կողմից բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելը բողոք բերած անձից բողոք է ստացվել այն հետ վերցնելու մասին.
- բողոքը ներկայացրել է այն անձը, ով ստորադաս դատարանի դատական ակտը բողոքարկելու իրավունք չունի,
- բողոքարկվել է այն դատական ակտը, որը ենթակա չէ բողոքարկման,

- գործին մասնակցող անձանց միջև առկա է վերաքննության իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնություն, և նման համաձայնություն կնքած մյուս կողմը չի համաձայնվել գործը վերաքննիչ դատարանում քննելու վերաբերյալ:

ՔԴՕ-ի 213-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե չեն պահպանվել ՔԴՕ-ի 210-րդ հոդվածի պահանջները, այսինքն՝ վերաքննիչ բողոքի ձևին և բովանդակությանը, ինչպես նաև՝ բողոքին կից ներկայացվող փաստաթղթերի կազմին ներկայացվող պահանջները: Այս դեպքում բողոք բերող անձին տրվում է երկշաբաթյա ժամկետ՝ բողոքում առկա թերությունները վերացնելու և այն կրկին վերաքննիչ դատարան ներկայացնելու համար:

Վերաքննիչ բողոքը ՔԴՕ-ի 213-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով ենթակա է վերադարձման, եթե.

1) Վերաքննիչ բողոքում նշված չեն. **ա)** այն դատարանի անունը, որին հասցեագրվում է վերաքննիչ բողոքը, **բ)** բողոք բերող անձի և

գործին մասնակցող մյուս բոլոր անձանց անունները (անվանումները), **գ)** այն դատարանի անվանումը, որի կայացրած վճռի դեմ բերվում է վերաքննիչ բողոքը, **դ)** գործի համարը, **ե)** բողոքարկվող վճռի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը:

Վերը նշված բոլոր բացթողումներն ունեն ոչ էական և խիստ ձևական բնույթ: Ուստի արդարացված է օրենսդրի այն մոտեցումը, որ նման խախտումների առկայության դեպքում բողոք բերող անձին պետք է տրվի թերությունները վերացնելու ժամկետ և բողոքը կրկին ներկայացնելու հնարավորություն:

Հարկ է նշել, որ ՔԴՕ-ի 210-րդ հոդվածը հավասարապես վերաբերում է ինչպես վճիռների, այնպես էլ՝ միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքներին, ուստի այդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում օգտագործված «վճիռ» բառն անհրաժեշտ է փոխարինել «դատական ակտ» բառերով:

2) Վերաքննիչ բողոքում բացարձակապես առկա չեն.

- նշումներ՝ առաջին ատյանի դատարանի կողմից ենթադրաբար խախտված նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի մասին, կամ

- հիմնավորումներ առ այն, որ բողոքում մատնանշված նորմերը խախտվել են, և որ այդ խախտումներն ազդել են գործի ելքի վրա:

Այս դեպքում գործ ունենք ակնհայտ անհիմն վերաքննիչ բողոքի հետ, որտեղ բողոք բերած անձն **ընդհանրապես չի մատնանշել** այն իրավանորմերի խախտումները, որոնց կապակցությամբ բերվել է վերաքննիչ բողոքը և/կամ **չի փորձել հիմնավորել այդ խախտումների առկայությունը:**

Հարց է առաջանում. որքանո՞վ է հիմնավորված նման ակնհայտ անհիմն բողոք բերած անձին լրացուցիչ երկշաբաթյա ժամկետ տրամադրելը՝ բողոքում առկա «թերությունները» վերացնելու համար: Այս դեպքում վերաքննիչ դատարանը, վերադարձնելով վերաքննիչ բողոքը և թերությունների շտկման համար երկշաբաթյա ժամկետ տրամադրելով, ըստ էության երկու շաբաթով երկարաձգում է բողոք

ներկայացնելու համար նախատեսված մեկամսյա ժամկետը:

Նման իրավիճակի հետ մենք համաձայնվել չենք կարող, և գտնում ենք, որ վերաքննիչ բողոքում բողոքի հիմքերի և/կամ հիմնավորումների իսպառ բացակայությունը չպետք է հանգեցնի վերաքննիչ բողոքի վերադարձման և լրացուցիչ ժամկետի տրամադրման:

Ավելին, ՔԴՕ-ի 210-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը սահմանում է, որ վերաքննիչ բողոքի հիմնավորումները պետք է պարունակեն.

- հղումներ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի այն որոշումների վրա, որոնք վերաքննիչ բողոք բերած անձը վերաբերելի է համարում,

- վերը նշված դատական ակտերի և բողոքարկվող դատական ակտի համեմատական վերլուծություն՝ մեջ բերելով դրանց հակասող մասերը:

ՔԴՕ-ի 213-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը սահմանում է, որ վերաքննիչ բողոքը ենթակա է վերադարձման, եթե չեն պահպանվել ՔԴՕ-ի 210-րդ հոդվածի պահանջները (հետևաբար՝ նաև վերը նշված պահանջները):

Մինչդեռ մեր խորին համոզմամբ, վերաքննիչ բողոքի վերադարձման հիմքում երբևէ չի կարող դրվել այն հանգամանքը, որ բողոքը չի պարունակում ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների հղումներ և համեմատական վերլուծություններ:

3) Վերաքննիչ բողոքում առկա չէ բողոք բերած անձի պահանջը կամ բողոքին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը: Այս թերությունները բովանդակային առումով նույնպես դասվում են ոչ էական թերությունների շարքին, որոնց վերացման համար բողոք բերող անձին լրացուցիչ ժամկետի տրամադրումը նպատակահարմար և հիմնավորված է: Պետք է նշել, որ, համաձայն ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշման՝

- դատական ակտի բողոքարկման ծավալի առումով վերաքննիչ դատարանը կաշկանդված է բողոք բերած անձի պահանջով և չի կարող քննարկման առարկա դարձնել առաջին ատյանի դատարանի վճռի այն մասը, որը չի բողոքարկվել¹,

- կիրառման ենթակա առարկայական լիազորության ընտրության առումով վերաքննիչ դատարանը կաշկանդված չէ բողոք բերած անձի պահանջով և կարող է կիրառել իր առարկայական լիազորությունները՝ անկախ այն հանգամանքից, թե կոնկրետ որ լիազորության կիրառումն է պահանջել բողոք բերած անձը²:

4) Վերաքննիչ բողոքը ստորագրված չէ բողոք բերած անձի կամ նրա ներկայացուցչի կողմից: Այս հիմքով վերաքննիչ բողոքը ենթակա է վերադարձման այն դեպքում, երբ.

- բողոքն ընդհանրապես ստորագրված չէ,

- բողոքը ստորագրված է այնպիսի անձի կողմից, որի պատշաճ լիազորությունները հավաստող ապացույց (օրենքով սահմանված ձևով տրված լիազորագիր, որը ժամկետանց չէ³ և պարունակում է դատական ակտերը բողոքարկելու հատուկ լիազորություն) գործում առկա չէ և վերաքննիչ բողոքին կից չի ներկայացվել:

5) Վերաքննիչ բողոքին կից ներկայացված չեն բողոքի պատճենները դատական ակտ կայացրած դատարանին և գործին մասնակցող այլ անձանց ուղարկելու մասին ապացույցները:

6) Վերաքննիչ բողոքին կից ներկայացված չեն պետական տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցներ կամ պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու վերաբերյալ միջնորդություն:

¹ Տե՛ս թիվ ԵԿԴ/2082/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.06.2012թ. որոշումը:

² Տե՛ս թիվ ՏԴՅ/0026/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.06.2009թ. որոշումը:

³ ՀՀ վճռաբեկ դատարանն իր թիվ ԵԿԴ/0139/02/13 քաղաքացիական գործով 30.04.2014թ. կայացված որոշմամբ վերադարձրել է Լևիկ և Մարգիս Աղաբեկյանների վճռաբեկ բողոքը՝ բողոք բերած անձ Լևիկ Աղաբեկյանի ներկայացուցչի լիազորագիրը ժամկետանց լինելու հիմնավորմամբ:

Տրամաբանական է որպես վերաքննիչ բողոքը վերադարձնելու հիմք դիտարկել նաև այն դեպքերը, երբ վերը նշված միջնորդությունները **թեև ներկայացվել են բողոքին կից, սակայն մերժվել են վերաքննիչ դատարանի կողմից**: Թեև այս հարցը ՔԴՕ-ում ուղղակի կարգավորում չի ստացել, սակայն դատական պրակտիկայում ներկայումս կիրառվում է հենց այդ մոտեցումը¹: Ավելին, նման դեպքերում վերաքննիչ դատարանը բողոք բերած անձին տրամադրում է երկշաբաթյա ժամկետ՝ վերաքննիչ բողոքում առկա թերությունները վերացնելու (պետական տուրքը վճարելու) համար: Ընդ որում, չի բացառվում, որ բողոք բերող անձը պետական տուրքը վճարելու փոխարեն կրկին ներկայացնի պետական տուրքի հետ կապված արտոնություն կիրառելու վերաբերյալ միջնորդություն (այս անգամ՝ հիմնավորված), որն էլ կարող է բավարարվել վերաքննիչ դատարանի կողմից²:

Պետք է նշել, որ պետական տուրքը չվճարելու հիմքով վերաքննիչ բողոքը կարող է վերադարձվել միայն այն դեպքում, երբ պետական տուրքի վճարումն օրենքով պարտադիր է: «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով սահմանված են դատարաններում (այդ թվում նաև՝ վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում) պետական տուրքից ազատման դեպքերը: Բացի այդ, ՀՀ վճռաբեկ դատարանն ամրագրել է, որ միջանկյալ դատական ակտերի բողոքարկման դեպքում պետական տուրք չի վճարվում³: Նույն մոտեցու-

մը որդեգրել է նաև ՀՀ դատարանների նախագահների խորհուրդը⁴:

Խոսելով վերաքննիչ բողոքը վերադարձնելու լիազորության մասին՝ անհրաժեշտ է քննարկել ևս մեկ ուշագրավ խնդիր: ՔԴՕ-ի 213-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ վերաքննիչ բողոքը վերադարձնելու դեպքում վերաքննիչ դատարանը պարտավոր է իր որոշման մեջ մատնանշել բողոքում թույլ տրված բոլոր առերևույթ խախտումները:

Այդուհանդերձ, չի բացառվում, որ վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը վերադարձնելիս սպառիչ չմատնանշի վերաքննիչ բողոքում տեղ գտած բոլոր թերությունները: Արդյունքում, երկրորդ անգամ ներկայացված («շտկված») վերաքննիչ բողոքը կրկին կարող է պարունակել վերացման ենթակա թերություններ, **որոնք շտկելու հնարավորություն բողոք բերած անձին այլևս չի տրվի**, քանի որ ՔԴՕ-ի 213-րդ հոդվածի 3-րդ մասը հստակ և առանց որևէ բացառությունների սահմանում է, որ վերաքննիչ բողոքը կրկին ներկայացվելու դեպքում խախտումները վերացնելու համար նոր ժամկետ չի տրվում: ՔԴՕ-ն բողոք բերած անձին տալիս է վերաքննիչ բողոքում առկա թերությունները շտկելու միայն մեկ հնարավորություն:

Նման դեպքում բողոք բերող անձը ոչ իր մեղքով գրկվում է դատական ակտի բողոքարկման իրավունքից և իր դատական պաշտպանության իրավունքն արդյունավետ իրացնելու հնարավորությունից: Մինչդեռ ՔԴՕ-ն կամ որևէ այլ իրավական ակտ պատասխան չեն տալիս այն հարցին, թե նման դեպքերում ինչպես պետք է վարվի վերաքննիչ դատարանը: Գտնում ենք, որ քննարկվող դեպքերի համար օրենսդրի կողմից պետք է սահմանվի տարբերակված մոտեցում:

Ավելին, երբեմն վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու փուլում կարող է չնկատել բողոքում առկա ձևական բնույթ կրող և վերացվելի թերությունները, սակայն դրանք

¹ Տե՛ս նաև ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 29.01.2013թ. № 129 որոշման 13-րդ կետը:

¹ Տե՛ս օրինակ թիվ ԵԱԴԴ/0134/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.08.2014թ. որոշումը և թիվ ԵԱՆԴ/1530/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.02.2011թ. որոշումը՝ վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին:

² Տե՛ս օրինակ թիվ ԵԱՆԴ/1530/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.03.2011թ. որոշումը՝ վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին:

³ Տե՛ս նաև թիվ 3-365(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 14.04.2008թ. որոշումը:

կարող են ի հայտ գալ գործի քննության ընթացքում: Այս դեպքում վերաքննիչ դատարանը չի կարող այդ թերությունների առկայության հիմքով մերժել վերաքննիչ բողոքը, քանի որ դա նույնպես կհանդիսանա անձի դատական պաշտպանության իրավունքի անհիմն սահմանափակում (թերությունը վերաքննիչ դատարանի կողմից ժամանակին նկատվելու և մատնանշվելու դեպքում այն կարող էր շտկվել բողոք բերող անձի կողմից): Մյուս կողմից, տրամաբանությունից դուրս է վերաքննիչ բողոքի բավարարումն այն դեպքում, երբ սովյալ բողոքն օրենքով ընդհանրապես վարույթ ընդունման ենթակա չէր: Պետք է նշել, որ ՔԴՕ-ն չի նախատեսում գործի քննության ընթացքում հայտնաբերված ձևական թերությունների վերացման մեխանիզմներ, ինչը, մեր կարծիքով, օրենսդրական լուրջ թերություն է և շտկման կարիք ունի:

Պետք է նշել նաև, որ դատական պրակտիկայում բավականին տարածված է հետևյալ արատավոր երևույթը, երբ բողոք բերած անձն իր բողոքում դիտավորյալ թույլ է տալիս որևէ թերություն (օրինակ՝ չի ներկայացնում պետական տուրքի վճարման անդորրագիրը), ինչը հանգեցնում է վերաքննիչ բողոքի վերադարձի:

Ստանալով թերությունների վերացման երկշաբաթյա ժամկետ՝ բողոք բերող անձը կրկին ներկայացված վերաքննիչ բողոքում ոչ միայն ուղղում է բողոքում թույլ տրված թերությունները, այլև՝ երբեմն փոփոխում և լրացնում է վերաքննիչ բողոքի հիմքերը և հիմնավորումները: Նման դեպքերում վերաքննիչ դատարանը բողոքը քննում է ոչ թե սկզբնական, այլ՝ լրացված տեսքով¹:

Պատահում են նաև դեպքեր, երբ բողոք բերած անձն իր բողոքում դիտավորյալ չի նշում բողոքի որևէ հիմք կամ կամ հիմնավորում՝ խնդրելով վերադարձնել վերաքննիչ բողոքը և իրեն տրամադրել երկշաբաթյա ժամկետ՝ պատշաճ բողոք ներկայացնելու համար: Վերաքննիչ բողոքն այս դեպքում վերադարձվում է ՔԴՕ-ի 213-րդ

¹ Որպես նման իրավիճակի օրինակներ՝ կարելի է վկայակոչել թիվ ԵԱՔԴ/1548/02/12 և ԵԿԴ/2138/02/10 քաղաքացիական գործերը:

հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով, այն է՝ վերաքննիչ բողոքը չի համապատասխանում ՔԴՕ-ի 210-րդ հոդվածի պահանջներին (քանի որ իսպառ բացակայում են բողոքի հիմքերն ու հիմնավորումները): Բողոք բերող անձին տրամադրվում է երկշաբաթյա ժամկետ՝ բողոքում առկա թերությունները վերացնելու համար, իսկ բողոք բերած անձն էլ երկու շաբաթում շարադրում է իր բողոքի հիմքերը և հիմնավորումները և բողոքը կրկին ներկայացնում է դատարան¹:

Այսպիսով, օգտագործելով գոյություն ունեցող թերի իրավակարգավորումը, բողոք բերած անձը կարողանում է շահել դատական ակտի բողոքարկման լրացուցիչ երկշաբաթյա ժամկետ

Գտնում ենք, որ նման իրավիճակները բացառելու համար անհրաժեշտ է.

1) ՔԴՕ-ի 213-րդ հոդվածում ամրագրել նորմ, համաձայն որի՝ վերաքննիչ բողոքը պետք է քննվի միայն սկզբնապես ներկայացված հիմքերի և հիմնավորումների շրջանակներում: Թերությունների վերացումից հետո կրկին ներկայացված վերաքննիչ բողոքի հիմքերը և հիմնավորումները (եթե դրանք լրացվել են) վերաքննիչ դատարանի կողմից չպետք է հաշվի առնվեն:

2) Փոփոխել ՔԴՕ-ի իրավակարգավորումն այնպես, որ վերաքննիչ բողոքում բողոքի հիմքերի և/կամ հիմնավորումների իսպառ բացակայության դեպքում, բողոք բերած անձին չտրամադրվի երկշաբաթյա ժամկետ՝ բողոքում առկա թերությունները վերացնելու (բողոքը հիմնավորելու) համար: Վերաքննիչ բողոքում բողոքի հիմքերի և/կամ հիմնավորումների իսպառ բացակայությունը ՔԴՕ-ում կարող է սահմանվել որպես՝

- վերաքննիչ բողոքն առանց լրացուցիչ ժամկետի տրամադրման վերադարձնելու հիմք,
- վերաքննիչ բողոքի վարույթ ընդունելը մերժելու հիմք,

¹ Որպես նման իրավիճակի օրինակ՝ կարելի է վկայակոչել թիվ ԵՄԴ/0054/02/13 քաղաքացիական գործը:

- վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու, արագացված (գրավոր) ընթացակարգով քննելու և ըստ էության մերժելու հիմք:

Անդրադառնալով գրավոր վերաքննության գաղափարին՝ նշենք, որ Ե. Ա. Բորիսովան ոչ լրիվ վերաքննության մոդելի պայմաններում որոշ դեպքերում թույլատրելի է համարում վերաքննիչ բողոքի քննությունն առանց դատական նիստ հրավիրելու (գրավոր ընթացակարգով)՝ վերաքննիչ դատարանում գործերի քննության ընթացակարգի պարզեցման և դատավարական ժամկետների խնայման նպատակով¹: Քննադատելով Ե. Ա. Բորիսովայի տեսակետը՝ Յու. Ա. Տիմոֆեևը նշում է, որ գրավոր վերաքննության գաղափարը կասկածի տակ է դնում վերաքննիչ դատարանում քաղաքացիական դատավարության հիմնարար սկզբունքների պահպանության հարցը²:

§ 3. Վերաքննիչ դատարանի գործառնության լիազորությունների հետ կապված մի շարք արդի հիմնախնդիրներ

Մասնավոր որոշումների կայացում. Իրավաբանական գրականության մեջ վերաքննիչ դատարանի գործառնության լիազորությունների շարքում առանձնացնում են նաև պրոֆիլակտիկ (կանխարգելիչ) լիազորությունները, որոնք ուղղված են քաղաքացիական դատավարությունում հնարավոր նոր իրավախախտումները կանխելուն և բացառելուն³: Վերաքննիչ դատարանի պրոֆիլակտիկ լիազորությունների թվին է դասվում մասնավոր որոշումների կայացումը: Հարկ է նշել, որ ՔԴՕ-ն վերաքննիչ դատարանին պրոֆիլակտիկ

¹ Տե՛ս **Борисова Е.А.** Проверка судебных актов по гражданским делам. М.: Изд-во Городец, 2006, էջ 103:

² Տե՛ս **Тимофеев Ю.А.** Полномочия суда второй инстанции в гражданском процессе: современные проблемы. Дисс. ... к.ю.н., Екатеринбург, 2008, էջ 77:

³ Տե՛ս **Пучинский В.К.** Кассационное производство в советском гражданском процессе. М., 1973, էջ 25:

(կանխարգելիչ) լիազորություններով չի օժտել¹:

Մասնավոր որոշումները ռուսական գրականության մեջ անվանվում են նաև հատուկ որոշումներ, քանի որ դրանք ուղղված են ոչ թե քաղաքացիական գործի լուծմանը, այլ հետապնդում են հատուկ՝ գործի քննության ընթացքում թույլ տրված իրավախախտումները բացահայտելու և հետագայում դրանց կրկնությունը կանխելու նպատակ²:

Մասնավոր (հատուկ) որոշումներն իրավաբանական գրականության մեջ բնութագրվում են որպես դատարանի կողմից գործի դատական քննության ընթացքում հայտնաբերված օրենքի առանձին էական խախտումներին արձագանքելու եղանակ: Ընդ որում, այդ իրավախախտումները կարող են կատարված լինել ինչպես առանձին պաշտոնատար անձանց, այնպես էլ՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց կողմից³: Ընդ որում, պարտադիր չէ, որ այդ սուբյեկտները հանդիսանան գործին մասնակցող անձինք:

Մասնավոր որոշումներն ունեն մեծ դեր՝ իրավախախտումների դեմ պայքարի, օրինականության ամրապնդման և տարբեր բացասական երևույթների վերացման հարցում: Այդ որոշումների մեծ դերը և դրանց ընդունման անհրաժեշտությունը բազմիցս շեշտվել է նաև ՌԴ Գերագույն դատարանի կողմից⁴:

Մասնավոր որոշումների նախազգուշական բնույթը բարձրացնում է դատարանի հեղինակությունը և դերը՝ օրինականության

¹ Տե՛ս **Հովհաննիսյան Վ.Վ.**, Վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, Եր.: ԵՊՀ հրատ., 2013, էջեր 295-296:

² Տե՛ս **Юдельсон К.С.** Основные задачи и формы деятельности суда первой инстанции в советском гражданском процессе. // Краткая антология уральской процессуальной мысли: 55 лет кафедре гражданского процесса Уральской государственной юридической академии, էջ 63:

³ Տե՛ս **Гражданский процесс: учебник / Отв. ред. В. В. Ярков.** - 8-е изд., перераб. и доп., 2012, էջ 387:

⁴ Տե՛ս **Гражданское процессуальное право: Учебник / Под ред. М. С. Шакарян. М., 2004, էջ 412:**

ամբապնդման և տնտեսական բնույթ ունեցող իրավախախտումների (կեղծ սնանկություն, «ապօրինի սխեմաների» օգտագործման միջոցով կազմակերպությունների զավթում և այլն) կանխման հարցում¹:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը ստուգելիս վերադաս դատարանը կարող է հայտնաբերել իրավունքի նորմերի խախտումներ, որոնք հանգեցրել են տվյալ քաղաքացիաիրավական վեճի առաջացմանը կամ նյութական կամ դատավարական նորմերի այնպիսի խախտումներ, որոնք չեն ազդել գործի ելքի վրա և դատական ակտի բեկանման համար հիմք չեն հանդիսանում: Այսպիսի խախտումներին դատարանը պետք է արձագանքի մասնավոր որոշումների կայացման միջոցով²: Պետք է նշել, որ եթե խոսքը վերաբերում է ստորադաս դատարանի կողմից թույլ տրված սխալներին, ապա դրանք վերադաս դատարանի կողմից կարող են մատնանշվել ինչպես գործը լուծող (բողոքի ըստ էության քննության արդյունքում կայացված), այնպես էլ՝ հատուկ այդ նպատակով կայացված մասնավոր որոշման մեջ: Ստորադաս դատարանների թույլ տված սխալները մատնանշվում են՝ դրանց կրկնությունը հետագայում բացառելու նպատակով³:

Այս կապակցությամբ Ի. Մ. Ջայցեվը նշում է, որ մասնավոր որոշումների կայացումը միայն վերադաս դատարաններին պատկանող բացառիկ լիազորություն է¹: Իսկ Ն. Պ. Ելիզարովը նշում է, որ

¹ *Տե՛ս Գրյազեա Վ.Վ. Апелляция в арбитражном процессе. Дисс. ... к.ю.н., Москва, 2005, էջ 146:*

² *Տե՛ս Կիմոֆեև Յ.Օ. Полномочия суда второй инстанции в гражданском процессе: современные проблемы. Дисс. ... к.ю.н., Екатеринбург, 2008, էջ 176:*

³ *Տե՛ս Հովհաննիսյան Վ.Վ., Վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, Եր.: ԵՊՀ հրատ., 2013, էջեր 289-290; Կուչինսկի Վ.Կ. Кассационное производство в советском гражданском процессе. М., 1973, էջ 25:*

¹ *Зайцев И. М. Кассационные определения в советском гражданском процессуальном праве. Саратов, 1967, էջ 7:*

մասնավոր որոշումները նպաստում են դատարանների աշխատանքում առկա սխալների վերացմանը և դատարանների կողմից օրենքի տառի խստիվ պահպանմանը¹:

Այսպիսով, մասնավոր որոշումները բնորոշվում են որպես գործի քննության ընթացքում պաշտոնատար անձանց և առանձին քաղաքացիների կողմից թույլ տրված իրավախախտումների, ինչպես նաև հիմնարկների, ձեռնարկությունների, կազմակերպությունների ու դրանց միավորումների և հասարակական կազմակերպությունների գործունեության մեջ էական բացթողումների և թերությունների բացահայտման կապակցությամբ կայացվող ակտեր: Ընդ որում, մասնավոր որոշումները կարող են վերաբերել թե՛ գործին մասնակցող, թե՛ գործին չմասնակցող սուբյեկտներին²:

Ինչպես իրավագիտորեն նշում է Վ. Վ. Հովհաննիսյանը, ՀՀ դատավարական օրենսդրությունը կառուցված է մասնավոր հարաբերություններին պետության միջամտությունը սահմանափակելու, ինչպես նաև՝ տնօրինչականության սկզբունքների հիման վրա: ՀՀ դատարանները կարող են քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավունքների պաշտպանությանը և իրավախախտումների վերացմանը ձեռնամուխ լինել միայն շահագրգիռ անձանց դիմումով:

ԴՕ-ի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական և վարչական գործերով դատարանը դատավճռի, վճռի կամ որոշման հետ միաժամանակ համապատասխան հիմքերի առկայության դեպքում պարտավոր է կայացնել լրացուցիչ որոշում, որով պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի համապատասխան պաշտոնատար անձանց ուշադրությունն է հրավիրում դատա-

¹ *Елизаров Н. П. Предупреждение и устранение нарушений гражданского законодательства областным (краевым) судом. М.: Юрид. лит., 1977, էջ 9:*

² *Տե՛ս Հովհաննիսյան Վ.Վ., Վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, Եր.: ԵՊՀ հրատ., 2013, էջեր 290-291:*

կան քննության ժամանակ ի հայտ եկած այն էական խախտումների վրա, որոնք թույլ են տրվել վարչական կամ քրեական գործով մինչ-դատական վարույթի ընթացքում:

ՀՀ օրենսդրությունը վերաքննիչ դատարանին (ինչպես նաև՝ ընդհանուր իրավասության դատարանին) չի վերապահել քաղաքացիական գործերով մասնավոր որոշումներ կայացնելու լիազորություն¹: Վ. Վ. Հովհաննիսյանը նման մոտեցումը համարում է ճիշտ, երբ խոսքը վերաբերում է առաջին աստիճանի դատարանում գործի քննությանը չմասնակցած անձանց վերաբերյալ որոշում կայացնելուն: Միննույն ժամանակ, Վ. Հովհաննիսյանը գտնում է, որ վերաքննիչ դատարանը պետք է արձագանքի առաջին աստիճանի դատարանի կողմից թույլ տրված, սակայն վճռի բեկանման համար հիմք չհանդիսացող խախտումներին: Ընդ որում, դա պետք է արվի վճռի վերանայման արդյունքում կայացվող որոշման շրջանակներում: Այստեղ խոսքը գնում է ոչ թե առաջին աստիճանի դատարանի նկատմամբ սանկցիաներ կիրառելու կամ նրան ցուցումներ տալու, այլ՝ տեղի ունեցած խախտումներին արձագանքելու և դրանք արձանագրելու մասին: Խոսքը վերաբերում է օրինակ դատավորի կողմից գործի քննության անհարկի հետաձգմանը կամ վարույթի անհարկի կասեցմանը²:

Համեմատության համար նշենք, որ ՎՂՕ-ի 128-րդ հոդվածով նախատեսված է լրացուցիչ որոշում կայացնելու ՀՀ վարչական դատարանի իրավունքը: Եթե գործի քննության ընթացքում վարչական դատարանը պարզում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը թույլ է տվել ֆիզիկական և իրավաբանական ան-

ձանց իրավունքների կոպիտ կամ պարբերական խախտումներ, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության կամ օրենքի այլ էական խախտումներ, ապա վարչական դատարանը վճռի հետ միաժամանակ կայացնում է լրացուցիչ որոշում, որով պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի համապատասխան պաշտոնատար անձի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ վերջինիս վերադասի ուշադրությունն է հրավիրում դատական քննության ժամանակ ի հայտ եկած այն էական խախտումների վրա, որոնք թույլ են տրվել վարչական գործով մինչդատական վարույթի ընթացքում:

Լրացուցիչ որոշումն ուղարկվում է խախտում թույլ տված պաշտոնատար անձի վերադասին (լիցենզավորող, արտոնագրող մարմին), իսկ դա չլինելու դեպքում՝ խախտում թույլ տված պաշտոնատար անձին, որը պարտավոր է որոշումը ստանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում, քննարկել այն:

ՎՂՕ-ի 147-րդ հոդվածով նախատեսված է ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի կողմից լրացուցիչ որոշում կայացնելու իրավունքը: Ընդ որում, վարչական վերաքննիչ դատարանն օժտված է լրացուցիչ որոշում կայացնելու իրավունքով միայն խիստ սահմանափակ դեպքերում:

Լրացուցիչ որոշումների կայացման իրավունքի կապակցությամբ ՔՂՕ-ի 360¹-րդ հոդվածը սահմանում է, որ դատարանը, համապատասխան հիմքերի առկայության դեպքում, դատավճռի կամ որոշման հետ միաժամանակ պարտավոր է կայացնել լրացուցիչ որոշում, որով պետական մարմնի համապատասխան պաշտոնատար անձանց ուշադրությունն է հրավիրում դատական քննության ժամանակ ի հայտ եկած այն էական խախտումների վրա, որոնք թույլ են տրվել քրեական գործով մինչդատական վարույթի ընթացքում: Լրացուցիչ որոշումն ուղարկվում է խախտում թույլ տված պաշտոնատար անձի վերադասին, իսկ այդպիսինը չլինելու դեպքում՝ խախտում թույլ տված պաշտոնատար անձին: Լրացուցիչ որոշումն ստացած պաշտոնատար անձը պարտավոր է որոշումը

¹ Պետք է նշել, որ ՔՂՕ-ի 115-րդ հոդվածով նախատեսված դատական սանկցիաներից մեկը՝ պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով գլխավոր դատախազին կամ Փաստաբանական պալատ դիմելը, իր էությունը բավականին նման է մասնավոր որոշման:

² Տե՛ս **Հովհաննիսյան Վ. Վ.**, *Վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում*, Եր.: ԵՊՀ հրատ., 2013, էջեր 291-292:

ստանալուց հետո՝ ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում, քննարկել այն և ձեռնարկել համապատասխան միջոցներ առկա խախտումները վերացնելու կամ նմանատիպ խախտումները բացառելու ուղղությամբ:

Վերոգրյալի հիման վրա Վ. Վ. Հովհաննիսյանն առանձնացնում է մասնավոր որոշման հետևյալ հատկանիշները.

- այն կայացվում է որևէ դատական ակտի (դատավճռի, վճռի կամ որոշման) հետ միաժամանակ. օրենքն առանձին մասնավոր որոշում կայացնելու հնարավորություն չի նախատեսում,

- համապատասխան հիմքերի առկայության դեպքում մասնավոր որոշման կայացումը դատարանի պարտականությունն է,

- մասնավոր որոշում կարելի է կայացնել միայն մինչև գործի դատական քննությունը թույլ տրված խախտումների բացահայտման կապակցությամբ,

- այն ուղղված է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց, որտեղ պետք է հիմնավորված լինի վերոնշյալ անձանց կողմից թույլ տրված օրինախախտումների փաստը,

- մասնավոր որոշումը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց համար սանկցիաներ և պարտադիր իրավական հետևանքներ չի առաջացնում, նրանք կրում են միայն մեկամսյա ժամկետում որոշումը քննարկելու պարտականություն,

- քննարկման արդյունքում արված եզրահանգումների կամ խախտումների կապակցությամբ ձեռնարկված միջոցառումների մասին դատարանին հայտնելու պարտականություն օրենքով պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համար նախատեսված չէ¹:

¹ Տե՛ս **Հովհաննիսյան Վ.Վ.**, *Վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում*, Եր.: ԵՊՀ հրատ., 2013, էջ 294:

Քննարկելով վերաքննիչ դատարանին մասնավոր (հատուկ) որոշումներ կայացնելու լիազորությամբ օժտելու նպատակահարմարությունը՝ գտնում ենք, որ նման լիազորության տրամադրումը չի կարող արդարացված լինել՝ հետևյալ պատճառաբանությամբ.

1) ՔԴՕ-ի 2-րդ հոդվածը սահմանում է, որ շահագրգիռ անձն իրավունք ունի դիմել դատարան՝ իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության նպատակով: Նույն հոդվածը սահմանում է, որ այլ անձանց իրավունքների, ազատությունների ու օրինական շահերի պաշտպանության համար դատարան դիմելու իրավունք ունեն միայն օրենքով նման իրավասությամբ օժտված անձինք: ՔԴՕ-ի 3-րդ հոդվածը սահմանում է, որ դատարանը քաղաքացիական գործը հարուցում է միայն հայցի կամ դիմումի հիման վրա:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր բազմաթիվ որոշումներում անդրադարձել է ՔԴՕ-ի 3-րդ և 131-րդ հոդվածներին և բազմիցս նշել է, որ դատարանը պարտավոր է քաղաքացիական գործը հարուցել միայն համապատասխան հայցի կամ դիմումի առկայության դեպքում, և հարուցված գործը քննել միմիայն այդ գործով ներկայացված հայցապահանջների շրջանակում¹:

Վերը նշված կանոնները հանդիսանում են դիսպոզիտիվության (տնօրինչականության) սկզբունքի հիմնաքարերը, իսկ քաղաքացիական դատավարությունն առաջին հերթին հիմնվում է հենց այդ սկզբունքի վրա: Դեռևս Ե. Վ. Վասկովսկին, բնութագրելով դիսպոզիտիվության սկզբունքը, նշում էր, որ «քաղաքացիական իրավունքների բնորոշ գիծը կայանում է նրանում, որ դրանց իրականացումը

¹ Տե՛ս թիվ ՄԴ3/0010/02/12, ԿԴ1/0809/02/10, ԵԿԴ/3430/02/09, ԱՎԴ/0470/02/10, ԵԿԴ/1487/02/08, 3-1401 (ՎԴ), ՇԴ1/0165/02/09, ԿԴ3/0099/02/09, ԵԱԴԴ/0638/02/08, ԵՇԴ/0110/02/08, ԵԱՆԴ/2534/02/08, ԼԴ/0423/02/08/370/, 3-1132(ՎԴ), 3-84(ՎԴ), ԼԴ/0409/02/08, ԵՄԴ/0630/02/08 և ԵԱԲԴ/1939/02/08 քաղաքացիական գործերով ՀՀ վճռաբեկ դատարանի կայացրած որոշումները:

լիովին կախված է այդ իրավունքների կրողներից»:

Դիսպոզիտիվության սկզբունքը ենթադրում է, որ դատարանը չպետք է զբաղվի համապատասխան հայց կամ դիմում չներկայացրած անձանց իրավունքների պաշտպանությամբ (այդ թվում նաև՝ մասնավոր որոշում ընդունելու եղանակով), քանի որ հակառակ դեպքում, դիսպոզիտիվության սկզբունքից բացի, կխախտվի նաև մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության սկզբունքը, որն ամրագրված է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի¹ 3-րդ հոդվածի 1-ին մասում:

Ավելին, պետք է հաշվի առնել, որ դատարանների խնդիրը ոչ թե իրավախախտների դեմ պայքարը, օրինականության պահպանումը և ընդհանուր վերահսկողությունն է, այլ՝ խախտված իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանությունը, իսկ ընդհանուր վերահսկողական լիազորություններով դատարաններն օժտված չեն:

Նմանապես, վերաքննիչ դատարանի խնդիրը չէ գործին մասնակցող կամ չմասնակցող անձանց կողմից մինչև քաղաքացիական գործի քննության սկսվելու թույլ տրված իրավախախտումների բացահայտումը և վերհանումը (եթե դրանք որևէ կերպ կապված չեն վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների հետ):

2) Վերաքննիչ դատարանը, որպես ընդհանուր իրավասության դատարանի դատական ակտերի օրինականությունը և հիմնավորվածությունը ստուգող մարմին, իրավունք ունի անդրադառնալ և գնահատական տալ ստորադաս դատարանի կողմից գործի քննության ընթացքում թույլ տրված խախտումներին, սակայն միայն վերաքննիչ բողոքի սահմաններում: Այդ գնահատականները պետք է շարադրված լինեն բողոքի ըստ էության քննության արդյունքում կա-

յացված որոշման մեջ:

Հակառակ դեպքում, եթե վերաքննիչ դատարանը անդրադառնա և գնահատական տա ընդհանուր իրավասության դատարանի կողմից թույլ տրված և գործի ելքի վրա չազդող, սակայն վերաքննիչ բողոքում չմատնանշված խախտումներին, ապա կստացվի, որ վերաքննիչ դատարանը դուրս է եկել բողոքի հիմքերի և հիմնավորումների շրջանակից:

3) Եթե անգամ մի պահ ընդունենք, որ մասնավոր որոշումների ընդունումը քաղաքացիական դատավարությունում անհրաժեշտ և իրավաչափ է, ապա այդ լիազորությունն առաջին հերթին պետք է վերապահվի ընդհանուր իրավասության դատարաններին, ովքեր իրականացնում են գործի ըստ էության քննություն և առավել արդյունավետ կերպով կարող են վերհանել գործին մասնակցող և չմասնակցող անձանց կողմից մինչև քաղաքացիական գործի քննությունը կատարված իրավախախտումները:

4) Պետք է հաշվի առնել, որ թե՛ քրեական դատավարությունում, թե՛ վարչական դատավարությունում մասնավոր որոշումների ընդունումը հանդիսանում է իրավաչափ և անհրաժեշտ միջոցառում: Մասնավորապես, թե վարչական, թե քրեական դատավարությունը կարգավորում են հանրային իրավահարաբերությունների հետ կապված դատավարական իրավահարաբերությունները: Պետությունն այստեղ հանդես է գալիս որպես հանրային իշխանության կրող, այլ ոչ թե՝ քաղաքացիական իրավունքի սուբյեկտ: Իսկ վարչական դատավարության կարգով քննվող գործերի կարգավորվող գույքային հարաբերությունների վրա քաղաքացիական օրենսդրությունը չի կիրառվում:

Այսպիսով, վերը նշվածից հետևում է, որ չնայած գրականության մեջ տեղ գտած կարծիքներին և մասնավոր որոշումների դրական նշանակությանն ու ազդեցությանը, այդուհանդերձ դրանց գոյությունը քաղաքացիական դատավարությունում արդարացված չէ, հետևաբար նման որոշումներ ընդունելու լիազորության վերա-

¹ *Ընդունվել է 05.05.1998թ., ուժի մեջ է մտել 01.01.1999թ.: Տե՛ս ՀՀՊՏ 1998/17(50), 10.08.1998թ.: Սյունիստ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կամ ՔՕ:*

պահումը վերաքննիչ դատարանին նույնպես արդարացված չէ:

Դատական ակտի պարզաբանում, դատական ակտում տեղ գտած վրիպակների, գրասխալների և թվաբանական սխալների ուղղումը. Թիվ ԼԴ/0376/02/09 քաղաքացիական գործով 28.11.2014թ. կայացված որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է վճռի պարզաբանման նշանակությանը և առանձնահատկություններին՝ փաստելով, որ վճռի պարզաբանումը վճռի եզրափակիչ մասում թերությունների վերացման միջոցներից մեկն է, որն ուղղված է շտկելու վճռում առկա անհստակություններն ու երկիմաստությունները՝ շարադրելով այն առավել պարզ և հասկանալի: Վճռի պարզաբանումն ուղղված է այնպիսի թերությունների վերացմանը, որոնք կարող են դժվարեցնել դատական ակտի կատարումը: Հետևաբար դատարանը պարզաբանում է, թե ինչ է նկատի ունեցել եզրափակիչ մասում և ինչպես պետք է այն հասկանալ:

Վճռի պարզաբանման անհրաժեշտությունը պետք է պայմանավորված լինի միայն վճռի եզրափակիչ մասում այնպիսի անհստակությունների առկայությամբ, որոնք կարող են երկակի մեկնաբանության տեղիք տալ, կամ դժվարացնել վճռի կատարումը¹:

Թիվ ԵԿԴ/3468/02/08 քաղաքացիական գործով կայացված որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն ուղղակիորեն սահմանել է, որ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը չունի իր կողմից կայացրած որոշումը պարզաբանելու լիազորություն²:

Վճռաբեկ դատարանի տվյալ որոշման հիմքում դրված է ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասը (պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով), ինչ-

պես նաև այն հանգամանքը, որ ՔԴՕ-ն վերաքննիչ դատարանին ուղղակիորեն չի վերապահել նման լիազորություն, իսկ դատավարական օրենսդրության անալոգիա կիրառվել չի կարող:

Ասվածը հավասարապես վերաբերում է նաև դատական ակտում տեղ գտած վրիպակների, գրասխալների և թվաբանական սխալների ուղղման լիազորությանը, որից վերաքննիչ դատարանը փաստորեն նույնպես զրկված է (նույն տրամաբանությամբ):

Ս. Գ. Մեղրյանն այս կապակցությամբ նշում է, որ օրենսդիրը թույլ է տալիս վերացնել միայն վճիռներում առկա թերությունները և թույլ չի տալիս ՔԴՕ-ի 142-րդ և 143-րդ հոդվածները կիրառել այլ դատական ակտերի (այդ թվում նաև՝ վերաքննիչ դատարանի որոշումների) նկատմամբ: Մինչդեռ կարող է օբյեկտիվ անհրաժեշտություն առաջանալ լրացնելու կամ պարզաբանելու ցանկացած դատական ակտ, ուղղելու դրանում տեղ գտած վրիպակները, գրասխալները և թվաբանական սխալները: Ընդ որում, դատական ակտում առկա թերությունների վերացման իրավունքը պետք է վերապահել տվյալ դատական ակտը կայացնող դատարանին: Ցանկացած դատարան պետք է ունենա իր իսկ կողմից կայացված դատական ակտը պարզաբանելու, դրանում տեղ գտած վրիպակները, գրասխալները և թվաբանական սխալներն ուղղելու հնարավորություն¹:

Հետագայում նման դիրքորոշում է հայտնել նաև Վ. Վ. Հովհաննիսյանը, նշելով, որ պետք է առաջնորդվել յուրաքանչյուր դատական ատյանին սեփական ակտերը պարզաբանելու լիազորություն ընձեռելու սկզբունքով²:

Վճիռը պարզաբանելու նպատակը դրա կատարման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելն է¹, իսկ վերաքննիչ դատարանի

¹ Տե՛ս Սեղրյան Ս. Գ., Առաջին ատյանի դատարանի քաղաքացիական գործերով դատական ակտերը, Եր.: ԵՊՀ հրատ., 2010, էջեր 182-183:

² Տե՛ս Հովհաննիսյան Վ. Վ., Վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, Եր.: ԵՊՀ հրատ., 2013, էջ 313:

¹ Տե՛ս Սեղրյան Ս. Գ., նշված աշխատ., էջեր 180-182:

¹ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2014թ. որոշումը՝ թիվ ԼԴ/0376/02/09 քաղաքացիական գործով:

² Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 02.04.2010թ. որոշումը՝ թիվ ԵԿԴ/3468/02/08 քաղաքացիական գործով:

որոշման պարզաբանումը կարող է պայմանավորված լինել ինչպես դրա կատարման, այնպես էլ՝ առաջին ատյանի դատարանում գործի նոր քննության համար անհրաժեշտ պայմանների ստեղծման անհրաժեշտությամբ: Վերաքննիչ դատարանի որոշումը կարող է պարզաբանվել մինչև առաջին ատյանի դատարանում գործի դատաքննությունը, եթե կայացվել է դատական ակտն ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելու մասին որոշում, մասնակիորեն կարճվել է գործի վարույթը կամ առանց քննության է թողնվել հայցը, կամ մինչև դրա կատարումը, եթե վերաքննիչ դատարանը բեկանել է դատական ակտը և հաստատել կողմերի հաշտության համաձայնությունը, մասնակիորեն բեկանել և փոփոխել է ստորադաս դատարանի դատական ակտը¹: Դատական ակտը պարզաբանելու պահանջ այն կայացնող դատարանին կարող է ներկայացվել կատարման վաղեմության ընթացքում²:

Լրացուցիչ որոշման կայացում. Ի տարբերություն առաջին ատյանի դատարանի, ՔԴՕ-ն վերաքննիչ դատարանին չի օժտել իր որոշումներում տեղ գտած թերությունները շտկելու, այդ թվում նաև՝ լրացուցիչ որոշում կայացնելու լիազորությամբ: Ս. Գ. Մեղրյանն առաջարկում է նախատեսել վերադաս դատական ատյանների որոշումները լրացուցիչ որոշմամբ լրացնելու հնարավորություն, մասնավորապես այն դեպքերում, երբ՝

1) վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանն ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանել է դատական ակտը և հաստատել է կողմերի հաշտության համաձայնությունը և չի լուծել դատական ծախսերի հարցը.

2) վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանն ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանել է դատական ակտը և կարճել է գործի վա-

¹ Տե՛ս **Հովհաննիսյան Վ.Վ.**, Վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, Եր.: ԵՊՀ հրատ., 2013, էջ 315:

² Տե՛ս **Մեղրյան Ս.Գ.**, Առաջին ատյանի դատարանի քաղաքացիական գործերով դատական ակտերը, Եր.: ԵՊՀ հրատ., 2010, էջ 181:

րույթն ամբողջությամբ կամ դրա մի մասը կամ առանց քննության է թողել հայցը (դիմումը) ամբողջությամբ կամ մասամբ և չի լուծել դատական ծախսերի հարցը.

3) վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանը մասնակիորեն բեկանել է դատական ակտը և, առանց գործը նոր քննության ուղարկելու, փոփոխել է այն՝ որոշում չկայացնելով հայտարարված պահանջներից որևէ մեկով կամ, լուծելով իրավունքի մասին հարցը, չնշելով հատկացվող գումարի չափը, բռնագանձման ենթակա գումարը կամ այն գործողությունները, որոնք պարտավոր է կատարել պարտապանը¹: Հետագայում նմանատիպ առաջարկությամբ է հանդես եկել նաև Վ. Վ. Հովհաննիսյանը²:

Հայցի ապահովում և դատական ակտի կատարման ապահովում. Հայցի ապահովման միջոցները քաղաքացիական դատավարությունում իրենցից ներկայացնում են դատարանի կողմից օպերատիվ կերպով և որոշակի ժամկետով կիրառվող սահմանափակումներ³, արգելքներ⁴, և պարտականություններ⁵, որոնք կոչված են ստեղծել համապատասխան երաշխիքներ՝ դատական ակտերի կատարումն ապահովելու համար¹:

Անդրադառնալով հայցի ապահովման ինստիտուտի դերին և նշանակությանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշումներում ամ-

¹ Տե՛ս **Մեղրյան Ս.Գ.**, Առաջին ատյանի դատարանի քաղաքացիական գործերով դատական ակտերը, Եր.: ԵՊՀ հրատ., 2010, էջեր 183-184:

² Տե՛ս **Հովհաննիսյան Վ.Վ.**, Վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, Եր.: ԵՊՀ հրատ., 2013, էջ 321:

³ Տե՛ս **Կրիշչենկո Լ.** Обеспечить - поддела. Главное - исполнить // ЭЖ-Юрист. 2003. № 8, էջ 35:

⁴ Տե՛ս **Կրիշչենկո Ե.** Решение - не фикция // ЭЖ-Юрист. 2003. № 35, էջեր 117-127:

⁵ Տե՛ս **Ռոջկովա Մ. Ա.** Об определениях арбитражных судов (их обжалование, вступление в законную силу и приобретаемых свойствах) // Вестник ВАС РФ. 2006. № 3, էջ 22:

¹ Տե՛ս **Թրեշնիկով Ա. Մ.** Обеспечительные меры в арбитражном процессе // Законодательство. 2003. № 8, էջ 15:

րագրել է, որ.

- հայցի ապահովման ինստիտուտի կարևորագույն նպատակն է՝ ապահովել որոշակի երաշխիքներ հարուցված հայցով ապագա վճռի կատարումն ապահովելու և հայցվորի օրինական շահերը ցանկացած բացասական հետևանքներից պաշտպանելու համար¹,

- հայցի ապահովման միջոցի կիրառման անհրաժեշտությունն առաջանում է այն դեպքում, երբ նման միջոց չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը կամ կարող է վատթարացնել վեճի առարկա գույքի վիճակը²:

Անդրադառնալով հայցի ապահովման միջոցների կիրառման հիմքերին՝ ՀՀ վարչական վերաքննիչ դատարանն իր որոշումներից մեկում ամրագրել է, որ ցանկացած դեպքում հայցի ապահովման միջոցի կիրառման համար պարտադիր պայման է դատական ակտի կատարմանը սպառնացող հանգամանքի առկայությունը³:

ՔԴՕ-ի 97-րդ հոդվածը սահմանում է, որ հայցի ապահովումը թույլատրվում է դատավարության ցանկացած փուլում: «Դատավարության ցանկացած փուլում» արտահայտությունը ենթադրում է, որ այն կիրառելի է նաև դատական ակտի վերաքննության ընթացքում: Սակայն, մեզ համար անհասկանալի պատճառներով, այս նորմը դատական պրակտիկայում խիստ սահմանափակ մեկնաբանություն է ստացել. հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը գործնականում կարող է ներկայացվել միայն ընդհանուր իրավասության դատարանին՝ մինչև գործի դատաքննության ավարտը: Իսկ վերաքննիչ դատարանի կողմից հայցի ապա-

հովման միջոցների կիրառումը ներկայումս գործնականում բացառված է: Նման միջնորդությունները դատական պրակտիկայում մերժվում են՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի մոտ համապատասխան լիազորության բացակայության հիմքով:

Այսպիսով, վերաքննիչ դատարանը ներկայումս փաստացի զրկված է կայացվելիք դատական ակտի կատարումն ապահովելու և այդ կապակցությամբ երաշխիքներ ստեղծելու հնարավորությունից:

Գտնում ենք, որ նման մոտեցումն արդարացված չէ, իսկ վերաքննիչ դատարանը պետք է օժտված լինի կայացվելիք դատական ակտի արդյունավետ կատարումը երաշխավորելու և ապահովելու լիազորությամբ: Ասվածը հիմնավորում ենք հետևյալով.

1) Հնարավոր է, որ հայցի ապահովման միջոցներ կիրառելու հիմքերը (դատական ակտի կատարմանը սպառնացող հանգամանքները) առաջացած լինեն դատական ակտի վերաքննության ընթացքում: Հնարավոր է նաև, որ առաջին ատյանի դատարանում գործի քննության ընթացքում հայցվորն ինչ-ինչ պատճառներով ներկայացրած չլինի համապատասխան միջնորդություն և ցանկանա այն ներկայացնել միայն վերաքննիչ դատարանում: Դատարանների կողմից իրականացվող արդարադատությունը ինչ-որ տեղ կկրի ձևական բնույթ, եթե նման միջնորդությունները վերաքննիչ դատարանի կողմից մերժվեն, իսկ դատական ակտն այդ պատճառով մնա անկատար:

Օրինակ՝ թիվ ԵԱՔԴ/1043/02/10 քաղաքացիական գործով կայացված վճռի վերաքննության ընթացքում հայցվորը վերաքննիչ դատարանին ներկայացրել է հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդություն: Այդ միջնորդությունը վերաքննիչ դատարանի 10.01.2014թ. արձանագրային որոշմամբ մերժվել է՝ համապատասխան լիազորությունների բացակայության հիմքով: Այնուհետև, պատասխանողի կողմից օտարվել են իրեն պատկանող բոլոր անշարժ գույքերը, ինչը լրջորեն խոչընդոտել է դատական ակտի կատարմանը:

¹ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 30.07.2010թ. որոշումը՝ թիվ ԵՇԴ/0550/02/09 քաղաքացիական գործով և ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2009թ. որոշումը՝ թիվ ՎԴ/0677/05/08 վարչական գործով:

² Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 27.04.2012թ. որոշումը՝ թիվ ԵՄԴ/1086/02/10 քաղաքացիական գործով:

³ Տե՛ս ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 12.12.2012թ. որոշումը՝ թիվ ՎԴ3/0321/05/12 վարչական գործով:

2) Պետք է հաշվի առնել նաև հետևյալը. ՔՂՕ-ի 97-րդ հոդվածն ինքնին չի պարունակում որևէ արգելք՝ վերաքննիչ դատարանի կողմից հայցի ապահովման միջոց կիրառելու հարցում: Հակառակը, ՔՂՕ-ի 97-րդ հոդվածը սահմանում է, որ հայցի ապահովումը թույլատրվում է **դատավարության ցանկացած փուլում:**

Համեմատության համար նշենք, որ ՔՂՕ-ի 33-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ կողմերը դատավարության ցանկացած փուլում կարող են գործն ավարտել հաշտության համաձայնությամբ: Իսկ ՔՂՕ-ի 36-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ իրավահաջորդություն հնարավոր է դատավարության ցանկացած փուլում: Ընդ որում, թե՛ հաշտության համաձայնության կնքումը, թե՛ իրավահաջորդությունը կարող են տեղի ունենալ ինչպես առաջին աստիճանի, այնպես էլ՝ վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում:

Հետևաբար, եթե օրենսդրի նպատակը լիներ հայցի ապահովման միջոցների կիրառման հնարավորությունը միայն առաջին աստիճանի դատարանով սահմանափակելը, ապա ՔՂՕ-ի 97-րդ հոդվածում կօգտագործվեր ոչ թե «դատավարության ցանկացած փուլում», այլ՝ «առաջին աստիճանի դատարանում գործի քննության ընթացքում» ձևակերպումը կամ համանման որևէ այլ ձևակերպում:

Վերաքննիչ դատարանը գրկված է նաև դատական ակտի կատարման ապահովման միջոցներ կիրառելու լիազորությունից: ՔՂՕ-ի 141-րդ հոդվածը սահմանում է, որ դատարանը, գործին մասնակցող անձանց դիմումով, վճռի կայացումից հետո կարող է միջոցներ ձեռնարկել վճռի կատարումն ապահովելու համար, մինչդեռ վերաքննիչ դատարանը նման լիազորություն չունի: Գտնում ենք, որ նման մոտեցումն արդարացված չէ: Ասվածը հատկապես վերաբերում է այն դեպքերին, երբ վերաքննիչ դատարանը բեկանել և փոփոխել է ընդհանուր իրավասության դատարանի վճիռը՝ իր որոշմամբ սահմանելով կողմերի միջև առկա նյութաիրավական վեճի բոլորովին այլ լուծում, քան սահմանված է դատարանի վճռով:

Այս հարցի կապակցությամբ պետք է նշել, որ Նախագծի 267-րդ

հոդվածը վերաքննիչ դատարանին հնարավորություն է տալիս դատարանի վճիռը բեկանելու և փոփոխելու դեպքում կիրառել որոշման կատարման ապահովման միջոցներ՝ հայցի ապահովման միջոցների կիրառման համար նախատեսված կարգով:

Բողոքարկված դատական ակտի գործողության կասեցում. Օրինական ուժի մեջ մտնելու դեպքում դատարանի վճիռը ձեռք է բերում անհերքելիության, բացառիկության, պարտադիրության, նախադատելիության և կատարելիության հատկանիշներ¹:

Վճռի կատարելիությունը վճռով նախատեսված գործողությունների իրականացման անհրաժեշտությունն է, վճիռը կամավորապես չկատարվելու դեպքում, պարտավոր անձի կամքին հակառակ, նրա հարկադիր կատարման հնարավորությունը²:

ՔՂՕ-ի 14-րդ հոդվածի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը պարտադիր է բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, իրավաբանական անձանց և քաղաքացիների համար ու ենթակա է կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

Անվիճելի է, որ որպես կանոն վերաքննության կարգով բողոքարկման են ենթակա օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերը, սակայն ՔՂՕ-ն այս կանոնից սահմանում է մի շարք բացառություններ: Մասնավորապես, օրինական ուժի մեջ մտած դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել.

- այն դեպքում, երբ բողոք բերած անձը բաց է թողել վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով սահմանված ժամկետը, ներկայացրել է համապատասխան ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդություն, և այն բավարարվել է վերաքննիչ դատարանի կողմից (ՔՂՕ-ի 207-րդ հոդվածի 6-րդ մաս),

¹ *Տե՛ս Պետրոսյան Ռ. Գ., Հայաստանի քաղաքացիական դատավարություն - 3-րդ հրատ., - Եր., ԵՊՀ հրատ., 2007, էջ 474:*

² *Տե՛ս Պետրոսյան Ռ. Գ., նշված աշխատ., էջ 477:*

**ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ
ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ**

**ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԳԻՏԱԿԱՆ ՀՈՂԿԱԾՆԵՐ ԵՎ ԱՅԼ
ՏԵՍԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ**

1. **Սյվազյան Վ.Ն.**, Մարդու իրավունքներ և ազատություններ, Եր., «Տիգրան Մեծ», 2007, 552 էջ:
2. **Եսայան Վ.**, Հաշտության համաձայնությունը քաղաքացիական դատավարությունում, «Դատական իշխանություն», Եր., 2014, թիվ 3 (177), էջեր 14-24:
3. **Եսայան Վ.**, Տնօրինչականության սկզբունքի հասկացությունը և էությունը քաղաքացիական դատավարությունում, «Դատական իշխանություն», Եր., 2010, թիվ 6 (131), էջեր 30-40:
4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, **Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի** խմբ., Եր., «Իրավունք» հրատ., 2010, 1086 էջ:
5. **Հովհաննիսյան Վ.Վ.**, Վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, Եր.: ԵՊՀ հրատ., 2013, 544 էջ:
6. **Հովհաննիսյան Վ.Վ.**, Վերաքննիչ դատարանի որոշումների դասակարգման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, ԵՊՀ հրատ., 2012, էջեր 430-459:
7. **Հովհաննիսյան Վ.Վ.**, Վերաքննիչ դատարանի առարկայական լիազորությունների հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, «Դատական իշխանություն», Եր., 2012, թիվ 10 (159), էջեր 32-44:
8. **Հովհաննիսյան Վ.Վ.**, Վերաքննիչ բողոքարկման իրավունքը որպես քաղաքացիական դատավարությունում արդար դատաքննության իրավունքի ապահովման միջոց, «ՀՀ Սահմանադրական դատարանի տեղեկագիր», Եր., 2011, թիվ 3(60), էջեր 14-27:
9. **Հովհաննիսյան Վ.Վ.**, Վերաքննիչ դատարանի լիազորությունների իրավաբանական բնույթի հիմնախնդիրները, «Օրենք և ի-

- այն բացառիկ դեպքերում, երբ ընդհանուր իրավասության դատարանը թույլ է տվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որի արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը (ՔԴՕ-ի 207-րդ հոդվածի 7-րդ մաս),

- գործին մասնակից չդարձված անձի կողմից, ում իրավունքների և պարտականությունների վերաբերյալ ընդհանուր իրավասության դատարանը վճիռ է կայացրել (ՔԴՕ-ի 5-րդ մաս):

Վերը նշված դեպքերում գործ ունենք օրինական ուժի մեջ մտած և հարկադիր կատարման ենթակա դատական ակտի բողոքարկման հետ: Հետևաբար գտնում ենք, որ լիովին հիմնավորված կլինի վերաքննիչ դատարանին օրինական ուժի մեջ մտած, սակայն բողոքարկված դատական ակտի գործողությունը կասեցնելու հայեցողական լիազորություն վերապահելը՝ այն դեպքերում, երբ վերաքննիչ դատարանը, ՔԴՕ-ով սահմանված հիմքերի առկայության դեպքում, վարույթ է ընդունել օրինական ուժի մեջ մտած վճռի դեմ բերված վերաքննիչ բողոքը:

Առավել ևս, որ ՔԴՕ-ի 204.37-րդ հոդվածի 3-րդ մասը վերաքննիչ դատարանին վերապահել է նման հայեցողական լիազորություն, սակայն միայն նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման վարույթ հարուցելու դեպքում:

րականություն», Եր., հունվար 2012, N 1, էջեր 5-9:

10. **Մարկոսյան Տ.Ա.**, «Մարուր տեսքով» նոր երևան էկաճ հանգամանքները քաղաքացիական դատավարությունում, «Բանբեր Երևանի համալսարանի», «Իրավագիտություն», 142 .3, 2014, էջեր 25-41:

11. **Մեղրյան Ս.Գ.**, Առաջին ատյանի դատարանի քաղաքացիական գործերով դատական ակտերը, Եր., ԵՊՀ հրատ., 2010, 192 էջ:

12. **Պետրոսյան Ռ.Գ.**, Հայաստանի քաղաքացիական դատավարություն. 3-րդ հրատ., Եր., ԵՊՀ հրատ., 2007, 765 էջ:

13. **Պետրոսյան Ռ.Գ.**, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարություն, 4-րդ հրատ., Եր., «Ոսկան Երևանցի» հրատ., 2012, 690 էջ:

14. Гражданское процессуальное право России / Под ред. **П.В. Алексия, Н.Д. Амаглобели.** - 2-е изд., перераб. и доп. - М.: «ЮНИТИ-ДАНА», 2007, 543 էջ:

15. **Белова Т.А.** Гражданский процесс. Общая часть: учебник / Под общ. ред. Т.А. Беловой, И.Н. Колядко, Н.Г. Юркевича. - 2-е изд., перераб. и доп. - Минск.: Амалфея, 2006, 577 էջ:

16. **Боннер А.Т.** Принцип диспозитивности советского гражданского процессуального права. М., ВЮЗИ, 1987, 77 էջ:

17. **Боннер А.Т.** Законность и справедливость в правоприменительной деятельности // Избранные труды по гражданскому процессу. СПб., Изд. дом СПбГУ, 2005, էջեր 444-738:

18. **Борисова Е.А.** Апелляция в гражданском (арбитражном) процессе. М., Изд-во "Городец", 2008, 224 էջ:

19. **Борисова Е.А.** Проверка судебных актов по гражданским делам. М.: Изд-во Городец, 2006, 303 էջ:

20. **Будак Е.** Правило запрета поворота к худшему в немецком и австрийском гражданском процессе // "Российская юстиция", 2008, N 9, <http://www.center-bereg.ru/o4040.html>:

21. Гражданский процесс: учебник для студ. сред. проф. учеб. заведений / **В.Н. Васин, В.И. Казанцев.** - 3-е изд., стер. - М.: Издательский центр «Академия», 2008, 288 էջ:

22. Гражданский процесс России: Учебник / Под ред. **М.А. Вилкут.** - М.: «Юристъ», 2005, 480 էջ:

23. **Вилкут М.А.** Законность и обоснованность актов социалистического правосудия как главное условие выполнения задач гражданс-

кого судопроизводства. В кн.: Цивилистические проблемы правового статуса личности в социалистическом обществе. - Саратов, Изд-во Саратовского ун-та, 1982, 160 էջ:

24. **Горский Г.Ф.** и др. Судебная этика. Воронеж, Изд-во Воронеж. ун-та, 1973, 271 էջ:

25. **Гришин И.П., Гришина И.И.** Гражданский процесс: вопросы и ответы / Под ред. М.К. Треушников. - М.: Юриспруденция, 2000, <http://bibliotekar.ru/grazhdanskiy-process-2/158.htm>:

26. **Давтян А.Г.** Гражданское процессуальное право Германии. - М.: Городец-издат, 2000, 320 էջ:

27. Европейские стандарты права на справедливое судебное разбирательство и российская практика. Под общ. ред. **А. В. Деменовой.** - Екатеринбург: изд-во Урал. ун-та, 2003, 237 էջ:

28. Новый Гражданский процессуальный кодекс Франции. Отв. ред. **А. Довгерт.** - К.: Истина, 2004, 544 էջ:

29. **Елизаров Н.П.** Предупреждение и устранение нарушений гражданского законодательства областным (краевым) судом. М.: Юрид. лит., 1977, 70 էջ:

30. **Жилин Г.А.** Суд первой инстанции в гражданском процессе. - М., Юрайт-М, 2001, 328 էջ:

31. **Жилин Г.А.** Апелляция и кассация в гражданском процессе // Современная доктрина гражданского, арбитражного процесса и исполнительного производства: теория и практика: Сборник научных статей. Краснодар - СПб., Юрид. центр "Пресс", 2004, 760 էջ:

32. **Загайнова С.К.** Судебные акты в механизме реализации судебной власти в гражданском и арбитражном процессе. - М., "Волтерс Клувер", 2007, 400 էջ:

33. **Зайцев И.М.** Кассационные определения в советском гражданском процессуальном праве.- Саратов, Приволж. кн. изд-во, 1967, 80 էջ:

34. **Зайцев И.М.** Устранение судебных ошибок в гражданском процессе. - Саратов, Изд-во Саратовского ун-та, 1985, 133 էջ:

35. **Зайцев И.М.** Целевые установки гражданского судопроизводства // Проблемы реформы гражданского процессуального права и практики его применения. - Свердловск, Свердловский юрид. ин-т, 1990, 112 էջ:

36. **Кац С.Ю.** Судебный надзор в гражданском судопроизводстве. - М., Юрид. лит., 1980, 208 էջ:

37. **Кац А. К., Козлов А. Ф., Комиссаров К. И., Осипов Ю. К.** Некоторые вопросы теории советского гражданского процесса. // Краткая антология уральской процессуальной мысли: 55 лет кафедре гражданского процесса Уральской государственной юридической академии / Под ред. В.В. Яркова. Екатеринбург, Изд-во Гуманит. ун-та, 2004, 652 էջ:

38. Гражданский процесс: Учебник / Под ред. **А.Г. Коваленко, А.А. Мохова, П.М. Филиппова.** - М.: «ИНФРА-М», 2008, 448 էջ:

39. **Комиссаров К.И.** Полномочия суда второй инстанции в гражданском процессе. - М., Госюриздат, 1961, 106 էջ:

40. **Комиссаров К.И.** Задачи судебного надзора в сфере гражданского судопроизводства. - Свердловск, Свердловский юрид. инст., 1971, 167 էջ:

41. **Лазарева Л. И.** Принцип недопустимости поворота к худшему // Правоведение. 1977. - № 2, <http://law.edu.ru/article/article.asp?articleID=189246>:

42. **Лебедь К.А.** Решение арбитражного суда. - М., Ин-т гос. и права Рос. Акад. наук, 2005, 116 էջ:

43. **Лесницкая Л.Ф.** Основания к отмене обжалованных судебных решений. - М.: Гос. изд-во юрид. лит-ры, 1962, 132 էջ:

44. **Манабаева М.А.** Разграничение окончаний процесса без вынесения решения. Правовые основания и последствия прекращения производства по делу, http://www.rusnauka.com/14_ENXXI_2009/Pravo/45835.doc.htm:

45. **Нефедьев Е.А.** Склонение сторон к миру в гражданском процессе. Казань, Тип. Губ. правл., 1890, 46 էջ:

46. **Осипов Ю.К.** Гражданский процесс: учебник для вузов. - М.: Издательство БЕК, 1995, 462 էջ:

47. **Паращенко В.Н., Сокол С.Ф.** Гражданский процесс Республики Беларусь. Общая часть: учебн. пособие / Под общ. ред. В.Н. Паращенко, С.Ф. Сокола. - Минск: Молодежное научное общество, 2000, 276 էջ:

48. **Плешанов А.Г.** Диспозитивное начало в сфере гражданской юрисдикции: проблемы теории и практики. - М.: Изд. Норма, 2002,

352 էջ:

49. **Пучинский В.К.** Кассационное производство в советском гражданском процессе. М., Ун-т дружбы народов, 1973, 37 էջ:

50. Справочник по доказыванию в гражданском судопроизводстве / Под ред. **И. В. Решетниковой**, М.: Норма, 2005, 464 էջ:

51. **Рожкова М. А.** Об определениях арбитражных судов (их обжалование, вступление в законную силу и приобретаемых свойствах) // Вестник ВАС РФ. 2006. № 3, էջեր 204-217:

52. **Рожкова М.А.** Средства и способы правовой защиты сторон коммерческого спора. - М.: Волтерс Клувер, 2006, 416 էջ:

53. **Рожкова М.А.** Понятие судебного решения в контексте статьи 8 ГК РФ // Хозяйство и право. 2008. № 6, <http://www.lawmix.ru/comm/5288>:

54. Проверка судебных решений в социалистическом гражданском процессе / Отв. ред. **В. М. Савицкий**. М., "Наука", 1989, 304 էջ:

55. **Сахнова Т.В.** Курс гражданского процесса: теоретические начала и основные институты. - М.: "Волтерс Клувер", 2008, 696 էջ:

56. **Терехова Л.А.** Система пересмотра судебных актов в механизме судебной защиты. - М.: Волтерс Клувер. 2007, 320 էջ:

57. **Терехова Л.А.** Постановление суда первой инстанции, разрешающее дело по существу // Вестник Омского университета. - Омск: Изд-во ОмГУ, 2005, № 2 (3), էջեր 96-99:

58. **Тимофеев Ю.А.** Полномочия суда второй инстанции в гражданском процессе: современные проблемы. - М.: "Волтерс Клувер", 2008, 184 էջ:

59. **Тихиня В. Г.** Гражданский процесс: в 2 Т. - Минск: УП «Минская печатная фабрика» Гознака, 2002. - Т. 1, 304 էջ:

60. **Ткачев Н.И.** Законность и обоснованность судебных постановлений по гражданским делам. - Саратов, Изд-во Саратовского ун-та, 1987, 108 էջ:

61. Гражданский процесс : учеб. для вузов / Под ред. **М.К. Треушниковой**. -2-е изд., перераб. и доп. - М.: «Городец», 2007, 784 էջ:

62. **Треушников А. М.** Обеспечительные меры в арбитражном процессе // Законодательство. 2003. № 8, էջեր 82-86:

63. Арбитражный процесс: Учебник для юридических вузов и факультетов / Под ред. **М. К. Треушниковой, В. М. Шерстюка.** - М., "Го-

родец-издат", 2001, 480 էջ:

64. Комментарий к Конвенции о защите прав человека и основных свобод и практике ее применения. Под общ. ред. **В. А. Туманова, Л. М. Энтина**. - М., "Норма", 2002, 336 էջ:

65. Система гражданского процесса Англии: судеб. разбирательство, медиация и арбитраж / Нил Эндрюс, перевод с англ., под ред. **Р.М. Ходыкина**. М.: Инфотропик Медиа, 2012, 544 էջ:

66. Гражданский процесс / Отв. ред. **Н. А. Чечина, Д. М. Чечот**. М., Юрид. лит., 1968, 456 էջ:

67. **Чечот Д.М.** Административная юстиция (теоретические проблемы). - Л.: Изд-во Ленингр. ун-та, 1973, 134 էջ:

68. Гражданское процессуальное право: учебник / С.А. Алехина, В.В. Блажеев и др.: Под ред. **М.С. Шакарян**. - М.: ТК Велби, Изд-во Проспект, 2004, 584 էջ:

69. Гражданское процессуальное право России: Учебник для вузов / Под ред. **М.С. Шакарян**, М., Былина, 1998, 504 էջ:

70. **Шакирьянов Р.В.** Действие принципа процессуальной экономии в гражданском судопроизводстве, <http://justicemaker.ru/view-article.php?id=3&art=3784>:

71. **Шакирьянов Р.В.** Пределы рассмотрения дела судом апелляционной инстанции // Арбитражный и гражданский процесс. 2004. N 1, էջեր 24-28:

72. **Шерстюк В.М.** Новые положения третьего арбитражного процессуального кодекса РФ. М., Изд-во МЦФЭР, 2003, 400 էջ:

73. **Шершеневич Г.Ф.** Учебник русского гражданского права. М., Спарк, 1995, 556 էջ:

74. **Юдельсон К.С.** Основные задачи и формы деятельности суда первой инстанции в советском гражданском процессе. //Краткая антология уральской процессуальной мысли: 55 лет кафедре гражданского процесса Уральской государственной юридической академии / Под ред. В.В. Яркова. Екатеринбург, Изд-во Гуманит. ун-та, 2004, 652 էջ:

75. Гражданский процесс. Учебник для студентов вузов, обучающихся специальности «Юриспруденция» / Отв. редактор **В.В. Ярков**. - 6-е изд., перераб. и доп. - М.: Волтерс Клувер, 2006, 703 էջ:

76. Гражданский процесс: учебник / Отв. ред. **В.В. Ярков**. 8-е изд., перераб. и доп., М., "Инфотропик медиа", 2012, 768 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՂՍԱԳՐԵՐ

1. **Абушенко Д.Б.** Судебное усмотрение в гражданском процессе. Дисс. ... к.ю.н., Екатеринбург, 1998, 165 էջ:

2. **Аношина А.А.** Приостановление производства по гражданским делам в судах общей юрисдикции. Дисс. ... к.ю.н., Саратов, 2006, 201 էջ:

3. **Берг Л.Н.** Судебное усмотрение и его пределы: общетеоретический аспект. Дисс. ... к.ю.н., Екатеринбург, 2008, 202 էջ:

4. **Бондарева Е.Е.** Реализация распорядительных прав сторон в арбитражном процессе (в суде первой инстанции). Автореф. дисс. ... к.ю.н., Самара, 2003, 32 էջ:

5. **Васильюкас Ю.Ю.** Приостановление производства по гражданскому делу в советском гражданском процессе. Дисс. ... к.ю.н., Вильнюс, 1983, 209 էջ:

6. **Грязева В.В.** Апелляция в арбитражном процессе. Дисс. ... к.ю.н., Москва, 2005, 197 էջ:

7. **Завриев С.С.** Пересмотр по вновь открывшимся обстоятельствам решений, определений, постановлений президиума суда надзорной инстанции, вступивших в законную силу, в гражданском процессе. Дисс. ... к.ю.н., Москва, 2008, 116 էջ:

8. **Загайнова С.К.** Судебные акты в гражданском и арбитражном процессе: теоретические и прикладные проблемы. Автореф. дисс. ... д.ю.н., Екатеринбург, 2008 // <http://lawtheses.com/sudebnye-akty-v-grazhdanskom-i-arbitrazhnom-protsessе-teoreticheskie-i-prikladnye-problemy>:

9. **Караваева Е.В.** Вопросы апелляционного производства в гражданском процессе. Дисс. ... к.ю.н., Саратов, 2005, 190 էջ:

10. **Катюкова С.Ю.** Частное обжалование и пересмотр определений суда первой инстанции. Дисс. ... к.ю.н., Саратов, 1998, 162 էջ:

11. **Кузнецов П.У.** Возбуждение кассационного производства по гражданским делам. Автореф. дисс. ... к.ю.н., Свердловск, 1986, 15 էջ:

12. **Лазарев С.В.** Мировое соглашение в гражданском

судопроизводстве. Дисс. ... к.ю.н., Екатеринбург, 2006, 203 էջ:

13. **Маняк Н.И.** Кассационное производство в российском гражданском процессе: некоторые проблемы совершенствования. Дисс. ... к.ю.н. - М., 2006, 224 էջ:

14. **Минасян Г.М.** Решения и определения судов первой инстанции общей юрисдикции. Автореф. дисс. ... к.ю.н., Москва, 2010 // <http://www.dissercat.com/content/resheniya-i-opred-eleniya-sudov-pervoi-instantsii-obshchei-yurisdiktsii-0>:

15. **Резуценко А.Н.** Пересмотр судебных актов, вступивших в законную силу, по вновь открывшимся обстоятельствам как стадия гражданского процесса. Дисс. ... к.ю.н., Волгоград, 2001, 157 էջ:

16. **Решетняк В.И.** Постановления суда первой инстанции по гражданским делам. Автореф. дисс. ... к.ю.н., Москва, 1996, 23 էջ:

17. **Русинова Е.Р.** Распорядительные права сторон в гражданском процессе. Дисс. ... к.ю.н. Екатеринбург, 2003, 210 էջ:

18. **Скворцов О.Ю.** Институт кассации в российском процессуальном праве (проблемы судостройства и судопроизводства). Автореф. дисс. ... к. ю. н., СПб., 2000, էջ 24:

19. **Теплов В.А.** Определение суда первой инстанции по уголовному делу. Автореф. дисс. ... к.ю.н., Саратов, 1974, 20 էջ:

20. **Терехова Л.А.** Право на исправление судебной ошибки как компонент судебной защиты. Автореф. дисс. ... д.ю.н., Екатеринбург, 2008, 46 էջ:

21. **Тимофеев Ю.А.** Полномочия суда второй инстанции в гражданском процессе: современные проблемы. Дисс. ... к.ю.н., Екатеринбург, 2008, 241 էջ:

22. **Толочко А.Н.** Роль мотивировки в обеспечении законности, обоснованности и справедливости актов социалистического правосудия, выносимых судом первой инстанции по уголовным делам. Автореф. дисс. ... к.ю.н., Харьков, 1985, 16 էջ:

23. **Хахалева Е.В.** Обоснованность решения суда общей юрисдикции. Автореф. дисс. к.ю. н., Саратов, 2005, 26 էջ:

24. **Ярков В.В.** Юридические факты в механизме реализации норм гражданского процессуального права. Дисс. ... д.ю.н., Екатеринбург, 1992, 523 էջ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներ

1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1999թ. հոկտեմբերի 28-ի վճիռը՝ Բրուսարեսկուն ընդդեմ Ռումինիայի գործով (<http://hudoc.echr.coe.int/>):

2. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2003թ. հուլիսի 24-ի վճիռը՝ Ռյաբիխն ընդդեմ Ռուսաստանի գործով (<http://hudoc.echr.coe.int/>):

3. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2009թ. հուլիսի 16-ի վճիռը՝ Ջեհենսոներն ընդդեմ Ավստրիայի գործով (<http://hudoc.echr.coe.int/>):

4. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2007թ. մարտի 22-ին վճիռը՝ Միակովսկան ընդդեմ Լեհաստանի գործով (<http://hudoc.echr.coe.int/>):

5. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2007թ. հունվարի 18-ի վճիռը՝ Բուլգակովան ընդդեմ Ռուսաստանի գործով (<http://hudoc.echr.coe.int/>):

6. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2006թ. հուլիսի 20-ի վճիռը՝ Սոկուրենկոն և Ստրիգունն ընդդեմ Ուկրաինայի գործով (<http://hudoc.echr.coe.int/>):

7. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1994թ. ապրիլի 19-ի վճիռը՝ Վան դե Հանկն ընդդեմ Նիդերլանդների գործով (<http://hudoc.echr.coe.int/>):

8. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1970թ. հունվարի 17-ի վճիռը՝ Դելակուրոն ընդդեմ Բելգիայի գործով (<http://hudoc.echr.coe.int/>):

9. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1996թ. հոկտեմբերի 23-ի վճիռը՝ «Levages Prestations Services» ընկերությունն ընդդեմ Ֆրանսիայի գործով (<http://hudoc.echr.coe.int/>):

ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներ

1. ՀՀ վճռաբեկ դատարանի 2006թ. դեկտեմբերի 21-ի որոշումը՝ թիվ **3-2504 (ՏՂ)** քաղաքացիական գործով (<http://www.arlis.am/>):

2. ՀՀ վճռաբեկ դատարանի 2007թ. հունիսի 6-ի որոշումը՝ թիվ **3-1132(ՎԴ)** քաղաքացիական գործով (<http://www.arlis.am/>):
3. ՀՀ վճռաբեկ դատարանի 2008թ. փետրվարի 29-ի որոշումը՝ թիվ **3-148 (ՎԴ)** քաղաքացիական գործով (<http://www.arlis.am/>):
4. ՀՀ վճռաբեկ դատարանի 2008թ. ապրիլի 14-ի որոշումը՝ թիվ **3-365(ՎԴ)** քաղաքացիական գործով (<http://www.arlis.am/>):
5. ՀՀ վճռաբեկ դատարանի 2008թ. նոյեմբերի 28-ի որոշումը՝ թիվ **3-734 (ՎԴ)** քաղաքացիական գործով (<http://www.arlis.am/>):
6. ՀՀ վճռաբեկ դատարանի 2009թ. փետրվարի 13-ի որոշումը՝ թիվ **ԱԼԴ/0062/02/08** քաղաքացիական գործով (<http://www.arlis.am/>):
7. ՀՀ վճռաբեկ դատարանի 2009թ. ապրիլի 10-ի որոշումը՝ թիվ **ԿԴ/0338/02/08** քաղաքացիական գործով (<http://www.arlis.am/>):
8. ՀՀ վճռաբեկ դատարանի 2009թ. ապրիլի 30-ի որոշումը՝ թիվ **ՎԴ/0677/05/08** վարչական գործով (<http://www.arlis.am/>):
9. ՀՀ վճռաբեկ դատարանի 2009թ. մայիսի 27-ի որոշումը՝ թիվ **ՏԴ3/0019/02/08** քաղաքացիական գործով (<http://www.arlis.am/>):
10. ՀՀ վճռաբեկ դատարանի 2009թ. հունիսի 26-ի որոշումը՝ թիվ **ԵԿԴ/2894/02/08** քաղաքացիական գործով (<http://www.arlis.am/>):
11. ՀՀ վճռաբեկ դատարանի 2009թ. հունիսի 26-ի որոշումը՝ թիվ **ՏԴ3/0026/02/08** քաղաքացիական գործով (<http://www.arlis.am/>):
12. ՀՀ վճռաբեկ դատարանի 2009թ. դեկտեմբերի 25-ի որոշումը՝ թիվ **3-207 (ՎԴ)** քաղաքացիական գործով (<http://www.arlis.am/>):
13. ՀՀ վճռաբեկ դատարանի 2010թ. ապրիլի 2-ի որոշումը թիվ **ՀՔԴ3/0049/02/08** քաղաքացիական գործով (<http://www.arlis.am/>):
14. ՀՀ վճռաբեկ դատարանի 2010թ. ապրիլի 2-ի որոշումը՝ թիվ **ԵԿԴ/3468/02/08** քաղաքացիական գործով (<http://www.arlis.am/>):
15. ՀՀ վճռաբեկ դատարանի 2010թ. մայիսի 27-ի որոշումը՝ թիվ **ԵԷԴ/0871/02/09** քաղաքացիական գործով (<http://www.arlis.am/>):
16. ՀՀ վճռաբեկ դատարանի 2010թ. հունիսի 30-ի որոշումը թիվ **ԵՇԴ/0550/02/09** քաղաքացիական գործով (<http://www.arlis.am/>):
17. ՀՀ վճռաբեկ դատարանի 2010թ. օգոստոսի 13-ի որոշումը՝ թիվ **3-10 (ՏԴ)** քաղաքացիական գործով (<http://www.arlis.am/>):
18. ՀՀ վճռաբեկ դատարանի 2010թ. օգոստոսի 13-ի որոշումը՝ թիվ **3-11 (ՏԴ)** քաղաքացիական գործով (<http://www.arlis.am/>):
19. ՀՀ վճռաբեկ դատարանի 2010թ. օգոստոսի 27-ի որոշումը՝ թիվ **ԼԴ/0001/11/10** քրեական գործով (<http://www.arlis.am/>):

20. ՀՀ վճռաբեկ դատարանի 2010թ. դեկտեմբերի 27-ի որոշումը՝ թիվ **ԵՔԴ/0443/02/08** քաղաքացիական գործով (<http://www.arlis.am/>):
21. ՀՀ վճռաբեկ դատարանի 2011թ. մարտի 4-ի որոշումը՝ թիվ **08-1442** քաղաքացիական գործով (<http://www.arlis.am/>):
22. ՀՀ վճռաբեկ դատարանի 2011թ. մարտի 4-ի որոշումը՝ թիվ **ՇԴ1/0165/02/09** քաղաքացիական գործով (<http://www.arlis.am/>):
23. ՀՀ վճռաբեկ դատարանի 2011թ. մայիսի 11-ի որոշումը՝ թիվ **ԿԴ/0003/11/10** քրեական գործով (<http://www.arlis.am/>):
24. ՀՀ վճռաբեկ դատարանի 2011թ. մայիսի 27-ի որոշումը՝ թիվ **ԵՇԴ/0473/02/10** քաղաքացիական գործով (<http://www.arlis.am/>):
25. ՀՀ վճռաբեկ դատարանի 2011թ. մայիսի 27-ի որոշումը՝ թիվ **ԵԿԴ/1487/02/08** քաղաքացիական գործով (<http://www.arlis.am/>):
26. ՀՀ վճռաբեկ դատարանի 2011թ. հունիսի 1-ի որոշումը՝ թիվ **ԼԴ/0365/02/09** քաղաքացիական գործով (<http://www.arlis.am/>):
27. ՀՀ վճռաբեկ դատարանի 2011թ. հունիսի 1-ի որոշումը՝ թիվ **ԵԱՆԴ/0461/02/10** քաղաքացիական գործով (<http://www.arlis.am/>):
28. ՀՀ վճռաբեկ դատարանի 2011թ. հոկտեմբերի 14-ի որոշումը՝ թիվ **ԱՎԴ/0470/02/10** քաղաքացիական գործով (<http://www.arlis.am/>):
29. ՀՀ վճռաբեկ դատարանի 2012թ. մարտի 23-ի որոշումը՝ թիվ **ԵԱՆԴ/1097/02/10** քաղաքացիական գործով (<http://www.arlis.am/>):
30. ՀՀ վճռաբեկ դատարանի 2012թ. մարտի 23-ի որոշումը՝ թիվ **ԳԴ4/0092/02/11** քաղաքացիական գործով (<http://www.arlis.am/>):
31. ՀՀ վճռաբեկ դատարանի 2012թ. մարտի 23-ի որոշումը՝ թիվ **ԿԴ1/0809/02/10** քաղաքացիական գործով (<http://www.arlis.am/>):
32. ՀՀ վճռաբեկ դատարանի 2012թ. մարտի 23-ի որոշումը՝ թիվ **ԵԿԴ/3430/02/09** քաղաքացիական գործով (<http://www.arlis.am/>):
33. ՀՀ վճռաբեկ դատարանի 2012թ. ապրիլի 27-ի որոշումը՝ թիվ **ԵՄԴ/1086/02/10** քաղաքացիական գործով (<http://www.arlis.am/>):
34. ՀՀ վճռաբեկ դատարանի 2012թ. հունիսի 8-ի որոշումը՝ թիվ **ԵԱՔԴ/0065/01/11** քրեական գործով (<http://www.arlis.am/>):
35. ՀՀ վճռաբեկ դատարանի 2012թ. հունիսի 29-ի որոշումը՝ թիվ **ԵԿԴ/2082/02/08** քաղաքացիական գործով (<http://www.arlis.am/>):
36. ՀՀ վճռաբեկ դատարանի 2012թ. նոյեմբերի 1-ի որոշումը՝ թիվ **ՄԴ3/0019/01/11** քրեական գործով (<http://www.arlis.am/>):
37. ՀՀ վճռաբեկ դատարանի 2012թ. դեկտեմբերի 25-ի որոշումը թիվ **ԱՎԴ1/0381/02/11** քաղաքացիական գործով

(<http://www.arlis.am/>):

38. ՀՀ վճռաբեկ դատարանի 2013թ. ապրիլի 5-ի որոշումը՝ թիվ **ԼՂ/0583/02/11** քաղաքացիական գործով (<http://www.arlis.am/>):

39. ՀՀ վճռաբեկ դատարանի 2013թ. ապրիլի 5-ի որոշումը՝ թիվ **ԿՂ3/0041/02/11** քաղաքացիական գործով (<http://www.arlis.am/>):

40. ՀՀ վճռաբեկ դատարանի 2013թ. մայիսի 24-ի որոշումը՝ թիվ **ՎՂ/1346/05/10** վարչական գործով (<http://www.arlis.am/>):

41. ՀՀ վճռաբեկ դատարանի 2013թ. մայիսի 24-ի որոշումը՝ թիվ **ԵՄՂ/0250/02/12** քաղաքացիական գործով (<http://www.arlis.am/>):

42. ՀՀ վճռաբեկ դատարանի 2013թ. մայիսի 24-ի որոշումը՝ թիվ **ՍՂ3/0010/02/12** քաղաքացիական գործով (<http://www.arlis.am/>):

43. ՀՀ վճռաբեկ դատարանի 2013թ. օգոստոսի 7-ի որոշումը՝ թիվ **ԱՐԱՂ/0043/02/12** քաղաքացիական գործով (<http://www.arlis.am/>):

44. ՀՀ վճռաբեկ դատարանի 2013թ. նոյեմբերի 29-ի որոշումը՝ թիվ **ԵԱՔՂ/1105/02/12** քաղաքացիական գործով (<http://www.arlis.am/>):

45. ՀՀ վճռաբեկ դատարանի 2014թ. հուլիսի 18-ի որոշումը՝ թիվ **ԱՐԱՂ/0209/02/13** քաղաքացիական գործով (<http://www.arlis.am/>):

46. ՀՀ վճռաբեկ դատարանի 2014թ. հուլիսի 18-ի որոշումը՝ թիվ **ԵԱՔՂ/2279/02/11** քաղաքացիական գործով (<http://www.arlis.am/>):

47. ՀՀ վճռաբեկ դատարանի 2014թ. հուլիսի 18-ի որոշումը՝ թիվ **ԵԿՂ/2760/02/12** քաղաքացիական գործով (<http://www.arlis.am/>):

48. ՀՀ վճռաբեկ դատարանի 2014թ. հուլիսի 18-ի որոշումը՝ թիվ **ԵՇՂ/0700/02/12** քաղաքացիական գործով (<http://www.arlis.am/>):

49. ՀՀ վճռաբեկ դատարանի 2014թ. նոյեմբերի 28-ի որոշումը՝ թիվ **ԱՐԱՂ2/0169/02/11** քաղաքացիական գործով (<http://www.arlis.am/>):

50. ՀՀ վճռաբեկ դատարանի 2014թ. նոյեմբերի 28-ի որոշումը՝ թիվ **ԵԿՂ/1118/02/12** քաղաքացիական գործով (<http://www.arlis.am/>):

51. ՀՀ վճռաբեկ դատարանի 2014թ. նոյեմբերի 28-ի որոշումը՝ թիվ **ԼՂ/0376/02/09** քաղաքացիական գործով (<http://www.arlis.am/>):

52. Թիվ **ԵԿՂ/0139/02/13** քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2014թ. ապրիլի 30-ի որոշումը՝ «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» (<http://www.datalex.am/>):

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումներ

1. Թիվ **ԵԱՂԲ/0004/02/10** քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 09.12.2010թ. որոշումը (<http://www.datalex.am/>):

2. Թիվ **ԵԱՆԲ/0197/02/09** քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 01.11.2012թ. որոշումը (<http://www.datalex.am/>):

3. Թիվ **ԱՐԱՂ2/0169/02/11** քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.04.2014թ. որոշումը (<http://www.datalex.am/>):

4. Թիվ **ԵԿՂ/0139/02/13** քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.02.2014թ. որոշումը (<http://www.datalex.am/>):

5. Թիվ **ԼՂ/0376/02/09** քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 07.05.2014թ. որոշումը (<http://www.datalex.am/>):

6. Թիվ **ԵԱՂԲ/0134/02/12** քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.11.2014թ. որոշումը (<http://www.datalex.am/>):

7. Թիվ **ԵԱՂԲ/0899/02/09** քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.03.2014թ. որոշումը (<http://www.datalex.am/>):

8. Թիվ **ԳՂ/0540/02/12** քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 31.07.2013թ. որոշումը (<http://www.datalex.am/>):

9. Թիվ **ԵԿՂ/1002/02/09** քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.05.2013թ. որոշումը (<http://www.datalex.am/>):

10. Թիվ **ԵԱՆԲ/1530/02/10** քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.05.2011թ. որոշումը (<http://www.datalex.am/>):

11. Թիվ **ԵՄՂ/0723/02/08** քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.03.2009թ. որոշումը (<http://www.datalex.am/>):

12. Թիվ **ՏՂ2/0080/02/11** քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.07.2012թ. որոշումը

(<http://www.datalex.am/>):

13. Թիվ **ԵԿԴ/2271/02/11** քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.04.2013թ. որոշումը (<http://www.datalex.am/>):

14. Թիվ **ԿԴ3/0304/02/11** քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.06.2012թ. որոշումը (<http://www.datalex.am/>):

15. Թիվ **ՎԴ3/0321/05/12** վարչական գործով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 12.12.2012թ. որոշումը (<http://www.datalex.am/>):

16. Թիվ **ԵԱԴԴ/0134/02/12** քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.08.2014թ. որոշումը՝ վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին (<http://www.datalex.am/>):

17. Թիվ **ԵԱՆԴ/1530/02/10** քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.02.2011թ. որոշումը՝ վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին (<http://www.datalex.am/>):

18. Թիվ **ԵԱՆԴ/1530/02/10** քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.03.2011թ. որոշումը՝ վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին (<http://www.datalex.am/>):

Հանձնվել է տպագրության 01.10.2016:

Չափսը՝ 60x84^{1/16}:
Ծավալը՝ 13 տպ. մամուլ:
Քանակը՝ 100 օրինակ: